

ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
№ 3 (52)

ԵՐԵՎԱՆ - 2021

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
АРМЕНОБЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Խմբագրական խորհուրդ՝

Ռ. Կ. Միրզախանյան (նախագահ),

Մ. Գ. Գիլավյան (**գլխավոր խմբագիր**),

Ա. Ա. Ավագյան, Ա. Վ. Գալստյան, Ս. Դ. Դանիելյան,

Ա. Գ. Դոլուխանյան, Լ. Մ. Խաչատրյան, Վ. Լ. Կատվալյան,

Ա. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան, Ա. Ա. Մակարյան,

Է. Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,

Մ. Ադամյան (Մեծ Բրիտանիա), Հ. Նալբանդյան (ԱՄՆ), [Ա. Սեփեթճյան] (Բելրուժ)

Ա. Հ. Հարությունյան (**պատասխանատու քարտուղար և տեխնիկական խմբագիր**)

Գրանցման վկայական՝ 211.200.00182

Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.

Պարբերականությունը՝ եռամսյա

Բոլոր նյութերն ուղարկվում են գրախոսության:

Հոդվածները տպագրվում են անվճար: Ցանկացողները հանդեսը կարող են ձեռք բերել համալսարանի հաշվեհամարին (1570027790960100) փոխանցելով համարի արժեքը:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-20)

Էլեկտրոնային փոստ՝ hayagitakanhandes@gmail.com

Կայքէջ՝ www.hayagitakan-handes.com

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

ՀՀ Լեզվի կոմիտեի նախագահ

Բան. գիտ. թեկն., դոցենտ

gyurjidav@mail.ru

ԱՐԱՄԵԱՅԻՆԵՐԻ ԼԵԶՎԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. սեմական լեզուներ, աշխարհի լեզուների անվանացանկ, արամերեն / արամեերեն / արամայերեն, բառային տարբերակ, բառարանային մշակում, բառարանագրական ավանդույթ, կանոնարկում, արևելահայերեն, արևմտահայերեն

Ключевые слова и выражения: семитские языки, перечень языков мира, арամерեն / арամեերեն / арամայերեն «арамейский язык», лексический вариант, канонизация, лексикографическая разработка, лексикографическая традиция, западноармянский, восточноармянский

Keywords and expressions: Semitic languages, list of world languages, арամերեն / арամեերեն / арամայերեն "Aramaic language", lexical variant, canonization, lexicographic development, lexicographic tradition, Western Armenian, Eastern Armenian.

ՄՈՒՏՔ

Արամեացիները (այդպես են կոչվել աքքադական արձանագրություններում հիշատակված **արամե** «քոչվոր» բառի հիման վրա) քոչվորանասնապահներ էին, որոնք մ.թ.ա. XIV դարում դուրս են եկել իրենց բնօրրան Արաբական թերակղզուց և հետզհետե, հատկապես մ.թ.ա. XII-XI դարերում, տարածվել Բաբելոնում, Միջագետքում, Հրեաստանում, Ասորիքում, Փյունիկիայում: Փյունիկյան գրի հիման վրա արամեացիները ստեղծեցին բաղաձայնահնչյունային գիր: Արամեական գրով հուշարձաններ են ավանդվել մ.թ.ա. IX-VIII դարերից, այդ գիրը Առաջավոր Ասիայից դուրս մղեց բարդ ու դժվարընթեռնելի սեպագիրը: Արամեացիների լեզուն մ.թ.ա. I հազարամյակի երկրորդ կեսին Աքեմենյան աշխարհակալության երկրորդ լեզուն էր: Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանում հիմնվել են արամեական դիվանատներ¹:

¹ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 686 (Արամեացիներ բառահոդվածը):

Արամեական լեզվով են խոսել Հիսուսը և նրա ժամանակի հրեաները, սկզբնապես այս լեզվով են գրվել Հին Կտակարանի որոշ մասեր՝ Դանիելի 27, Բ Եզրասի 46, 7 գլուխները և Երեմիայի 10.11 համարը, իսկ Նոր Կտակարանում, որ կոչնե հունարենով է գրվել, գործածվել են արամեացիների լեզվով բառեր և արտահայտություններ, ինչպես՝ «Էլի՛, Էլի՛, լա՛ մա սաբաթթանի» («Աստուա՛ ծ իմ, Աստուա՛ ծ իմ, ընդէ՛ ր թողեր զիս» - «Աստվա՛ ծ իմ, Աստվա՛ ծ իմ, ինչո՛ւ լքեցիր ինձ») (Մատթեոս 27.46 և Մարկոս 15.34), «Տալի՛ թա, կո՛ւմի» («Աղջի՛ կ դու, քեզ ասեմ, արի՛» - «Աղջի՛ կ, քեզ եմ ասում, վե՛ր կաց») (Մարկոս 5.41)² և այլն:

Սույն հետազոտությամբ պիտի պարզենք, թե **արամեացիների լեզու, արամեական լեզու** բառակապակցություններից բացի այս լեզուն մեկ բառով արտահայտված ի՞նչ անուն(ներ) ունի հայերենում:

Արամեացիների լեզվի մենաբառ անուն հայերենի զարգացման գրաբարյան և հետագա փուլերում, այդպիսի միավոր չի վկայվել Աստվածաշնչում³, այլ բնագրերում: Հայերենում արամեացիների լեզվի բառային անվանումը կատարվել է ուշ՝ նոր ժամանակներում, թեև հայերի առնչությունները արամեացիներ հետ, ինչպես և արամեական լեզուների հետ վաղ ժամանակներին են վերաբերում:

ԱՐԱՄԵՐԵՆ

Նախանցյալ դարի վերջին քառորդին հրատարակված Սուրբ Գրքի բառարանում գրված է. «**Արամերենը**, որ կը խօսուեր Ասորոց երկիրը, Միջագետք և ի Բաբելոն, կը բաժնուի յԱսորերէն և ի Քաղդէարէն. Ասոնք կը կոչուին երբեմն նան Արևմտեան և Արևելեան **Արամերէն**»⁴: 1893 թ. Վիեննայի «Հանդես Ամսօրեայ»-ի տարբեր համարներում լույս է տեսել գերմանացի նշանավոր հայագետ Հ. Հյուբշմանի «Մեմական փոխառեալ բառեր հին հայերէնի մէջ» վերնագրով հոդվածը՝ հայր Հակոբոս Տաշյանի թարգմանությամբ: Այստեղ **կապար, կուպր, մագաղաթ** բառերի առնչությամբ բազմավաստակ հայագետը գործածել է արամեացիների լեզվի

² **Աստվածաշնչի հանրագիտարան**, Երևան, 1999, էջք 73, 306, **Աստվածաշնչի ամփոփ ուղեցույց**, Երևան, 2012, էջ 10-13:

³ Սուրբ Գրքի եբրայական բնագրում «առամիտ» (արամ(ե)երեն) բառը գործածվել է չորս անգամ. Յոթանասնից թարգմանության մեջ հրեա թարգմանիչներն այն հունարեն թարգմանել են «պուրիստի», որը հայերեն թարգմանության մեջ դարձել է «ասորերեն» (**Ռ. Պողոսյան**, Հին Կտակարանում «արամերեն» եզրի գործածության շուրջ / «Էջմիածին» հանդես, 2011, է, էջ 102):

⁴ **Բառարան Սուրբ Գրոց**, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 233-234 (**Լեզու** բառահոդվածը):

արամերեն անունը⁵: Բնչպես տեսանք, երկու դեպքում էլ սեմական լեզուն կոչվել է **արամերեն**: Բառի գործածության այս փաստերը արևմտահայերեն են, և դրանց հիման վրա կարող ենք արձանագրել արևմտահայերենում **արամերեն**-ի գործածության ավանդույթի ձևավորման սկիզբը:

Արամերեն լեզվանունն է գործածել արևմտահայ (պոլսահայ) Հր. Աճառյանը: Արմատական բառարանում զետեղված լեզուների ցանկում տրված է **արամերեն**, փակագծերում՝ «որ և ասորերեն», ուրիշ աշխատություններում՝ ուղղակի **արամերեն**⁶: Գործածել է նաև շարադրանքում՝ «Տիգրանի բերած գերիներն էլ խոսելիս պիտի լինեին **արամերեն**, որ նույնն է թե ասորերեն», «Հայերենը հունարենի նման թարգմանությամբ դնում է այն **արամերեն** նախադասությունները, որոնք ասորականում չկան»⁷:

Արամերեն անունը հայերեն գիտական խոսքում գործածվում է նաև ներկայումս: Օրինակներ՝ «Հնարավոր չի թվում, որ Մատթեոսի հունարեն Ավետարանը հին **արամերեն** տեքստի թարգմանությունը լինի»⁸ կամ «Արձանագրությունն **արամերեն** բնագիր է»⁹:

Լեզվի անվան առաջացման տարբեր ուղիներ կարող ենք նշել:

ա) **Արամերեն**-ի բառակազմական հիմք է դարձել **Արամ** տեղանունը. Արամ-ն ընկալվում էր Ասորիքը¹⁰, իսկ **արամերեն**-ը՝ որպես «երկրանուն+երեն» մասնակաղապարի իրացում՝ «Արամի (երկրի) լեզու»:

բ) Բառակազմական հիմք է դարձել **արամ** հասարակ անունը. Արամեացիներին կոչել են նաև «արամներ»¹¹, ըստ այդմ էլ **արամերեն**-ն

⁵ «Հանդես Ամսօրեայ», 1893, էջ 148-150:

⁶ **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 63, **Հր. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, 1957, էջ 1006:

⁷ **Հր. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1951, էջ 55, **Հր. Աճառյան**, Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 246:

⁸ **Եզնիկ արք. Պետրոսյան**, Ներածություն նոր Կտակարանի, Գ. տպագր., Երևան, 2016, էջ 71: Նաև «Պատկանում է **Արամերենի** Պաղեստինյան ճյուղին»: Մեր կարծիքով սա արևմտահայերենի ավանդույթի ազդեցության հետևանք կարող է լինել: Այդպիսի ենթադրության հիմք կարող է դառնալ լեզվի անունը մեծատառ գրելը:

⁹ **Ն. Վասիլիադիս**, Աստվածաշունչ և հնագիտություն, թարգմանությունը ռուսերենից՝ Գր. Դարբինյանի, Ս. Էջմիածին, 2014, էջ 219

¹⁰ **Արամ** տեղանվան առթիվ Սուրբ Գրքի բառարանում ասվում է, որ այն «գրեթե համանուն է Ասորիք բառին» (տե՛ս **Բառարան Սուրբ Գրքոց**, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 61, **Արամ** բառահոդվածը):

Բառարան Սուրբ Գրքոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 233-234 (**Լեզու** բառահոդվածը):

ընկալվում է որպես «ազգության անուն+երեն» մասնակաղապարի իրացում՝ «արամների լեզու»:

գ) Կարող է դիտարկվել իբրև բառակազմական մի հանգրվանում կրկնակ ձայնավորի պարզեցում՝ **արամերեն – արամերեն**: Այս մոտեցումը, սակայն, հիմնավոր չէ, քանի որ (երկու **ե-ով**) կան կանոնական և ընդունելի լեզվանուններ՝ **կորերեն, հրերեն**, և դրանցում կրճատման հարց չի ծագել:

Լեզվի այս անունը արձանագրվել է հայերենի բանասիրական (լեզվաբանական) շատ բառարաններում: Դրանք ներկայացնենք ըստ տեսակների:

Ա. Միալեզվյան բառարաններ:

ա) **Բացատրական**: Մալխայանցի բառարանը արամեացիների լեզվի անունը չի գրանցել, թեև կան **ասորերեն-ը, եբրայեցերեն-ը, արաբերեն-ը** և այլն, կա միայն **արամեական** բառը, որի բառահոդվածում տրված է գործածության նմուշ նախադասությամբ՝ «Արամեական լեզուները պատկանում են սեմական լեզուների խմբին»¹²: Ի դեպ, նույն տեղում բառարանագիրը **արամեական-ի** հիմք է համարում **Արամե** հատուկ անունը:

Ժամանակակից հայերենի ակադեմիական բացատրական բառարանում նույնահիմք **արամեական, արամեատառ, արամեացի** (տարբերակն էլ կա՝ **արամայեցի**) բառերից հետո գրանցվել է արամեացիների լեզվի անունը՝ **արամերեն** ձևով (մեկ **ե-ով**), ձևաբանական երեք արժեքով և երեք իմաստով՝ «1. Գոյ. Արամեացիների (Միջագետքի հին ասորիների) լեզուն, սեմական լեզուներից մեկը, 2. Ած. Արամեական լեզվին վերաբերող, արամեական լեզվի, 3. Մկր. Արամեական լեզվով»¹³: Էդ. Աղայանի կազմած բացատրական բառարանում պատկերը գրեթե նույնն է. «1. Գոյ. Արամեացիների լեզուն, 2. Ած., մկր. Արամեացիների լեզվով»¹⁴:

Արևմտահայերենի բեյրության երկհատոր բացատրական բառարանում գրանցվել է **արամերեն** լեզվանունը՝ «Յիսուսի ժամանակ

¹¹ Տե՛ս, օրինակ, **Հ. Հ Չազնազճեան**, Ընդարձակ Բառարան Անգլիերեն Հայերեն, Բոստոն, 1922, էջ 77 և **Ռուս-հայերեն բառարան**, հ. 1, Երևան, 1954, էջ 36: **Արամ** հիմքից կազմվել է **արամական** ածականը:

¹² Հմմտ. **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հ.1, Երևան, 1944, էջ 253:

¹³ **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 1, Երևան, 1969, էջ 208:

¹⁴ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 125:

Բառարանի խմբագրված տարբերակում լեզվի անունը գեղջվել է, բառակազմական նույն հիմքով բառերից մնացել է միայն **արամեատառ-ը** (տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան (խմբագիր՝ Լ. Հովսեփյան), Երևան, 2014, էջ 119):

գործածուած՝ աղաւաղուած երբայեցերէն լեզուն» բացատրությամբ¹⁵: Սրան հաջորդող բառը՝ **արամեական** «հին ասորական, հիւսիսային Միջագետքի պատկանող», է բաղադրիչը ունի:

բ) **Ուղղագրական**: Հովհ. Բարսեղյանի կազմած ուղղագրական-տերմինաբանական բառարանը գրանցել է **արամերէն**, տասնամյակներ անց նույնը տեսնում ենք ուղղագրական մեկ այլ բառարանում¹⁶:

գ) **Լեզվաբանական տերմինների**: «Լեզվաբանական բառարանում» զլիսաբառ են դարձել կառուցվածքային երկու միավորներ (բառակապակցություն և բառ)՝ **արամեական լեզու** և **արամերէն**, տրված են օտարալեզու համարժեքները՝ арамейский язык, Aramaic, araméen, Aramäisch, իսկ **արամեական լեզուներ (բարբառներ)** բառահոդվածում հիշատակված են **հին արամերէն**, **Եգիպտոսի արամերէն** խոսում էին Եգիպտոսի հրեա գաղթականները. Դրանով գրված էին Ս. Գրքի որոշ մասեր¹, **Պաղեստինի արամերէն**, **սամարական արամերէն** բաղադրյալ անունները¹⁷:

Բ. Թարգմանական բառարաններ:

ա) Ֆրանսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն: XX դարի արշալույսին Գ. Լուսինյանի պատրաստած ֆրանսերեն-հայերեն բառարանը Araméen-ը թարգմանում է **արամայերէն**, **արամերէն**¹⁸: Սա, ըստ մեր ունեցած տվյալների, լեզվի անվան այս տարբերակի բառարանային առաջին արձանագրումն է: XXI դարում հեղինակային խմբի կազմած ֆրանսերեն-հայերեն բառարանում գրանցված է միայն **արամերէն** տարբերակը¹⁹: 1915-ին լույս տեսած հայերեն-ֆրանսերեն բառարանը ներկայացնում է **արամերէն** – l'araméen, la langue araméenne բառազույգը²⁰, հարյուր տարի

¹⁵ Գնլ արք. Ճերէճեան, Փ. Կ. Տօնիկեան, Արտ. Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Բեյրութ, 1992, էջ 208:

¹⁶ Հովհ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երևան, 1973, էջ 133, Փ. Մեյթիխանյան, Հայերենի ուղղագրական նոր բառարան, Երևան, 2013, էջ 83:

¹⁷ Հմմտ. Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազոյւյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 33-34: Արամերէն տարբերակն է տրված նաև լեզվաբանական թարգմանական բառարանում (Ս. Հարությունյանց, Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան, Երևան, 1963, էջ 30):

¹⁸ Գ. Լուսինեան, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հ. 1, Փարիզ, 1900, էջ 149:

¹⁹ Ա. Բարլեզիզյան և ուրիշներ, Ֆրանսերեն-հայերեն բառարան, Երևան, 2010, էջ 72

²⁰ Գ. Լուսինեան, Կ. Բասմաջեան, Առձեռն բառարան հայերեն աշխարհիկ լեզուի ֆրանսերեն, Կ. Պոլիս, 1915, էջ 97:

անց՝ Ա. Բարլեզիզյանի կազմած բառարանը՝ **արամերեն** – araméen, langue araméenne²¹:

բ) Հայ-ռուսերեն, ռուս-հայերեն: Հայ-ռուսերեն բառարանների մեջ առաջինը **արամերեն** լեզվանունը գրանցել է Հ. Դադբաշյանը՝ **արա//մեան** անհասկանալի տարանջատմամբ ներկայացված բառահոդվածում: Հղում է արվում **ասորերեն**-ին²²: Բառարանագիրը **արամեան**-ը թարգմանում է гайканский народъ, гайканы, армяне՝ փակագծերում նշելով, որ դա Մովսես Խորենացու թյուր մեկնաբանության հետևանք է: Այս մոտեցումն ընդունելի չէ²³:

XX դարի կեսերին հրատարակված ռուս-հայերեն ակադեմիական բառահատոր բառարանում արамейский բառահոդվածի Арамейский язык-ը թարգմանված է այսպես՝ արամեական լեզու, **արամերեն**, արամների լեզու²⁴: 1960թ. հայ-ռուսերեն բառարանը **արամերեն** (арамейский язык) տարբերակն է արձանագրել²⁵, որին, ինչպես և Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած բացատրական և ուրիշ բառարանների հետևել է ակադեմիական հայ-ռուսերեն բառարանը. ԱԲԱՄԵՐԵՆ – 1. Գ. Арамейский язык, 2. Ա. Арамейский (о языке), 3. Մ. По-арамейски, на арамейском языке²⁶:

գ) Հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն: Հ. Հ. Չազմագճյանը Aramaic-ը թարգմանում է **արամական**²⁷, **արամերեն**²⁸: Մ. Գույումճյանի

²¹ Ա. Բարլեզիզյան, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, 2009, էջ 135:

²² Յ. Դադբաշեան, Լիակատար բառարան հայերենից ռուսերեն, Թիֆլիս, 1911, էջ 106:

²³ Մովսես Խորենացու գործածած **արք արամեանք, արամեան ազն** արտահայտությունների հիմքում ընկած Արամ անվան մեջ հետազոտողները տեսնում են ուրարտական Aramu թագավորի անվան հիշողությունը (տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 286):

²⁴ Ռուս-հայերեն բառարան, հ. 1, Երևան, 1954, էջ 36:

²⁵ Ա. Ղարիբյան, Ե. Տեր-Մինասյան, Մ. Գևորգյան, Հայ-ռուսերեն բառարան, Երևան, 1960, էջ 61:

²⁶ Հայ-ռուսերեն բառարան, Երևան, 1987, էջ 85:

²⁷ Պ. Սևակը գործածել է **արամական** համանուն կազմությունը՝ **արամյան** «հայկական» բառի իմաստով.

Քե՛զ՝ մեր հայկական և **արամական**,

Չկարողացան քեզ խլել մեզնից

Ո՛չ խարդավանքով արամեական,

Ո՛չ բյուզանդական սիրով անազնիվ (Պ. Սևակ, «Մայրենի լեզու» / Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1972, էջ 509):

²⁸ Հ. Հ Չազմագճեան, Ընդարձակ Բառարան Անգլիերենէ Հայերէն, Բոստոն, 1922, էջ 77:

հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն բառարանները ներկայացնում են **արամերէն** – Aramaean և Aramaic – արամական. **Արամերէն** բառագույգերը²⁹:

դ) Հայերեն-գերմաներեն: Արևելահայերենի և արևմտահայերենի հիմքերով կազմված հայերեն-գերմաներեն բառարանները ևս գրանցել են մեկ **ե**-ով տարբերակը՝ **արամերէն** / **արամերէն** – Aramäisch³⁰:

ե) Հայերեն-իսպաներեն բառարանում նույնպես գրանցվել է մեկ **ե**-ով տարբերակը՝ **արամերէն** – arameo³¹: Խնդիրը նույն կերպ է լուծել հայ-ադրբեջաներեն բառարանը³²:

Այսպիսով՝ արևմտահայերենի և արևելահայերենի բանասիրական (լեզվաբանական) միալեզվյան և թարգմանական բառարաններում զարմանալի միասնականությամբ արամեացիների կամ արամեական լեզվի անունը արձանագրվել է մեկ **ե**-ով՝ **արամերէն** / **արամերեն**: Ըստ մեր ունեցած տվյալների՝ միակ բացառությունը հանգաբառարանն է, որտեղ գետեղվել է **արամերեն**՝ երկձայնավորով տարբերակը³³:

ԱՐԱՄԵՆԵՆ

Արամեացիների լեզվի անվան մի տարբերակն է կրկնաձայնավոր **արամերեն**-ը: Նրա բաղադրիչները հստակ տարանջատելի են՝ **արամե+երեն**: Բառակազմության ընթացքն այսպիսին է. **Արամեացի** բառից անջատվել է «ազգ, որևէ տեղացի» նշանակող **-ացի** ածանցը, ավելացել է **-երեն** «լեզու» բառակազմական նշանակությունն արտահայտող ածանցը: Մեկ-երկու բացառությամբ (օրինակ՝ **վրացի-վրացերեն**, **եբրայեցի-եբրայեցերեն**) հայերենում լեզուների անունները այդպես են կազմվում³⁴:

²⁹ Մ. Գույումճեան, Ընդարձակ բառարան հայերեն անգլիերեն, Բեյրութ, 1970, էջ 74, Ընդարձակ Բառարան Անգլիերեն Հայերեն, Բեյրութ, 1981, էջ 74:

³⁰ Յ. Գաբրիելյան և ուրիշներ, Հայ-գերմաներեն բառարան, Քյոլն, 2000, էջ 56, Լ. Թորոսեան, Ընդարձակ բառարան Հայերեն Գերմաներեն, Վիեննա, 2019, էջ 77, .

³¹ Հ. Յարութիւն Թեքեան, Բառարան Հայերեն Սպաներեն, Բուենոս Այրես, 1984, էջ 70:

³² Ռ. Բաղրամյան, Ի. Խալիլով, Հայ-ադրբեջաներեն բառարան, Երևան, 1978, էջ 52:

³³ Հայոց լեզվի հանգաբառարան, Երևան, 1976, էջ 353:

³⁴ –**Երեն** կամ **-արեն** վերջածանցներով բառերը կազմվում են «բոլոր ազգերի անուններից՝ վերջի **ացի** մասնիկը դուրս ձգելուց հետո» (տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 254):

Հայերենում ունենք **արամեագետ**³⁵, **արամեախոս**³⁶, **արամեական**, **արամեանալ / արամեացնել**³⁷, **արամեացի**, **արամեատառ**, **արամեուհի** բառերը, որոնցում առկա է **Արամէ / արամե**-ի վերջնահնչյունը: Բառակազմական փնջի բոլոր միավորներն ունեն այդ տարրը, և մեկ **ե**-ով լեզվանունը խախտում է բառակազմական օրինաչափությունը, դեմ է բառակազմական համակարգայնությանը:

Մինևույն ձայնավորի զուգորդությամբ հայերենում գործածվում են հասարակ և հատուկ մի շարք անուններ (սրանց մեջ շատ են փոխառությունները), ինչպես՝ **տեսասալիք**, **Սասաղի**, **Հասագա**, **լիլմաստ**, **կոորդինատ**, **վակուում** և այլն: «Հայերենագիտական բառարանում» և համալսարանական դասագրքում և կրկնակ **ե(է)**-ի համար իբրև օրինակ բերվում են միայն լեզուների անուններ՝ **կորեերեն**, **հրեերեն**³⁸, սակայն չի հիշատակվում **արամեերեն**-ը: Ի դեպ, գիտական շրջանակներին ծանոթ գրաբարյան **քաղղեերեն** կազմությունը ևս կրկնակ ձայնավոր ունի (5-րդ դարից վկայված ունենք նաև **քաղղեարեն**³⁹): Այդպիսիք են նաև սեմական ուրիշ մեռած լեզուների անուններ՝ **ամորեերեն**, **մինեերեն**, **սաբեերեն**⁴⁰: Նաև **աղղեերեն / աղիգեերեն / աղիդեերեն**՝ իբերա-կովկասյան լեզվաընտանիքից:

Ինչպես տեսանք, հայոց լեզվի բանասիրական բառարաններում համատարած գրանցվել է **արամեերեն** լեզվանունը, կրկնական հնչյունով տարբերակն ուղիղ այբբենական կարգով բառացանկերում փաստացի չի գտնվում (հանգաբառարանի ցանկը հակադարձ է):

³⁵ «Արքունիքում կային հատուկ **արամեագետ** գրիչներ» (տե՛ս **Գ. Զահուկյան**, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1960, էջ 14): Բառարանային գրանցում չունի:

³⁶ «Քրիստոնեությունն ասորախոս (**արամեախոս**) աշխարհում տարածվել է առաքելական ժամանակներից» («**Քրիստոնյա Հայաստան**» **հանրագիտարան**, Երևան, 2002, էջ 85): Բացատրական բառարաններում չի գետեղվել:

³⁷ «Այսպիսով, Միջագետքը **արամեացվեց**» (տե՛ս **Ռ. Իշխանյան**, Բնիկ հայերեն բառեր և փոխառություններ, Երևան, 1989, էջ 62): Այս բառը ևս բառարանային գրանցում չունի:

³⁸ **Հ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 310, **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն), Երևան, 1997, էջ 194:

³⁹ **Հ. Գաբրիել Աւետիքեան**, **Հ. Խաչատուր Միրմելեան**, **Հ. Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 971:

⁴⁰ **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 10, Երևան, 1984, էջ 686:

Ինչպիսի՞ն է պատկերը հայերենի ընդհանուր և մասնավոր (ճյուղային) հանրագիտարաններում:

Հայկական սովետական հանրագիտարանն ունի ԱՐԱՄԵՆԵՆԵՆ քառահոդված⁴¹ (հեղինակը Գ. Ջահուկյանն է), որտեղ ասվում է, որ արամեերենը պատկանում է սեմական լեզվաընտանիքի հյուսիսարևմտյան խմբին, կազմում է մերձավոր բարբառների մի ամբողջություն, որոնք երբեմն որակվում են որպես արամեական լեզուներ: Բազմահատորյակին հետևել է վերջերս հրատարակված «Հանրագիտական քառարանը»⁴²:

Արամեերեն տարբերակը ենթավերնագիր է դարձել «Աստվածաշնչի հանրագիտարանում», բազմիցս գործածվել այնտեղ⁴³:

Այսպիսով պարզեցինք լեզվանվան բառարանային մշակման ընդհանուր պատկերը: Այժմ տեսնենք, թե լեզվի անվան ո՞ր տարբերակն է գործածվում գիտական գրականության մեջ:

Ջարմանալի իրողություն. Թեև Հր. Աճառյանը գործածել է **արամեերեն** տարբերակը, բառարաններն էլ գրեթե համատարած որդեգրել են այն, XX դարի երկրորդ կեսին գիտնականները (լեզվաբան, պատմաբան, հնագետ, արևելագետ և այլն) արևելահայերեն գիտական խոսքում գործածել են հիմնականում **արամեերեն**-ը, ձևավորվել է որոշակի ավանդույթ: Ներկայացնենք բնագրային նմուշներ ըստ հեղինակների և գործածության ժամանակագրության: Գ. Ջահուկյան. Ա) «Անհրաժեշտ էր յուրացնել նաև **արամեերենը**, որ լայն տարածում ուներ ասորական պետության սահմաններում»⁴⁴, Բ) «Պարսկական թագավորության շրջանում **արամեերենը** ավելի է տարածվում՝ դառնալով Առաջավոր Ասիայի ընդհանուր հաղորդակցման լեզուն. Այդ պետության մեջ այն գրասենյակային պաշտոնական լեզու է և գրականության մեջ հայտնի է «թագավորական **արամեերեն**» անունով»⁴⁵, Գ. Կարախանյան. «**Արամեերեն**

⁴¹ **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 1, Երևան, 1974, էջ 278, **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 445:

⁴² **Հանրագիտական քառարան**, հ. 1, Երևան, 2016, էջ 206: Հավելենք, որ Վիքիպեդիա ազատ հանրագիտարանում այժմ **արամեերեն** տարբերակն է գետեղված, իսկ Վիքիբառարանում՝ **արամեերեն** (<https://hy.wikipedia.org>, <https://hy.wiktionary.org.-մուտք> 25.02.2021):

⁴³ **Աստվածաշնչի հանրագիտարան**, Երևան, 1999, էջ 306, 73 և այլն:

⁴⁴ **Գ. Ջահուկյան**, Լեզվաբանության պատմություն, հ.1, Երևան, 1960, էջ 14:

⁴⁵ **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 474: Նույն տարբերակն է ընտրվել նաև ստուգաբանական

նորահայտ երկու արձանագրություններ» (վերնագիր)⁴⁶, Էդ. Աղայան. «Մի թե նախաքրիստոնեական շրջանի հայերը գրադաշտական չէին, որոնք, այնուամենայնիվ, թողել են հունարեն, **արամեերեն**, պահլավերեն, լատիներեն արձանագրություններ»⁴⁷, Արտ. Մարտիրոսյան. «**Արամեերենը** Աքեմենյան աշխարհի ամենամեծ lingua Franca-ն է»⁴⁸, Ռ. Իշխանյան. «Ավելի ուշ Միջագետքում **արամեերենին** փոխարինեց արաբերենը»⁴⁹, Ն. Մկրտչյան. «Հին արևելյան լեզուներից են աքքադերենը, իտոիերենը, իեթերենը, էլամերենը, **արամեերենը** և այլն»⁵⁰, Լ. Խաչատրյան. «Մեմական մնացած լեզուները մեռած են, ինչպես՝ աքքադերենը, **արամեերենը...**»⁵¹ և այլն:

Այս տարբերակն են գործածել նաև Վ. Համբարձումյանը⁵² և ուրիշներ, հանդիպում է նաև թարգմանված լեզվաբանական⁵³ և աստվածաշնչա-գիտական⁵⁴ հրատարակություններում⁵⁵:

բառարանում (**Գ. Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 16):

⁴⁶ «Պատմա-բանասիրական հանդես», 1971, հմ. 3, էջ 274:

⁴⁷ **Է. Աղայան**, Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Երևան, 1977, էջ 218:

⁴⁸ **Արտ. Մարտիրոսյան**, Մաշտոց (պատմա-քննական տեսություն), Երևան, 1982, էջ 30:

⁴⁹ **Ռ. Իշխանյան**, Բնիկ հայերեն բառեր և փոխառություններ, Երևան, 1989, էջ 63:

⁵⁰ **Ն. Մկրտչյան**, Բառերի կենսագրությունից, Երևան, 2004, էջ 6:

⁵¹ **Լ. Խաչատրյան**, Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 275:

⁵² **Վ. Համբարձումյան**, Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, 2012, էջ 186:

⁵³ Հմմտ. «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում» հայտնի հոդվածի զույգ թարգմանությունները՝ **Հ. Հյուբշման**, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 12 (թարգմանիչ՝ Մ. Հարությունյան), **Հ. Հյուբշման**, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1999, էջ 49 (թարգմանիչ՝ Լ. Հովսեփյան): Այս վերջին գրքում զետեղված «Մեմական փոխառյալ բառեր հին հայերենի մեջ» հոդվածում, որի թարգմանիչը Մխիթարյան միաբանության անդամ, հայագետ Հ. Տաշյանն է, հանդիպում է նաև մեկ **ե**-ով տարբերակը (էջ 144, 146, 147, 153):

⁵⁴ Հմմտ. «Որպես միջազգային գործեր վարելու լեզու՝ այն (հունարենը – Գ.Գ.) փոխարինեց արամեերենին» (**Մ. Բաչկևոր**, Երբ բացում ենք Աստվածաշունչը, Երևան, 1999, էջ 98 (թարգմանիչներ՝ Մ. Գաբրիելյան, Հ. Մուրադյան)), «Եզրասի գրքում ուշագրավ են պաշտոնական նամակները, որոնք հաճախ **արամեերեն** են գրված», «**Արամեերենը** դարձավ Պարսից կայսրության լեզուն» (**Աստվածաշնչի ամփոփ ուղեցույց**, Երևան, 2012, էջք 72, 132 (թարգմանիչ՝ Ա. Գյուրջինյան)):

⁵⁵ Հմմտ. «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում» հայտնի հոդվածի զույգ թարգմանությունները՝ **Հ. Հյուբշման**, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 12 (թարգմանիչ՝ Մ. Հարությունյան), **Հ. Հյուբշման**, Հայագիտական

Լեզվի անվան տարբերակի ընտրության հարցում արևելահայ և արևմտահայ ավանդույթների տարբերությունը կարող ենք ցույց տալ այսպիսի հանդիպադրման միջոցով: Նոր Կտակարանի արևմտահայերեն իմաստային թարգմանության մեջ Ջարեհ արք. Ազնավորյանը քանիցս գործածել է **արամերէն** բառը, որի դիմաց արևելահայերեն փոխադրության մեջ տողերիս հեղինակը գործածել է **արամներեն** տարբերակը: Հմմտ. Արևմտ. «Գողգոթա». Ինչպես բացատրուած է՝ **արամերէն** լեզուով կը նշ. «Գանկ» և արևել. «**Գողգոթա**». Ինչպես բացատրուած է, **արամներեն** նշ. է «**Գանգ**»⁵⁶:

ԱՐԱՄԱՅԵՐԵՆ

Գ. Լուսինյանի բառարանում, ինչպես տեսանք, 1900-ին գրանցվել է **արամայերէն** տարբերակը ևս: Այն կազմվել է **արամայեցի** բառի –**եցի** ածանցի կրճատման և –**երեն** ածանցի միացման միջոցով: Համեմատելի է գրաբարյան **հռովմայերէն** «լատիներեն»⁵⁷ և սեմական այս լեզվով ինքնանվանող բառի հետ՝ **ܐܪܡܝܐ / Ārāmāyā**⁵⁸:

Հայերենի ներկա փուլում **արամայերեն** տարբերակը գրեթե չի գործածվում, հազվադեպ է գիտական աշխատություններում: Օրինակ՝ «Եբրայական լեզվաբանները հասնում են արաբերենի, եբրայերենի և **արամայերենի** ցեղակցության գաղափարին»⁵⁹: Սովորաբար հղվում է **արամներեն**-ին⁶⁰:

Արևելահայերենի բառարանները այս տարբերակն առհասարակ չեն գրանցել:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերենի ազգային կորպուս լեզվաբանական որոնողական համակարգում **արամերեն** տարբերակը, որ իշխող է հայերենի

ուսումնասիրություններ, Երևան, 1999, էջ 49 (թարգմանիչ՝ Լ. Հովսեփյան): Այս վերջին գրքում զետեղված «Սեմական փոխառյալ բառեր հին հայերենի մեջ» հոդվածում, որի թարգմանիչը Մխիթարյան միաբանության անդամ, հայագետ Ն. Տաշյանն է, հանդիպում է նաև մեկ **ե**-ով տարբերակը (էջ 144, 146, 147, 153):

⁵⁶ Նոր Կտակարան Ցիսուսի Քրիստոսի, նոր աշխարհաբար թարգմանություն, Անթիլիաս, 1993, էջ 377, Նոր Կտակարան Հիսուսի Քրիստոսի, աշխարհաբար նոր թարգմանություն, Երևան, 2001, էջ 299:

⁵⁷ **Առձեռն բառարան հայկազնեան լեզուի**, Բ տպ., Վենետիկ, 1865, էջ 507:

⁵⁸ <https://linguapedia.info/nazvania/names.html>:

⁵⁹ Գ. Զահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1960, էջ 149:

⁶⁰ Գ. Զահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ.1, Երևան, 1960, էջ 613:

բառարաններում, իբրև բառույթ հանդիպում է ընդամենը 8 համատեքստում, որոնցից միայն մեկն է թեքված ձևով՝ **արամերենում**: Ի դեպ, այդ 8 օրինակներից մեկը Փարիզի «Յառաջ» թերթից է, արևմտահայերեն: Մնացածը՝ մամուլ, ճանաչողական գրականություն, երկու գործածություն Հայկական սովետական հանրագիտարանից, որի առաջին հատորում, ինչպես ասացինք, **արամերեն** (կրկնահնչյունով) բառահոդված կա:

Բառարաններում որպես գլխաբառ գրանցված չլինելն է թերևս հիմք դարձել, որ **արամերեն** տարբերակն ԱՐԵՎԱԿ-ում բառույթի արժեքով չի ընկալվել ու ներկայացվել, ուստի և բառույթի հրահանգով որոնումն արդյունք չի տալիս: Այդ պատճառով էլ որոնումն իրականացրել ենք ըստ բառաձևերի: Ընդհանուր առմամբ կա 71 գործածություն, որոնցից **արամերեն** ձևով՝ 47, **արամերենը**՝ 8, **արամերենի**՝ 9, **արամերենին**՝ 2, **արամերենից**՝ 1, **արամերենով**՝ 6: Ակներեն է, որ հոլովման հարացույցը գրեթե ամբողջական է (բացակայում է միայն **արամերենում** հոլովաձևը):

Տեքստերը, որոնցում գործածվել է **արամերեն** տարբերակը, բազմազան են: Առյուծի բաժինը պատկանում է Հայկական սովետական հանրագիտարանին՝ 45 գործածություն, որը կարևոր ցուցանիշ է այս տարբերակի օգտին:

Մնացածը տարբեր ժանրերի տեքստեր են. Գեղարվեստական գրականություն, այդ թվում՝ թարգմանական (Հ. Խաչատրյան, «Արտաշես», Մ. Բուլգակով, «Վարպետը և Մարգարիտան», Ս. Սարգսյան, «Վարագույրից այն կողմ»), գիտական և գիտահանրամատչելի գրքեր («Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները», Ս. Հարությունյանի «Հայ հին վիպաշխարհը», Կ. Մուսայելյանի «Տասներկու ճանապարհորդություն դարերի խորքը»), թերթ («Ազգ», «Նորավանք»):

Արամերեն տարբերակը **արամերեն**-ից տասն անգամ ավելի շատ է գործածվել: Սա փաստում է նրա ընդունված լինելու մասին:

Արամայերեն-ի որևէ բառաձև չկա ԱՐԵՎԱԿ-ում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ կարող ենք որոշակի եզրակացություններ անել:

1. Արամեացիների լեզուն անվանելու համար հայերենում կազմվել են բառային երեք միավորներ՝ **արամերեն**, **արամերեն** և **արամայերեն**:

2. Հայերենի (արևելահայերենի և արևմտահայերենի) միալեզվյան և թարգմանական լեզվաբանական բառարանները գերազանցապես արձանագրել են **արամերեն** տարբերակը, հանրագիտական բառարանները՝ **արամերեն**-ը, ընդամենը մեկ բառարան՝ **արամայերեն**-ը (այլ տարբերակի հետ):

3. Արևելահայերենում, մասնավորապես գիտական խոսքում, երեք տարբերակներից գերիշխում է **արամերեն**-ը, այնինչ բառարանները չեն արտացոլում բառի գործածության փաստական վիճակը:

4. Ըստ գործածության փաստերի և բառարանների տվյալների՝ արևմտահայերենում ընդունված է **արամերեն**-ը, տարբերակայնության ինդիք գոյություն չունի:

5. Արևելահայերենում հակասություն է առաջացել բառի գործառական իրական արժեքի և բառարանային արձանագրումների միջև՝ դժվարություն ստեղծելով լեզվի անունը գործածողների համար: Այս հարցում կանոնակարգման անհրաժեշտություն կա:

6. **Արամերեն** տարբերակը հայերենի բառակազմական օրինաչափություններին համապատասխանող կազմություն է, գիտական խոսքում լիարժեք ընդունված է, սեմական լեզուների արևելահայերեն ցանկում արամեացիների լեզվի անունը հարկավոր է գրանցել **արամերեն** ձևով:

Դավիթ Գյուրջինյան

Արամեացիների լեզվի հայերեն անունը

Ամփոփում

Սույն հոդվածում քննել ենք արամեացիների լեզվի հայերեն անվան տարբերակները: Արամեացիների լեզուն անվանելու համար հայերենում կազմվել են բառային երեք միավորներ՝ **արամերեն**, **արամեերեն** և **արամայերեն**:

Հայերենի (արևելահայերենի և արևմտահայերենի) միալեզվյան և թարգմանական լեզվաբանական բառարանները գերազանցապես արձանագրել են **արամերեն** տարբերակը, հանրագիտական բառարանները՝ **արամեերեն**-ը, ընդամենը մեկ բառարան՝ **արամայերեն**-ը (այլ տարբերակի հետ):

Արևելահայերենում, մասնավորապես գիտական խոսքում, երեք տարբերակներից գերիշխում է **արամեերեն**-ը, այնինչ բառարանները չեն արտացոլում բառի գործածության փաստական վիճակը:

Ըստ գործածության փաստերի և բառարանների տվյալների՝ արևմտահայերենում ընդունված է **արամերեն**-ը, տարբերակայնության ինդիք գոյություն չունի:

Արևելահայերենում հակասություն է առաջացել բառի գործառական իրական արժեքի և բառարանային արձանագրումների միջև՝ դժվարություն ստեղծելով լեզվի անունը գործածողների համար: Այս հարցում կանոնակարգման անհրաժեշտություն կա:

Արամներեն տարբերակը հայերենի բառակազմական օրինաչափություններին համապատասխանող կազմություն է, գիտական խոսքում լիարժեք ընդունված է, սեմական լեզուների արևելահայերեն ցանկում արամեացիների լեզվի անունը հարկավոր է գրանցել **արամներեն** ձևով:

Давид Гюрджинян

Армянское название арамейского языка

Резюме

В статье исследуется армянское название арамейского языка, которое в армянском встречается в трёх вариантах: արամերեն / արամներեն (отличаются одним и двойными согласными) и արամայերեն (по конструкции можно сравнить с древнеармянским словом հռվմայերեն «латинский»). В основе этих слов лежат этноним արամեացի «арамеец» и омонимы: топоним Արամ (Арам) и бессуффиксный этноним արամ «арамеец». Все названия образованы с помощью суффикса -երեն, обозначающий язык. Цель работы – нормирование армянского названия арамейского языка и способствование его лексикографической разработке.

Одноязычные и переводческие филологические словари армянского языка (западноармянского и восточноармянского) зафиксировали в основном вариант արամերեն, а энциклопедические словари – արամներեն (с двумя согласными), лишь в одном словаре зафиксирован вариант արամայերեն (и то с другим вариантом).

В западноармянской традиции принят только вариант արամերեն (с одним согласным).

В восточноармянском языке, в частности в научной речи многократно обладает вариант արամներեն (с двойными согласными), однако словари не отражают фактическое состояние употребления вариантов названия арамейского языка. Вариант արամներեն считается результатом закономерного словообразования. Предлагается канонизировать употребление этого варианта и его включить в перечень семитских языков и языков мира, а также в создающиеся новые словари армянского языка

Armenian name of Aramaic language

Summary

The article examines the Armenian name of the Aramaic language, which in Armenian occurs in three variants: արամերեն / արամեերեն (differ by one and double consonants) and արամայերեն (by construction it can be compared with the ancient Armenian word հռովմայերեն “Latin”). These words are based on the ethnonym արամեացի “Aramean” and homonyms: the toponym Արամ (Aram) and the non-affix ethnonym արամ “Aramaic”. All names are formed with the suffix –երեն, meaning language. The aim of the work is to standardize the Armenian name of the Aramaic language and to promote its lexicographic development.

The monolingual and translation philological dictionaries of the Armenian language (Western Armenian and Eastern Armenian) mainly recorded the variant արամերեն, and encyclopedic dictionaries – արամեերեն (with two consonants), only one dictionary contains the variant արամայերեն (and then with another variant).

In the Western Armenian tradition, only արամերեն (with one consonant) is accepted.

In the Eastern Armenian language, in particular in scientific speech, the use of the variant արամեերեն (with double consonants) is repeatedly used, however, the dictionaries do not reflect the actual state of use of the variants of the name of the Aramaic language. Variant արամեերեն is considered the result of regular word formation. It is proposed to canonize the use of this variant and to include it in the list of Semitic languages and languages of the world, as well as in new dictionaries of the Armenian language that are being created.

Խմբագրություն է ուղարկվել 04. 04. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 20. 04. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

ՄՐԲՈՒՀԻ ԳԱՍՈՅԱՆ

<<Քարհանյան դպրոց» ուսումնական կենտրոնի
մեթոդիստ, հայոց լեզվի ուսուցչուհի
srbuhi.g.1994@mail.ru

ՀԵՂԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Վանաձորի պետական համալսարան
Բան. գիտ. թեկն., դոցենտ
melkonyan.h.a@gmail.com

**ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ-ՀԱՏԿԱՑՅԱԼ ՇԱՐՄԱՆԱՍԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
(ըստ Մ. Խորենացու «Հայոց պատմության» I գրքի)**

Բանալի բառեր և արտահայտություններ. կաղապարի զարգացում, շարադասություն, հատկացուցիչ, չհամաձայնեցված որոշիչ, գրաբար, ժամանակակից արևելահայերեն, տիպականացման ոլորտ, շարահյուսական տիպաբանություն, տարժամանակյա մոտեցում, արձանագրային տիպաբանություն, վիճակագրություն, խոսքիմասային արտահայտվածություն:

Ключевые слова и выражения: развитие конструкции, порядок слов, несогласуемое определения, древнеармянский, современный восточноармянский язык, типизируемая область, синтаксическая типология, диахронический подход, инвентаризационная типология, статистика, выражение по частям речи.

Keywords and expressions: construction development, word order, attribute, uncoordinated attribute, Grabar (Old Armenian), Modern Eastern Armenian, typification area, syntactic typology, diachronic approach, inventory typology, statistics, part of speech manifestation.

Հատկացուցչի և որոշչի առանձնացումը հայերենի քերականության առանձնահատկություններից է: Ուշագրավ է այն հանգամանքը, որ կան լեզուներ (օր.՝ ռուսերեն), որոնցում գոյականական անդամի այս լրացումները տարբերակված չեն: Դիտվում են իբրև գոյականական անդամի մեկ՝ որոշիչ լրացում, իսկ սեռականով որոշչի (հայերենում՝ հատկացուցչի) համար նշվում է «չհամաձայնեցված որոշիչ» եզրույթը¹:

¹ Ст' у Лингвистический энциклопедический словарь, Москва, 1990,
<http://www.tapemark.narod.ru/les/348b.html>:

Ուսումնասիրելով հարցի պատմությունը՝ տեսնում ենք, որ Ա. Այտընյանը և Ս. Պալասանյանը առանձնացնում են գոյականական անդամի երկու լրացում՝ բացահայտիչ և հատկացուցիչ՝ վերջինիս կազմում ենթադրելով նաև որոշիչը: Մ. Աբեղյանը հատկացուցիչը և որոշիչը միասնաբար ներկայացնում է «մականվան» տակ: Վ. Առաքելյանը սեռական հոլովով կիրառված գոյականական անդամի լրացումը դիտում է բացառապես հատկացուցիչ: Վ. Քոսյանն է թերևս առաջինը, ով տարբերակում է սեռական հոլովով դրված որոշիչն ու հատկացուցիչը՝ նշելով. «... *Սեռական հոլովով լրացում պարունակող բառակապակցությունները դասակարգում ենք պատկանելության, ծագման, մասնական, հեղինակության, փոխհարաբերության, ենթակայական, խնդրային և այլ իմաստներով հատկացուցիչ-հատկացյալ բառակապակցությունների, ապա՝ տեղի, ժամանակի, բաղկացության, նյութի, նպատակի, պարունակության և այլ իմաստներով որոշիչ-որոշյալ բառակապակցությունների*»²:

Ինչպես գիտենք, գրաբարում հատկացուցիչը ստացական դերանուններով արտահայտվելիս հատկացյալի հետ կապակցվում է համաձայնության եղանակով: Այս մասին Գ. Խաչատրյանը նշում է. «Ստացական դերանունները հատկացյալների հետ կապակցվում են հոլովի և թվի քերականական կարգերի համաձայնության եղանակով ... Ասվածը նշանակում է, որ ստացական դերանուններով հատկացուցիչները կարող են հանդես գալ նույն հոլովաձևով, որով արտահայտված է հատկացյալը»³: Իսկ ժամանակակից հայերենում հատկացուցիչ-հատկացյալ կապակցության միջև գործում է կառավարման եղանակը: Այսինքն՝ կառավարմամբ կապակցված հատկացուցիչը նույն չհամաձայնեցված որոշիչն է: Ուստի տրամաբանորեն նպատակահարմար կլիներ ժամանակակից հայերենում ևս նույնացնել հատկացուցիչը և որոշիչը ճանաչելով «որոշիչ» անվամբ⁴:

Ժամանակակից արևելահայերենի քերականական ավանդույթում ընդունված է. «Հատկացուցիչը սեռական հոլովով արտահայտված գոյականական անդամի այն լրացումն է, որ հիմնականում առարկան որոշում է ստացական հարաբերությամբ: Հատկացուցիչը որոշիչից զանազանվում է նրանով, որ արտահայտում է երկու առարկաների հարաբերություն, մինչդեռ որոշիչը առարկայի ու հատկանիշի

² Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 54:

³ Խաչատրյան Գ., Գրաբար, Երևան, 2014, էջ 364:

⁴ Այստեղ, սակայն, մենք թողել ենք ավանդական՝ որոշիչ – հատկացուցիչ տարբերակման մոտեցումը:

հարաբերությունն է դրսևորում: ...Ամեն խոսքի մաս կարելի է սեռական հոլովով առարկայացնել և դարձնել հատկացուցիչ: ...Իրենց իմաստային նշանակության տարբեր ծավալով հատկացուցիչ են դառնում հայերենի բոլոր խոսքի մասերը, մինչև իսկ առարկայացված ձայնարկությունները, կապերը, մակբայները և այլն ...»⁵:

Գրաբարյան հատկացուցչի մասին նշվում է⁶, որ այն կարող է արտահայտվել *«գոյականով, փոխանունով, առարկա ցույց տվող դերանունով, անդեմ բայով և այլ միավորներով»* կամ երկրորդական նախադասությամբ, այսինքն՝ ճիշտ նույն միավորներով, ինչ ժամանակակից հայերենում:

Վ. Քոսյանը, կատարելով բառակապակցական կաղապարների տարժամանակյա քննություն, անդրադառնում է նաև հատկացուցչի շարադասությանը՝ նշելով. *«Գրաբարում հատկացուցիչը մեծ մասամբ ետադաս էր գործածվում, միջին հայերենում՝ հավասարապես և՛ ետադաս, և՛ նախադաս, ժամանակակից հայերենում՝ հիմնականում նախադաս»⁷:* Հեղինակը նաև առանձնացնում է սեռականով կապակցություններ՝ հետևյալ նրբիմաստներով՝ ստացական (*զքաղաքս հակառակորդաց, Շավարշի մատուցերը*)⁸, ծագման (*լոյս տեսանելեաց, մեխակի բույր*), պատճառի և ազդակի (*ձայն ուրախութեան, վտանգի երկյուղ*), փոխհարաբերության (*որդոյն Բարայելի, Դավթի ցեղը*), ենթակայական (*Աստուծոյ վկայութիւնն, թշնամու մահն*), խնդրային (*հալածանս եկեղեցւոյ, ցալի զգացումն*), արտացոլման և վերարտադրման (*պատճէնք հրովարտակացն, մթնշաղի ուրվագծեր*), մասնական (*նշխարք սրբոց, կատարները շենքերի*), հատկություն կրողի (*ոյժ բազմաց, վարդի գույնը*), փոխարինության (*զինք արեան, պարտության վրեժը*), հեղինակության (*առակք Սողոմոնի, Թումանյանի երգերում*):

Հավելենք, որ Վ. Քոսյանը սեռականի նշված նրբիմաստներով կապակցությունների վերաբերմամբ կատարում է նաև ուշագրավ

⁵ Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, II մաս, Շարահյուսություն, Երևան, 1975, էջ 196:

⁶ Խաչատրյան Գ., Գրաբար, Երևան, 2014, էջ 364:

⁷ Քոսյան Վ., Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Երևան, 1990, էջ 14:

⁸ Փակագծերում բերված են Վ. Քոսյանի աշխատության մեջ առկա օրինակներ (մեկական օրինակ գրաբարով և աշխարհաբարով), որոնք դուրս ենք բերել նախադասություններից՝ ներկայացնելով միայն բառակապակցական օրինակները:

դիտարկումներ նրանց՝ լեզվի համապատասխան փոփոխում⁹ ունեցած արտահայտվածության ցուցանիշների մասին: Ըստ այդ դիտարկումների՝ կարող ենք առանձնացնել կապակցությունների հետևյալ խմբերը¹⁰՝

1. Գրաբարում՝ հազվադեպ, արևելահայերենում՝ հաճախադեպ կապակցություններ (*ստացական, պատճառի և ազդակի, հեղինակության* նրբիմաստներ):

2. Գրաբարում և արևելահայերենում հավասարապես հաճախակի արտահայտվող կապակցություններ (*ծագման, փոխհարաբերության, ենթակայական, խնդրային, արտացոլման և վերարտադրման, մասնական, հատկություն կրողի, փոխարինության* նրբիմաստներ):

Ամփոփելով հարցի դրվածքին վերաբերող մասը՝ նշենք, որ սույն հոդվածում մեր քննության առարկան հատկացուցիչ-հատկացյալ շարադասական կադապարն է՝ իր պատմական զարգացումներով, ինչը շարահյուսական տիպաբանության տիպականացման ոլորտներից է: Ըստ նպատակի՝ աշխատանքը վերագրելի է արձանագրային տիպաբանությանը¹¹:

Իբրև ուսումնասիրության աղբյուր՝ ընտրել ենք Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի¹² I գիրքը («Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց»)՝ գրաբար և աշխարհաբար տարբերակներով՝ նպատակ ունենալով կատարել վերոնշյալ կապակցության ներքին տիպաբանական ուսումնասիրություն՝ ելնելով տարժամանակյա հայեցակետից:

Աշխատանքը կատարելիս կիրառել ենք անմիջական բաղադրիչների վերլուծության, զուգահեռ տեքստերի վերլուծության և վիճակագրության մեթոդները՝ հիմնվելով մեր կողմից առանձնացված հետևյալ սկզբունքների վրա՝

1. հատույթավորման միջոցով զուգահեռ տեքստերում առանձնացնել հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունները,

⁹ Վ. Քոսյանը նշված կապակցություններն ուսումնասիրում է տարժամանակյա հայեցակետով՝ ուսումնասիրության ոլորտում դիտարկելով գրաբարը, միջին հայերենը, արևելահայերենը և արևմտահայերենը:

¹⁰ Իբրև դասակարգման երկու բևեռ՝ մենք այստեղ առանձնացրել ենք գրաբարը և արևելահայերենը:

¹¹ Տիպականացման ոլորտների և տիպաբանության ճյուղերի մասին տե՛ս **Մելքոնյան Հ.**, Տիպաբանություն. հայերենի տիպաբանության հարցեր, Ուսումնական ձեռնարկ, Վանաձոր, 2014, էջ 34, 16:

¹² **Խորենացի Մ.**, Հայոց պատմություն, Երևան, 1981 (աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները՝ Ստ. Մալխայանի):

2. հաշվի առնել ժամանակակից արևելահայերեն տեքստի փակագծերում գետեղված օրինակները,
3. քննել հատկացուցչի բացառապես բառակապակցական դրսևորումները՝ ուսումնասիրության դաշտում չներառելով երկրորդական նախադասությունը,
4. կատարել նախադաս և հետադաս կիրառությունների վիճակագրական հաշվարկ՝ գրանցելով դրանց հաճախադեպության ցուցանիշները:

Ձեռնարկելով կատարել նման աշխատանք՝ ելել ենք այն կանխադրությից, որ զուգահեռ տեքստերի միջև չի կարող լինել բացարձակ համարժեքություն, ինչի հիմնավորումը եղավ մեր հետազոտած լեզվանյութը:

Անդրադառնանք հետազոտության ընթացքին և արդյունքներին:

Ողջ լեզվանյութում արձանագրել ենք հատկացուցիչ-հատկացյալ կապակցության 1531 օրինակ: Ինչպես և սպասելի էր, քննվող տեքստերում, սակայն, երկկողմ դրսևորում էին ստացել ոչ բոլոր օրինակները:

Առանձնացված օրինակներից 725-ն արտահայտված են գրաբար, 806-ը՝ աշխարհաբար տեքստերում: Սա, կարծում ենք, պայմանավորված է այն հանգամանքով, որ թարգմանիչը (Ստ. Մալխասյան) Մ. Խորենացու գրաբարյան տեքստը աշխարհաբարի թարգմանելը, բնականաբար, բառացիորեն չի կատարել, և քանի որ գրաբարն էլ իր քերականական կանոններով, բառապաշարով և քերականական արտահայտության միջոցների գործարկմամբ որոշակիորեն տարբերվում է ժամանակակից արևելահայերենից, ուստի նկատված բառային տարբերություններն էլ որոշ դեպքերում դառնում են հասկանալի:

Հետազոտության քանակական տվյալներն ունեն այսպիսի տեսք¹³՝

1. միակողմանի գրաբարյան օրինակներ (82՝ գրաբարյան օրինակների մոտ 11,3 %-ը), օրինակ՝ *մերոցն Հաբեթի (24)¹⁴, որդւոցն Իսրայէլի (30), որդւոց նորա (30), ընկերի իւրոյ (40), զորդի իւր (40), գրանս իւր (40), զէնս իւր (40), իւր տուն (48), աղիւի իւրով (48), զանուն նորա (50), որդւոյ Թիրասայ (24), որդւոյ Գումերայ (52), որդւոյ Յաբեթի (52), յեզերս սահմանացն (54), իւր սահմանսն (58), յեզր ծովակին (62), կարծրութիւն նիւթոյ (66), յիշատակ իւր (66), ի կնոջէն Արայի (74), յիւրեանց յիշողութեանցն (78)* և այլն,

¹³ Մեր հետազոտության այս և մյուս քանակական ցուցանիշների մանրամասները տե՛ս 1-ին աղյուսակում:

¹⁴ Փակագծերում նշված են օրինակների էջերը:

2. միակողմանի աշխարհաբար օրինակներ (147՝ աշխարհաբար օրինակների 18,2 %-ը), օրինակ՝ *մեր ազգի (7), մեր խոսքը (11), հեղինակների առասպելները (15), նրանց հաշիվը (17), իր չարիքի (17), մեր գործերից (19), Հաբեթի սերունդներինը (25), մեր (պատմությունը) (33), (քո) կամքը (37), իրենց գրոհներով (45), (Մար Աբասի) մատյանում (47), իր հայրենիքի (53), նրա ամբոխը (55), երկրի սահմանները (59), դրանց շինության (67), նրա խոսքը (71), քամու ուժին (77), նրանց հիշատակագիրների (79), (նրանց գործերը) (79), մեր (նահապետները) (79), նրանց (թագավորների) (81)* և այլն:

Ինչպես կարելի է նկատել, աշխարհաբար բնագրում առկա և գրաբարյանում բացակա հատկացուցիչ-հատկացյալ գույգերը ավելի շատ են քանակային առումով, քան այն օրինակները, որոնք առկա են գրաբարյան տեքստում և բացակա՝ աշխարհաբար տեքստում, հմմտ.՝ 147 (18,2 %) և 82 (11,3%):

Հատկացուցիչ միակողմանի արտահայտվածության համար կարելի է բերել այսպիսի հիմնավորումներ՝

3. Աշխարհաբար տեքստում կան այնպիսի բառակապակցություններ, որոնք գրաբար տեքստում արտահայտված են հոդակիր մեկ բառով: Մրա վկայությունն ենք գտնում նաև Վ. Քոսյանի աշխատության մեջ, մասնավորապես՝ լեզվաբանը, անդրադառնալով ստացական սեռականով կապակցություններին, նշում է. «Գրաբարում, մասնավորապես դասական շրջանում, ստացական սեռականը գոյականով համեմատաբար քիչ էր արտահայտվում: Պատճառն այն է, որ պատկանելության հարաբերությունն արտահայտվում էր հոդերով կամ դերանուններով»¹⁵:

Այսպես՝ «... Բայց մեր խոսքը համառոտելու համար բավական ենք համարում ասածս նրա մասին ...» (էջ 11) նախադասության մեջ «մեր խոսքը» կապակցությունը գրաբարյան «... Այլ վասն համառոտելոյ զճառս՝ բուսական լիցի ասացեալս վասն նորա ...» (էջ 10) նախադասության մեջ փոխարինում է «զճառս» բառին: Կամ՝ «... Բայց մեր առաջիկա գործի երկարության պատճառով՝ այդ բանը կթողնենք ուրիշ տեղի և ժամանակի և մեր խոսքը կընդհատենք այդ մասին...» (էջ 17) նախադասության մեջ «մեր գործի» կապակցությունը գրաբարյան «... Այլ վասն երկարութեան առաջիկայ գործոյս՝ այլում տեղոյ և ժամանակի զայստսիկ թողեալ,

¹⁵ Քոսյան Վ., Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Երևան, 1990, էջ 14:

հատույժ աստանօր գրանս ...» (էջ 16) նախադասության մեջ համարժեք է «գործոյս» բառին:

2. Աշխարհաբար տեքստում հանդիպում են ներդրյալ և միջանկյալ բառեր կամ բառակապակցություններ (այդ թվում՝ հատկացուցիչներ), որ իբրև թարգմանական հնար ներմուծվել են թարգմանչի կողմից՝ խոսքին հստակություն հաղորդելու նպատակով: Այսպես՝ հմմտ.՝ «Մրանց վկայում է և Կեփաղիոն, որ ասում է (իբ գրքի) գլուխներից մեկում» (աշխարհաբար՝ էջ 25) և «Այսոցիկ վկայէ և Կեփաղիովն. Քանզի ասէ ի միում գլխոցն այսպէս» (գրաբար՝ էջ 24): Ինչպես կարելի է նկատել, աշխարհաբար տեքստում առկա հատկացուցիչ-հատկացյալ կապակցությամբ ներդրյալը բացակայում է գրաբար տեքստում: Դրան հավելենք նաև այն հանգամանքը, որ այդ ներդրյալ բառակապակցության մի եզրը՝ «գրքի» բառը ևս հատկացուցիչ-հատկացյալ կապակցություն է ձևավորում «գլուխներից» բառի հետ, որը նույնպես արտահայտված չէ գրաբար տեքստում: Մեկ այլ օրինակ՝ հմմտ. «(Մար Աբասի) մատյանում արանից հետո ուրիշ շատ բաներ են պատմվում» (աշխարհաբար՝ էջ 47) և «Բազում ինչ զկնի այսորիկ պատմի ի մատենին» (գրաբար՝ էջ 46): Այս օրինակներում էլ միայն հատկացուցիչն է ներդրյալ՝ «(Մար Աբասի) մատյանում»:

3. Կան օրինակներ, որոնք իրենց արտահայտությունը չեն գտել աշխարհաբար թարգմանության մեջ՝ թերևս թարգմանիչի կողմից ավելորդաբանություն համարվելու պատճառով: Այսպես՝ գրաբարյան տեքստի «Եւ առաջ մատուցեալ գրանս իւր ասէ» (էջ 40) նախադասության մեջ «գրանս իւր» կապակցությանն իբրև համարժեք՝ աշխարհաբար տեքստում կիրառվել է միայն «խոսքը» բառը՝ «Խոսքը շարունակելով (Մար Աբասը) ասում է» (էջ 41): «Իսկ երբ նեխեցաւ զի նորա՝ հրամայէ ընկենույ ի վիհ մեծ և ծածկել» (էջ 62) նախադասության մեջ ընդգծված հատկացուցիչ-հատկացյալն աշխարհաբար տարբերակում բացակայում է՝ «Բայց երբ զիսկն սկսեց նեխել, հրամայեց գցել նրան մի մեծ վիհի մեջ ու ծածկել»: այստեղ պահպանված է նշված կառույցի միայն հատկացյալը՝ «դիակ» բառը (էջ 63): Գրաբարյան տեքստում հանդիպում ենք ևս մեկ օրինակի՝ «Եւ գորդի իւր զՇարայ, զյոլվածին և զշատակեր, առաքէ ամենայն աղիսի իւրով ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ և բերրի» (էջ 48), որի աշխարհաբար թարգմանությունն է՝ «Իսկ իր որդուն, բազմազավակ և շատակեր Շարային ամբողջ աղիտով ուղարկում է մի մերձակա արգավանդ և բերրի դաշտ» (էջ 49): Ինչպես նկատում ենք, թարգմանության մեջ «աղիսի իւրով» կապակցությունը փոխարինվել է «աղիտով» բառով:

Քանակական տեղաշարժերից բացի՝ էական փոփոխություն է արձանագրվում նաև հատկացուցիչ-հատկացյալ կապակցարի

շարադասությունում: Ինչ վերաբերում է հատկացուցչի՝ գրաբարում ունեցած շարադասությանը, ապա այս մասին նշվում է. «*Հատկացուցիչը սովորաբար հանդես է գալիս հատկացյալից ետադաս շարադասությամբ, սակայն 5-րդ դարում հանդիպում են կապակցություններ, որոնցում հատկացուցիչն ունի նախադաս կիրառություն: Օրինակ՝ ՋՄերուժանյ գզլուխն ի բաց հատանէին: ...Նշված փաստի ավելի հին լինելու մասին են վկայում որոշ տեղանուններ, ինչպես՝ Յլու գլուխ և այլն*»¹⁶: Այսինքն՝ հատկացուցչի շարադասական երկու հնարավոր դիրքերից ամենահաճախադեպն ու սովորականը հետադաս կիրառությունն է, չնայած որ նախադաս կիրառությունը ևս չի բացառվում: Եվ սրանով էլ հատկացուցիչը գրաբարում և ժամանակակից արևելահայերենում շարադասական դիրքով տարբերվում է. Ի հակադրություն գրաբարի՝ ժամանակակից արևելահայերենում հատկացուցչի ավանդական և հաճախադեպ շարադասական դիրքը նախադասն է, սակայն չի բացառվում նաև հետադասությունը, ինչը առավելապես հատուկ է չափածոյին:

Մեր արձանագրած տվյալներում ևս ունենք հատկացուցչի ինչպես հետադաս, այնպես էլ նախադաս կիրառության օրինակներ, որոնց կանդրադառնանք ստորև:

1. Գրաբարյան 725 օրինակներից հատկացուցիչը նախադաս է 241-ում (33,2 %), ինչը, ըստ խոսքիմասային պատկանելության, ունի հետևյալ պատկերը՝

ա) **Գոյականով**, օրինակ՝ *զՀայաստանեայցս նախարարութիւնս (8), ազգաց զմատեանս (8), ազգաց զվեպս (8), ազգիս զպատմութիւնն (12), թագաւորացն տխմարութիւն (12), արանց զյիշատակն (24), փիլիսոփայի գրուցացն (26), Զրուանայ կանամբք (28), Շարայի որկորն (48), Շիրակայ ամբարքն (48), զՆինոսի թագաւորութեանն (58), ի Հայկայ թոռնէ (84):* Սրանց ընդհանուր քանակը 92 է (38,2 %):

բ) **Ածականով**, օրինակ՝ *հնոցն բանս (36), զբաջաց զտեղի (34):* Սրանց ընդհանուր քանակը 3 է (1,2 %):

գ) **Դերանունով**, օրինակ՝ *զքո խնդիրդ (8), մեր իրք (8), իրեանց իրս (8), մերոց նախնեացն (10), նոցա զբանս (10), ի մերում աշխարհիս (12), մեր տեղի (16), ի մերում թարգմանութեանս (22), իմոց խորհրդոցս (32), քո գրուցաց (32), քոյ տերութեանդ (36), որոյ ջուրքն (42), զիր տուն (62), մեր եղբայր (92), ի մեր լեզուս (98), մեր Զարմայր (104), նորա բարերարութիւնն (108):* Սրանց ընդհանուր քանակը 146 է (60,6 %):

2. Գրաբարյան հետադաս հատկացուցիչները 484-ն են (66,8 %), ըստ

¹⁶ Խաչատրյան Գ., Գրաբար, Երևան, 2014, էջ 365:

խոսքի մասերի՝

ա) **Գոյականով**, օրինակ՝ *թղթոյն Մահակայ (6), իմաստութեան արանցն (12), յորդուցն Աղամայ (18), որդւոյն Նոյի (20), որդի Բեւլայ (24), որդուցն Սեմայ (30), թուղթ արքայի (34), որդի Թորգոմայ (52), մատեանս թագաւորացն (58), որդւոյն Արտաշիսի (100)*: Սրանց ընդհանուր քանակը 292 է (60,3 %):

բ) **Ածականով**, օրինակ՝ *սահմանք քաջաց (34), ծննդաբանութիւն մեծաց (106)*: Սրանց ընդհանուր քանակը 5 է (1 %):

գ) **Դերանունով**, օրինակ՝ *ազգիս մերոյ (8), թագաւորացն մերոց (12), մեղադրութիւն մեր (12), ի գործոյ մերոյ (20), քոյր նոցա (28), կանանց նորա (28), նախնին մեր (32), գորդի իւր (48), ի կնոջէ իւրմէ (94), գքոյր իւր (98), նախնի նոցա (108)*: Սրանց ընդհանուր քանակը 187 է (մոտ 38,7 %):

Ըստ արդյունքների՝ կարող ենք արձանագրել, որ հետադաս կիրառությունները, ինչպէս և սպասելի էր, գրաբարյան տեքստում գերակշռում են նախադասներին մոտ 2/1 հարաբերությամբ, ինչը ևս մեկ անգամ հավաստում է այն, որ գրաբարյան հատկացուցչի շարադասական ամենահաճախադեպ դիրքը հետադասն է:

Ինչ վերաբերում է աշխարհաբար տեքստում հատկացուցչի շարադասական առանձնահատկություններին, ապա՝

1. 806 օրինակից նախադաս են 785-ը (97,4 %), ըստ խոսքի մասերի՝

ա) **Գոյականով**, օրինակ՝ *Մահակի թղթին (7), ազգերի վեպերը (9), նախնիքների բարքը (11), հեղինակների առասպելները (15), Աղամի որդիներից (19), Նոյի որդիների (21), Քամի սերունդների (25), փիլիսոփայի գրույցների (27), Զրվանի կանանց (29), Քամի ցեղից (31), թագավորի թուղթը (35), Կադմոսի տան (43), Մանավազի որդուն (47), ծովակի ափը (51), Ասորեստանի դաշտերի (57), Արայի որդուն (75)*: Սրանց ընդհանուր քանակը 381 է (48,5 %):

բ) **Ածականով**, օրինակ՝ *Մեծերի ծննդաբանությունը (7), քաջերի սահմանը (35), մեծերի ծննդաբանությունը (107)*: Սրանց ընդհանուր քանակը 9 է (1,2 %):

գ) **Դերանունով**, օրինակ՝ *մեր ազգի (7), մեր գործերը (9), նրանց կարծիքներն (17), մեր նեղությունների (27), նրանց քույրը (29), սրանց ամուսիններով (31), սրա որդուց (103), մեր Զարմայրը (105), մեր գրքում (109)*: Սրանց ընդհանուր քանակը 395 է, (50,3 %):

2. Հետադաս հատկացուցիչները 21-ն են (2,6 %): Այդ օրինակներն են՝ *(որդի) Արբեղի, (որդի Հարմայի), ոտն Արագածո (49), սկիզբ աշխարհակալության (59), սկիզբ քաջության (59), սկիզբ կատարելության (59), քննություն մատյանների (71), ուլունք Շամիրամա (74)* և այլն: Ինչպէս

կարելի է նկատել, բոլոր օրինակների հատկացուցիչներն արտահայտված են **գոյականով**:

Աղյուսակ 1-ին: Հատկացուցիչ շարադասական ցուցանիշները գրաբար և աշխարհաբար տեքստերում

Ընդհանուր քանակ՝ 1531							
Գրաբարյան տեքստում				Աշխարհաբար տեքստում			
Ընդհ. Քանակ՝ 725				Ընդհ. Քանակ՝ 806			
Նախադաս		Հետադաս		Նախադաս		Հետադաս	
Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
241	33,2	484	66,8	785	97,4	21	2,6
Միայն գրաբար տեքստում հանդիպող				Միայն աշխարհաբար տեքստում հանդիպող			
Քանակ		%		Քանակ		%	
82		11,3		147		18,2	

Ըստ խոսքիմասային արտահայտվածության՝ արձանագրվել է այսպիսի պատկեր՝

1. Գոյականով արտահայտված հատկացուցիչներ՝

ա) Օրինակներ գրաբարյան տեքստից՝ *թղթոյն Սահակայ (6), ի սկզբան բանիցս (6), խաղացմունս շնորհացն (6), հոգւոյն զշարժմունս (6), պատկեր Աստուծոյ (6), որդի Թորգոմայ (52), յարանց Հայկայ (54), մատենանս թագաւորացն (58)* և այլն:

Գրաբարյան տեքստում մեր առանձնացրած հատկացուցիչ-հատկացյալ կապակցության 725 օրինակներից 384-ում հատկացուցիչն արտահայտված էր գոյականով (53 %):

բ) Օրինակներ ժամանակակից արևելահայերեն թարգմանված տեքստից՝ *Սահակի թղթին (7), պատմության սկզբում (7), շնորհքների գործունեությունը (7), հոգու շարժումները (7), աստծու պատկեր (7), Հայաստանի նախարարությունների (9), Թորգոմի որդին (53), Հայկի սերունդներից (55), թագավորների մատյաններում (59), Աժդահակի գրահը (97)* և այլն: Սրանց ընդհանուր քանակը 402 է (49,9 %):

2. Ածականով արտահայտված հատկացուցիչներ (այս դեպքում խոսքը գերազանցապես վերաբերում է գրաբարյան տեքստին, քանի որ ժամանակակից հայերենում, օրինակ, ածականների հոլովված տարբերակները իրավամբ համարվում են փոխանվանական կիրառություններ, իսկ գրաբարում՝ ոչ, քանի որ, ինչպես գիտենք, գրաբարում ածականը ինքնին էր հոլովվում)

ա) Օրինակներ գրաբարյան տեքստից՝ *ծննդաբանություն մեծաց (6), սահմանք քաջաց (34), զբաջաց գտեղի (34), հնոցն բանս (36), ազգ սկայիցն (38), խոսն քաջացն (42), օտարաց թագաւորութեանն (80), ծննդաբանություն Մեծաց (106)*: Մրանց ընդհանուր քանակը 8 է (1,1 %):

բ) Օրինակներ ժամանակակից արևելահայերեն թարգմանված տեքստից՝ *մեծերի ծննդաբանությունը (7), քաջերի սահմանք (35), քաջերի տեղն (35), հների պատմությունները (37), հսկաների սերունդը (39), քաջերի բազմության (43), օտարների թագավորության (81), (օտարների) լծի (85), մեծերի ծննդաբանությունը (107)*: Մրանց ընդհանուր քանակը 9 է (1,1 %):

4. Դերանունով արտահայտված հատկացուցիչներ՝

ա) Օրինակներ գրաբարյան տեքստից՝ *զհայցուածս նորա (6), քոց իմացուածոցդ (6), իմոց ախորժակացս (6), զփոհականութեանդ քո (6), զայսորիկ զսկզբնատիպն (6), զքո խնդիր (8), մեր իրք (8), մերոյ նախնւոյ (48), ծնունդք նորա (52), զինակրաց նորա (56), մահուան նորա (60), որոյ զազաթնն (88), եղբայր քո (94), զփափագ քո (104)* և այլն: Մրանց ընդհանուր քանակը 333 է (45,9 %):

Վերը նշեցինք, որ հատկացուցիչը ստացական դերանուններով արտահայտվելիս համաձայնության եղանակով է կապակցվում հատկացյալի հետ: Ուստի նպատակահարմար ենք գտնում ստացական դերանունով արտահայտված հատկացուցչի օրինակները ներկայացնել նաև ըստ հոլովների: Այսպես՝

1. **սեռական հոլովով**, օրինակ՝ *քոց իմացուածոցդ (6), իմոց ախորժակացս (6), մերոց թագաւորաց (10), մերոց իշխանաց (10), մերոց նախնեացն (10), մերոյն Հաբեթի (24), մերոցս տքնութեանց (26), մերոցս ջանից (26), իմոց խորհրդոցս (32), ընկերի իւրոյ (40), մատանց մերոց (42), իւրոց տանն (46), կանանց իւրոց (46), որդւոց իւրոց (46), նախնւոյն մերոյ (46), թոռին իւրոյ (48), որդւոց իւրոց (50), իւրոյ թագաւորութեանն (54)* և այլն,

2. **հայցական հոլովով**, օրինակ՝ *գորդի իւր (50), զփափագ մեր (62), զիւր տուն (62), զիւր իշխանութիւնն (68)* և այլն,


3. **բացառական հոլովով**, օրինակ՝ *ի գործոց մերոց (20), յորդւոց իւրոց (40), յորդւոց իւրոց (44), յիւրոց ընդոճնացն (46)* և այլն,

4. **գործիական հոլովով**, օրինակ՝ *որդւովք իւրովք (40), իւրով անուամբ (46), աղիսի իւրով (48)* և այլն,

5. ներգոյական հոլովի իմաստով, օրինակ՝ *ի մերում աշխարհիս (12), ի մերում թարգմանութեանս (22), ի մերոյ աշխատութեանս (24), ի մերումս պատմութեան (32), յերկրիս մերում (48)* և այլն:

բ) Օրինակներ աշխարհաբար տեքստից՝ *նրա խնդրածը (7), քո մտածողության (7), մեր ազգի (7), իմ ճաշակին (7), իմ սովորություններին (7), սրանց ցանկությունը (7), քո խոհականության (7), սրա սզկբնատուին (7), քո խնդիրը (9), մեր գործերը (9), մեր նախնի (49), նրա սերունդները (53), նրա զինակիրների (57), նրա մահվան (61), նրանց զենքերի (87), որի զագաթը (89), քո եղբայրդ (95), քո փափագը (105)* և այլն: Մրանց ընդհանուր քանակը 395 է (49 %):

Տրամագիր 1-ին: Հատկացուցչի շարադասական տիպի զարգացումը հայերենում



Ամփոփելով ողջ շարադրանքը՝ հանգում ենք հետևյալին՝

1. Տարժամանակյա տեսանկյունից հայերենի հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը ենթարկվել է քանակական (գրաբ.՝ 725, աշխ.՝ 806) և շարադասական էական տեղաշարժերի (գրաբ.՝ նխդ.՝ 33,2 %, հոդ.՝ 66,8 %, աշխ.՝ նխդ.՝ 97,4 %, հոդ.՝ 2,6 %):
2. Տեղաշարժերի հիմքում հիմնականում լեզվի՝ ներքին օրինաչափություններով պայմանավորված օբյեկտիվ զարգացումներն են, իսկ որոշ դեպքերում՝ թարգմանչի սուբյեկտիվ լուծումները:
3. Հատկացուցչի խոսքիմասային արտահայտվածության հիմնական ցուցանիշները, ինչպես սպասելի էր, վերաբերում են գոյականին և դերանվանը:

4. Դերանունով և գոյականով արտահայտված հատկացուցիչները քանակապես գրեթե հավասարաթեք են (գ. – 53 %, դ. – 45,9 %): Այս խմբին նկատելիորեն զիջում են ածականով արտահայտվածները (1,1 %):
5. Գրաբարյան նախադաս հատկացուցիչների արտահայտվածությունը գերազանցապես դերանվանական է (դ. – 60,6 %, գ. – 38,2 %), ինչը հետադաս դիրքում փոխարինվում է գոյականի գերակշռությամբ (գ. – 60,3 %, դ. – 38,7 %):
6. Աշխարհաբար նախադաս հատկացուցիչների արտահայտվածությունը, փոքր տարբերությամբ, դերանվանականի գերակշռությամբ է (դ. – 50,3 %, գ. – 48,5 %), ինչը հետադաս դիրքում փոխարինվում է գոյականի մենաշնորհային կիրառությամբ:
7. Ընդհանուր միտումն աշխարհաբարում դերանվանական հատկացուցիչների կրճատումն է, հատկապես՝ հետադաս դիրքում:

Սրբուհի Գասոյան, Հեղինե Մելքոնյան
Հատկացուցիչ-հատկացյալ շարադասական կադապարի զարգացումը
հայերենում
(ըստ Մ. Խորենացու «Հայոց պատմության» I գրքի)
Ամփոփում

Հոդվածում փորձ է արված պարզելու հատկացուցիչ-հատկացյալ շարադասական կադապարի զարգացումը հայերենում: Աշխատանքը կատարված է բնութագրաբանության շրջանակներում՝ ներքին, տարժամանակյա տիպաբանության դիրքերից: Ըստ նպատակի՝ հետազոտությունը վերագրելի է արձանագրային տիպաբանությանը՝ մեկնական տիպաբանության մասնակի դրսևորումներով:

Ուսումնասիրության քանակական արդյունքները, որ ստացվել են վիճակագրության մեթոդի կիրառմամբ, արտահայտվել են աղյուսակում, ինչի վերլուծությունը հիմք է տալիս արձանագրելու, որ քննվող կառույցը հայերենում էականորեն փոփոխության է ենթարկվել թե՛ քանակապես (գրաբար՝ 725, աշխարհաբար՝ 806), թե՛ շարադասությամբ (գրաբ. նխդ. 33,2%, հսոդ.՝ 66,8%, աշխ. նխդ.՝ 97,4%, հսոդ.՝ 2,6%):

Србуи Гасоян, Эгине Мелконян

**Развитие конструкции несогласованного определения и его определяемого
по расстановки в армянском языке
(на материале первой главы книги М. Хоренаци “История Армении”)**

Резюме

В статье сделана попытка выявления картины развития порядка слов несогласованного определения в армянском языке. Выбранный нами подход – характерологический (диахроническая внутренняя типология). По цели работа принадлежит к инвентаризационной типологии, хотя в ее некоторых фрагментах можно наблюдать и интерпретационные решения.

Количественные итоги исследования, выведенные методом статистики, отражены в таблице, анализ которой дает основание объявить, что исследуемая конструкция в армянском языке подверглась существенным изменениям как в плане количества (грабар – 725, ашхарабар – 806), так и расстановки (грабар препоз. – 33,2%, постпоз. – 66,8%, ашхарабар препоз. – 97,4%, ашхарабар постпоз. – 2,6%).

Srbuhi Gasoyan , Heghine Melkonyan

**The development of word order construction of uncoordinated attribute
in Armenian**

(according to M. Khorenatsi “History of Armenia” Book I)

Summary

The article is an attempt to clarify the development of word order construction of uncoordinated attribute in Armenian. The study is carried out within the framework of characterology from the point of inner diachronic typology. The purpose of the study is ascribed to the inventory typology with the partial manifestations of interpretative typology.

The table shows the quantitative results of the study, obtained with the use of statistical method, the analysis of which allows recording that the examined structure is essentially changed in Armenian both quantitatively (Old Armenian – 725, Modern Armenian – 806) and with word order (Grab. Prepos. – 33,2%, postpos. – 66,8%, Modern Arm. Prepos. – 97,4%, postpos. – 2,6%).

Խմբագրություն է ուղարկվել 29. 03. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 15. 04. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մանուկ Արեղյանի անվան գրականության
ինստիտուտի ավագ գիտաշխատող
Բան. գիտ. թեկն., դոցենտ
nairahambardzumyan@yahoo.com

**ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅԱՆ, ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՖԵՆՈՄԵՆՆԵՐԸ
ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Մշակութաբանական, փիլիսոփայական, մարդ – ժամանակ – տարածություն, հեղինակ – տեքստ – ընթերցող, մետաֆոր, մետաֆիզիկա:

Ключевые слова и выражения: культурологический, философский, человек – время – пространство, автор – текст – читатель, метафора, метафизика.

Key words and expressions: culturological, philosophical, man – time – space, author – text – reader, etaphor, metaphysics.

20-րդ դարում գեղարվեստական տեքստի տարածաժամանակային և պատկերային համակարգերի մեկնության հարաբերականությունը թույլատրում է նշելու հեղինակի անհատական ու գեղարվեստական տարածությունների և լեզվի տիրույթները, որոնց միջոցով ձևավորվում են հեղինակի մշակութաբանական – իմացաբանական ըմբռնումները և ոճի առանձնահատկությունները: Տարածությունն ու ժամանակը մշտապես էական ներգործություն ունեն հեղինակի ինքնորոշման, ժամանակակից մշակութաբանական-փիլիսոփայական հայացքների և ըմբռնումների ձևավորման հարցերում, քանի որ հեղինակը՝ որպես մեկնաբանական օբյեկտ, չի տարանջատվում տեքստից, և նրա արարման էներգիան պահպանում է ներքին լարվածությունը՝ հաստատելով սեփական իրավունքները իմացաբանական եռմիասնության՝ մարդ-ժամանակ-տարածություն բևեռում: Սույնը հնարավոր է դիտարկել նաև մեթոդաբանության տիրույթում, որը տեքստի ստեղծման նմանօրինակ գործընթացներում ենթադրում է նաև ընթերցողի մասնակցությունը՝ բացահայտելով հեղինակ-ընթերցող փոխհարաբերությունը համահեղինակության և հեղինակ-տեքստ-ընթերցող երկխոսություններում:

Հեղինակի անհատականությունը այս դեպքում դիտարկվում է մետահարողորակցական կարգի հատկանիշով՝ ապահովելով մեկնության՝

որպես իմացաբանական գործընթացի, նշանակությունը, քանի որ ընթերցումը սուկ իմաստի հայտնաբերման օբյեկտիվ գործընթացը չէ, այլ նաև՝ իմացաբանական նոր իմաստի հաղորդումը տեքստին: Գեղարվեստական գրականության մեկնության տիրույթում սույնը անվերջանալի գործընթաց է: Ու քանի դեռ տեքստի իմացաբանական և նշանագիտական բևեռները հավասարագոր են, ուրեմն՝ տեքստի տեղեկատվական տիրույթը ձեռք է բերում իր ներքին միավորող-ամբողջացնող իմաստաբանական գործառույթը, որի միջոցով ապահովվում է տեքստից լեզու ընկած հոգեբանական-մտավոր միջուկը՝ հաղորդվելով իրերի իրավիճակային հարաբերականությանը, որը տեքստում արտացոլվում է իրական-մտացածին օբյեկտներով: Սույնը երևույթ է, որի միջոցով հեղինակն ապահովում է տեքստի գեղագիտական հղումները սոցիալ-հոգեբանական և փիլիսոփայական-մտավոր միջուկոսներում՝ միաժամանակ բացահայտելով իր՝ որպես անհատի, հոգեբանական ներքին՝ միմիայն իրեն հասանելի ապրումները հոգու և բանականության հակադրության տիրույթում: Տեքստի ստեղծման սույն գործընթացները (միտք-լեզու-տեքստ) երևութանում են հատկապես հեղինակի իմացաբանական բևեռներում (նրանք գոյություն ունեն մարդու ճանաչողական համակարգերում ընդհանրապես), որոնք հեղինակը արտահայտում է մետաֆորների, մտապատկերային ինքնատիպ համակարգերի, մետոնիմիաների միջոցով: Սույնը միաժամանակ ներքին հյուսվածքով փիլիսոփայական ներքին մեղիտացիայի հասնող ինտելեկտուալ հնարք-հղում է, որով հաստատվում է հեղինակի մտավոր անկախությունը սոցիումից ու վերջինիս ներդաշնակումը տիեզերքին ու այն ամենին, ինչը հարատև է տարածության ու ժամանակի անընդհատական պտույտում: Այս համատեքստում՝ ուշագրավ են Ռուբեն Հովսեփյանի «Ես ձեր հիշողությունն եմ», «Նոյը», «Խորանարդիկներով տունը», «Մարիամ տատի գանձը», «Հրդեհ», «Ձայներ», «Ամառ էր, կիրակի», «Ձնե լաբիրինթոս» են պատմվածքները¹:

Հովսեփյանը քչագիր է, տեքստի պարունակությունը ընտրող: Նրա տեքստը արտադրողականության սահմանում չէ, այլ գոյավորվում է որպես ունիվերսալ ուղղահայաց՝ վարից վեր և հակառակը դարձի փուլերերով (գրվում և ընթերցվում է միմիայն տեքստը): Երևույթ, որը գեղարվեստականության տիրույթում թելադրում է իր օրենքները և ճանաչողության ոլորտում որոշակիացնում է հեղինակի ֆենոմենը և ընթերցողի ինտելեկտը՝ միաժամանակ ուղղորդելով դրանք հավերժորեն անավարտ ու անսպառ

¹ Տե՛ս Հովսեփյան Ռ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող», 1987, էջ 351: Այսուհետ՝ միայն պատմվածքի խորագիրը:

երկխոսությունների տիրույթ, որոնք զուգահեռաբար միավորում են կենսականությունն ու անդրանցականությունը ճանաչողության մետաֆիզիկական միևնույն շրջանակում՝ «Մեռել էր Մարիամ տատը: Մեռել էր՝ օր առաջ կանխագուշակելով մահը: Երեկոյան լողացել էր, հագել էր հարս օրերի ճերմակ շապիկը, հրաժեշտ էր տվել թոռներին, հարևաններին, ծոռներին ու անկողին էր մտել իբր քնելու, բայց մեռել էր»²:

Միխայիլ Բախտինը տեքստը (ընդհանրապես) փորձում է գնահատել արտահայտության (ֆրազի) տիրույթում³: Երևույթ, որ երկխոսական հնարքների միջոցով կողմնորոշում է դեպի այլ տեքստ-արտահայտությունների միջոլորտներ՝ հանգեցնելով գաղափարին, թե տեքստը իրադարձական է, ինչպես ստեղծագործությունը: Սակայն տեքստն ստեղծագործություն ըմբռնումները նա տարբերակում է երկու՝ *գեղարվեստականության* (ստեղծագործությունը) և *մեկնաբանական* (տեքստը) հարացույցերի տիրույթներում, խուսափելով նշելու, թե ընթերցումը սուսկ մեքենայական գործողություն չէ, որի միջոցով ապահովվում է տեքստի իմաստաբանական-իմացաբանական և մտավոր տիրույթների հասկացումը, այլ երկար ժամանակ գիտակցությամբ պահպանվող մտքի անըմբռնելիությունը, քանի որ ընթերցման մեկնաբանական տիրույթը որպես հաղորդակցության բարձրագույն միավորում, ի սկզբանե ապահովում է միմյանց հերթագայող երեք փուլերը՝ *ճանաչողությունն ինքնին, քո ճանաչողությունը, ուրիշի ճանաչողությունը*:

Մարիամ տատի գանձը» պատմվածքի առաջնորդող նշանը, չնայած պարադոքսալությանը, դառնում է լեզուն, որի միջոցով հեղինակը, Մարիամ տատի կերպարին զուգահեռ, ստեղծում է սեփական աշխարհ-պատկերը՝ տեքստի տարածաժամանակային միաբնեռ միասնականության տիրույթում՝ որպես իմաստաբանական նշան՝ «Ընկերս ինձ ցույց տվեց առասպելական սնդուկը, տատի վզից հանած շղթայիկով բանալին, հսկայական կողպեքը: Մնդուկի ներսում Մարիամ տատի շորերն էին ու ընդամենը մի եռանկյունաձև ծրար, ռազմաճակատից չվերադարձած որդու վերջին նամակը, ծրարի մեջ՝ չորացած տերև: Դա նամակ չէր. Հապճեպ գրված երկտող էր՝ «Ների՛ր, մա՛յր, ծաղիկ չգտա: Հրաշքով փրկված մենավոր մի կեչի կա միայն, որի տերևն էլ ահա ուղարկում եմ քեզ»: Ես ու ընկերս

² Հովսեփյան Ռ, «Մարիամ տատի գանձը», էջ 351:

³ Տե՛ս Бахтин М. М., Собрание сочинений в 7 томах. Институт мировой литературы им. А. М. Горького РАН. - М, 1996-2012. Т. 3, Теория романа (1930-1961 гг.), М, Языки славянских культур, 2012, 880 ст.

գգուշորեն ծրարի մեջ կրկին փակեցինք Մարիամ տատի գանձը»⁴: Ընթերցման սույն սկզբունքը թույլատրում է տեքստի գեղարվեստական տարածությունը նույնականացնելու նույն տեքստի ժամանակային միջուկորտին, որը հարաբերական է իրականությանը հատաձականորեն: Ստացվում է, որ տեքստի իդեալական աշխարհի գոյությունը անմիջականորեն առնչվում է այուժեում նկարագրվող երևույթների ու դեպքերի տարածաժամանակային միջուկորտին, որը հասուկ է գեղարվեստական տեքստին ոչ թե որպես նյութական աշխարհի մաս, որը գոյություն ունի որևէ իրական ժամանակում, այլ՝ իրականության յուրակերպ մոդել, որը ստեղծվում է Հովսեփյանի պատմվածքների ներքին տիրույթներում:

«Ես ձեր հիշողությունն եմ» պատմվածքում հեղինակային տեքստը վեր է բախտինյան «արտահայտության» (ֆրազի) գաղափար-պայմանականությունից, քանի որ տեքստի ամբողջականությունը, ինքնուրույնությունը, ավարտունությունը հարաբերականության տիրույթում չեն, այլ կայուն ասացման՝ «Ես ձեր հիշողությունն եմ, ձեր կորցրած հիշողությունը»⁵: Հիշողության միջնորդությամբ ընտրվում ու երևութացվում են գործոններ, որոնք հարաբերվում են նախա-գիտելիքի պարունակներին, երբեմն՝ գիտակցականության, երբեմն՝ անգիտակցականության տիրույթներում: Հետևաբար՝ հարցերը՝ հաղորդվում է արդյոք հեղինակի մտահղացումը ընթերցողին մինչև վերջ, և եթե՝ այո, ուրեմն՝ ի՞նչ իմաստ է ձեռք բերում վերջինիս ճանաչողության սահմանում գոյություն ունեցող այլ տեքստերի հետ հարաբերություններում, երբ հայտնվում է իմաստի կայունության տիրույթում, ուղղորդում են ընթերցողին ընկալումների այլ տարածություն: Այս դեպքում հիշողությունը իրացվում է նշանագիտության տիրույթում՝ ստեղծելով մշակութաբանական միասնականության իմաստային փոխակերպումները ու հաղորդակցական փոխներթափանցումների տարածությունը, որոնց շնորհիվ սոցիալ-մշակութային տոպոսը գիտակցվում է ամբողջականության հատկանիշով: Սույնը կոլեկտիվ հիշողության վերժամանակային գոյությունն ու նշանակությունն է, որը Բերդյակի բնորոշմամբ՝ «պատմական հիշողությունն է՝ հավերժության խստագույն պայքարի ու ժամանակի առնչությամբ»⁶, ուստի՝ ձևակերպելի է

⁴ Հովսեփյան Ռ, «Մարիամ տատի գանձը», էջ 353:

⁵ Հովսեփյան Ռ, «Ես ձեր հիշողությունն եմ», էջ 449:

⁶ Տե՛ս. Бердяев Н., Самопознание (Опыт философской автобиографии), М., Международные отношения, 1990, ст. 3.

նաև իբրև պատումայնություն կամ պատումների համակարգ և ունի երկու բևեռ՝

ա. *գեղագիտական ավարտվածություն* (ժանր, հանգույց, գազաթնակետ ու ներքին կոնֆլիկտ)

բ. *իմաստաբանական ամբողջականություն* (իմաստաբանական պատկերների ցանցը միջմշակութային տեղեկատվության ու հաղորդակցության տիրույթներում):

Այս դեպքում հիշողությունը բյուրեղանում է՝ գտնելով իր գաղտնաբանը և ապահովելով սեփական տարածությունը նշանակելիի ու նշանակության միջակայքերում, ինչպես նաև նշանակելիի կայունության տիրույթում հասնելով անփոփոխելի նշանայնության: Ու քանի որ անցյալի հիշողությունները երբևէ քնած չեն ու նաև լիարժեքորեն ճշգրիտ չեն, ուրեմն՝ դրանց վերապրումը մշտապես կասկածի տիրույթում է: Ներ- և միջ-մշակութային հաղորդակցության հաջողությունը հիշողության տիրույթում՝ որպես խորհրդանշական տոպոս (իրականության վարկածով), պահանջում է նաև հեղինակի՝ անցյալից եկող օբյեկտիվ և սուբյեկտիվ, անհատական ու միջնորդավորված փորձառությունների միավորումը՝ «Բուժիչը Գեղարդն է, - ասաց ծերունին: - Չէ՛ս հիշում, Գեղարդով թաթախված ջուրը քսում էին երեսիդ: Իզուր էլ քսում էին՝ ձեր տան դռանը ցասմանաց հոգին կարմիր նշան էր արել: // - Ժանտախտն, - ասում էր, - գյուղ էր մտնում երկու ձիավոր առաջը գցած: // - Մեկը՝ ոտից գլուխ կարմիր հագած ու կարմիր գավազանով, - հուշեց ծերունին: // - Մյուսը՝ սև հագած ու սև գավազանով, - շարունակեց Շամամը: - Եթե դռանը սև գավազան էր դիպչում՝ սև նշան էր նկարվում: Դա մահ էր: // - Ձեր դռանը կարմիր գավազանն էր դիպել: Որովհետև երբ մորելի էր մտնում երկիր, դուք թաս ու կճուճ առած վազում էիք մինչև Մասիսի ստորոտները, հասնում Ակոռի, բարձրանում սուրբ Հակոբի եկեղեցի, լցնում էիք ձեր ամանները նրա մոտի աղբրաջրով ու շտապում դաշտավայր՝ ձեզ հետ բերելով վարդագույն, սպիտակաթիկունք տարմահավքին...»⁷:

Սույնը իրադարձության հարաբերակցումն է հիշողությանը, որ վերադարձի գաղափարը միավորում է անցյալի զգայություններին ու վերապրումներին՝ ժամանակի հեռավորությամբ: Այս դեպքում հիշողությունը դիտարկելի է մի կողմից գիտակցության (եղել է), մյուս կողմից՝ զգայական գործոնների ներհակությամբ (իմն է): Ուստի՝ ռետրո կանխատեսումների ու միջսերնդային գաղտնագրերի հեռարձակման շրջապտույտում Հովսեփյանի տեքստերը ընթերցողին հասնում են

⁷ Հովսեփյան Ռ., «Ես ձեր հիշողությունն եմ», էջ 450:

Ժամանակի նշանակալի հեռավորությամբ, ու տվյալ միջոլորտում հեղինակը ստեղծում է տեքստի հիշողության տարածությունը, որը միաժամանակ համընկնում է նույն տեքստի խաղային ու պայմանական տարածություններին, որոնցով հեղինակը համակարգում է պատմամշակութային հիշողության տարածությունը: Կյանքը ավարտուն ընթացք է այն դեպքում, երբ ժամանակը սահմանափակվում է բանականությամբ: Ու միտքը, թե աշխարհը հավերժական ընթացք-պտույտի մեջ է, ու թե աշխարհաստեղծությունը հավերժական երևույթ է, ու թե արարման միջոցով է սուկ հնարավոր այն, ինչը անհասանելի է բանականությանը ու հասանելի՝ լեզվին, ինչպես ժամանակը, որ նույնպես հավերժական պտույտի մեջ է: Սույն հղումներն ընկած են հեղինակի՝ տարածությունն ու ժամանակը ամբողջացնող գեղագիտական ըմբռնումների հիմքում՝ «Տեսնես՝ ագրավները հիշողություն ունեն: Հիշողություն ունեցողը երեք հարյուր տարի կապրի՝ Ադամը ինը հարյուր երեսուն տարի ապրեց: Հիշողություն չուներ: Սեթը ինը հարյուր տասներկու տարի ապրեց: Հիշողությունը Ադամն էր: Ենովսը ինը հարյուր հինգ տարի ապրեց: Հիշողությունը Սեթն էր, Ադամն էր: Ենովքը, խեղճ Ենովքը ապրեց երեք հարյուր վաթսունհինգ տարի, որովհետև հիշողությունը Հաբեթն էր, Մադադիելն էր, Կայենն էր, Ենովքն էր, Սեթն էր, Ադամն էր»⁸: Հովսեփյանի տեքստերում տարածաժամանակային միջոլորտը երևութանում է ներքին կարգայնությամբ՝ իմաստաբանորեն տարրալուծվելով գեղարվեստական լեզվի տարբեր մակարդակներում ու ստեղծելով բառապաշարային շերտերն ու քերականական համակարգերը, որոնք իրենց հերթին նշում են լեզվի անվերջության (հավերժության իմաստով) գաղափարին անմիջականորեն առնչվող ենթագիտակցության համապատասխան բևեռները: Սույն երևույթն իր ուշագրավ լուծումն է գտել Բերթրան Ռասսելի «Մաթեմատիկայի փիլիսոփայության ներածություն»⁹ (1919) գրքում: Ըստ նրա գոյաբանական միջոլորտը հնարավոր է դիտարկել մեկ այլ հնարավոր, բոլորովին ուրիշ իրականության տեսանկյունից՝ «Ժամանակի խնդիրը մարդկային ճակատագրի խնդիրն է: Մաթեմատիկական փիլիսոփայությամբ ընկալվող անվերջության գաղափարը պարզ է ու արդիական,

⁸ Հովսեփյան Ռ., «Ձայներ», էջ 392-393:

⁹ St u Russell Bertrand, «An Introduction to the philosophy of mathematics», London: George Allenen & Unwin, LTD. New York: The Macmillan CO, 2013 (First published May 1919, Second Edition April 1920), 278 p.

անսահմանորեն անորոշ ու փոփոխական ու մարդու փիլիսոփայական գոյությանն առնչվում է անուղղակիորեն»¹⁰:

Ժամանակի պտույտի ու անընդհատականության գիտակցումը Ռուբեն Հովսեփյանի արձակի գլխավոր հատկանիշներից է: Անցնող պահը նա անվանում է անցյալ, ու ընթացքում ապրվող ակնթարթը միայն՝ ներկա: Ու երբ անցյալի չմիջնորդավորված ներազդեցությունը նույնականացվում է ներկայի անմիջականությանը՝ հեղինակի տրամաբանությունը, լեզուն ու ժամանակը դիտարկվում են հայելայնության տիրույթում: Մակարդակ, որի հարահոսությունը տեսանելի է հատկապես լեզվի մակերևույթում, և որը միաժամանակ ներքին պաշտպանական միջոց է ոչ միայն արտաքին աշխարհից, այլև անդրանցական ազդակներից՝ «Մենք շփվում ենք հանգուցյալների հետ ամեն օր, ամեն ժամ ճիշտ այնպես, ինչպես ողջերի, ճիշտ այնքան, որքան ողջերի, և սա է ճշմարտությունը: Ասել է թե՛ ինքդ մինչև քո մահը ապրածովդ ես դառնալու այն շարունակությունը, որ մնալու է հավերժությանը: Ասել է թե՛ ինքդ քեզ ես ծնում»¹¹:

Հասկացման սույն գործընթացն իրականանում է տեքստի պոետիկայի մետաֆիզիկական փոխներթափանցումների շնորհիվ, որոնք ստեղծում են միմիայն տեքստին հատուկ ժամանակը՝

ա. *ուղղագիծ*, որ դուրս է պահից,

բ. *շարունակական*, որ վերապրումի տիրույթում ներառում է և՛ գոյը, և՛ անգոյը:

Ժամանակի խնդիրը մարդու լինելության գերխնդիրն է: Ու պատահական չէ, որ երկու նշանավոր փիլիսոփաները՝ Բերգսոնն¹² ու Հայդեգերը¹³ այն դիտարկել են իրենց փիլիսոփայության առանցքում: Նմանօրինակ վերապրումը հիշողության տիրույթում ստեղծում է բերգսոնյան ժամանակի հարահոսությունը (չմիջարկվող ընթացքը): Այդ դեպքում անցումայնության (փուլայնության) ու ընդհատականության գաղափարները (անցյալ-ներկա-ապագա) անհետանում են՝ ստեղծելով

¹⁰ Տե՛ս Russell Bertrand, «An Introduction to the philosophy of mathematics», London: George Allenen & Unwin, LTD. New York: The Macmillan CO, 2013 (First published May 1919, Second Edition April 1920), pp 23-24.

¹¹ Հովսեփյան Ռ., «Հրդեհ», էջ 437:

¹² Տե՛ս Bergson H., Time and Free Will: An essay on the immediate data of consciousness Authorised Translation by F. L. Pogson M.A, 1957, London: George Allenen & Unwin, LTD, p. 122.

¹³ M. Heidegger, Being and Time, 1996, State University of New York (Translated by Joan Stambaugh), p. 253. Տե՛ս Իսաև Խայդեգեր Մ., Время и бытие, Статьи и выступления, сост., пер. с нем. и комм. В.В. Бибикина, Санкт- Петербург, Наука, 2007, 447 с.

նույն վախճանակետին ձգտող ընթացքի ու անընդհատական վերադարձի գաղափարները, որոնք Հովսեփյանի տեքստերում դիտարկելի են իբրև ելման կետեր (կանանց մահերը): Սրանց գուցահեռ, դիտարկելի է նաև մեկ այլ ժամանակային տարածության (այլաժամանակի) գոյությունը. Երբ գեղարվեստական տարածությունն ու ժամանակը համընկնում են ֆիզիկական ու վերֆիզիկական ոլորտներում միաժամանակ՝ որպես հոգևոր ու նյութական աշխարհների (հակաբևեռ լինելության) երկու հիմնական, բայց բոլորովին տարբեր կերպեր:

Ու սա է պատճառը, որ խենթության սահմանում հայտնված կինը՝ Շամամը, որը միաժամանակ ծերունուն հյուրընկալող կինն է («Ես ձեր հիշողությունն եմ»), համանուն պատմվածքում ունի միայն իրեն հատուկ (մարդաբանության տեսանկյունից) նկարագիրը և առավելապես էթնոմշակութային իրականության կրողն է իր կերպարով, քան՝ խենթությամբ, ու վերջինիս անհատական ցոլացումը ի սկզբանե ամբողջանում է գեղարվեստական ու իմաստաբանական հղումներով: Այս համատեքստում՝ նախա-հիշողության գերբնականությունը ժամանակի տիրույթում հայտնվելիս փոխներթափանցվում է տարածականության հատկանիշներով՝ «Շամամը երկու ձեռքով չանչեց ամուսնու, որ նույնն է թե՛ աստծո ուղղությամբ... ծիծաղեցին, ծիծաղի մեջ չնկատեցին էլ, թե ինչպես հայտնվեց ծերունին»¹⁴: Սույնը կոմպոզիցիայի միջանկյալ պտույտն է, որն ուղղակիորեն հաղորդակցվում է տեքստի նախնական ուղղահայացին՝ իր պարադոքսալությամբ հանգելով ոգու տարածությանն առնչվող տարբեր հարցերի: Ուստի՝ իրականությունը, միտվելով գեղարվեստականության բևեռ, փոխակերպվում է համապատասխան օրենքներով և հնարքներով՝ ձևավորելով գեղարվեստական վերժամանակային տարածությունը:

Գիտենք, որ փաստի ճանաչողության գործընթացը արտաքին ու ներքին աշխարհներում հնարավոր է միմիայն պատճառահետևանքային ընկալումների միջոցով, քանի որ տարածության մեջ ձևավորվող հոգեբանական վիճակների հերթագայությունը էականորեն տարբերակելի է միևնույն տարածության տիրույթում ներգրավված առարկաների դիրքից՝ «Մի անգամ հեղեղը մի գորգ բերեց: Փայտե ձողերը կոտրատվեցին թրջված գորգի ծանրությունից, հարկ եղավ կեռ ծայրով երկաթե ձողը գործի գցել: Լևոնն ինքը դեկավարեց որսը: Նրան շլացրել էին գորգի գույները, որ պղտոր, փրփրոտ ջրերի երեսին փովել էին ծիածանի նման: Հերթական ալիքի զարկին նախորդող համեմատաբար խաղաղ պահերին գորգը բացվում էր լայնքով ու երկայնքով գուցադրելով անտառի մի փոքրիկ

¹⁴ Հովսեփյան Ռ., «Ես ձեր հիշողությունն եմ», էջ 445:

բացատ, որտեղ առյուծը եղնիկ էր հետապնդում: Ջրերը ծավծում, կրկին բաց էին անում գորգը՝ շարժում հաղորդելով թե եղնիկի փախուստին, թե առյուծի ցատկին: Առյուծը մեկ հասնում էր գոհին, մեկ ետ ընկնում, մեկ բացում էր երախը, մեկ էլի փակում և հեղեղի աղմուկի մեջ շատ պարզորոշ լսվում էր նրա ասամների սարսափազդու զրնգոցը¹⁵: Արտաքին աշխարհի ճանաչողությունը մշտապես և անմիջականորեն առնչվում է վիճակի ըմբռնմանը՝ հաշվի չառնելով երևույթի անկրկնելիությունը: Այս դեպքում՝ իրականությունը դիտվում է մասնատունակության հատկանիշով, թեպետ այն ճանաչելի է ոչ թե ամբողջականության խզման տիրություն, այլ մասնակիության, որը բացառապես աշխարհըկալման հետևանք է, և հակադրվում է ներքնատեսական ճանաչողությանը (ինտուիցիա), երբ բացարձակը հասանելի է տեքստից ընթերցող հաղորդվող իմաստաբանական հղումների մեկնությամբ: Այս դեպքում՝ բերգության համասեռ, անընդհատական աշխարհը հնարավոր է և կասկածի ենթարկել, քանի որ համասեռությունը ի սկզբանե ենթադրում է անմասնատունակության գաղափարը, որը տարանջատելի չէ, իսկ մասնատունակ չլինել, նշանակում է բացառել մեկ այլ ամբողջի՝ Ուրիշի գոյությունը: Հետևաբար՝ իրական աշխարհը անհամասեռ է ու մասնատունակ, ու միայն ներհայեցման ու ներդաշնակման միջոցով է հնարավոր ճանաչել դրանով ենթադրվող անճանաչելի ամբողջականը՝ «Մայրն իր քարտեզն ունի: Մահճակալն այստեղ է, դանակն այստեղ է, բնկալն այստեղ է, ամեն ինչ իր տեղն ունի, նշանակում է պետք էլ չեն աչքերը, նշանակում է՝ տեսնում են աչքերը: Եվ ահա չկա դանակը, սեղանին չէ, իր տեղում չէ: Ո՞ր կողմ շրջվի՝ աջ, ձախ, ո՞ւր գնա, որ գտնի դանակը: Դանակն անպայման գրավել է մեկ ուրիշի տեղը: Ուրեմն, խաթարվել է քարտեզը, ուրեմն, պետք են աչքերը, ուրեմն, տեսնում են աչքերը»¹⁶:

Հարաբերվելով առարկային՝ մարդը ընդունում է նախ դրա գործնականությունը, որի օգտակարությունը մնում է վերջինիս գիտակցության մեջ ու ապրում այնտեղ ընդմիշտ: Մտածողության մեքենայությունը, ճանաչողության ռացիոնալ միջոցները այս դեպքում անարտադրողական են, ու միայն կարծրատիպերից ու սովորույթներից գուրկ ներզգացական մեթոդների միջոցով է հնարավոր թափանցել իրականությունն ու ըմբռնել իրերի էությունը, ինչին և սովյալ պարագայում հասնում է հեղինակը: Ու քանի դեռ բանականության ու տարածականության տիրություններում գիտակցությունը տեսականորեն չի

¹⁵ Հովսեփյան Ռ., «Որդան կարմիր», էջ 196:

¹⁶ Հովսեփյան Ռ., «Ամառ էր, կիրակի», էջ 425:

վերլուծվում, ուրեմն՝ այդ տիրություն տարածության մեջ տարբերակելի են ժամանակը (տևողության իմաստով) ու հիշողությունը, որոնք օգնում են ըմբռնելու հեղինակի ենթագիտակցական ու հոգեբանական բազմաչափությունները՝ «Կրկես է, կյանք չէ, գլուխ գլխի, ուս ուսի կանգնած ենք բոլորս, ու մի օր այս ծանրությանը հողը չի դիմանալու»¹⁷: Ուշագրավ է նաև երազի՝ որպես հիշողության այլընտրանքային ձևի, ըմբռնումը, որը ոչ միայն հեղինակի առաջադրած հիշողության տեսության շարունակությունն է, այլև երկի ներտիրություն առաջադրվող մեկ այլ տեքստ, ըստ որի՝ երազները միավորում են հիշողությունը ու դրա վերապրումը: Ու քանի որ մարդկային ուղեղը գրանցում է ամեն ինչ, ուրեմն՝ հիշողության միջոցով հավաքագրվում են նաև բոլոր վերապրումները, անկրկնելի ու կրկնելի բոլոր երևույթները, որոնց միջոցով էլ տրվում է երազի ճանաչելի արտացոլքը՝ «Սարգիս, - ասում է՝ ՆԱ, - ես քեզ ընտրեցի ու քո ընտանիքը, որովհետև դու արդար ես իմ առաջ: Ճշմարիտ է, - ասում է, - ես ուխտ էի արել այլևս ջրհեղեղ չուղարկել երկիր, ու ես խոսքիս տերն եմ, ջրհեղեղ չի լինի: Բայց մի պայթյուն կա, որի առաջ ես անուժ եմ: Մեծ պայթյուն է լինելու, Սարգի՛ս, - ասում է, - ու երկրի երեսից պիտի ջնջվի մարդը, որ ստեղծեցի, անասունը, սողունը, երկնքի թռչունը»¹⁸:

Եվ երբ մարդու ուղեղում ստեղծվում է անառարկայական պատկերների շղթան, այլ կերպ՝ տպավորությունների հիշողությունը, որը բոլորովին տարբեր է մտասնեռումներից, ուրեմն՝ առկա են իրական պատկերներ, որոնք արթուն ժամանակ գրանցել է տեսողական ուղեղը: Հետևաբար՝ երազները ծնվում են զգայություններից, զգայությունները՝ անցյալի վերապրումներից, ու էնդոտեստոզական խաբկանք-պատկերները ու դրանց միջև առկայծող արթնացումը, որ երազի ու իրականության գաղտնագրված սահմանն են նշում, դառնում են անցյալի վերապրումը: Քնի ու երազի այսօրինակ ընթացքը «Ես ձեր հիշողությունն եմ» պատմվածքում դիտարկելի է որպես անցում մեկ այլ՝ անդրանցական – լեթարգիական վիճակի՝ «Շամամը հայտնվեց երկու օր անց՝ ջրով լի մի կճուճ բարուրի պես գրկած: Շրջապատին անհաղորդ, նա ձեռքը խոթում էր կճուճը, ջրջնում էր հողը: Մերմնացանի նման: Աղոթքի հանգով՝ հազիվ նկատելի շարժվում էին նրա գունատ շրթները, իսկ հայացքն անվերջ երկնքին էր հատված: Միայն Ավետիքին ճանաչեց, ժպտաց, մոտենալով շշնջաց ականջին. Հիմա սարսափելի չէ ո՛չ մորելիսը և ո՛չ էլ ժանտախտը: Նա մեզ փրկեց...»¹⁹: Հոգու և

¹⁷ Հովսեփյան Ռ., «Ձայներ», էջ 393:

¹⁸ Հովսեփյան Ռ., «Նոյ», էջ 386:

¹⁹ Հովսեփյան Ռ., «Ես ձեր հիշողությունն եմ», էջ 449:

մարմնի երկվության (հակառակության) գաղափարը նույնպես հաստուկ է Ռուբեն Շովսեփյանի պատմվածքներին, որով հոգու թռիչքն առնչվում է ներշնչանքի, ներհայեցման հրաշքին, և որի մասին, որպես միավորիչ ոլորտի, հղում է հեղինակը՝ «Խորը փոս փորիր, Մարգիս, - ասում է ՆԱ, - պատերը պնդացրու ցեմենտով, ուտելիքի, ջրի յոթ տարվա պաշար լցրու մեջը և ամեն անասուններից, ամեն մարմնից երկու-երկու հատ՝ արու ու էգ կվերցնես հետդ ու ընտանիքդ՝ որդուդ, հարսիդ, թոռանդ: Ափսոս, - ասում է, - մեռել է կինդ, չկա»²⁰: Անգիտակցությունն առարկայացնելու ու անհատականացնելու ճանապարհին է, որ ի հայտ է գալիս ծերունին («Ես ձեր հիշողությունն եմ»)՝ ընթերցողին տանելով իրականությունը վերգիտակցորեն բացահայտելու ճանապարհով: Սույնը հեղինակի գերխնդիրն է, քանի որ իրական գրականությունը, իբրև նորի արարման անընդհատական գործընթաց, դիտարկելի է հավերժականության տիրույթում, որը միաժամանակ պատումով տրվող կենսականության իմաստն է: Տեքստի արարման այս ճանապարհին ինտերտեքստուալ հնարավորությունները մշտապես հակադրվում են հեղինակային ներգագնողությունների ոլորտին, որում և տարբերակվում են աշխարհի ներհայեցողական, տրամաբանական ու փորձառական ընկալումները: Երկի ներքին տիրույթում հեղինակի գիտակցությունը ներկայանում է ամբողջականության հատկանիշով՝ տեքստին զուգահեռ ձևավորելով արտաքին ու ներքին հիշողությունների ու դրանց փոխներթափանցումների ամբողջությունը, որի գործառույթը նշանի տիրույթում է: Հոգեբանական բարձրագույն սահմանին սակայն հեղինակը հասնում է, երբ ֆիզիոլոգիայի տիրույթից անցնում է հոգու և նշանների հիերարխիաներին՝ «Հարկ համարեց տեղեկացնել, որ Պարսկաստանը վաղուց ի վեր այս կողմ ոչ մտրելի է համարձակվում ուղարկել, ոչ առավել ևս՝ փիղ»²¹:

Փոփոխվում է ոչ միայն տեքստը, այլև իր՝ հեղինակի հոգեկան համակարգը կազմավորող գործառույթների ուղղությունը: Հետևաբար՝ արտահայտության ձևը որակապես փոխում է ասելիքի էությունը՝ արտաքին ազդեցությունները նախապես փոխելով ներքինի: Այս համատեքստում՝ հեղինակային գիտակցությունը ներառում է գեղարվեստական տեքստի ամբողջականությունը, որի յուրաքանչյուր բևեռը ընդունում է նույնի արտահայտության ձևերից մեկը՝ ներքին տիրույթում պահպանելով սուբյեկտ-տեքստ հարաբերությունը, ըստ որի բացահայտվում են նաև հեղինակից գիտակցվող աշխարհ-պատկերների

²⁰ Շովսեփյան Ռ., «Նոյ», էջ 386:

²¹ Շովսեփյան Ռ., «Ես ձեր հիշողությունն եմ», էջ 447:

հիերարխիաները: Մարդ [սուբյեկտ]-բնություն ֆենոմենի միասնական մոդալ տիրույթներում են կազմավորվում այսօրինակ հարաբերությունները՝ որպես հաղորդակցական իրադարձություն գեղարվեստական տեքստում վերստեղծելով մարդ-բնություն ընդհատված երկխոսությունը և կանխավ ձևավորելով իմացաբանության տիրույթը: Այս համատեքստում՝ հեղինակի առաջադրած աշխարհ-պատկերն ընդգծվում է մի շարք հատկանիշներով, որոնք համընկնում են աշխարհ-ունիվերսումի ընդհանրական մոդելին՝ սուբյեկտիվության, տարածաժամանակային ֆենոմենի, պատկերի, սյուժեի, ժանրի տիրույթներում: Աշխարհ-պատկերի այսօրինակ ըմբռնումը դիտարկելի է հեղինակի աշխարհայացքի (նոր ժամանակների մարդ-սուբյեկտի) և նրա գործառույթի (մեթոդոլոգիական մեկնության) համատեքստերում: Ուստի ներ - և միջտեքստային մակարդակներում սուբյեկտիվության տեսանկյունից առանձնացվում են նաև Ես-ի և Ուրիշ-ի փոխհարաբերությունները՝ մետատեքստային մակարդակում բացահայտելով հեղինակի գիտակցությունը և նրա սուբյեկտիվ փիլիսոփայական իմաստավորման (նեոսինկրետիկ) ու միավորումների հարթությունը:

Նախրա Համբարձումյան

Ճանաչողության, հիշողության և ժամանակի ֆենոմենները
Ռուբեն Հովսեփյանի պատմվածքներում
Ամփոփում

Սույն ուսումնասիրությունն անդրադարձ է Ռուբեն Հովսեփյանի «Ես ձեր հիշողությունն եմ», «Խորանարդիկներով տունը», «Նոյը», «Մարիամ տատի գանձը», «Հրդեհ», «Չայներ», «Ամառ էր, կիրակի» ևն պատմվածքներում առկա ճանաչողության, հիշողության և ժամանակի ֆենոմեններին: Արտաքին աշխարհի ճանաչողությունը մշտապես և անմիջականորեն առնչվում է վիճակի ըմբռնմանը՝ հաշվի չառնելով երևույթի անկրկնելիությունը: Այս դեպքում իրականությունը ճանաչելի է ոչ թե ամբողջականության իզման տիրույթում, այլ՝ մասնակիության, որը բացառապես աշխարհըկալման հետևանք է, և հակադրվում է ներքնատեսական ճանաչողությանը (ինտուիցիա):

Наира Амбарцумян

**Феномены познания, памяти, времени и пространства
в рассказах Рубена Овсепяна**

Резюме

В данном исследовании выявляются феномены познания, памяти и времени, представленные в рассказах Рубена Овсепяна «Я – ваша память», «Дом из кубиков», «Ной», «Сокровище бабушки Мариам», «Пожар», «Голоса», «Это было летом, в воскресенье» и др.. Познание внешнего мира неизменно и непосредственно соприкасается с восприятием ситуации вне зависимости от уникальности явления. В этом случае реальность познается не в точках разрыва целостности, а фрагментарно, что является исключительно результатом мировосприятия и противостоит внутритекстовому познанию (интуиции).

Naira Hambardzumyan

**The phenomena of cognition, memory, time and space
in the stories of Ruben Hovsepyan**

Summary

This study reveals the phenomena of cognition, memory and time presented in Ruben Hovsepyan's stories "I am your memory", "House of blocks", "Noah", "Grandmother Mariam's treasure", "Fire", "Voices", "It was in the summer, on Sunday", etc. Knowledge of the external world invariably and directly comes into contact with the perception of the situation, regardless of the uniqueness of the phenomenon. In this case, reality is known not at the points of disruption of integrity, but fragmentarily, which is exclusively the result of the perception of the world and is opposed to intra-textual knowledge (intuition).

Խմբագրություն է ուղարկվել 28. 03. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 15. 03. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՊԱՏՄԱՎԵՊԻ ԿԵՐՊԱՐԱԿԵՐՏՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ
(ԸԱՖՖԻ, Պ. ԶԵՅԹՈՒՆՅՅԱՆ, Լ. ԽԵՉՈՅԱՆ)**

Բանալի բառեր և արտահայտություններ. կերպարակերտում, Ըաֆֆի, Ս. Զեյթունցյան, Լ. Խեչոյան, դասական պատմավեպ, արդի պատմավեպ, Սամվել, Արշակ Երկրորդ, Դրաստամատ ներքինի, հեղինակային պատում, արտաքին և ներքին նկարագրություններ:

Ключевые слова и выражения: создание персонажа, Раффи, П. Зейтунцяна, Л. Хечояна, классический исторический роман, современный исторический роман, Самвел, Аршак II, евнух Драстамат, авторское повествование, внешние и внутренние описания.

Keywords and expressions: Character Creation, Raffi, P. Zeytuntsyan, L. Khechoyan, Classic Historical Novel, Modern Historical Novel, Samvel, Arshak II, eunuch Drastamat, author's narration, external and internal descriptions.

Ժամանակակից աշխարհը թելադրում է իր կանոնները և գեղարվեստական գրականությունը չի կարող անմասն մնալ այդ զարգացումներից: Արտաքին աշխարհի ներթափանցումներն անխուսափելի են, իսկ դրանք ազդում են նաև գեղարվեստական կերպարի խնդրի վրա:

Թեման նոր չէ. Գրականագիտությանը մշտապես հետաքրքրել է գրական-գեղարվեստական կերպարի ուսումնասիրման հարցը, քանի որ յուրաքանչյուր հեղինակ նոր ասելիք ու գաղափար է դնում իր ստեղծած կերպարների հիմքում: Հաճախ գրողները կյանքի ընկալման իրենց մոդելը արտապատկերում են սեփական երկերում: Օրինակ՝ Հայկ Խաչատրյանը բերում է հայրենիքի, հայրենանվեր միապետի և նրա շուրջը համախմբված ժողովրդի գաղափարը: Ըստ այդմ՝ նա ստեղծում է հերոսներ, որոնք այդ գաղափարաբանության կրողն են:

Սույն հոդվածի նպատակը արդի պատմավեպի կերպարակերտման եղանակների և առանձնահատկությունների ուսումնասիրումն է՝ հենվելով պատմական նույն ժամանակաշրջանին և խնդիրներին նվիրված երեք վեպերի վրա՝ Ըաֆֆու «Սամվել» (1886), Պ. Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» (1977) և Լ. Խեչոյանի «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» (1995): Զուգադրումների միջոցով փորձել ենք պարզել՝ ինչպիսի փոփոխություններ

են կրել Փ. Բուզանդի հերոսները Բաֆֆուց մինչև Խեչոյան, և որքանով են տարբերվում նրանց ընկալումները ըստ ժամանակաշրջանի և գեղարվեստական մեթոդների փոփոխության¹:

Կառուցվածքային-կոմպոզիցիոն առումով «Սամվելը» դասական պատմավեպ է, այստեղ պահպանված են պատմական վեպերին բնորոշ պատմողական-նկարագրական, ժամանակային, կերպարային և գաղափարական շերտերը, սակայն նորագույն շրջանի գրականությունը պարբերաբար ըմբոստանում է «հին» ավանդների դեմ և ծնունդ է տալիս այնպիսի երկերի, ինչպիսիք են «Արշակ Երկրորդն» ու «Արշակ արքա, Դրաստամատ ներքինին»:

Նախ և առաջ պետք է հասկանալ, որ երեք հեղինակներն էլ սեփական աշխարհայացքն ու ձեռագիրն են դրել ստեղծագործությունների հիմքում՝ դրանով պայմանավորելով կերպարների նկարագիրն ու նրանց գործողությունների պատճառահետևանքայնությունը: Հայտնի է, որ Բաֆֆին անհանգիստ էր Ցարական Ռուսաստանի վարած քաղաքականությամբ, որը նման էր 4-րդ դարում Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակին, իսկ վեպը պետք է հայ ժողովրդի համար զարթուցիչ լիներ: Պ. Զեյթունցյանը «Արշակ Երկրորդ»-ով փորձել է ճեղքել խորհրդային գաղափարախոսության պատյանն ու ընթերցողին սթափեցնել դարավոր քնից, ներշնչել «սեփական բերդը» կառուցելու գաղափարը: Պ. Զեյթունցյանը «Մեր և պատասխանատվություն» (1985թ.) հոդվածում գրում է. «Ում է պետք այն պատմավեպը, որ ունի սուկ ճանաչողական նշանակություն և չի հարաբերակցվում ժողովրդի այսօրվա հարցերի ու խնդիրների հետ, այսինքն, ճանաչելի չէ նաև այսօր»²:

Լ. Խեչոյանի դեպքում ևս առկա են վերոնշյալ գործոնները. Նա «Սյունյաց երկիր» թերթին տված հարցազրույցում ընդգծում է. «Մեր պատմական անցյալը փակ համակարգ է, ծաղր է, ինչ է, ինչպես մի ճահիճ, որ ամեն դարի հետ հայրենիքիդ, քաղաքիդ, դռանդ շեմի տակ է բացվում, ո՛չ կուլ է տալիս, ո՛չ ազատ է արձակում: Վեճը, ինչպես կար 1-5-րդ, 9-10-րդ դարերում, հարյուրամյակներ կա, մինչև այսօր գալիս է, նրա հետ գալիս է պատմավեպ գրելը: Իմ կարծիքով՝ լրիվ արդարացի, գուցե մյուս

¹ Հոդվածի շրջանակներում դիտարկել ենք երեք կերպարների՝ Սամվել, Արշակ Երկրորդ, Դրաստամատ:

² **Զեյթունցյան Պ.**, Մեր և պատասխանատվություն, «Սյունյաց երկիր» թերթ, Երևան 2015, N32 (374), էջ 17:

ժողովուրդների պատմական անցյալի մեջ վեճ չկա, իրենց պատմությունն ավարտել, ամբողջացրել են, մերը չի ավարտվել, մերը շարունակվում է...»³:

Գրականագետ Ս. Գրիգորյանը «Ո՞ւր է թագավորը...» հոդվածում պատմության խեչոյանական անդրադարձի մասին գրել է. «Պատմության խեչոյանական ընթերցումը պատմափիլիսոփայական առումով մեծ հայտնագործություններ չի երևակում, բայց պարունակում է ենթաշերտեր, որոնք առնվազն երկու առումով հետաքրքրություն են հարուցում: Մեկը պատմական դիպաշարի հարաբերումն է մեր ժամանակի պատմությանը, մյուսը՝ Լևոն Խեչոյանի խոսքի սնուցումը պատմության լոգոսով»⁴: Հռոկվածում գրականագետը հավելում է. ««Արշակ արքա, Դրաստամատ ներքինին» պատմական վեպ է: Բայց այն նաև ժամանակակից վեպ է, որ պատմության հենքի վրա բարձրացնում է արդիական հարցեր, առաջադրում մտածության նյութեր, երբեմն էլ՝ պարզաբանում որոշ խնդիրներ»⁵:

Ինչպես նաև, ի տարբերություն նախորդ շրջանի ստեղծագործությունների, ո՛չ հեղինակը, ո՛չ իր կերպարները հերոսանալու խնդիր և ցանկություն չունենին: Նրանք մարդիկ էին, ովքեր հայտնվել էին նոր կյանքի ճամփաբաժանին, իսկ անորոշությունից ու անհայտությունից ելք էր անհրաժեշտ: Այդ պատճառով էլ Խեչոյանը դարձավ յուրատեսակ ճանապարհացույց գեղարվեստական և հետպատերազմյան իրականության համար:

Թերևս երեք հեղինակներն էլ հետապնդում էին միևնույն գաղափարը, սակայն տարբեր են ստեղծագործելու ժամանակաշրջաններն ու մեթոդները:

Առաջին հայ պատմավիպասան Բաֆֆին, ստեղծագործելով պատմավեպի ծաղկման ժամանակաշրջանում, իր գործը հյուսում է ժամանակի կանոններով և օրինաչափություններով՝ ստեղծելով ժամանակակից ընկալումներով դասական պատմավեպի մոդել: Որպես կերպարաստեղծման եղանակ նա կիրառում է ներքին և արտաքին նկարագրությունները, կենտրոնական տեղ տալիս երկխոսություններին ու մենախոսություններին, որ դառնում են հերոսների բացահայտման գլխավոր միջոցը: Դա հնարավորություն է տալիս ընթերցողին համա-

³ Սյունյաց երկիր, Երևան, 2006 թ., N 1(92), էջ 64:

⁴ **Գրիգորյան Ս.**, Ո՞ւր է թագավորը (*«Արշակ արքա, Դրաստամատ ներքինին» վեպը Լևոն Խեչոյանի արձակի համակարգում*), «Նորք», թիվ 1, Երևան, 1996 <https://granish.org/seyrans-grigoryan-where-is-the-king/> (մուտք 25.08.2020):

⁵ Նույն տեղում:

կողմանիորեն տեսնելու վերջիններիս բնավորության գծերը ու դրանց վրա ազդող գործոնները:

Սկսենք Սամվելից: Նրա մասին հիշատակություններ կան Փ. Բուզանդի «Հայոց պատմության» ու Թ. Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատությունների մեջ⁶: Կերպարի մասին այդ պատմական անդրադարձները դնելով իրենց երկերի հիմքում՝ ն՛ Բաբելոն, ն՛ Ջեյթունցյանը հերոսին կերպավորել են՝ տալով նրան իրենց ժամակաշրջաններին բնորոշ երանգավորումներ: Բաբելոն Սամվելը ընթերցողի առջև է կանգնում արտաքին մանրամասն նկարագրությամբ. «...Սևորակ, նշաձև աչքերի մեջ նշմարվում էր մի անբացատրելի վրդովմունք: Քսանհիգ տարեկան հազիվ կլիներ նա, նուրբ կազմվածքով և փոքր ինչ մույգ-դեղնագույն դեմքով, որ պահպանվել էր նրա մեջ ժառանգական արյունից»⁷, կամ «գլխի բոլորտիքը սափրված էր, միայն զազաթի վրա ճոխ երկարությամբ աճել էին սև գիսակները: Գազաթի բոլորովին մեջտեղում, մի դրամի մեծությամբ, նույնպես ածիլած էր»⁸: Բաբելոն պատկերում է հերոսին, նրա գործելու միջավայրը, կերպարին առնչվող առարկաները և անձերին՝ կարևորություն տալով այն տարածական հարթությանն ու շրջապատին, որոնց շրջանում զարգանալու է Սամվելի կերպարը:

Եթե Բաբելոն մեծ տեղ է տալիս այդ նկարագրություններին, ապա Պ. Ջեյթունցյանը, ընդհակառակը, ընթերցողին չի տալիս Սամվելի մասին ոչ մի նկարագրական տեղեկություն: 19-րդ դարից մինչև 20-րդ դարի կեսերը պատմավեպերին, առհասարակ, բնորոշ են արտաքին հատկանիշների մանրակրկիտ նկարագրությունները (օր.՝ Բաբելոն, Ծերենց, Մուրացան, Դ. Դեմիրճյան, Մտ. Ջորյան), իսկ 20-րդ դարի 70-ական թվականներից հեղինակներն իրենց երկերը սկսում են ազատել նման մանրամասներից՝ դրանով կարծես թե տեղ բացելով ներքին ապրումների, հոգեբանական, փիլիսոփայական հարցերի համար, որոնք ինքնըստինքյան տեղափոխվում են առաջին պլան և սկսում իրենց վրա տանել վեպերի սյուժետային ու պատումային գծերը (օր.՝ Պ. Ջեյթունցյան, Լ. Խեչոյան, Ա. Մարտիրոսյան, Վ. Գրիգորյան):

«Արշակ Երկրորդ»-ում Սամվելին առաջին անգամ հանդիպում ենք արքայական ճաշկերույթի ժամանակ Մուշեղ Սամիկոնյանի հետ:

⁶ Փ. Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 277, Թ. Արծրունի և Անանուն «Պատմութիւն տանն Արծրունեաց», Երևան, 1985, էջ 106:

⁷ Բաբելոն, Սամվել, Երևան, 1986, էջ 19:

⁸ Նույն տեղում, էջ 30:

Ներկայացնելով նրան՝ Ձեյթունցյանը բավարարվում վերջինիս Վահան Մամիկոնյանի որդի անվանելով⁹ սրանով ասես ենթադրելով, որ իր ընթերցողը ունի գրական ընթերցանության բազա և տեղյակ է, թե ով է Մամվելը: Նույնիսկ կերպարի զարգացման առումով Բաֆֆին իր հերոսի հետ հոգեբանորեն հասունանում է, բերում այն տրամաբանությանը, որ ամեն ինչ ստորադասվում է հայրենիքի շահին, իսկ Մամվելը ծնողասպանության քայլին է դիմում, քանի որ այլ տարբերակ տվյալ պարագայում չէր կարող լինել¹⁰: Իսկ Ձեյթունցյանը իր կերպարին թոթափում է պաթոսից: Վեպում նրա քայլերը, ճիշտ է, մասամբ պայմանավորված են հայրենասիրությամբ, բայց այդ հայրենասիրության մեջ կա նաև բախտախնդրություն, Մամիկոնյաններին արժանի լինելու, Մուշեղ Մամիկոնյանից հետ չմնալու և իր անունը ևս փառավորելու սկզբունքայնություն¹¹: Այսինքն՝ այս կերպարով հեղինակը քանդում է պատմավեպի հայրենասեր հերոսին վերագրվող ավանդական հատկանիշների ցանկն ու, ի տարբերություն Բաֆֆու, չի արդարացնում Մամվելի այդ քայլը գրելով.

«Մամվելը, այդ չար և անդուր լակոտը, սպանել էր իր հորը, Վահան Մամիկոնյանին: Նախ ստիպել էր նրան՝ հրաժարվել հավատուրացությունից, վերադառնալ քրիստոնեությանը, քանդել ասորուշանները ու վռնդել մոզերին, աղաչել էր ու ահաբեկել, ծնկաչոք պաղատել ու բռնացել, իսկ հետո, երբ ոչինչ չէր օգնել, կատաղության մոլուցքի մեջ դաշունահար էր արել նրան:

Ասում են, թե խելքը գլուխը գալուց հետո, սարսափած իր գործած ոճրից, կիսախելագարված, ընկել էր դռնեղուռ, բռնել սրա-նրա օձիքից և հարկադրել, որ գովեն իր արարքը, գնահատեն իր մեծ հայրենասիրությունը...»¹²:

⁹ Տե՛ս **Ձեյթունցյան Պ.**, Արշակ Երկրորդ, Երևան, 1977, էջ 34:

¹⁰ Տե՛ս **Բաֆֆի**, Մամվել, էջ 431: (Այս միտքն ամբողջությամբ բացահայտվում է «Արաքսի որոգայթները» գլխում):

¹¹ Վեպում քանիցս տեղի են ունենում դեպքեր, որոնց ժամանակ Մամվելն անընդհատ փորձում է կա՛մ ամոթով չմնալ Մուշեղի աչքերում, կա՛մ գերազանցել վերջինիս: Օր.՝ Վահան Մամիկոնյանի և արքայի բանավեճի ժամանակ կատարվում է հետևյալը. «Չոր ձայնը լսելուն պես, Մամվելը ամոթից շիկնեց ու աշխատեց չնայել Մուշեղին, մանավանդ որ Վասակ սպարապետը չէր մասնակցում այս նվաստացուցիչ տեսարանին և շարունակում էր մեն-մենակ նստած մնալ սեղանի մոտ» (էջ 50):

¹² **Ձեյթունցյան Պ.**, Արշակ Երկրորդ, էջ 435:

Մեջբերված հատվածում տեսնում ենք Սամվելի կերպարի գեյթունցյանական ընկալման և կերպավորման եղանակը: Նույնիսկ Արշակ արքան, իմանալով, որ Սամվելը սպանել է հորը, ոչ թե հիանում է նրա սխրանքով, այլ քննադատում է.

«Աշխարհում ոչինչ չկա, բացարձակապես ոչինչ, անգամ աստված և հայրենիք, որոնց անունից մարդ իրավունք ունենա ծնողասպան լինելու»¹³:

Այս միտքը ուղղակիորեն հակադարձում է Բաֆֆու «Սամվել»-ի «-Թո՛ղ մարդիկ ինձ անիրավ կոչեն, թո՛ղ մարդիկ ինձ եղեռնագործ կոչեն, ահա՛, այն սուրբ, որ սպանեց դավաճան հորը, կսպանի և ուրացող մորը...»¹⁴ գաղափարին:

Լ. Խեչոյանը «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» պատմական վեպում չի կերպավորել Սամվելին, նրա ուսումնասիրության ու հետաքրքրության կենտրոնում են եղել Արշակ արքան, Դրաստամատը, Ներսես Մեծը, Մերուժան Արծրունին:

Արշակ արքայի կերպարը պատմավիպասանության սիրելի թեմաներից է: Նա համարվում է ամենահետաքրքիր պատմական անձանցից մեկը, որի առկայությունը գրական երկում «շահեկան» է: Այդ մասին են վկայում Բաֆֆու, Պ. Ջեյթունցյանի, Լ. Խեչոյանի պատմավեպերը և բազմաթիվ գեղարվեստական ստեղծագործություններ, որոնց մեջ կերպավորվել են Արշակն ու իր ժամանակը¹⁵:

Մինչ Արշակ արքայի կերպարի զարգացմանն անդրադառնալը նկատենք հետևյալը. Նորօրյա գրականության հերոսներ են դարձել մարդիկ, ովքեր հերոսանալու ձգտում չունեն: Այսօր հեղինակները չեն ստեղծում հերոսական կերպարներ: Գրականության ժամանակակից հերոսը առանձնապես չի տարբերվում միջավայրից: Նա մի քիչ հոգնած, կյանքում իր տեղը չգտնող, սակայն անկեղծորեն այս փաստը խոստովանող անհատ է: Այդ խոստովանության մեջ յուրատեսակ հերոսություն կա, քանի որ ինքնախոստովանությամբ նրանք գերծ են մնում երեսպաշտությունից, ընդունում են իրականությունը, մի տեսակ հաշտվում դրա հետ: Ջեյթունցյանական Արշակը խոստովանում է՝ «ով-ով, բայց ես ինքս հո լա՛վ գիտեմ, որ եթե հարկ է եղել խաբելու, խաբել եմ, եթե պետք էր անագնիվ բան անել, արել եմ, եթե անհրաժեշտ էր դաժան լինել, եղել եմ, եթե

¹³ Նույն տեղում:

¹⁴ Բաֆֆի, Սամվել, էջ 500:

¹⁵ Տե՛ս Պեշկիթաշյան Մ. «Արշակ», Ջորյան Սո. «Հայոց բերդը», Ջեյթունցյան Պ. «Ավերված քաղաքի առասպելը»:

անխուսափելի էր սուտ երդում տալը, տվել եմ...»¹⁶, իսկ Լ. Խեչոյանի Արշակը կարծես թե ամբողջացնում է՝ ասելով՝ «Ես ինչ պիտի անեմ, ես ստիպված անում եմ այն, ինչ դիպվածն է թելադրում»¹⁷:

Մենք քննվող խնդրին մոտենում ենք այս դիտանկյունից. Արդի պատմավեպի կերպարները «գործում են պատմական անցյալի մեջ, իրագործում են անցյալի խնդիրները, բայց ներկայի պահանջով ու տրամաբանությամբ»¹⁸:

Երեք ստեղծագործություններում էլ գրեթե չկա Արշակ թագավորի արտաքին նկարագիրը: Պ. Ջեյթունցյանի «Արշակ Երկրորդ»-ում հանդիպում ենք միայն հետևյալին՝ «Նա երկար, առատ մազեր ուներ, որոնք բոլորակ հատմամբ իջնում էին մինչև ծոծրակի կեսը: Դեմքը ծածկված էր խիտ մորուքով», ապա հավելում է՝ «Մա էր թագավորը»¹⁹:

Իսկ Խեչոյանի վեպում Փառանձեմի մայրապետն ասում է. «Նա չի կարողանում թագավորին սիրել, որովհետև նրա մարմինը թուխ է, ինքը՝ թավամազ»²⁰:

Ե՛վ Բաֆֆին, և՛ Ջեյթունցյանը, և՛ Խեչոյանը արքայի կերպարի ամբողջացման համար օգտագործել են հոգեբանական, ապրումային շերտը, քանի որ այդքան էլ կարևոր չէ, թե ինչ արտաքին տեսք ուներ Արշակը, ավելի կարևոր էին նրա մտորումները, հարաբերությունները այլ հերոսների հետ և քայլերն իբրև թագավոր:

Բաֆֆու «Մամվել»-ում Արշակ արքայի կերպարը ներկայացված է մասնակի: Նրան հանդիպում ենք արդեն Անուշ բերդում բանտարկված, որտեղից էլ հեղինակը սկսում է բացահայտել Արշակի կերպարը՝ իբրև դժբախտ թագավոր, ով անհանգիստ է երկրի ներքին ու արտաքին իրավիճակի, թագաժառանգի, թագուհու, հայ նախարարների վարած քաղաքակրթության համար: Բիարկե որպես մարդ և թագավոր նա դժբախտ է (հիշենք Անուշ բերդում մորթազերծ արված Վասակ Մամիկոնյանի հետ զրույցը)²¹, բայց այդ ապրումների մեջ կիսատ է մարդկային, անհատական, անձնական դրաման, որի ենթաշերտերին հեղինակը չի անդրադարձել: Ի տարբերություն Բաֆֆու՝ Ջեյթունցյանը միֆազերծում է Արշակ Երկրորդին ու ձուլում ամբոխին՝ իբրև սովորական մարդ, կարոտներով, կյանքի,

¹⁶ **Ջեյթունցյան Պ.**, Արշակ Երկրորդ, էջ 96:

¹⁷ **Խեչոյան Լ.**, Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, Երևան 2013, էջ 66:

¹⁸ **Ավետիսյան Ջ.**, Նորագույն գրականության զարգացման միտումները, «70-ական թվականների հայ պատմավեպը», Երևան 2003, էջ 125:

¹⁹ **Ջեյթունցյան Պ.**, «Արշակ Երկրորդ», էջ 24:

²⁰ **Խեչոյան Լ.**, Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, էջ 105:

²¹ Տե՛ս **Բաֆֆի**, Մամվել, էջ 210-211:

հասարակ առօրյայի հանդեպ տենչերով, սակայն մյուս կողմից էլ անջրպետում է՝ շեշտելով նրա դիրքն ու դրա թելադրած պատասխանատվությունը: Լ. Խեչոյանը ապամիֆականացման փոխարեն առասպելական շղարշով է պատում վեպը, կերպարներին հանում հրապարակ, ընթերցողների առաջ սփռում իրենց նման մարդկանց, որ հավատում են Քրիստոսին, հեթանոսական աստվածներին, ճակատագրին, տիեզերական ուժերին ու աստղերին: Դրա վկայություններից է, օրինակ, Արամազդի տաճարի քուրմ Ողյումպի ուղարկած լուրը արքային. «Արքա, արդեն երրորդ օրն է, արեգակը մայր մտնելիս, Արադոտ ժամին իր բնական ծավալի կրկնակի տեսքն ունի՝ երեք կապուտակ ճառագայթներով, այս տարի աղը և ձյունը շատ կլինի, ջրերը կպակասեն, մի թագավոր կմեռնի, հեծյալների շարժում կլինի»²²:

Երեք Արշակները տարբեր են միմյանցից: Ըաֆֆու Արշակի բնավորության գծերն առանձնապես ցայտուն չեն: Նրա մասին շատ բան չենք կարող առանձնացնել, սակայն գեյթունցյանական Արշակը շատ հակասական է, կտրուկ իր որոշումներում, իսկ խեչոյանականը ավելի համբերատար, դիվանագետ, շրջահայաց: Ս. Արզումանյանն այս մասին գրում է. «Խառնվածքով Պ. Զեյթունցյանի Արշակը դյուրաբորբոք է, արագ բռնկվող, զգայուն, կրակոտ, սկզբունքների ու դիրքերի մեջ աննահանջ: Պատմական-քաղաքական հանգամանքները, ժամանակը և Արշակի անհատականությունը հանդիպել են սուր մի կետում, և դա իր խոր կնիքը թողել է հերոսի բնավորության վրա»²³:

Ինքը՝ Արշակն ասում է՝ «Ասե՛ք, ասե՛ք, ինչքան ուզե՛ք, ասե՛ք, մի՞ թե ես առարկում եմ, որ փառասեր եմ, փառասեր եմ, ինչու՞ չէ, մինչև ուղն ու ծուծը փչացած, վայելքներից խենթացած, հարստությունից հղիացած... Ավելացնե՛մ էլի... Սակայն չէ՞ որ եթե Գնելը լինի թագավոր, նույն բանն է դառնալու»²⁴:

Ի տարբերություն վերոբերյալի՝ խեչոյանական Արշակը Պապի հետ գրույցում խոստովանում է՝ «Ժամանակը այնպես էր տրված, որ մեջը ջերմություն չկար, պահը և դեպքերը պահանջում էին անհապաղ գնալ նպատակի հետևից, իմ միջից էլ հանեցի ջերմությունը ու կտրուկ գործողություններով մտա ժամանակի մեջ», ապա շարունակում է.

²² Խեչոյան Լ., Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, էջ 204:

²³ Արզումանյան Ս., Խորհրդահայ վեպը, հատոր չորրորդ, Երևան, 1990, էջ 540:

²⁴ Զեյթունցյան Պ., Արշակ Երկրորդ, էջ 102:

«Դեպքերի պահանջով՝ ուրիշի հունձքն էլ եմ հնձել և իմ երկրի օգտի համար նրանց ամեն տեղ ամբարել»²⁵:

Թե՛ գեյթունցյանական Արշակը, թե՛ խեչոյանական Արշակը ինչպես գեղարվեստական մեկնաբանության, այնպես էլ գոյափիլիսոփայության տեսակետներից բոլորովին տարբեր են նախորդած Արշակներից, չնայած նրանք բոլորն էլ նախորդ շրջանների պատմավիպասանական կերպար-նկարման անմիջական զարգացումն են:

«Արշակ Երկրորդ» պատմավեպում Արշակ թագավորի կերպարը հաճախ գծագրվում է ինքնախոստովանության ու ինքնավերլուծության միջոցով, նրա խոհ-մենախոսությունները դառնում են բանալի կերպարի ներքին ապրումները հասկանալու համար: Ասում է՝ «Բայց մի՞ թե ես այդ ամենը ինձ համար եմ կատարում: Մի՞ թե այդպիսին եմ ծնվել ես: Ուրեմն, բոլորդ կարգին մարդիկ եք, և միայն ե՞ս եմ ձեզ անարժան»²⁶:

Լ. Խեչոյանի «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» պատմավեպում հերոսները բացահայտվում են պատումի համապատկերում, իսկ հեղինակը, ճիշտ է, զերծ է մնում մանրամասն, պատկերավոր նկարագրություններից, սակայն պահի, բառի, դեպքի կրկնությամբ և ինքնըստինքյան դրա շեշտադրմամբ ընթերցողի երևակայության մեջ արարում է կերպարներին: Օրինակ՝ անելանելությունից ու իշխանությունը տանուլ չտալու նկատառումից ելնելով թագավորը գնում է ճակատագրական ու դաժան քայլի՝ կենաց-մահու նշան ուղարկելով Տիրիթին. Հարալեզ շանը կախում է ծառից:

«Հետո թիկնագորը եկավ, տեսավ հեղեղատի մեջ, ծառի առաջ կանգնած, մեջքը կլորացած, կուզացած Արշակ արքային, տեսավ կախված աստվածատուր հարալեզին ու սարսափեց»²⁷:

Այս տեսարանը ամբողջ վեպի ընթացքում կրկնվում է մի քանի անգամ ու է՛լ ավելի խորացնում տրամադրությունն ու արքայի հուսալքությունը: Նույնը նաև Արշակի մեջքի կուզանալու փաստը, որը կրկնվում է Տիրան թագավորին ծեծված տեսնելիս²⁸: Սա մարդու փոքրացումը, ընկճվածությունն է, աշխարհի դեմ իր միայնակության և անգորության գիտակցումը:

«Արշակ Երկրորդ»-ի սյուժեն զարգանում, և գործողությունների մի մասը ծավալվում է արքայի խոհերի մակարդակում: Հեղինակը հետաքրքիր

²⁵ Խեչոյան Լ., Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, էջ 147-148.:

²⁶ Զեյթունցյան Պ., Արշակ Երկրորդ, էջ 257:

²⁷ Խեչոյան Լ., Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, էջ 192:

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 65:

հնարանք է կիրառել. Թագավորի կերպարը զարգանում է ոչ թե նկարագրությունների կամ ուրիշ հերոսների խոսքի միջոցով, այլ բացահայտում է ինքն իրեն՝ սեփական մտորումներով իր իսկ գործողություններին գնահատական տալով:

Զեյթունցյանը թագավորին «իջեցրել» է իր բարձունքից, պարուրել ամենատարբեր զգացմունքներով՝ չհասկացվածություն, օտարում, մենություն, չգնահատված լինելու վախ, ժամանակից առանջ ընկնելու և ժամանակը տանուլ տալու չլքող զգացողություն: Հայր Մարդպետի հետ զրույցի ժամանակ, օրինակ, թագավորը կարծես նետում է աշխարհի երեսին.

«-Հոգնել եմ գահին կառչելուց, պալատական խարդավանքներից, ինձանից, քեզանից, քո կոկոռցից... Թող գան, թող ուրիշներն էլ փորձեն... Թող ուզենան բան անել, ու ոչ ոք չհասկանա նրանց... Թող մենակ մնան... Ինձանից էլ մենակ... Մենակ, մենակ, մենակ, շահ տ'մենակ...»²⁹:

Ս. Մարգարյանը այս առիթով նկատում է. «Արշակն ինքն իրենով արտացոլում է իր իսկ «շավիղից դուրս սայթաքած ժամանակը», որի մեջ փորձում է ստեղծել սեփական երկրի ու ժողովրդի պատմությունը»³⁰:

Խեչոյանական Արշակը ևս միայնակ է: Երկու պատմավեպերի կենտրոնական հերոսներն էլ յուրովի մենակ են: Նրանք մարմնավորում են և՛ Զեյթունցյանի, և՛ Խեչոյանի ժամանակաշրջանները, երբ մարդն աստիճանաբար օտարվում է ինքն իրենից ու աշխարհից, կանգնում է սեփական էության փնտրտուքների ճանապարհին: Լ. Գալստյանը Արշակի մենության բնույթը մեկնում է. ««Արքայի մենության» մոտիվը պատմավիպասանության մեջ իհարկե նոր չէ. և «Գևորգ Մարգպետունի» և՛ «Պապ թագավոր» պատմավեպերում թագավորները մենակ են, մենակ է Աշոտ Երկաթը, մենակ է Պապը, բայց Զեյթունցյանը արքայի կերպարում փորձում է ցույց տալ «մարդու մենությունը»: Արշակը ոչ թե մենակ է, այլ մենության դատապարտված անհատ»³¹:

Անհուշ բերդում մորթազերծ արված Վասակի հետ այսպես է մենախոսում. «Բախտս բերեց Վասակ... Ես ազատվեցի իմ մենակությունից... Իսկ սա... Սա բացարձակ մենակություն է... Մաքուր և

²⁹ Զեյթունցյան Պ., Արշակ Երկրորդ, էջ 101-102:

³⁰ Մարգարյան Ս., Պատմության ժամանակը, Եր., 2000, էջ 15-16:

³¹ Գալստյան Լ., «Պատմության գոյապաշտական հայեցակարգը Պերձ Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» վեպում», Հայագիտական հանդես, Երևան 2017, № 4 (38), էջ 61:

անարատ... Սա մարդու մենակությունն է... Իսկ այն մեկը՝ արքայի... Դրա համար էլ ես սիրեցի իմ շղթաները...»³²:

«Մենության դատապարտված» մարդու մոտիվը անընդհատ տեսնում ենք Պ. Զեյթունցյանի, Լ. Խեչոյանի այլ ստեղծագործություններում ևս: Այսինքն՝ սա դարի խնդիր էր, որին ահագանգում էին նաև այլ հեղինակներ (Ա. Մարտիրոսյան, Վ. Խեչումյան, Վ. Գրիգորյան և այլք): Գրողներն իրենց հերոսներին դնում էին այդ նոր ժամանակաշրջանի թրծած կաղապարի մեջ ու ցույց տալիս, թե ինչպես են նրանք պարփակվում, ինչի արդյունքում մարդը հասարակությունից նահանջ է ապրում:

Այս նկատի ունենալով՝ Ս. Մարգարյանը գրում է, որ Զեյթունցյանի վեպում «պատմական իրադարձությունների ոլորտն իր մեջ է առնում մարդկային ճակատագրի առեղծվածը՝ մարդու էության ինքնաբավ գոյության խորհուրդը, այնուամենայնիվ, տոգորելով չհասկացվածության, մենակության, աշխարհի անկատարության ու երջանկության ունայնության մասին խոհերով»³³, իսկ Արշակին բնութագրում է որպես «անհանգիստ, կամային, ենթարկող ու դաժան, փորձության պահին՝ տագնապած ու շտապող, մենության պահերին՝ չհասկացված, մենակ, ինքն իրենից ու աշխարհից օտարված ու խռով», ապա հավելում է՝ «Արշակն ինքն իրենով արտացոլում է իր իսկ «շավիղից դուրս սայթաքած ժամանակը», որի մեջ փորձում է ստեղծել սեփական երկրի ու ժողովրդի պատմությունը»³⁴: Նույնը բնորոշ է նաև Լ. Խեչոյանի կերպավորած Արշակին:

Որքան էլ հետաքրքիր ու բազմաբովանդակ է թագավորի կերպարը, սակայն նա ստեղծագործությունների մեջ միայնակ չէ: Նրա հետ սերտ կապված են Դրաստամատի ու Ներսես Մեծի կերպարները, և նրանք զուգահեռաբար լրացնում ու բացահայտում են միմյանց:

Բաֆֆին արքային, Դրաստամատին և Ներսես Մեծին կենտրոնական դիպաշարի զարգացման համապատկերում չի ներկայացրել, այլ պատկերել է նրանց՝ կյանքի մեկական օրվա կտրվածքով՝ այդպիսով այդ հաստվածները ներմուծելով իրադարձությունների շղթայի մեջ: Քանի որ Բաֆֆու վեպի գաղափարական հենակետային երակը կենտրոնաձիգ պետության գաղափարն է, Դրաստամատի կերպարը հանդես է գալիս սուկ որպես արքայի հավատարիմ ծառա:

Զեյթունցյանը և Խեչոյանը այս պարագայում մի քայլ առաջ են անցնում՝ իրադարձությունների կենտրոնում դնելով Դրաստամատին, ում

³² Զեյթունցյան Պ., Արշակ Երկրորդ, էջ 511:

³³ Մարգարյան Ս., Պատմության ժամանակը, էջ 15:

³⁴ Նույն տեղում, էջ 15-16:

կերպարային շերտերի բացահայտումն անմիջականորեն կապված է Արշակ Երկրորդի հետ:

Եթե խեչոյանական Դրաստամատը զբաղվում է բժշկագիտությամբ և աստղագիտությամբ, նրան ներքինի են դարձրել Արամազդի տաճարի քրմերը, գաղափարական առումով նա նույնացել է արքայի հետ, դարձել նրա սովերը, ապա Զեյթունցյանի Դրաստամատը հանդես է գալիս իբրև հավատարիմ սենեկապետ, ով լուռումունջ իր գործն է կատարում՝ դրա փոխարեն ոչինչ չպահանջելով:

Լ. Խեչոյանը գրում է. «Դրաստամատը տեսավ թագավորի կապույտ, սևացած մարմինը, զգաց նրա քներակի թույլ, քանի գնացող թելանման դարձող զարկերը, տեսավ ճակատին մահառաջի դալկությունը ու շատ ազդու առավ նրա հանգչող մարմնի տագնապ արձակող բուրմունքը»³⁵:

Մեկ ուրիշ դեպքում Խաղ եպիսկոպոսն է Տիրիթին ասում. «Տիրիթ, ի՞նչ է, դու չգիտես, որ նրա նման մարդիկ շինվում են թագավորի հոգին իրենց մեջ թաքցնելու համար: Քրմական դևերը թագավորին անմահ, անպարտելի դարձնելու համար տարիներով նրան ստեղծեցին ու նրա սրտի մեջ թաքցրին թագավորի հոգին...»³⁶:

«Արշակ Երկրորդում» թագավորի ու Դրաստամատի միջև տեղի է ունենում հետևյալ խոսակցությունը, որը վերը նշվածի ապացույցն է:

«-Դու ինձ վստահում և սիրտդ բաց ես անում իմ առաջ, որովհետև ինձ ոչնչություն ես համարում, արքա:

-Տեսնո՞ւմ ես, դու էլ զենք ունես: Իշխանությունն իմ ուժն է, իսկ ոչնչությունը՝ քոնը: Պատկերացրու, որ մենք հավասար ենք:

-Այդ զենքը դու ես ինձ տվել, արքա: Մի՞թե քիչ են անգեն ոչնչությունները: Իսկ իմ ոչնչությունը քո կողքին է արժեք ստանում:

-Հո չե՞ս ք՞նում, - մռայլ հարցրեց նա:

-Դա իմ պարտականությունների մեջ չի մտնում, արքա, - արժանապատվությամբ ու առանց որևէ հույզի պատասխանեց Դրաստամատը»³⁷:

Քննվող երեք հեղինակներից Դրաստամատի կերպարին յուրահատուկ գունավորում է տալիս Լ. Խեչոյանը: Պատմավեպում ինչպես մյուս հերոսների, այդպես էլ Դրաստամատի արտաքինի նկարագրությունը մասնակի է: Միայն վեպի սկզբում, երբ հայրը՝ Գարջույլը, որդուն նվիրաբերում է Արամազդի տաճարին, Դրաստամատն ինքն իր մասին

³⁵ Խեչոյան Լ., Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, էջ 75:

³⁶ Նույն տեղում, էջ 170:

³⁷ Զեյթունցյան Պ., Արշակ Երկրորդ, էջ 23

ասում է. «...հայրիկի կապուտաչ, ոսկեգանգուր տղային Աստված խնայել է ու ցլին ընդունել»³⁸:

Ինչպես նաև երկու անգամ հանդիպում ենք «մեղրաշուրթ տղա»³⁹ արտահայտությանը: Այսքանով հեղինակը սահմանափակվում է:

Դրաստամատի կաղապարված կերպարին ևս հատուկ է ներանձնական դրաման: Առաջին անգամ թագավորի աչքերում կիրք նկատելով, օրինակ, ներքինին մտածում է. «Չի կարող պատահի՝ իմս մեռած, ճլորած լինի»⁴⁰ :

Սրան հաջորդում է անդառնալիության գիտակցումը, և նա փորձում է վրեժ լուծել իրեն սեռից զրկած ծնողներից:

«Ախոռից կհանի այն սպիտակ նժույգը, որ հայրն Արամազդի տաճարում խոստացել էր իրեն նվիրել ու կարմիր եղեգների անտառ վարազի որսի տանել: Նժույգը կքաշի, կբերի ապարանքի մարմարե աստիճանների մոտ ու հոր ոտքերի ռաջ սրախողխող կանի՝ արյունը ցայտեցնելով նրա ոտքերին ու սիտակ մարմարին»⁴¹:

Ապա դառնալով մորը՝ խայթում է. «Բաղը, հավը ձագին կարողանում են խնայել, մայրիկը իր մեղրաշուրթ առաջնեկին չկարողացա՞վ պահել»⁴²:

Ի տարբերություն Բաֆֆու երկարաշունչ նկարագրությունների՝ Խեչոյանը ժլատ, բայց խորը արտահայտություններով է կերպավորում իր հերոսներին: Եվ մի քանի նախադասությամբ ձևակերպված այս խոսքերը դառնում են Դրաստամատի անձնական ողբերգության ապացույցը:

Այս հպանցիկ մտքերով, սակայն, սահմանափակվում է ներքինու սեռային և անձնական ինքնագիտակցությունը, և ինչպես կանխագուշակում են քրմերը, նա դառնում է արքայի գործառությանին կրկնակը. «Դրաստամատին տիեզերքի լուսատու աստվածները մտցրին անսահման միայնակության փուլ: Նա՛ վերջնական ու անմնացորդ, արդեն նվիրվել է թագաժառանգին»⁴³:

Բաֆֆին, ընդհակառակը, սեռային պատկանելության ու գիտակցության խնդրին բացահայտորեն չի անդրադառնում: Գրողն իր ուշադրության սլաքներն ուղղում է Դրաստամատի արտաքինի նկարագրության վրա: Ֆիզիկականի պատկերմամբ նա աննկատորեն

³⁸ Խեչոյան Լ., Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, էջ 13:

³⁹ Նույն տեղը:

⁴⁰ Նույն տեղում, էջ 19:

⁴¹ Նույն տեղում, էջ 19-20:

⁴² Նույն տեղը:

⁴³ Նույն տեղը:

շեշտում է ներքինու՝ սեփական սեռից զրկված լինելը. «Միջահասակ մարդ էր այցելուն, ցամաքած և նիհար կազմվածքով: Երեսը բոլորովին զուրկ էր մազերից, ոչ մորուք ուներ և ոչ ընչացք: Եթե այրական հագուստը փոխվեր, մի պառավ կնոջ տպավորություն կգործեր,- մի կնոջ, որ հարգանք է ազդում և պատկառանք»⁴⁴:

Բաֆֆուն և Խեչոյանին զուգադրելիս պարզ է դառնում, որ ժամանակները փոխվում են, փոփոխվում են նաև գրականության առաջադրած խնդիրներն ու գրական հերոսներին կերպավորելու եղանակները: Երկու հեղինակների միջև Ձեյթունցյանն է, որը, հավատարիմ մնալով Բաֆֆու կերպարակերտման մեթոդներին, այնուամենայնիվ, արտաքինի նկարագրության փոխարեն առաջնային պլան է բերում ներանձնական ապրումը: Արտաքին, ֆիզիկական հատկանիշների բնութագրություն գրողը չի ներկայացնում: Դրա փոխարեն Դրաստամատի կերպարը բացահայտվում է իրադարձությունների շղթայում: Նա դառնում է թագավորի բանականությունն ու ռացիոնալ միտքը, դժվար իրավիճակներում ճիշտ ուղին մատնանշողը: Այդ էր պատճառը, որ զգացմունքային արքան կաշկանդվում էր բանական Դրաստամատի առաջ:

«...Ես հիմա միայն քո խորհրդից եմ վախենում... Ճիշտ խորհրդից...»⁴⁵, - ասում է Արշակը:

Ձեյթունցյանական Դրաստամատը մինչև վերջ անբացատրելի ու անհայտ է մնում արքայի համար: Արշակը մտածում է. «Ո՞վ էր Դրաստամատը, ի՞նչ էր անում իր ազատ ժամերին, ունե՞ր արդյոք սիրուհի, բարեկամներ, ազգականներ: Եվ մի թե նրա դեմքը երբեք չէր փոխվում, հայացքը ոչինչ չէր ցույց տալիս: Արքան շատ կուզենար գոնե մի անգամ տեսնել նրա հայացքի փոփոխությունը, որպեսզի ավելի լավ ու ավելի մոտիկից ճանաչեր նրան»⁴⁶:

Որոշելով լքել արքային՝ Դրաստամատն ինքն է բացահայտում իր կերպարի ներաշխարհն ու ապրումները. «-Ես սովոր էի մեծ և անփոխարինելի զգալ ինձ: Համեստ, գլուխս կախ, քայլում էի պալատում, բայց ներքուստ հպարտ էի և մտովի ծիծաղում էի բոլորի վրա, նույնիսկ նախարարների, որովհետև ոչ ոք չգիտեր, որ արքան միայն ինձ է վստահում: Իմ ոչնչությունը արժեք ուներ քո կողքին»⁴⁷:

⁴⁴ Բաֆֆի, Սամվել, էջ 215:

⁴⁵ **Ձեյթունցյան Պ.**, Արշակ Երկրորդ, էջ 21:

⁴⁶ Նույն տեղում, էջ 308:

⁴⁷ Նույն տեղում, էջ 309:

Եթե Բաֆֆին ու Խեչոյանը Դրաստամատին անվանում են «ներքինի», ապա Ջեյթունցյանը՝ «սենեկապետ»՝ սրանով չընդգծելով կերպարի սեռային գիտակցության խնդիրն ու դրա հետ կապված ենթաշերտերը:

Դրաստամատի կերպարի երեք ձևակերպումներն ունենում են միևնույն հանգուցալուծումը. Ազատում են արքային հոգեկան ու ֆիզիկական տառապանքներից՝ միաժամանակ ձերբազատվելով սեփական չգիտակցված էությունից:

«Սեղանին՝ մրգով սկուտեղի մեջ դրած դանակը անցավ ուղիղ սրտի միջով: Նույն դիրքով, հայացքը Դրաստամատի աչքերի մեջ՝ մնաց: Ոչինչ չփոխվեց, դեմքին կար անորսալին, առանձնահատուկը: Դրաստամատին թվաց, թե ինքը ձեռքի դանակով մոտեցել էր թագավորի մեջ ապրող ու նրա շուրջը եղած գաղտնիքին, մշուշին, նշանին, որից ծնվում էր թագավորի առանձնահատկությունը, եզակին:

Ձեռքի դանակն անցավ նաև իր սրտի միջով»⁴⁸:

Այսպես ամբողջանում, հանգուցալուծվում են Արշակի և Դրաստամատի կերպարները:

Առլինա Սարգսյան

Դիտարկումներ պատմավեպի կերպարակերտման առանձնահատկությունների շուրջ (Բաֆֆի, Պ. Ջեյթունցյան, Լ. Խեչոյան) Ամփոփում

Պատմավեպի ժանրի առանձնահատկություններն ընդհանրապես և կերպարակերտման եղանակները մասնավորապես փոփոխվում են ժամանակին զուգընթաց՝ երևան բերելով նոր հարցադրումներ և խնդիրներ: Առաջին հայ պատմավիպասանի երկերում կերպարակերտման գլխավոր եղանակները արտաքինի և ներքինի պատմողի խոսքով արված երկարաշունչ նկարագրություններն են: Բնավորության ներքին կողմերն արտահայտվում են մեծ մասամբ պատմողի խոսքի միջոցով՝ որպես բնութագրություն: Անկախության շրջանի պատմավեպում, սակայն, ծավալուն նկարագրությունները տեղի են տալիս սակավաթիվ բառերով հակիրճ բնութագրումներին, իսկ կերպարի բնավորության գծերը, ներաշխարհի բախումները ընթերցողի առջև են դրվում վերջինիս քայլերի կամ անձնական դատումների ու մտքերի պրիզմայով: Հեղինակային նկարագրական խոսքը հասցվում է նվազագույնի:

Ի տարբերություն Բաֆֆու ստեղծագործությունների՝ նորագույն պատմավիպասանության առանձնահատկությունն է նաև թեմաների խնդիրը: Նոր գրականության մեջ հեղինակները բարձրացնում են հարցեր, որոնց մասին լռում էին նախորդները:

⁴⁸ Խեչոյան Լ., Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, էջ 261-262:

Արլինա Սարգսյան

**Наблюдения за особенностями создания персонажа исторического романа
(Раффи, П. Зейтунян, Л. Хечоян)**

Резюме

Особенности жанра исторического романа, в целом, и способы создания персонажа, в частности, меняются со временем, порождая новые вопросы и проблемы. Основные приемы для создания персонажа в творчестве первого армянского исторического романиста – это внешние и внутренние характеристики, через длинных описаний рассказчика. Внутренние аспекты персонажа в виде описания в основном выражаются словами рассказчика. Однако, в историческом романе периода независимости, развернутые описания меняются краткими очерками в нескольких словах, а черты характера, конфликты внутреннего мира предстают перед читателем через собственную призму шагов или личных суждений и мыслей. Описательная речь автора сведена к минимуму.

В отличие от произведений Раффи, особенность современных исторических романов – проблема тематики. В новой литературе авторы поднимают вопросы, о которых молчали предыдущие.

Arlina Sargsyan

**Observing The Peculiarities of Creating a Character in a Historical Novel
(Raffi, P. Zeytuntsyan, L. Khechoyan)**

Summary

The peculiarities of the historical novel's genre and the ways in which the image is created are changing over the time, bringing new questions and problems. The main way to characterize a hero that uses the first Armenian historical novelist is external and internal long narration. Behaviour's inner aspects are mostly expressed through the narrator's speech. However, in the context of Independence historical novel the extensive descriptions give way to brief ones, and the character traits, inner world clashes are shown to the reader through the prism of his steps, personal judgments and thoughts. The author's descriptive speech is minimized.

In contrast to Raffi's works, the peculiarity of modern historical fiction is the theme problem. In the New literature, the authors touch questions that were untouched for previous ones.

Խմբագրություն է ուղարկվել 31. 08. 2020թ.

Հանձնարարվել է գրախոսության 15. 09. 2020թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

ՄԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՄԱԴԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մանուկ Արեդյանի անվան
գրականության ինստիտուտի ասպիրանտ
siranush.parsadanyan.2014@mail.ru

**ՀԱՅՈՑ ԴԱՐՁԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՆԱՆԴԵՑՈՒ
«ԱՐՓԻԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՊՈԵՄՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Հովհաննես Վանանդեցի, «Արփիական Հայաստանի», քրիստոնեություն, Գրիգոր Լուսավորիչ, չարչարանք, Հոփսիմյանց կույսեր, Ագաթանգեղոս:

Ключевые слова и выражения: Ованес Ванандеци, христианство, “Восход Армении”, Григорий Просветитель, мучения, девы Рипсиме, Агатангелос.

Keywords and expressions: Hovhannes Vanandetsi, “The Dawn of Armenia”, Christianity, Gregory the Illuminator, torment, Hripsime’s virgins, Agathangeghos.

Հովհաննես Միրզայան Վանանդեցու «Արփիական Հայաստանի» պոեմը (Կ. Պոլիս, 1836 թ.) լայն առումով քրիստոնեության ընդունման և հայոց մեծ դարձի պատմությունն է, և այդ պատմությունը հյուսված է Գրիգոր Լուսավորչի կերպարի և Հայաստանում ծավալված քարոզչության պատմության շուրջ: Հեղինակը բացառիկ մեծարանքով, ոգևորությամբ, անասելի սիրով, հավատով, տեղ-տեղ նաև ափսոսանքով և սրտացավությամբ է խոսում Լուսավորչի մասին: Նրա համար Սուրբ Գրիգորը մի աստվածընտրյալ անձնավորություն էր, որ առաքվել էր դարձի բերելու Հայաստան աշխարհը՝ այդ բարդ ճանապարհին արհաբար անցնելով բազում փորձությունների միջով, բայց միևնույն ժամանակ անսասան պահելով երկնքից տրված գորությունը իր մեծ հավատքի, անշահախնդիր նվիրվածության և անկոտրում կամքի շնորհիվ: Եվ պատահական չէ, որ նա իր տեղը գրավեց ոչ միայն Հայոց, այլև Ընդհանրական եկեղեցու սրբերի շարքում:

Երբ Դիոկղետիանոս կայսեր կողմից թագադրված Տրդատը՝ արդեն որպես թագավոր, ճանապարհ է ընկնում դեպի Հայաստան, Եկեղյաց գավառով անցնելիս որոշում է իջևանել Երիզա ավանում՝ Գայլ գետի ափին, որտեղ էլ գտնվում էր հեթանոսական աստվածամայր Անահիտի տաճարը: Գրիգորը չենթարկվելով թագավորի հրամանին՝ հրաժարվում է երկրպագել և ընծա մատուցել հեթանոս աստվածուհուն: Մերժումը բնականաբար առաջ

է բերում թագավորի դժգոհությունը: Իսկ երբ հրամանը մերժվում է կրկնվելուց հետո, արդեն արքայի գայրույթն է բռնկվում:

Ագաթանգեղոսը շեշտում է. «և իբրև ընդ գինիս մտին»:

Վանանդեցին սակայն այստեղ չի հետևում սկզբնաղբյուր պատմությանը: «Արփիական Հայաստանի» պոեմում Տրդատ թագավորը հրամանը պնդում է բնավ ոչ գինու ազդեցության տակ, այլ ամբողջովին սթափ վիճակում: Այսպես.

*Մերոյն և անդ առնէր հրաման արփիասիրտ Գրիգորի,
յոստոց պսակ տանել թաւուց յիւր դէմս ընծայ Անահիտի.
Հայաստանեայց է ճոխըստին մայր ասէ մայր վարդձոյի,
արեան Դիայ և փրփրոյ ծովուն ծնունդ գեղարփի¹:*

Վանանդեցին ակնարկում է Տրդատ թագավորի բնորոշումը Անահիտ և Ափրոդիտե դիցուհիների մասին: Վերջինս, ըստ հունական դիցաբանության, ծնվել է փրփուրներից:

Այսկերպ հեղինակը պոեմին առավել դրամատիզմ է հաղորդել:

«Մաղձ ՚ի կրակ հարեալ», «անդ արիւնախանձ սիրտ վառեցաւ կատաղեաց». Այս արտահայտություններով է Վանանդեցին բնութագրում թագավորի ցասմնալից, գայրալի հոգեվիճակը:

Տրդատի և Սուրբ Գրիգորի գաղափարական վիճաբանության ընթացքում վերջինս անդադար փորձում է ապացուցել քրիստոնեության ճշմարիտ և վավերական լինելը: Հեղինակը Սուրբ Գրիգորի խոսքը խտացնում է հետևյալ տողերում.

*Ձհաւիտենի ց պաշտեմ հոգւո՛ւլ զիմ գՔրիստո՛ւ կենդանին,
որ վասն մե՛ր մեռաւ մարմնո՛ւլ և զօրութեա՛ւ մը կաց ինքնին.
Կենդանութեա՛ն մեզ օրինա՛կ սիրովն եցո՛յց անքննին,
զի որ առ սէ՛ր մեռցուք նորա՛ կեանս տացէ՛ գերկնային (Էջ 69):*

Եվ թերևս աստվածապաշտ Գրիգորի համար չէին կարող իրեն սպասվելիք տանջանքները անտանելի լինել, քանի որ քրիստոնեական հավատքը անեղծ պահելը ամենաէականն ու առաջնայինն էր: Քրիստոնեական նահատակները հանուն հավատի կրած չարչարանքները և անարգանքը պատիվ ու օրհնություն էին համարում: Քրիստոսի հարության գաղափարը զորացնում է նրան: Այսինքն՝ Գրիգորի հավատի աներերությունը գալիս էր նրանից, որ հավատում էր հարությանը:

Մովսես Խորենացին և Ջենոբ Գլակը չեն ներկայացնում Գրիգոր Լուսավորչի կրած տառապանքները: Ջենոբ Գլակը միայն գրում է. «Եվ վասն

¹ **Հովհաննես Միրզայան Վանանդեցի**, *Արփիական Հայաստանի*, Կ. Պոլիս, 1836 թ., էջ 63 (այսուհետ տվյալ գրքից մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում):

ոչ գոհելոյ կոռցն՝ ի մեծամեծ տանջանս մատնեաց զնա»²: Հանգամանալից և մանրամասնորեն այդ դեպքերի մասին մեզ հայտնի է միայն Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունից»:

Տրդատ թագավորի հրամանով Գրիգորը ենթարկվում է տասներկու տանջանքների: Այս թիվը խորհրդանշական է և պայմանավորված է զանազան հոգևոր խորհուրդներով, սակայն առաջնահերթ՝ առաքյալների թվով. Չէ՞ որ նրանք ևս տասներկուսն էին, ինչպես նաև մարդու անդամների և զգայարանների թվով՝ ըստ միջնադարյան մարդակազմական ըմբռնումների: «12 թվի հետ տարված զուզահեռով ուստի նշվում է, որ Ս. Գրիգորը կրեց առաքյալներից յուրաքանչյուրի կրած չարաչարանքը, ինչպես նաև մաքրեց մարդկային մարմնի ադամական մեղքով ապականված 12 անդամները և զգայարանները, քանի որ չարաչարանքները փրկագործող և մաքրագործող խորհուրդ ունեին, որի բարձրակետն էին խաչավայտի վրա Քրիստոսի՝ հանուն մարդկության կրած չարաչարանքները»³:

Նրա ձեռքերը ետևը կապել տվեց, իսկ բերանին բերանակալ դնել տվեց: Նրա մեջքի վրա աղի մեծ կտոր կախել տվեց, կրծքին գելարան կապեցին և գելարանի կապերից պարաններ գցելով կապեցին ու մեքենաներով ապարանքի տանիքի բարձր տեղից կախեցին: Այսպես կախված մնաց յոթ օր: Սա առաջին չարաչարանքն է, որին մատնվում է Սուրբ Գրիգորը: Հայ ժողովրդի ապագա լուսավորիչը ասում է, որ աղը կրելով վեր կելնի երկնային պարզներին արժանանալու, իսկ ովքեր քարեղեն կուռքեր են պաշտում, նրանք համաձայն մարգարեության խոսքերի, «քարերի նման կիջնեն խորունկ ջրերի մեջ». Վանանդեցու ստեղծագործության մեջ կարդում ենք հետևյալը.

*Արդ որ կոռցն են պաշտօնեա՛յ քարանց փայտի՛ց արքանեակ,
վասն այնպիսեա՛ց բան Մարգարէ՛ն իսկ հաստատէ՛ համարձակ.
Իբրև զվէ՛մս իջցեն ասէ՛ յաղթ յորձանա՛ցն ի յատակ,
զերծման համբո՛ւն գաղթեցէ՛ յո՛յս անդր արգելցի՛ն անատակ (Էջ
80):*

Սուրբ Գրիգորը կուռքերին հակադրում է երկնային ուժի գորությունը: Նկատելի է, որ Նոր Զուղայի որմնանկարների շարքում ցանկանալով ընդգծել, թե աղի ինչ ծանր պարկ է Լուսավորչի թիկունքից կախված, նկարիչը ոչ թե սոսկ պարկն է պատկերել, այլ այն պահը, երբ

² **Զենոբ Գլակ**, *Պատմություն Տարօնոյ*, Վենետիկ, 1832 թ., էջ 23:

³ **Վարդան Դևրիկյան**, *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում*, մասն Գ, Երևան, 2016 թ., էջ 274:

չարչարողներից մեկը, ուժերը լարելով, փորձում է բարձրացնել պարկը, որը յոթ օր իր ուսերին պիտի կրեր Սուրբ Գրիգորը:

Սրանից հետո թագավորը հրամայեց մեկ ոտքից գլխիվայր կախել նրան և կախված վիճակում տակից աղբ ծխել ու դալար ճիպտոներով սաստիկ գանակոծել: Տասը մարդ տանջեցին նրան՝ ըստ թագավորի հրամանի, և այնպես յոթ օր կախված մնաց: Ընդունված է համարել, որ միջնադարյան խորհրդաբանությամբ՝ գլխիվայր կախվելը կամ խաչվելը նշանակում է ոտքերը երկինք ուղղել և բռնել դեպի դրախտ տանող ճանապարհը, ինչպես որ Ադամը ոտքերը ներքև վտարվեց դրախտից: Գլխիվայր կախված աղբի ծուխը շնչելը և ճիպտով գանահարվելը խորհրդանշում են փրկության ճանապարհի դժվարությունները⁴:

Երրորդ չարչարանքը հետևյալն է. Հրամայեց բերել փայտի կոճղեր և դնել ըստ ոտքի սրունքների ոսկորների և բարակ պարաններով ուժգին պրկել, մինչև որ արյունը նրա ոտքի մատների ծայրից ցայտեր: Ահա ինչպիսի սրտացավությամբ է հեղինակը նկարագրում այն տեսարանը, որտեղ Գրիգորի ոտքերը կոճղերի մեջ են պրկված.

*Ասաց, և ա՛նդ հաստ՝ ի կաղնեա՛ց կոճեղք ընդ մէ՛ջ բարդեցան,
սուրբ ոլոքա՛ց ոտիցն՝ ի ճա՛հ արհեստ չափեա՛ց հիւսնական.
և առատո՛ւկք ուժգնամանեա՛լք սաստիկ սեղմե՛լ պնդեցան,
զի յոսկերա՛ց թթափ զկսկի՛ ծ՝ յուղեղս ազդէ՛ր թալկութեան (էջ 104):*

Ապա Տրդատ թագավորը հրամայում է բերել երկաթե բևեռներ, գամել Գրիգորի ներբաններին և երկու կողմից բռնելով նրա ձեռքերից՝ քայլեցնել այս ու այն կողմ: Արյունը հոսում էր, իջնում նրա ոտքերից և առատորեն ոռոգում գետինը («ուր և արեա՛ն յորդեալ վտակ առուս գործե՛ր կարմրալից»):

Հինգերորդ չարչարանք. Թագավորն ասաց. «Խփեցե՛ք աչքերին, և թող նրան ուրախություն լինի», և բնցքահարեցին ու սաստիկ ծեծեցին նրան.

Իսկ մերս Արփի՛ն յերկնից շնորհա՛ց ոյժ զգեցեա՛լ օժանդակ (էջ 108):

Վանանդեցին կրկին շեշտում է հավատքի գորությունը և այն ուժը, որը տրված էր Սուրբ Գրիգորին երկնային գորությամբ:

Հինգերորդ չարչարանքով Սուրբ Գրիգորը Տիրոջը չարչարակից եղավ, քանի որ Քրիստոսը ևս խաչելությունից առաջ նախատինք և անարգանք կրեց: Նոր Ջուղայի որմնանկարներում պատկերված է ապտակին նախորդող պահը, երբ չարչարողները ձեռքերը պարզել են ապտակելու համար:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 276:

Այա Տրդատ թագավորը հրամայում է բերել աղ, բորակ և թունդ քացախ ու նրան գցել երեսն ի վեր, գլուխը հյուսնի մամուլի մեջ պրկել, քթին եղեգի խողովակ դնել և դրանք քթի մեջ լցնել: Իսկ Գրիգորը «որպէ՛ս գառն հեգի՛կ անդր կացեա՛լ անմոռնչ»:

Այնունէտն հրամայեց բերել կաշվե մեծամեծ պարկեր, որոնք լցրին հնոցի մոխրով և մի քիչ թույլ թողեցին, որ լրիվ չլցվի, ու շունչ առնելու հնարավորություն լինի և ներս անցնելով ուղեղին՝ չարչարի նրան: Այն նրա գլխին հագցրին, պարկի բերանը վզին կապեցին, և վեց օր նրանով մնաց: Սրանից հետո թագավորը հրաման տվեց, ու բերին իր առջև և պարկը գլխից հանեցին:

Ութերորդ չարչարանք. Թագավորը զայրացած հրամայեց նրա ոտքերը կապել տիկի փոկերին, գլխիվայր կախել, ձագար դնել նրա նստատեղին և տիկով ջուր լցնել նրա որովայնը.

*Ոտնփեռե կ'ընդ կախ Արփի՛ն վայրաբերի՛ չայկագեան,
որ գմռա յլ ճգնէր՝ ի բա՛ց վարել մեղա՛ց մը թութեան (էջ 119):*

Այս հատվածում հետաքրքրական է «ոտնփեռել» բառի կիրառությունը, որը դարձյալ հեղինակային նորակազմություն է: Հեղինակը, վերցնելով գրաբարյան «փեռեկեմ» բայը, որ նշանակում է ճեղքել, բաժանել, պատառել, երկփեղկել, ստեղծել է մի նորաբանություն, որի շնորհիվ նկարագրվելիք պատկերը առավել ուժգին տպավորություն է թողնում ընթերցողի վրա:

Գրիգորը հունական ծագման «Գրիգորեո» անձնանունն է, որ նշանակում է «արթուն», «հսկող»: Պոեմում հեղինակը հաճախ դիմում է փոխանունության գեղարվեստական հնարանքին՝ Լուսավորչին անվանելով Արթուն կամ Լուսատու: Արփաբնակ, արփիասիրտ, արփիահրատք, արփիատիպ, արփնադեմ, նաև արթնական և այլ նմամատիպ նորակազմություններով ևս հեղինակը խոսում է Գրիգոր Լուսավորչի մասին: Վերը մեջբերված հատվածում նկատելի է «Գրիգորի» փոխարեն «Արփի» անվան ընտրությունը, ինչն ավելի տպավորիչ է դարձնում պատկերը:

Իսկ հաջորդ դրվագում Տրդատ թագավորը հրամայում է քերել սուրբի կողերը երկաթե քերիչներով.

*Քերեցէ՛ք հա՛ գանչէ ուժգի՛ն զկողսն՝ ի քերա՛ն երկաթի,
բացէ՛ք զոսկէ բսն՝ ի տես բնաւից, գղեսցի՛ մի սն՝ ի մարմնի (էջ 122):*

Այս հրամանն էլ է անմիջապես ի կատար ածվում, և հեղինակը ցավով գրում է.

Երկաթաստ՛ւր կեղեն քերչօ՛ք զմարմին Արփու՛ն յն արթնական (էջ 122):

Տասներորդ չարչարանք. Հրաման տվեց, և բերեցին երկաթե տատասկ բազում սակառներով ու խիտ փռեցին գետնին, մերկացրին Գրիգորին և մերկ գցեցին տատասկի վրա: Նրա մարմինը ծակոտվեց ամբողջովին, քաշեցին ու թողեցին տատասկների մեջ և նրան այնտեղ շրջեցին, մինչև որ ծակծկվեցին նրա մարմնի բոլոր մասերը, ու նրա վրա ողջ տեղ չմնաց: Սուրբ Գրիգորի՝ տատասկով քերվելը խորհրդանշում է փշի և տատասկի անեծքից ազատվելը⁵:

Ապա հրաման տվեց ծնկներին երկաթե կապիչներ անցկացնել, մեծ կռանով հարվածել և կախաղան բարձրացնել, մինչև որ ծնկները հոշոտվեն: Այստեղ կախված մնաց երեք օր:

Եվ վերջին չարչարանքը. Հրաման տվեց երկաթե պտուկների մեջ կապար հալեցնել, և մինչդեռ տաք վիճակում էր, ջրի նման թափել նրա մարմնին: Այրեցին նրա մարմինն ամբողջովին, և չմեռավ, այլ մեծ ուժով մնում էր, և ինչ որ հարցնում էին, անմիջապես պատասխան էր տալիս.

*Ջարփուոյն մեր ա՛նդ գերծուն հանդէ՛րձ յայրումն ածէ լ՛խստագոյն,
և զկապա՛րն ջերմաջէ՛րմ զմարմնովն հեղո՛ւն յորդագոյն* (Էջ 129):

Վանանդեցին Լուսավորչի կրած տառապանքները ներկայացնում է նույն հերթականությամբ, ինչ Ագաթանգեղոսը, առանց հավելումների, առանց որևէ բան բաց թողնելու:

Եվ ինչքան Տրդատը հրամայում էր ավելի խստացնել պատիժը, ավելի մեծացնել պատժաչափը, այնքան Գրիգորը ավելի լուռ ու ինքնամոռաց էր կրում տանջանքները: Թագավորը անգամ իր զարմանքը չի կարողանում թաքցնել.

Ջիա՞րդ գոչէ՛ դեռ զօղ շնչէ՛ս յայդչափ աղո՛ւնս ընդ երկար (Էջ 129):

Իսկ պատասխանը մեկն է՝ Աստծո զորությամբ: Տանջանքների ու տվայտանքների ամենածանր պահերին անգամ Գրիգորը անդադար աղոթում է Աստծուն՝ խնդրելով համբերություն և հոգու կորով.

*Այլ տո՛ւր ինձ տէ՛ր այսմիկ տոկա՛ լ կրից մարմնո՛յ դառնագին,
ըստ իսաչակցի՛ն քո՛ ի վերա՛յ ի՛նձ ողորմեա՛ յարեանդ գին.*

Շնորհաց առի՛ս աղբերացո՛ սուրբ զծորա՛նսդ երկնային (Էջ 93):

Լուսավորչի վարքի առանձին հատվածներ նման են աստվածաշնչյան հին սյուժեների: Այս առիթով նկատված է. «Նման ակնառու օրինակները բնականոն են. Ընտրելով նոր գաղափարախոսության տարածման համար իրենց դժվարին ուղին՝ շատ նվիրյալներ կամա թե ակամա կրկնում էին

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 280:

իրենց սրբացած նախորդներին թե՛ տառապանքների և թե՛ հատուցման պահին»⁶:

Գրիգոր Լուսավորչի ծագումն էր, որ անհայտ էր: Իսկ այստեղ ահա լույս է սփռում Տաճատ իշխանը՝ Արտավազդ Մանդակունու եղբայրը՝ պատմելով, որ Գրիգորը այն Անակի որդին է, որ սպանեց Տրդատի հայր Խոսրով Մեծին: Տրդատ թագավորի համար հեշտ չէր այդ ծանր նորությունը լսելը.

*Լուր այսանա՛կ աշտէ ընդ թա՛յի՛ ի սիրտ մըխեա՛ց արքային,
կատաղութի՛ն ւն յանդնդայնո՛ց պատեալ լլկէ՛ր անձնովին.
Ապա ստուգեա՛լ հրաման կնքէ՛ զպատուհա՛ս տալ վերջին,
կայել աւէ՛ զոտս և զձե՛ ոս տալ՝ ի վիրա՛յ խոխորին* (էջ 134):

Արքայի զայրույթին միանում է նաև Գրիգորի՝ արքայասպանի որդին լինելու հանգամանքը: Լուրը պարզապես ցնցում է թագավորին, և կատաղության ամենաձանր պահին նա հրամայում է Գրիգորին բանտել վիրապում:

Վիրապը, որտեղ, ըստ պատմագիտական ստույգ աղբյուրների, Գրիգորը անցկացրել է պատժի տասներեք տարիները, Արտաշատի դոյակի բանտն էր: Այն նախատեսված է եղել մահապարտների համար: Այդ թունավոր միջատներով, օձերով ու կարիճներով լեցուն տեղից հանցագործները հիմնականում դուրս չէին գալիս՝ իրենց վախճանը գտնելով հենց այդ խցում: Վիրապում անցկացրած տարիների ընթացքում Գրիգորին մի աստվածապաշտ կին էր ապահովում սննդով՝ մի կտոր հացով: Ազաթանգեղոսը այս մասին գրում է. «Եվ զայն ամս երեքտասան, որ եղև Գրիգորիոս ի բերդին բանդին և ի խոր վիրապին, կին ոմն այրի, որ էր ի բերդին յայնմիկ, հրաման առեալ յարհարաց՝ զի աւուրն նկանակ մի արարեալ պատրաստական ընկենուլ ի ներքս ի խոր վիրապն...»⁷: Այստեղից պարզ է դառնում, որ մի այրի կինը Գրիգորի՝ վիրապում եղած տասներեք տարիների ընթացքում օրական մի նկանակ՝ բլիթ էր պատրաստում և նետում ցած, որով կերակրվում էր Գրիգորը: Ահա Վանանդեցու մեկնաբանությունը.

*Ոմն ՚ի բերդի՛ն պատաւ յայրեա՛ց սիրտ ըստացեա՛լ բարեզգեաց,
ազդումն ահե՛ղ զհշերայնո՛ց յինքն ընդունի՛ յարհարաց* (էջ 136):

Այստեղ դժվար չէ նկատել արքայաքույր Խոսրովիդուխտի հովանավորությունը:

⁶ Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը, Երևան, 2000 թ., էջ 28:

⁷ Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983 թ., էջ 78:

Սուրբ Գրիգորը Խոր վիրապում հրեշտակի միջոցով իմանում է Հռիփսիմե կույսի և նրա ընկերուհիների մասին, և թե ինչպես նրանք գոհեցին իրենց կյանքը՝ հանուն սուրբ հավատքի:

Պռեմի մի զգալի մասը նվիրված է Հռիփսիմյանց կույսերի նահատակության պատմությանը, թե ինչպես նրանք, փախչելով Դիոկղետիանոս կայսրից, ապաստան գտան Հայաստանում և հերոսաբար նահատակվեցին՝ դասվելով սրբերի շարքում:

Հռիփսիմե կույսի և նրա ընկերուհիների հերոսական նահատակությունից հետո հոգեկան ծանր վիճակում հայտնված Տրդատ թագավորին Վանանդեցին, հետևելով սկզբնաղբյուր պատմությանը, ներկայացնում է խոր տրտմության և անհուսալի անորոշության մեջ: Նա օր ու գիշեր չի կարողանում սփոփանք գտնել ու մխիթարվել. «Ձարքայն յանձռլկն ՚ի Հռիփսիմեայ՝ գեղոյն լլկէ՛ր չարաչար»: Ճիշտ է, թագավորի անմիջական մասնակցությունն ու մեղավորությունը կար կույսերի նահատակության գործում, այնուամենայնիվ նկատելի է հեղինակի կարեկցանքը, ինչու չէ նաև հավատը նրա վերափոխման և դարձի գալու գործում, ինչն էլ պետք է նպաստեր Հայաստան աշխարհի ժողովրդի հեթանոսական կրոնից հրաժարվելուն և քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն ընդունելուն: Ազաթանգեղոսի ներկայացրած պատուհասին Վանանդեցին հոգեբանական շեշտ է հաղորդում: Հիշենք, որ Մովսես Խորենացին իր պատմության մեջ ներկայացնում է վրաց Միհրանին, որի դեպքում ևս մարմնավոր ախտը պատճառ է դառնում վերափոխման⁸: Պողոս առաքյալը ևս այդ ճանապարհով վերափոխվեց (Տե՛ս Գործք Առաքելոց, 9:1-9): Այսինքն՝ սա քրիստոնեական աշխարհայացքի ձև էր, որին Վանանդեցին տալիս է հոգեբանական ապրումի ձև:

Հեղինակի կարեկցանքը ավելի արտահայտիչ է դառնում, երբ Տրդատ թագավորը, փորձելով մի փոքր սփոփանք գտնել, պալատականների դրդմամբ որսի է դուրս գալիս և հանկարծակի վարագի կերպարանք ստանում. «շեշտ ՚ի վերայ՝ գայր պատուհասս շանթ բարկութեանն երկնառաք»:

«Խոտաճարակ լեալ անհնարին, մերկ զանձն ընդ դաշտսն կոծելով»՝ արտահայտությամբ է Ազաթանգեղոսը նկարագրում թագավորի վիճակը՝ զուգահեռ անցկացնելով Բաբելոնյան աշտարակի Նաբուգոդոնոսոր արքայի վայրի խոզի կերպարանք ստանալու հետ⁹:

Ահա Վանանդեցու մեկնաբանությունը.

⁸ Տե՛ս **Մովսես Խորենացի**, *Հայոց պատմություն*, Երևան, 1981 թ., էջ 282:

⁹ Տե՛ս **Ազաթանգեղոս**, նշվ. աշխ., էջ 122:

*Խոտաճարա՛կ ՚ի շամբս անկեա՛լ անզգամե՛ր չարաչար,
մերկ գանձն ընդ դա շտմն կոծելո՛ւ վ՛րնդ գայոս գա՛յր կնճարար.
Ո՛ւր է ահե՛ղն այն Տրդատե՛ ս յորմէ՛ աշխա՛րհ իսկ սոսկայր,
և ո՛ւր չքնա՛ղ դիմացն տի՛պ հայեցողա՛ց բերկրարար* (Էջ 202):

Ինքնին հասկանալի է, որ «Ո՛ւր է ահե՛ղն այն Տրդատե՛ ս» ասելով՝ հեղինակը ականարկում է Տրդատի՝ Կարոս և Պրոպոս կայսրերի ներկայությամբ քաջությամբ ու ֆիզիկական հաջող տվյալներով աչքի ընկնելու դրվագները: Արտաքուստ ոչինչ չէր հիշեցնում այն աշխարհակալ թագավորին, որ հաղթող էր բոլոր մարտերում, և որից երկնչում ու սոսկում էին թշնամիները:

Թագավորի վարազակերպ արտաքինի պատճառով նրա հարազատների մտահոգության մասին Ագաթանգեղոսը գրում է. «Եւ ամենայն ընտանիք թագաւորին, ծառայք և սպասաւորք առ հասարակ, հարուածովք հարեալք լինէին. և անհնարին սուզ վասն հարուածոցն լինէր»¹⁰: Պարզ է դառնում, որ թագավորի ծանր վիճակը համակել էր նրա բոլոր մերձավորներին, հարազատներին, սպասավորներին, և ոչ ոք չէր կարողանում նրան օգնել: Տրդատ թագավորի վարազակերպությունը դիտվում էր որպէս աստվածային պատուհաս, Աստծո կողմից ուղարկված պատիժ:

Այս առիթով Վանանդեցին գործածել է նաև այնպիսի բառեր, որոնք, թվում է, տասնիններորդ դարում արդեն կիրառությունից դուրս եկած պետք է լինէին: Ինչպէս սոսկավիթխար (սոսկալի մեծ, վիթխարի), կճղակաբաշխ (չորքոտանի):

*՛Ի խոզենի՛ ս բոլոր մարմի՛ն սոսկավիթխա՛ր թաւանայ,
կճղակաբա՛շխ ի դուրս ոտիւք վարազախա՛ռն սլանայ* (Էջ 203):

Վանանդեցին՝ որպէս նոր գրականության ներկայացուցիչ, իր նկարագրություններում առաջ է անցնում Ագաթանգեղոսից՝ իր ստեղծագործություններին բնորոշ զգացմունքայնությամբ խոսք բացելով նաև Աշխեն տիկնոջ մասին, ներկայացնելով հոգեկան ապրումները, և թէ ինչպէս նա անհանգիստ էր ու անմխիթար. «անմխիթար վտակս հոսէ՛ր զարտասուաց»:

Ոչ պակաս մտահոգ չէր նաև արքայաբույր Խոսրովիդուխտը, «դառնամորմոք ցաւոց զսի՛րտն անդ յարդարեալ ՚ի պահեստ», և նրա մտահոգությունը թագավոր եղբոր վիճակի վերաբերյալ հեղինակը կարողացել է փոխանցել ընթերցողին:

¹⁰ Նույն տեղում:

Երբ թագավորի՝ այդ տխուր վիճակից դուրս գալու ելքը չէր երևում, և բոլորը կարծես թե անհուսության էին մատնված, որպես փրկօղակ է ծառայում Խոսրովի դուխտի տեսիլը. «Խոսրովի դուխտ յն յանբջակա՛ն գալ ՚ի տեսի լ հրեշտակի», որը կրկնվում է երկու անգամ:

Ու վերջապես մոտենում է Գրիգորի՝ վիրապից դուրս գալու պահը: Եվ ահա Օտա Ամատունի նախարարը ուղարկվում է Արտաշատ՝ տասներեք տարի բանտարկյալների խցում պահվողին դուրս բերելու:

Հեղինակը հիմնականում պատմում է հինգերորդ դարի պատմիչի բառերով, և ինքնուրույն սյուժե քիչ ենք տեսնում՝ բացառությամբ մի քանի դեպքերի: Մակայն հենց այդ դեպքերում է, որ փայլում է Վանանդեցու տաղանդը, բացահայտվում նրա մտքի թռիչքը: Ահա նկարագրական այդպիսի մի փոքրիկ հատված, որտեղ ներկայացվում է վիրապից դուրս գալու պահը.

*Անդր երագէ՛ և իւր Պաշտպա՛ն ՚ի վիրապի՛ն խոր մթար,
լուսարփենեա՛ցն ՚ի թևսն վա՛ն ցոյս արձակէ՛ բերկրարար.*

*Մառայլապա՛ս տօղն ՚ի փայլի՛ւն լուսոյ վերնո՛յն անվթար,
անաղանո՛ղ ցերեկ անա՛յ անհետ փախչի՛ խոր խաւար (էջ 209):*

Վանանդեցու գրիչը հզոր է տպավորիչ պատկերներ ստեղծելիս: Գրիգորի՝ վիրապից դուրս գալու դրվագում նա համեմատություն է անցկացնում այնտեղ մտնելու և այնտեղից դուրս գալու միջև, ինչը տեսնում ենք հետևյալ տողերում.

Մառնամանի՛ք ք և հալեցի՛ն հոգեսարսո՛ւն ձմեռան,

նոր գարուն ք՛ յաջողեցի՛ ծաղկանցն ՚ի փթիթ հայկազեան (էջ 209):

Ինչպես հասկանալի է, վիրապ մտնելը համեմատվում է սառնամանիքի, ձմռան հետ, իսկ այնտեղից դուրս գալը՝ արդեն ճիշտ հակառակը, բաղդատվում է գարնան, փթթման, ծաղկունքի ու նոր արթնության հետ: Այս համեմատությունը միանգամայն ընդունելի է, և առհասարակ գեղարվեստական նմանատիպ միջոցների գործածման շնորհիվ է նաև, որ ստեղծագործությունը տպավորություն է թողնում ընթերցողի վրա:

Ն. Ադոնցը ևս Սուրբ Գրիգորի՝ վիրապ մտնելու և այնտեղից ելնելու տեսարանները համարում է «հին հաւատալիքի դօղանջ, որ լաւում է վիրապի շուրջը»՝ ընդունելով որ նա «յետոյ ելաւ նոր առաքելութեան համար»¹¹:

¹¹ Տե՛ս **Նիկողոյոս Ադոնց**, *Պատմագիտական ուսումնասիրություններ*, Երևան, էջ 271:

Այդ վիթխարի գուրից սիրելի Գրիգորի դուրս գալը նոր ճանապարհ պիտի բացեր հայ ժողովրդի համար, ինչին հեղինակը աներկբա է հավատում:

Եվ ահա սկսվում է հեթանոսությունից անցումը դեպի նոր հավատքի՝ քրիստոնեության: Հայ ժողովրդի լուսավորիչը կոչ է անում թագավորին ու մնացյալներին ճանաչել միայն ամենակալ Տիրոջը, հուսալ Նրան, բժշկություն ու ապաքինություն խնդրել միայն Նրանից:

Վարդապետության հատվածում զգացվում է հեղինակի ոգևորությունը, հավատը Գրիգոր Լուսավորչի անձի ու գործի նկատմամբ, և հեղինակը, ցանկանալով Սուրբ Գրիգորի գործունեությունը ավելի պատկերավոր ու տպավորիչ նկարագրել, փորձել է ոչ մի մանրամասն բաց չթողնել, ոչ մի մանրուք չանտեսել, ինչի հետևանքով պոեմը զգալիորեն ծանրացել է, և ցավալիորեն տուժել է պոեմի գեղարվեստական կողմը:

Վիրապից դուրս գալուց հետո կարևորագույն գործը, որ պետք է աներ Սուրբ Գրիգորը, Հռիփսիմեի և նրա հետ քաջաբար հանուն հավատքի նահատակված մնացյալ կույսերի տանջալլուկ մարմինները հողին հանձնելն էր, քանի որ դեռևս անթաղ էին: Եվ Գրիգորը «անդր ՚ի նոցո ւն հնձանին վա՛նս զնշխարս Կուսի՛ցն տարեալ, ՚ի դամբարա՛ն սեռն սիրո՛վ և արտասուօ՛ք ամփոփեալ»: Վկայարանները կանգնեցվում են կույսերի նահատակության երեք վայրերում, որոնք դառնում են տաճարներ և ամփոփում են կույսերի մարմինները:

Վկայարանների շինությանը հաջորդում է հեթանոսական աստվածների մեհյանների, բազիլիկների ու տաճարների կործանումը: Սուրբ Գրիգորի և Տրդատ թագավորի անմիջական աջակցությամբ երկրում սկսում են իրար հետևից տապալվել հեթանոսական աստվածների կառույցները, որին անդրադարձ է կատարում նաև Վանանդեցին: Առաջինը կործանում են Տիրի մեհյանը, որ գտնվում էր Մեծամորի մոտ: Այնուհետև տապալվում է աստվածամայր Անահիտի տաճարը Երզնկայում, ապա՝ Բարիշիմինայինը՝ Թորդայում, Արամազդի տաճարը՝ Անիում, Նանեինը՝ Թիլ ավանում, Արամազդինը՝ Բագայառիճում: Եվ այսպես շարունակ:

Այսինքն, պոեմում ականատես ենք լինում հնի ու նորի պայքարին: Հինը փոխարինվում է նորով: Այդ գործընթացը բնականաբար չէր կարող հանդարտ ու խաղաղ և առանց խռովությունների ու զանազան այլևայլությունների կատարվել: Հինը իր տեղը չէր կարող հանգիստ զիջել նորին:

Քննադատներից ոմանք անխնա մեղադրում են Տրդատ թագավորին և Գրիգոր Լուսավորչին հին հավատքի հիշատակները ջնջելու և կործանելու համար: Այս մեղադրանքներին հակադարձում է Մաղաքե արքեպիսկոպոս Օրմանյանը՝ նշելով, որ այդ կողմից մեծ կորուստ չէր կարող եղած լինել,

քանի որ մենք՝ հայերս, դեռևս սեփական գիր չունենինք, և մեհյանների կործանումը զգուշավորություն էր նաև հույների ու հռոմեացիների մեջ և ժամանակի զգացումներին համապատասխան էր¹²:

Հեթանոսությունը հիշեցնող յուրաքանչյուր կառույցի տապալման տեղում Գրիգոր Լուսավորիչը տերունական խաչ էր կանգնեցնում՝ որպես քրիստոնեության առհավատյա. «և տէրունի՛ն կանգնեն Նշա՛ն զամենագո՛րն զԹաչին»:

Գրիգոր Լուսավորչի կյանքի կարևորագույն դրվագներից մեկի՝ տեսիլի նկարագրությունը ևս իր գեղարվեստական արտահայտությունն է գտել պոեմում: Ահա մի հատված.

*Խորանաշէ՛ն շեշտ փեղկեալ յա՛րկ հաստատութեա՛նն եթերին,
և Այր իջեա՛լ արփիատի՛ պ փառս զգեցեա՛լ զվերին.
Զիս յանուանէ՛ Գրի՛ գորիտ ս ուժգին կարդայ յր առ նմին,
և իմ նորա յն տեսեալ զփա՛ռս սարսուռ տարայ զահռելիին (էջ 537):*

Լուսավորչի տեսիլի նկարագրությունը պոեմի առավել մեծ ոգեշնչմամբ գրված հատվածներից է: Տեսիլքի առաջին մասն է երկնքի բացվելը և լույսի երևալը: Լույսի միջից Աստծո Միածինը երևում է Սուրբ Գրիգորին, իջնում մարդկային լուսավոր կերպարանքով և ոսկե մուրճով հարվածում քաղաքի կենտրոնին՝ դորդացնելով Սանդարամետը: Տեսիլքի երկրորդ մասը կաթողիկեի նկարագրությունն է. Պալատի մոտ ճախարակյա և բլուրի չափ մի մեծ պարիսպ, նրա վրա՝ շատ բարձր հրեղեն սյուն, սյան վրա՝ ամպե թակաղակ կամ խոյակ, իսկ վրան՝ լուսեղեն խաչ: Նույն կերպով և ձևով երեք այլ սյուներ ևս Հռիփսիմե կույսի, Գայանե կույսի նահատակության վայրերում և արքունի հնձանի տեղում, բայց այս երեքը ավելի ներքև, խաչով միասին առաջինի թակաղակին են հասնում: Տեսիլքը այլ մասեր էլ ունի. Գր. Լուսավորիչը տեսնում է ամբողջ դաշտը միասյուն սեղաններով լեցուն, յուրաքանչյուրի վրա՝ մի-մի խաչ: Տեսնում է նաև խորհրդավոր մի գետ, որտեղից սև այծեր են անցնում և ճերմակ ոչխարներ դառնում, գառներ են ծնվում, որոնցից ոմանք գայլեր են դառնում, մյուսները թևավորվում են և երկինք բարձրանում: Գայլերը այնուհետև անհետանում են:

Վանանդեցին մանրամասնորեն ընդգրկում է Սուրբ Գրիգորի տեսիլի դրվագը՝ ուղեցույց ունենալով Ագաթանգեղոսի պատմության նույն հատվածը:

¹² Տե՛ս **Մաղաքե արքեպ. Օրմանեան**, *Ազգայատում*, Ա հատոր, Ա գիրք, Բեյրութ, 1959 թ., էջ 88-89:

Լուսավորչի տեսիլի առիթով արժե հիշատակել Սահակ Չորափորեցու հայտնի շարականը՝ «Էջ Միածինն ի չօրէ», որում սկնարկվում է սուրբ Գրիգորի տեսիլը, և ապա նա դիմում է Տրդատ թագավորին հետևյալ խոսքերով.

*Եկայք շինեսցուք սուրբ գիտրանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի
Հայաստան աշխարհի¹³:*

Չորափորեցու շարականը Ագաթանգեղոսից ներշնչված առաջին գեղարվեստական օրինակն է, որտեղ «Էջ Միածինը» ընդգծվում է որպես Միածնի իջման տեղի գաղափար: Իսկ Վանանդեցու ստեղծագործության համար առկա է եղել նախորդ շրջանի հայ մշակույթը, և հեղինակը բնականաբար նաև ծանոթ է եղել Չորափորեցու շարականին ու հաջորդող շրջանի գրականությանը և որոշակի ազդեցություն կրել նրանից:

Գրիգոր Լուսավորիչը հայոց կաթողիկոս է ձեռնադրվում Ղևոնդիոս արքեպիսկոպոսի կողմից՝ ստանձնելով «գամենամե՛ծն գիառաւո՛րն ասեմ պաշտօն՝ ն պանծալի»:

Իսկ ասիա Տրդատ թագավորի, Աշխեն թագուհու և Խոսրովիդուխտ արքայաբրոջ մկրտությամբ նոր հոգևոր էջ է բացվում հայոց մեջ, ինչին էլ հաջորդում է բազմահազար մարդկանց մկրտությունը:

Մկրտության տեսարանը այնքան գեղեցիկ ու պատկերավոր է ներկայացված: Ահա մի գեղեցիկ բանաստեղծական հատված.

*Մկրտութեա՛ն բայց մինչ՛ որեա՛ր իջանէ՛ի՛ն անդր՛ ի ջուր,
սքանչանա՛ց շեշտ փայլակէ՛ր նշան՛ յերկնի՛ց սերալուր.
Ջի գտեղի՛ ջրոցն՛ առեա՛լ կառեալ կացի՛ն ի գարհուր,
և ընդ կրո՛ւնկն անդրէ՛ն բերեա՛լ շուրջ իսաղայի՛ն յեղմ յաքուր*
(էջ 599):

Այս հատվածը սկիզբ է առնում դեռևս Ագաթանգեղոսից: Երբ ավագանին, գորքը և թագավորը իջնում են Եփրատի ջրերի մեջ՝ մկրտվելու, Աստծո նշանն է երևում նրանց. Գետի ջրերը կանգնելով ետ են դառնում, ապա լուսավոր սյուն է երևում տերունական խաչի կերպարանքով և կանգնում ջրերի վրա.

*Ուր լուսարփեա՛ն՝ն ցոլացեալ սի՛ւն կաց զջրո՛ւլ փայլունակ,
և ի՛ վերա՛յ գտերունեա՛ն՝ն ունէր Խաչի՛ն նմանակ* (էջ 599):

Ջրի մեջ ընկղմվելով՝ մի նոր կյանք է սկսվում հավատացյալի համար: Ահա երկնքից էլ սքանչելի նշաններ են փայլատակում, անգամ ջրերն են

¹³ Մեսրոպ արքեպիսկոպոս Աջճեան, Լուսավորչի լոյս նշխարները, Էջմիածին, 2000 թ., էջ 129:

կանգնելով ետ դառնում: Եվ մի ժողովուրդ, որ օրեր առաջ հեթանոսական աստվածների էր երկրպագում, սկսում է իր կյանքը քրիստոնեությանը նվիրելու մի անխոնջ ուղի: Եվ պատահական չէ, որ նախ և առաջ թագավորը պիտի մկրտվեր ու սրբազործվեր: Ժողովրդի ապաշխարության ու դրան հետևող փրկության գործընթացը պետք է սկսվեր առաջնորդից:

Լուսավորչի որդիների մասին պոեմում երկրորդ անգամ խոսվում է այն ժամանակ, երբ հոգևոր առաջնորդին փոխարինելու կարիք է զգացվում: Նրա արժանի հաջորդը իր որդի Արիստակեսը պետք է լիներ, որն էլ կաթողիկոս է ձեռնադրվում հոր կողմից:

Ժամանակի մի այլ կարևոր իրադարձության՝ Կոստանդիանոս կայսրի կողմից Նիկիա քաղաքում հրավիրված քրիստոնյա վարդապետների ժողովի մասին, որը պատմության մեջ հայտնի է Նիկիայի ժողով անվանումով, Վանանդեցին խոսում է սեղմ ու հակիրճ: Ազաթանգեղոս պատմիչը չի մանրամասնում Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի՝ Կոստանդիանոս կայսրի հրավերը մերժելը և որպես փոխանորդ Արիստակեսին այնտեղ ուղարկելը: Իսկ ահա պատմահայր Խորենացու շարադրանքում ինչ-ինչ մանրամասներ ենք հայտնաբերում. «Չոր ոչ առ յանձն Տրդատ: Քանզի լուեալ էր զինամենալն Շապոյ ընդ Հնդկաց թագաւորին և ընդ արևելեանն Խաքանայ, և զգօրավարելն Ներսեհի, որ և թագաւորեաց ամս ինն, և Որմզդի, որ ապա և նա թագաւորեաց ամս երիս նահատակութեամբբ: Եւ ի կասկածի եղեալ, զի ի՛ արդեօք պայմանին ստիցէ ըստ սովորութեան հեթանոսութեանն՝ վասն այնորիկ ոչ եթող առանց իւր զաշխարհս: Բայց և ոչ սուրբն Գրիգոր հաւանեցաւ երթալ, զի նի՛ զառաւել պատիւ վասն խոստովանողական անուանն ի ժողովոյն ընկալցի. Որպէս զի այնպէս փափագանօք և մեծաւ փութով կոչէին»¹⁴:

Վանանդեցին բնականաբար ծանոթ է եղել Խորենացուց մեզ ժառանգված «Հայոց պատմութիւն» երկին, սակայն այստեղ ևս որպէս հիմք է ընդունում Ազաթանգեղոսի շարադրանքը: Նա նախ գեղարվեստորեն համառոտ ներկայացնում է Գրիգոր Լուսավորչի՝ Նիկիայի ժողովին մասնակցելուց հրաժարվելը և ապա նշում, որ վերջինիս և Տրդատ թագավորի որոշմամբ՝ Նիկիայի ժողովին պետք է մասնակցեր Արիստակեսը, և «նա հլո՛ւ հրամայելո՛ց չու արձակէ՛ փութաջան»:

Արիստակեսը Հայաստան է բերում Նիկիայի ժողովի որոշումները և ներկայացնում Լուսավորչին: Եվ ահա այսպիսի գեղեցիկ համեմատությամբ է ահա պոեմագիրը ընթերցողին ներկայացնում Գրիգոր Լուսավորչի՝

¹⁴ Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., էջ 292:

Նիկիայի ժողովի կանոններին ծանոթանալու ընթացքը: Այս այդ կանոնները ներմուծում են հայ եկեղեցական կյանք.

*Ձեանգանա՛ կն առեալ Արթնո՛ն յն սուրբ հաւատո՛ յն խնդաւէտ,
և զկանո՛նս իբրև՛ ՚ի փո՛ւնջ կապեալ ծաղի՛ կս հոտաւէտ.*

*Յաւել՛ ՚ի նո՛ն և գոր ազգի՛ ն էր լաւութեա՛ն բազմապէտ,
զիւրն՛ հաստատէ՛ր հոտս՛ ՚ի յուղի՛ դ մնալ պաշտօ՛ն նրբադէտ*

(էջ 634):

Խորենացին նշում է, որ Արիստակեսը Նիկիայից իր հետ բերում է «քսան կանոնեալ գլխովք ժողովոյն», ապա Լուսավորիչը որոշ կանոններ հավելում է¹⁵:

Այս առիթով պետք է նշել, որ կյանքի վերջին տարիներին Գրիգոր Լուսավորիչը սկսում է գրել «Յաճախապատում» անվանվող ճառերը, ինչպես նաև առակներ. «Ճառս և առակս ի գիր հաստել սիրտ զգենու սիրազգեաց...» (էջ 634): Վանանդեցին չի անտեսել այս հանգամանքը ևս: Այդ հաճախապատում ճառերը՝ գրված լինելով բոլորին հասկանալի ոճով ու լեզվով, նպատակ էին հետապնդում ժողովրդի բոլոր հատվածներին սթափեցնելու, արթնացնելու, քաջալերելու և ապաշխարության մղելու: Հաճախապատում ճառերը գրված էին բոլորի և յուրաքանչյուրի համար: Գրիգոր Տաթևացին ևս հիշատակում է, որ Լուսավորիչը կյանքի վերջին տարիներին գրել է «Ճառս յաճախապատումս՝ առակս խորիմացս»¹⁶:

Պոեմի վերջին հատվածում խոսվում է արդեն Գրիգոր Լուսավորչի առանձնանալու և Մանյա այրում փակվելու մասին:

Հայտնի է, որ կյանքի վերջին տարիներին Լուսավորիչը անդադար ձգտում էր մենության: Ճիշտ է, նա հաճախ էր դուրս գալիս ժողովրդի մեջ, բժշկություններ անում, սակայն նրա հոգին այլևս առանձնություն ու խաղաղություն էր փնտրում՝ ձգտելով էլ ավելի մոտ զգալ Աստծո ներկայությունը: Սուրբ Գրիգորի առանձնության սիրելի վայրը Դարանաղի գավառի Մեպուհ լեռն էր, որտեղ ավելի վաղ մենության մեջ ձգնել էր Հռիփսիմյանց կույսերից Մանեն, և որի անունով էլ Մանյա Այր անվանումն է ստացել:

Լուսավորչի կյանքի վերջին տարիների մասին բացի Ագաթանգեղոսից հիշատակում է նաև պատմահայր Խորենացին՝ նշելով, որ նա օրերն անց էր կացնում մենության մեջ և Արիստակեսի՝ Նիկիայի ժողովից վերադառնալուց ի վեր այլևս չէրևաց ժողովրդի մեջ¹⁷:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 291:

¹⁶ Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, *Ձեռքան հատոր*, Կ. Պոլիս, 1740 թ., էջ 442:

¹⁷ Տե՛ս **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 296:

Գրիգոր Լուսավորչի՝ Մանյա Այրում հաճախակի գտնվելու մասին պոեմում ակնարկվում է դեռևս Արիստակեսի ձեռնադրվելուց առաջ.

Դարանադեա՛ցն եկեալ յերկի՛ր լեառն՝ ի՛ Սեպո՛ւհ սխրական.

՛ի քարայա՛րկ յԱյրն՝ Մանեա՛յ անդ գտանէ՛ն առ ժամայն (Էջ 619):

Ըստ Վանանդեցու շարադրանքի՝ Լուսավորիչը ժամանակ առ ժամանակ առանձնանում էր լեռներում, նախքան ամբողջովին միայնության տրվելը:

Գրիգոր Լուսավորիչը, կատարած իր կյանքի գլխավոր առաքելությունը, «ամբոխալիք համակ յանկոխս առնէ վարգումն ի՛ Լերանց»՝ շարունակելով հոգևոր նեցուկ լինել իր ժողովրդի համար:

Այսպիսով, Հովհաննես Վանանդեցին «Արփիական Հայաստանի» պոեմը ավարտվում է Լուսավորչի՝ լեռներում փակվելու ձգտումով: Հատկանշական է, որ հեղինակը չի անդրադառնում Սուրբ Գրիգորի մահվան առեղծվածին՝ այսկերպ ձգտելով պոեմը եզրափակել խորհրդանշական պատկերով:

Միրանուշ Փարսադանյան

**Հայոց դարձի պատմությունը Հովհաննես Վանանդեցու
«Արփիական Հայաստանի» պոեմում
Ամփոփում**

Հովհաննես Միրզայան Վանանդեցու նշանավոր ստեղծագործություններից մեկը՝ «Արփիական Հայաստանի» մեծածավալ պոեմը, լայն առումով Հայաստանում քրիստոնեության տարածման պատմության չափաճո վերաշարադրանքն է:

Հոդվածում անդրադարձ է կատարվել հայոց դարձի պատմությանը, նկարագրվել է անցումը հեթանոսությունից քրիստոնեության, «Արփիական Հայաստանի» պոեմի՝ Գրիգոր Լուսավորչի կրած չարչարանքներին վերաբերող գեղարվեստական հուզականությամբ ներկայացված դրվագները համեմատվել են սկզբնաղբյուրի հետ: Հոդվածում նաև այն միտքն է ընդգծվում, որ հինգերորդ դարի հայ պատմիչների համար առաջնայինը եթե պատմական իրադարձությունները ներկայացնելն էր ու հերոսներին դրվատելը, ապա Վանանդեցու համար որպես նոր շրջանի հեղինակի, արդեն կարևորվում է հոգեբանական դրաման, հերոսական և ուժեղ անհատների կերպարների ստեղծումը և այդ ամենը գեղարվեստական հուզականությամբ ներկայացնելը:

Сирануш Парсаданян

История обращения армян в поэме Ованнеса Ванандеци “Восход Армении”

Резюме

Одна из самых известных произведений Ованеса Мирзаяна Ванандеци - масштабная поэма “Восход Армении”-стихотворный пересказ истории распространения христианства в Армении.

В статье затрагивается история обращения армян в христианство, описывается переход от язычества к христианству, а также сопоставляются страдания Григория Просветителя с идентичными отрывками из поэмы “Восход Армении”, написанными художественной эмоциональностью. В статье также подчеркивается тот факт, что для армянских историков V века, если приоритетом было представление исторических событий и восхваление героев, то для Ванандеци, как автора нового периода, уже важнее создание психологической драмы с героическими и сильными образами и представление их в художественно лирическом виде.

Siranush Parsadanyan

The history of Armenian conversion in Hovhannes Vanandetsi's poem –

“The Dawn of Armenia”

Summary

One of Hovhannes Mirzayan Vanandetsi's most famous works, the large-scale poem “The Dawn of Armenia”, is a verse retelling of the history of the spread of Christianity in Armenia.

The article touched upon the history of the Armenian conversion, described the transition from paganism to Christianity, and compared the sufferings of Gregory the Illuminator with the passages of the poem “The Dawn of Armenia” presented with the same emotional emotion. The article also emphasizes the fact that for Armenian historians of the fifth century, if the priority was to present historical events and praise the heroes, then for Vanandetsi, as the author of a new period, the psychological drama, the creation of characters of heroic and strong individuals and the presentation with artistic emotion were his priority.

Խմբագրություն է ուղարկվել 09. 04. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 25. 04. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Գիտական գրադարանի տնօրեն
tigranhayazn@mail.ru

**ՔՈՒՐԴ Բ ԱՆԲԵՐԴԵՑԻ ԵՐԿԱՐԱԿՅԱՑ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ:
ՇԱՄԱՆԱԿՆ ՈՒ ԳՈՐԾԸ
(ՄԱՍ I)**

Բանալի բառեր և արտահայտություններ. Վաչուտյաններ, Այրարատի կողմնակալ /փոխարքա/, Քուրդ Բ Անբերդեցի իշխանաց իշխան, Խուանդզե իշխանուհի, Թեոյոս /Չրքին/ իշխանաց իշխան, Թաթուն, Անբերդ, Ուշի, Կարբի:

Ключевые слова и выражения: Вачутяны, наместник Айрарата, царь царей Курд II Анбердеци, царица Хуандзе, царь царей Теойдос /Чркин /, Татун, Анберд, Уши, Карби.

Key words and expressions: the Vachutyans, governor of Ayrarat, King of Kings Kurd II Anberdetsi, Queen Huandze, King of Kings Teoidos / Chrkin /, Taton, Anberd, Ushi, Karbi.

ՄՈՒՏՔ

Հայ ժողովրդի պատմության 14-րդ դարի հերոսներից է Այրարատի կողմնակալության-փոխարքայության կողմնակալ-փոխարքա Քուրդ Բ Վաչուտյան Երկարակյաց իշխանաց իշխանը, իշխել է մոտավորապես 1300-1350 թվականներին: Քուրդ Բ իշխանաց իշխանը հեռատես, հայրենապաշտ, դիվանագետ տիրակալ էր: Նա հարաբերություններ է ձևավորել մոնղոլական իլխանության իրար հաջորդող կառավարիչների՝ Ղազան, Խուդաբանդ /Ղարպանդ/, Աբու Սայիդ /Պուսայիդ/ խաների հետ, ընդունվել նրանց կողմից, ստացել կառավարման անկախության իրավունք /յառլիկ/: Օգտվելով իլխանության թուլացումից, ստեղծել է մարտունակ զինուժ, վարժել դրանք, վերակառուցել-ամրացրել իր տիրույթի բերդերն ու ամրոցները /Անբերդ, Կարբի/, պաշտպանել ինչպես իր, այնպես էլ մյուս հայ իշխանությունները մոնղոլական հարձակումներից: Հողվածագիրը պատմա-քննական-վերլուծական մեթոդով ճշտել է նրա կառավարման ժամանակահատվածը, իմի բերել նրա գործունեության արդյունքները և մոռացումից դուրս բերել հանիրավի մոռացված հայրենապաշտ իշխանավորի կերպարը:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1205 թվականին ստեղծված Այրարատի կողմնակալություն-փոխարքայությունը մինչև 1350-ական թվականները, սկզբում Զաքարյան անկախ պետականության պայմաններում, 1236 թվականից հետո մոնղոլական տիրապետության պայմաններում, կառավարել է Վաչուտյան իշխանական տոհմը¹: Մեկուկես դարի ընթացքում համահայկական մեծություններ են դարձել տոհմի հիմնադիր Վաչե Ա, նրա որդի Քուրդ Ա, վերջինիս թոռ Քուրդ Բ իշխանաց իշխանները:

Քուրդ Բ իշխանաց իշխանը Քուրդ Ա Վաչուտյան Երկարակյացի թոռն է, նրա որդիներից ամենակրտսերի՝ Տայիրի որդին:

1255 թվականին կառուցված Սաղմոսավանքի Ս.Աստվածածին գրատան հյուսիսային պատին, բարձրուստ, դժվար տեսանելի տեղում, քայքայված արձանագրության մեջ Քուրդ Ա իշխանաց իշխանը թվարկել է իր որդիներին² ենթադրաբար տարիքային հերթականությամբ. «Ի թուին ՉԴ /1255/: Ես՝ Քուրդ, որդի Վաչեի, կողմնակալ Այրարատ գաւառիս ... ի բարեխոսութի/ւն/ զաւակաց մերոյ՝ **Վաչեի, Հասանա³, Դաւթի եւ Տայիրի** /ընդգծումը մերն է/ եւ յանձն առաք հանդերձ զաւակաւք մերաւք հոգաբարձու լինել բնակչաց սուրբ ուխտիս եւ սահմանեցաք սուրբ Աստուածածինս ամենայն ար պատարագել...»⁴:

Քուրդ Բ-ի հոր՝ Տայիրի գործունեության մասին մատենագիտական աղբյուրներում հիշատակությունները սահմանափակ են: Բացի Քուրդ Ա-ի Սաղմոսավանքի գրատան արձանագրությունից և Քուրդ Բ-ի տոհմական

¹ **Պետրոսյանց Տ.**, Վաչուտյանների ծագումը, Լրաբեր հաս. գիտ., 2017, թիվ 3, էջ 12-27:

² 1979 թվականին մենք տեսել ենք արձանագրությունը, հեռադիտակի օգնությամբ փորձել ենք ընդօրինակել, բայց չենք հաջողել: Այնուամենայնիվ որդիների թվարկման շարքում տեսել ենք Տայիր անունը և 1981 թվականին հրատարակած «Վաչուտյան իշխանական տան տոհմաձառը» հոդվածում /տես՝ Բանբեր Երևանի համալսարան, 1981, թիվ 3, էջ 130-147/ ժխտել ենք Քուրդ Ա-ի որդիներ Հասանի և Տայիրի նույնացումը:

³ Ձեռքի տակ չունենալով Սաղմոսավանքի գրատան արձանագրությունը, մեծ հայազետ Ղևոնդ Ալիշանը Տայիրին նույնացրել է Հասանի հետ և աղբյուրներում հիշված Տայիր անունը համարել Հասան իշխանի կրկնանունը /տես՝ **Հ.Ղևոնդ Վ.Ս. Ալիշան**, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 253, 2-րդ ծանոթագրություն/:

⁴ Արձանագրությունը մասնագիտական մեծ վարպետությամբ ընդօրինակել է վիմագրագետ Ա.Սանուշարյանը /տես՝ **Սանուշարյան Ա.**, Քուրդ Ա Վաչուտյանի երկու արձանագրության վերծանություն: YSU.am/files/03A_Manucharyan.pdf, էջ 47/:

ծագմանը վերաբերող բանաձևերում նրա անվան հիշատակությունից, այլ տեղեկություններ չկան: Աղբյուրների բացակայության պատճառով հնարավոր չէ պարզել, թե ինչու գահակալության նկատմամբ պահանջ չեն ներկայացրել Քուրդ Ա-ի գահակից, բայց վաղամեռիկ որդի Վաչե Բ-ի, գահակալներ Հասան, Դավթ Բ իշխանների ժառանգները: Մնում է ենթադրել, որ ավագ հորեղբայրների արական գծով ժառանգները չեն կարողացել ստանալ գահը և այն նվաճել է Տայիբի որդի Քուրդ Բ Վաչուտյանը:

Քուրդ Բ իշխանաց իշխանը կողմնակալ-փոխարքայի պաշտոնը ստանձնել է հավանաբար 13-րդ դարավերջին և իշխել մինչև 14-րդ դարի 40-ական թվականների վերջը: Ուշիի վանական համալիրի նորահայտ արձանագրություններից մեկի համաձայն Քուրդ Բ-ն արդեն 1303 թվականից եղել է գահակալ և նրա ողորմածությամբ ոմն Սահակ նվիրատվություն է կատարել Ուշիի Սուրբ Սարգիս եկեղեցուն. «Կամաւն անմահին Աստուծոյ եւ ողորմութեամբն պարոն Քրդին, եւ՝ Սահակ, որդի ...ին, թռռն Սիթայ ... ՉՕԲ /1303/»⁵:

Բայց հնարավոր է, որ Քուրդ Բ-ն ավելի վաղ, դեռևս 13-րդ դարի վերջերից բարձրացած լինի իշխանության գահին:

1316-1336 թվականներին ընդօրինակված ձեռագրի հիշատակարանի⁶ գրիչը նշելով Քուրդ Բ-ի արժանիքները՝ նրա իշխանության ժամանակաշրջանը դրել է «առաջի այլասեռ թագաւորացն՝ Ղազանին և Ղարապանդին և Պուսայիդի» օրոք⁷: Աղբյուրների համաձայն Ղազան խանը⁸ իշխել է 1295-1304 թվականներին, նրան հաջորդել է եղբայրը՝ Ուլջեյթը, որը

⁵ **Բաբայան Ֆ., Քալանթարյան Ա.** Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, ՊԲՀ, 2001 թ., թիվ 2, էջ 178:

⁶ Յուզակ Վենետիկի, հ. Է, էջ 640-645: Տես ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Կազմեց Լ.Ս.Խաչիկյանը: ՀՄՍՌ ԳԱ հրատարակչություն: Ե., 1950, էջ 335: Նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, Մասն Ա (1301-1325 թթ.): Կազմողներ՝ Լ.Խաչիկյան, Ա.Մաթևոսյան, Ա.Ղազարոսյան: «Նաիրի» հրատարակչություն, Ե., 2018, էջ 323-327:

⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, Մասն Ա (1301-1325 թթ.), էջ 323-327:

⁸ **Բաբայան Լ.Հ.**, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում: Հայաստանի պետական հրատարակչություն, Ե., 1964, էջ 333-338: Հայ ժողովրդի պատմություն, հ.III, ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե., 1976, էջ 638-640:

մուսուլմանություն ընդունելով ստացել է Խուդաբանդ⁹ /Ղարպանդ/ անունը, իշխել է 1304-1316 թվականներին, վերջինիս հաջորդել է փոքրահասակ որդին՝ Աբու Սայիդը¹⁰ /Պուսայիդ/, իշխել է 1316-1335 թվականներին: Հիշատակարանի համաձայն՝ Քուրդ Բ-ն իշխել սկսել է Ղազան խանի իշխանության ժամանակներից: Ուշիի նվիրագիր-արձանագրությունը փաստում է, որ նա տիրակալ էր արդեն 1303 թվականից: Հնարավոր է, որ նա գահն ստացել է դրանից առաջ՝ 13-րդ դարի վերջերին: Մենք ենթադրում ենք, որ 1298-1303-ական թվականներին աթաբեկ և ամիրսպասալար Շահնշահ Գ Ջաքարյանի գլխավորած հայկական բանակի կազմում Այրարատի կողմնակալության գորաջոկատով Քուրդ Ա-ն մասնակցել է Ղազան խանի ձեռնարկած Ասորական և Եգիպտական արշավանքներին և արդյունքում ստացել է հայրենի տիրույթի գահը¹¹:

Պատմաբան Գեղամ Կիրակոսյանը «Հայաստանը Լանկ Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում /1386-1500/» գրքում հպանցիկ անդրադարձել է 14-րդ դարի սկզբներին Վաչուտյան գահակալ Քուրդ Անբերդեցու /Քուրդ Բ-ի – Տ.Պ./ գործունեությանը¹²: Հեղինակը ծանոթ չէ Քուրդ Բ-ին վերաբերող սկզբնաղբյուրներին և նշել է. «նրա մասին 14-րդ դ. վերաբերող առաջին տեղեկությունը Ուշի գյուղի եկեղեցու 1329 թվակիր մի արձանագրություն է»: Մինչդեռ Քուրդ Բ-ի առաջին հիշատակությունը վերը նշած 1303 թվականի Ուշիի արձանագրությունն է: 1310 թվականին Հովհաննավանքում Սամախաթուն իշխանուհու ստացած «Ավետարանի» հիշատակարանում գրիչ Սարկավազը նշել է, որ ձեռագիրն արտագրել է «...իշխանութեան մերոյ գաւառիս Քրդին, որոյոյ Տայիրին, թոռն մեծին և բարեպաշտ Քրդին»¹³: Հաջորդ հիշատակությունը 1311 թվականին նույնպես կատարվել է Ուշիում «...ողորմութեամբ նորին [Քրդին, ես՝ Սուպա] որդի Ջուրջին: ... Ի թվիս ՉԿ /1311/»¹⁴: Կարբի գյուղի գերեզմանոցում գտնվող խոյակի վրա 1314 թվականին Քուրդ Բ-ն արձանագրել է, որ նորոգել է բերդը և բուրգերը¹⁵:

⁹ **Բաբայան Լ.Հ.**, Նույն տեղում, էջ 339-340: Հայ ժողովրդի պատմություն, հ.III, էջ 640-641:

¹⁰ **Բաբայան Լ.Հ.**, Նույն տեղում, էջ 340-342: Հայ ժողովրդի պատմություն, հ.III, էջ 641:

¹¹ Հայ ժողովրդի պատմություն, հ.III, էջ 638:

¹² **Կիրակոսյան Գ.**, Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում: Ե., 1997, էջ 322-326:

¹³ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 65:

¹⁴ **Բաբայան Ֆ., Քալանթարյան Ա.**, Ուշիի Ս.Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, էջ 180:

¹⁵ Մեր հավաքածուից:

Գ.Կիրակոսյանը թյուրիմացաբար Քուրդ Ա-ի 1250 թվականի Հովհաննավանքի արձանագրության «... ես Քուրդ, որդի Վաչէի... հաճո եղե/ա/լ այլազգի գաւրացն նետողաց...»¹⁶ նախադասությունը վերագրել է Քուրդ Բ-ին¹⁷:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Իրավիճակը 14-րդ դարի սկզբներին Հայաստանի համար խիստ ողբերգական էր: Մոնղոլ իշխանավորները ծայրագույն աղքատության էին հասցրել հայ հասարակությանը: Հարկահանության քայքայիչ ճնշումը տեղահան էր արել հայ բնակչությանը: 1295 թվականին գրիչ Դավիթը Թեղենյաց վանքում արտագրած Ավետարանի հիշատակարանում իր ապրած ժամանակաշրջանի մասին գրել է. «ի յաւուրն նետողաց ազգի, որ բոնացեալ ունէր զամենայն աշխարհս Հայոց և զայլս բազումս, որում չեն բաւական պատմել զդառնութիւն և զաւերութիւնն աշխարհիս, որ իբրև զծով խռովել մրրկածին աւոյով զերեքալեանն բերելով զմանութիւն, ուր ոչ երկիր, և ոչ քաղաք, և ոչ գետաղ, և ոչ աւանք և ոչ հրաշագան վանորեայք զխաղաղութիւն գտեալ...»¹⁸:

Նույն Դավիթ գրիչը մեկ այլ Ավետարանի հիշատակարանում գրել է. «Եւ ով ոք կարե պատմել զաղետս տարակուսանց, որ ոչ աշխարհ և ոչ քաղաք, և ոչ ազարակ, և ոչ սրբայկրան վանորայք զխաղաղութիւն գտեալ, այլ համակ ի նեղութիւնս և ի խիստ հարկապահանջողաց աւերեալ լինէր աշխարհս, քանզի ոչ գոյր թագաւոր, և ոչ իշխան, և ոչ այցելու, այլ յամենայն կողմանց խռովութիւն և աղմուկ»¹⁹:

Նույն վանքում մեկ այլ գրիչ՝ Սկրտիչ Բաբունին, 1302 թվականին թաթար-մոնղոլական տիրապետության մասին հայտնել է. «Ընդ սոցա /թաթար-մոնղոլների օրոք –Տ.Պ./ գրաւեալ ծառայութեամբ ծանրագոյն լծոյ հարկապահանջութեան յոքունց ազգաց, ևս առավել տունս Հայոց...»²⁰:

Նույն ժամանակաշրջանի և դեպքերի մասին Հովհաննավանքում գրիչ Սարկավազը 1310 թվականին ընդօրինակած «Ավետարանի» հիշատակարանում գրել է. «Բայց զաղէտ և զողբ տարակուսանացս ո՛ պատմեսցէ, զի ի խիստ և յանհնարին հարկապահանջութենէ ծախեալ/

¹⁶ **Ղաֆադարյան Կ.**, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները: ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Ե., 1948, էջ 103:

¹⁷ **Կիրակոսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 324:

¹⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար: Կազմեց Ա.Ս.Մաթևոսյանը: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե., 1984, էջ 769:

¹⁹ Նույն տեղում, էջ 891:

²⁰ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 6:

լինին ուստերք և դատերք աշխարհիս մեր, և բազում գեղք և վանորայք ասեր և անհանգիստ, և քահանայք տարաշխարհիկ լինին»²¹:

Երեք գրիչներն էլ ապրել են Այրարատի կողմնակալության-փոխարքայության Նիգ գավառում և նրանց նկարագրած համազգային ողբերգությունն ամբողջովին վերաբերել է և համայն Հայաստանին, և հայրենի Այրարատի երկրամասին:

Ահա այսպիսի պայմաններում է սկսել իր իշխանությունը Քուրդ Բ-ն: Նա լայնածավալ աշխատանք է իրականացրել կողմնակալության-փոխարքայության պաշտպանական հզորություններն ամրապնդելու ուղղությամբ: Քուրդ Բ-ն վերականգնել է կողմնակալության առաջին կենտրոն-մայրաքաղաք Անբերդը, դոյակի հարավակողմում նոր պարիսպ է կառուցել, որով դոյակն առանձնացրել է բերդատարածքից, այն վերածել միջնաբերդի²²: Ինչպես ինքը, այնպես էլ նրա որդին և հաջորդը՝ Թեոդոսը, ապրել են Անբերդ բերդաքաղաքում և իրենց, ինչպես իրենց պապ Վաչե Ա-ն, կոչել են Անբերդեցի:

Բայց կողմնակալության-փոխարքայության պաշտպանության համար միայն Անբերդի վերականգնումը շատ քիչ էր, և Քուրդ Բ-ն ամրացրել է նաև մյուս պաշտպանական ամրությունները: Կարբիի գերեզմանոցում պահպանվել է սյան խարիսխ, որի նիստերից մեկի վրա փորագրված է. «թ/վին/ ՉԿԳ /1314/: Ղանութ/եան/ Խարպանտին, ես՝ Քուրդ Անբերդեցի իշխանաց իշխան եւ Խուանդ խաթուն նորոգեցաք զբերդս եւ բրջներս: Ա/ստուա/ծ վաեղել տա բազում»²³: Այս արձանագրությունը որպես սկզբնաղբյուր խիստ կարևոր է: Հետաքրքրական է բերդի և բուրգերի նորոգման հիշատակությունը: Անիմաստ կլինի Կարբիի արձանագրությունը վերագրել Անբերդին: Անբերդում կատարված նորոգումների մասին արձանագրությունը կփորագրվեր այնտեղ և ոչ թե Կարբիում: Արձանագրությունում հիշատակված բերդը և բուրգերը, ամենայն հավանականությամբ, Կարբիի բերդն է իր բուրգերով, որի նորոգումը նույնպես Քուրդ Բ-ն կարևոր է համարել: Եթե հիշենք, որ իրենց իշխանության հաստատման հենց սկզբից մոնղոլ նվաճողներն իրենք էին ավերում հայկական իշխանությունների պաշտպանական ամրությունները՝ նրանց պաշտպանվելու բոլոր միջոցներից զրկելու նպատակով, Կարբիում Քուրդ Բ-ի կողմից բերդ ու բուրգեր նորոգելու փաստն անգնահատելի արժեք է ձեռք բերում: Այս փաստն առաջին հերթին հաստատում է, որ

²¹ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 66:

²² **Պետրոսյանց Տ.**, Վաչուտյանների ծագումը, էջ 25:

²³ Մեր հավաքածուից:

մոնղոլների թուլացող իշխանությունից օգտվում էին հայ իշխանավորները՝ սեփական տիրույթների անվտանգությունն ապահովելու համար պաշտպանական ամրությունները վերականգնելով: Ստեղծված իրավիճակից ճիշտ եզրակացություն է արել նաև Քուրդ Բ-ն: Նա նախ հասել է ռազմական-դիվանագիտական անկախության, ամրապնդել իր դիրքերը և ի վերջո ձեռք բերելով քաղաքական կշիռ՝ դարձել է իր ժամանակի ամենաաչքի ընկնող դեմքերից մեկը: Այս միտքը հաստատում է Հովհաննավանքում 1316-1335 թվականների միջև ընդօրինակված ձեռագրի հիշատակարանը. «Եւ յայսմ ժամանակի երեւեալ քաջ եւ արի, յաղթող եւ բարձրաբազուկ իշխանաց իշխան յազգէն Վաչէի, որդի Տայիրին, որդոյ բարեպաշտ եւ աստուածատէր Քրդին, որ եւ անուն նորա Քուրդ կոչի, որոյ անուամբն եւ քաջութեամբն մնաց գաւառս մեր եւ զվանորայքս անշարժ յայսմ մեղսաշարժ եւ դառն ցասմանէ»²⁴, զի յայսմ նուագեալ եւ դառնացեալ աւուրք որ վասն մեղաց մերոց երեւեալ մեծափառ եւ ասուածահաճոյ մեծ զարավար է՛ւ երեւելի նախամարտիկ, պարծանաց եւ զարդու զաւակն Հայաստանեաց, ամենաւրինեալ՝ Քուրդն, զի ոտնաձայնք երիվարացն նորա եւ ճաւճին՝ նիզակացն եւ փայլակումն սուսերացն, ճայթմունք աղեղացն եւ կուռ գրահքն եւ ասպարափակն լինելն եւ այլ ահարկու կազմուածն զարհուրեցուցանէին զթշնամիսն, թո՛ղ զյաղթութիւն եւ զքաջութիւն եւ զբազում պատերազմաց վանումն ի ձեռն նորա եւ ազատազարաց նորա բազմութիւն գեղեցկութեամբ իբրեւ զարս երկնից եւ քաջութեամբ եւ յաղթութեամբ իբրեւ զառիւծ կամ զքաջ արծուի ի վերայ նապաստակաց յամենայն պատերազմունս: Այնու առաջի այլասեռ թագաւորացն՝ Ղազանին եւ Ղարպանդին եւ Պուսաիդ եւ մեծամեծ եւ ասպարապետ նոյինացն մեծարգոյ եւ փառաւոր երեւեալ, եւ յամենեցունց շուք եւ պատիւ եւ խիլայ ընդունեալ, պահեր խնամաւքն եւ ողորմութեամբն Աստուծոյ զգաւառս եւ զվաներս ի խաղաղութան եւ այլոց գաւառակցացն բազում կարեկից եւ աւգնական լիներ: Որոյ աջն անեղին եւ բազուկն հզարին Աստուծոյ հովանի եւ պահապան լիցի ի տուէ եւ ի գիշերի աստուածատէր եւ բարեսէր ամուսնաւն Խոյանդիսաթունին եւ ամենայն հեծելազարացն, քաղցրացի նմա աչք բռնաւորաց եւ մեծամեծաց եւ թշնամիք նորա, առաջի նորա յամաւթ եւ նկուն լիցին եւ իբրեւ զԿորիս եւ Դադան յանդունդս իջցեն, եւ ձեռք նորա հանապազ ի վերայ թիկանց թշնամեաց իւրոց. Ամէն»²⁵:

²⁴ Ընդգծումը մերն է:

²⁵ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, Մասն Ա. (1301-1325 թթ.), էջ 323-327:

Հետաքրքրական նույնականություն է նկատվում Քուրդ Բ-ի բնութագրական գնահատականների և 14-րդ դարի մեկ ուրիշ խոշոր քաղաքական, ռազմական դեմքի, Քուրդ Բ-ի հորաքրոջ՝ Մամքանի որդու՝ Խաչենի Ծարա իշխանատան՝ Դոփյան կողմնակալության տիրակալ Գրիգոր Խաչենցուն նվիրված նկարագրության միջև: Հիշատակարանագիրը գրել է. «Յայսմ ժամանակի ծագեցաւ ոմն, մեծ և երևելի տոհմային պայազատութեան, ի ցեղէ վեհից, ի զարմէ դիւցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովելեաց, Գրիգոր իշխան Հայոց...»²⁶:

Քուրդ Բ-ին վերաբերող հիշատակարանը խոսում է, այդտեղ դիտարկելի են հետևյալ կարևոր պահերը.

1. Քուրդ Բ-ն հավասարապես ճանաչման է արժանացել Ղազան, Ղարպանդ, Պուսայիդ խաների օրոք, որոնցից ստացել է **պատիվ ու խիլայ** /յառիկ-Տ.Պ./:
2. Քուրդ Բ-ն ունեցել է հզոր հեծելազոր և ռազմական այլ ուժեր, որոնք թույլ են տվել, որպեսզի նա «պահէր խնամօքն և ողորմութեամբ... զգաւառս և զվաներս ի խաղաղութեան, և այլոց գաւառակցացն բազում կարեկից և օգնական լինէր»:
3. Քուրդ Բ-ի ռազմական հզորությունը նրան քաղաքական համապատասխան կշիռ է ապահովել: Եվ նա աթաբեկ և ամիրսպասալար Շահնշահ Գ Զաքարյանի²⁷, Սյունիքի կողմնակալ Բուրթել Օրբելյան Երկարակյացի²⁸, Ծարի Դոփյան կողմնակալ Գրիգոր Խաչենցու²⁹ հետ 14-րդ դարի առաջին կեսի հայկական քաղաքական կյանքի կարևոր դեմքերից մեկն էր:

ՔՈՒՐԴ Բ ՎԱՉՈՒՅՑԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Քուրդ Բ Վաչուտյանի կինն էր Իվանէ Ա Զաքարյանի որդու՝ Ավագ Աթաբեկի թոռ Աթաբեկի որդի Ամիրբեկի դուստր Խուանդ խաթունը³⁰: 1314

²⁶ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Կազմեց Լ.Ս.Խաչիկյանը: ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, էջ 84:

²⁷ **Խաչատրյան Հ., Պետրոսյանց Տ.**, Հայկագունք, Շահնշահ Գ Զաքարյան: Ե., 2002, էջ 470:

²⁸ Նույն տեղում, Բուրթել Օրբելյան, էջ 131: Տես նաև՝ **Կ.Մաթևոսյան**, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները: Ե., 2017, էջ 20-21, 27, 51 նն:

²⁹ Դօփեանք եւ Մէլիք Շահնազարեանք: Գրեց Կարապետ Եպիսկոպոս: Ս.Էջմիածին, 1914, էջ 45, 52, 60, 62-65 նն: Տես նաև՝ **Տիգրան Հայազն /Տ.Պետրոսյանց/**, Տիկնայք վափկասուն Հայոց աշխարհի, Ասփա, Ե., 2005, էջ 12:

³⁰ Կարբիի հաղթականար-եկեղեցու արձանագրության մեր ընդօրինակությունը:

թվականի Կարբիի³¹, 1329 թվականի Ուշի գյուղի Սուրբ Սարգիս եկեղեցու Հոռոմ երեցի³², Հովհաննավանքի 1350 թվականի³³ արձանագրություններում նա հիշվել է Խուանդ խաթուն, 1316-1335 թվականներին ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում՝ Խոյա անունով:

Ուշիի 1329 թվականի³⁴, Կարբիի 1338 թվականի³⁵, Կարբիի 1343 թվականի³⁶ և Հովհաննավանքի 1350 թվականի³⁷ արձանագրություններից հայտնի է, որ Քուրդ Բ իշխանաց իշխանը ունեցել է մեկ որդի՝ Թեոյոս անունով: Այս Թեոյոսն արտաքնապես տգեղ լինելու հետևանքով ստացել է Չրքին՝ Տգեղ³⁸ մականունը:

Քուրդ Բ-ն նորացրել է խնամիական կապը Խաչենի Ծարա իշխանական տան հետ և իր Թաթուն անունով աղջկան կնության է տվել Հասան Գ-ի որդի Հասան Դ-ին: Դադի վանքի գմբեթավոր եկեղեցու հարավային պատի կենտրոնական կամարի մեջ, արտաքուստ փորագրված է. «Կաման Ա/ստուծոյ. ես՝ Գոնցես ու որդիքս՝ Հասան ու Վահրամ, թոռն Դաւիանց, տվաք ի Դադի վանս զմեր հայրենիքն զԽուդ իւր սահմանովն, Խասովն, վերին մարգով վասն սիրական հարսինն մեր Թաթունին, դստերն Քրդին Անբերդեցի՝ ամուսնո Հասանա /ընդգծումը մերն է/»³⁹:

Քուրդ Բ իշխանաց իշխանի Կարբիի հաղթականար-եկեղեցու 1338 թվականի արձանագրությունը կարևոր աղբյուր է: Այդտեղ Քուրդ Բ-ն իր կենդանության օրոք վավերացրել է որդու՝ Թեոյոսի գահակից և Անբերդի տեր լինելը: Արձանագրության մեջ այդ միտքն այսպես է ձևակերպվել. «Եւ հարազատ որդի մեր Չրքին, տէր Անբերդոյ գաւառիս /ընդգծումը մերն է/»⁴⁰:

³¹ Մեր հավաքածուից:

³² **Բաբայան Ֆ., Քալանթարյան Ա.**, Ուշիի Ս.Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, էջ 188:

³³ **Ղաֆադարյան Կ.**, Հովհաննավանքը, էջ 92:

³⁴ **Բաբայան Ֆ., Քալանթարյան Ա.**, Ուշիի Ս.Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, էջ 188:

³⁵ Մեր հավաքածուից:

³⁶ Մեր հավաքածուից: Տես նաև **Ավագյան Ս.**, Վիմական արձանագրությունների բառարանություն, Ե., 1978, էջ 195:

³⁷ **Ղաֆադարյան Կ.**, Հովհաննավանքը, էջ 92:

³⁸ Չիրքին՝ «տգեղ». villain, laid = պարս. Cirkin /տես՝ **Աճառեան Հ.**, Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 277/:

³⁹ Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Արցախ: Կազմեց Ս.Գ.Բարխուդարյանը; ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն: Ե., 1982, էջ 203, արձանագրություն 716:

⁴⁰ Մեր հավաքածուից:

Քուրդ Բ-ն մահացել է 1350 թվականին կամ դրա նախորդ տարում և թաղվել է Հովհաննավանքում: Նրա հիշատակին որդին՝ Թեոդոս Չրքինը նվերներ է տվել Հովհաննավանքին. «ուաք ի մեր պապանց հալալ գանձագին հայրենիք՝ ի հանդէն Սերկելւո՝ ի Ս/ուր/ք Կարապետն եւ ի Սուրբ Կաթողիկէն, որ եղեալ է շիրիմ պարոն հայրն իմ՝ Այրարատին տէրն /ընդգծումը մերն է/»⁴¹:

ՔՈՒՐԴ Բ-Ի ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՆ

Կարբիի հաղթականար-եկեղեցու արևելյան ճակատին, արտաքուստ փորագրվել է Քուրդ Բ-ի արձանագրությունը. «Թվ/իս/ ՉՁԷ /1338/: Շնորհին Ա/ստուծո/յ: Ես՝ Քուրդ Անբերդեցի իշխանաց իշխան, որդի Տայիրին, որդոյ Քրդին, թոռն Անբերդեցի Վաչէ իշխանի, առն քաջի եւ պատերազմողի եւ ամուսին իմ Խուանդ խաթուն, դուստր Ամրպէկին, թոռն Աթապակին Աւագին եւ հարազատ որդի մեր Չրքին տէր Անբերդոյ գաւառիս...»⁴²:

Քուրդ Բ Անբերդեցու Կարբիի հաղթականար-եկեղեցու 1338 թվականի արձանագրության մեջ վավերացվել է Քուրդ Բ-ի որդու և իրավահաջորդի՝ Թեոդոսի Անբերդի տեր և գահակից լինելը:

Կարբիի 1338 թվականի արձանագրությունը հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս առնչվելու Վաչուտյան կողմնակալություն-փոխարքայությունում ձևավորված մի հետաքրքիր ավանդույթի, երբ հոր կենդանության օրոք որդին դառնում է գահակից: Այդպես Վաչէ Ա-ի օրոք նրան գահակցել է որդին՝ Քուրդ Ա-ն: Քուրդ Ա-ին սկզբում, մինչև մահը, որ տեղի է ունեցել 1261-62/63 թվականներին, գահակցել է Վաչէ Բ-ն, այնուհետև՝ Հասանը: Եվ ահա Քուրդ Բ-ն իր կենդանության օրոք իշխանության գահակից է հայտարարել որդուն՝ Թեոդոս Չրքինին:

Թեոդոսի իշխանությունը համընկել է իլխանության հոգեվարքի շրջանին, երբ մոնղոլական կենտրոնական իշխանությունը ներքին հակամարտությունների և սելջուկ-թուրքերի հարվածների տակ այնքան էր թուլացել, որ այդ զգացել են իլխանության անգամ այնքան հեռավոր ծայրամասում, ինչպիսին Նիզ-Արագածոտնն էր:

Այդ առումով խիստ հետաքրքրական է Թեոդոսի Կարբիի հաղթականար-եկեղեցու հարավային պատին 1343 թվականին փորագրված արձանագրությունը: Այն հրամանագիր է: Դրանում իշխանաց իշխան Թեոդոս Վաչուտյանը հայտնել է. «Ես՝ Չրքինս, որդի Քրդին, տէր Անբերդոյ գաւառի, **անիրաւու/ն/ք տեսա, որ զճանապարհորդի ձիաւուլիս տաին,**

⁴¹ Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը, էջ 92-94:

⁴² Մեր հավաքածուից:

մե/ն/ք զայս արձան գրեցաք, որ այլ ի Կարբի ճանապարհորդի ձիաւուխ չտան /ընդգծումը մերն է/»⁴³: Փաստորեն կողմնակալության գահակալը վերացրել է «ձիաւուխի»՝ իլխանական պետության մեջ սուրհանդակներին, երթնեկին և հարկահավաքներին ձիով, պարենով, անասնակերով ապահովելու պարտականությունը, որ ամբողջ ծանրությամբ ընկած էր բնակչության ուսերին: Արձանագրությունից մեկ անգամ ևս երևում է, որ դեպի Վրաստան տանող ճանապարհն անցել է Նիգ-Արագածոտնով և իլխանական ծանրագույն այդ հարկը մեծ վնասներ է հասցրել բնակչությանը: Եվ, օգտվելով իլխանության թուլացումից, նշելով, որ «անիրատունք», այսինքն՝ անգամ առանց այդ իրավունքն ունենալու, Թեոդոս Վաչուտյանն իր փոխարքայության տիրույթում վերացրել է «ձիաւուխի» հարկատեսակը:

1350 թվականին Հովհաննավանքում փորագրվել է Թեոդոս Չրքինի վերջին արձանագրությունը: Իշխանաց իշխան Թեոդոսը հողեր է պարզնել Հովհաննավանքին «ի հանդէն Սերկելըլո... Բունկայ ծովէն, Գութանավի գլխովն, որ ճանապարհն Կուրթաի, Սերկելըլո ծովն, Շաչանի ըղիգովն»: Հողային այս նվիրատվությունը Թեոդոսն արել է Հովհաննավանքին, որ «եղէ/ա/լ է շիրիմ պարոն հայրն իմ՝ Այրարատին տէրն»⁴⁴:

Արձանագրության շարադրման եղանակը հուշում է, որ գրվել է ի հիշատակ Քուրդ Բ-ի, որի մահը տեղի է ունեցել այդ կամ դրան նախորդող տարում՝ 1349/50 թվականին: Թեոդոս Չրքինի նվիրատվական հրամանագիրը հաստատել է կողմնակալության այդ պահի երկրորդ դեմքը՝ մայրը՝ Խուանդ խաթունը, որից կարելի է եզրակացնել, որ Քուրդ Բ-ն նոր է մահացել և Թեոդոսը դեռևս չի հաստատվել հոր փոխարեն: Խուանդ խաթունի անունից փորագրվել է. «Ես՝ Խուանդ խաթուն ամուսին Անբերդեցի Քրդին, մայր Չրքընին... կրկին հաստատեցի զվերոյ գրեալս»⁴⁵: Նման եզրակացության համար հիմք է այն, որ համաձայն միջնադարյան իրավահամակարգի իշխանական սեփականատիրության ամբողջական իրավունքը պատկանել է գահակալ իշխանին, որի անձի մեջ գերագույն հողային իրավունքը նույնացվել է նրա քաղաքական-վարչական իշխանության հետ, և միայն նրա հաստատումից հետո է ուժի մեջ մտել ստորադաս ծառայողների, անգամ գահակից գավակի նվիրատվությունը:

⁴³ Ավագյան Ս.Ա., Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 194 և հետո:

⁴⁴ Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը, էջ 92:

⁴⁵ Նույնը:

Զաքարիա Քանաքեռցին արտագրելով Թեոդոս Չրքինի արձանագրության Խուանդ խաթունի հաստատում-հատվածը, «ամուսին Ամբերդեցի Քրդին, մայր Չրքընին» բառերից հետո դժվարընթեռնելի տառերի փոխարեն կարդացել է Թայիկ անձնանունը և եզրակացրել, որ Թայիկը Թեոդոսի եղբայրն է: Այդ սխալն անցել է Յովհաննես Շահխաթունեանցին⁴⁶, Ղևոնդ Ալիշանին⁴⁷, Կարապետ Կոստանեանցին⁴⁸: Կարո Ղաֆադարյանն արձանագրության այդ հատվածը թեև որոշ չափով ուղղել է, բայց դարձյալ թողել է անորոշ «մայր Չրքընին Բ... աին պեկին»⁴⁹: Արձանագրության այդ հատվածը մենք ճշտել ենք Կարբիի Քուրդ Բ-ի արձանագրության հիման վրա. **«մայր Չրքընին, դուստր Ամրպեկին, թոռն աթապակ Ամրպեկին»:**

Թեոդոս Չրքինի և Խուանդ խաթունի այս արձանագրությունը Վաչուտյան իշխանների վերջին արձանագրությունն է ու նրանց վերջին հիշատակությունը:

Տիգրան Պետրոսյանց

Քուրդ Բ Ամբերդեցի Երկարակյաց իշխանաց իշխան.
Ժամանակն ու գործը (Մաս I)
Ամփոփում

Պատմական յուրաքանչյուր ժամանակաշրջան ծնել է իր հերոսներին: Նրանք ծնվել են և ազգի համար երջանիկ ժամանակներում, և ազգի համար ծանր, օրհասական օրերին: Նրանց ծնել է անհրաժեշտությունը: Նրանց գերխնդիրը եղել է իրենց անձով ու գործով նպաստել ազգի համար կարևորագույն խնդիրների լուծմանը: Նրանց շնորհիվ է, որ ազգը հարատևել է: Հայ ժողովրդի պատմության 14-րդ դարի եզակի հերոսներից է Այրարատի կողմնակալության-փոխարքայության կողմնակալ-փոխարքա Քուրդ Բ Վաչուտյան Երկարակյաց իշխանաց իշխանը: Նրա կերպարը խիստ այժմեական է և այսօր էլ ընդօրինակելի: Նրա նման հերոսներով է հավերժ Հայոց պատմության անկանգ ընթացքը:

⁴⁶ **Յովհաննես եպիսկոպոս Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ զաւառացն Արարատայ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014, էջ 277:

⁴⁷ **Ղևոնդ վ.Ս. Ալիշան**, Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց: Վեներտիկ, 1890, էջ 171:

⁴⁸ Վիմական տանեգիր, Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց: Կազմեց Կ.Կոստանեանց: Ս.Պետերբուրգ, 1913, էջ 171:

⁴⁹ Նույն տեղում:

Тигран Петросянц

Царь царей Курд II Анбердеци: время и дело

(Часть I)

Резюме

В истории армянского народа одним из героев 14 в. является царь царей Курд II Вачутян, наместник наместничества Айрарат, который правил примерно в 1300-1350 гг. Царь царей Курд II был дальновидным и дипломатичным правителем, патриотом. Он установил отношения со сменяющимися друг друга монгольскими правителями: ханами Газаном, Худабенде /Харпандом/, Абу Саидом /Пусаидом/, был принят ими, получил право на независимое правление /ярлык/. Воспользовавшись ослаблением ильханства, он создал боеспособную армию, обучил ее, восстановил и укрепил в своих владения крепости (Анберд, Карби) и защитил себя и другие армянские царства от нападений монголов. Автор статьи с использованием исторического и аналитического методов исследования выяснил период его правления, обобщил результаты его деятельности, чтобы вывести из забвения образ несправедливо забытого правителя- патриота.

Tigran Petrosyants

King of kings Kurd II Anberdetsi: time and business

Summary

(Part I)

The King of Kings Kurd II Vachutyan, the governor of the governorship Ayrarat, who ruled in about 1300s-1350s is one of the heroes of the 14th century in the history of the Armenian people. King of Kings Kurd II was a farseeing and diplomatic ruler and a patriot. He established relations with the successive Mongolian rulers: khans Ghazan, Khudabende / Harpand /, Abu Said / Pusaid /, has been accepted by them and received the right to independent rule / label /. Taking advantage of the weakening of the Ilkhanism, he created a combat-ready army, trained it, restored and fortified fortresses (Anberd, Karbi) in his possessions, and defended himself and other Armenian kingdoms from the attacks of the Mongols. The author of the article, using historical and analytical research methods, found out the period of his reign, summarized the results of his activities in order to bring from oblivion the image of the unjustly forgotten patriotic ruler.

Խմբագրություն է ուղարկվել 22. 01. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 15. 02. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

ՄՀԵՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան
Հայոց պատմության ամբիոնի հայցորդ
mher.ghazaryan1988@mail.ru

ՏԵՂԵԿԱԳԻՐ

**Ն. Յ. ԴԱՇԱԿՑ[ՈՒԹԵԱՆ]. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ[ԱԿԱՆ]
ԿՕՄԻՏԷ**

1920 ՄԱՅԻՄԻՑ - 1921 ՆՈՅԵՄԲԵՐ.

(ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ VIII ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ)

Քանալի բառեր և արտահայտություններ. Դաշնակցություն, կենտրոնական կոմիտե, շրջանային ժողով, Ատրպատական, դատական ատյան, գաղթականություն, Հայաստան, կուսակցություն:

Ключевые слова и выражения: Дашнакцутюн, ЦК, Областное Собрание, Атрпатакан, Суд, Иммиграционная служба, Армения, Партия.

Keywords and expressions: Dashnaksutyun, Central Committee, Regional Assembly, Atrpatakan, Court, Immigration, Armenia, Party.

1920-ական թվականների Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում Հայոց Ցեղասպանությունից և Հայաստանի Առաջին Հանրապետության անկումից հայ գաղթականության հայ գաղթականության կյանքում ստեղծված իրավիճակի և տարված կազմակերպչական աշխատանքների մասին շատ քիչ է մեզ հայտնի: Քանի որ պատմական այդ ժամանակաշրջանում ամենաազդեցիկ քաղաքական կուսակցությունը և կազմակերպությունը Հայ Հեղափոխական Դաշնակցությունն էր, ուստի և Դաշնակցությունն էլ գրեթե ամբողջությամբ բաժին է ընկնում գաղթականության մոտ առաջացած ծանր խնդիրների լուծումը և գաղութահայության կյանքի կազմակերպումը:

Մենք կներկայացնենք ՀՅԴ Բոստոնի կենտրոնական արխիվից մի փաստաթուղթ, որի ձեռագիր տարբերակը բաղկացած է հինգ էջից և պահվում է վերը նշված արխիվում: Փաստաթուղթը Իրանի ՀՅԴ Ատրպատականի կենտրոնական կոմիտեի գործունեության տեղեկագիրն է՝ ուղղված VII-րդ շրջանային ժողովին: Բնականաբար մեկ փաստաթղթով դժվար է պատկերացում կազմել պատմական այդ ծանր ժամանակաշրջանում կատարված աշխատանքների մասին: Սակայն, հնարավոր է հասկանալ թե ինչ անելանելի և քառսային իրավիճակում է եղել Իրանի հայությունը մասնավորապես Հայաստանի առաջին Հանրապետության, այնուհետև Լեռնահայաստանի անկումից և խորհրդայնացումից հետո: Այդ

իրադարձություններին հաջորդեցին հազարավոր հայերի հոսքը դեպի Ատրպատականի շրջան: Շրջանի կուսակցական կառույցները առաջինն էին, որ այդ խնդիրներին փորձեցին դիմագրավել, սակայն պետք է նշենք, որ իրենց մոտ էլ ամեն ինչ հարթ չէր ընթանում. կային ներքին տարաձայնություններ և ներքին խնդիրներ: Այնուամենայնիվ հաջողվում է որոշ չափով վերակազմել տարագիրների շարքերը, կանոնակարգել և լուծել գոնե տարրական նպաստի խնդիրներ, քանի որ համատարած անգործություն և սով էր տիրում հայության շրջանում: Ինչպես այս, այնպես էլ այլ փաստաթղթերի ուսումնասիրությունից հստակ երևում է, թե ինչ հսկայական աշխատանքներ են տարվել Իրանի գաղութահայության կյանքում որոշ չափով մեղմելով և կազմակերպչական բնույթ տալով: Այդ ծանր պայմաններում սոցիալականից բացի, փորձել են կազմակերպել մշակութային և ազգային քարոզչություն: Հենց այդ ժամանակ էլ հիմնվում է <<Այգ>> շաբաթաթերթը, որը մեծ դեր կատարեց համայնքի կյանքում: Հարկ է նշել, որ կուսակցական կառույցներում եղել են ամենատարբեր բնույթի խնդիրներ՝ ՀՅԴ այլ մարմինների հետ, ինչն էլ ավելի վատթարացրեց իրավիճակը:

Ստորև ներկայացվող տեղեկագիր-փաստաթղթի բովանդակությունը ոչ ամբողջությամբ, սակայն, մասամբ լույս է սփռում տարածաշրջանում, թե գաղութահայության կյանքի, թե կուսակցական կառույցներում տիրող իրավիճակի վրա: Արձանագրենք նաև, որ այդ ծանր, անելանելի օրերում տարված դժվարին աշխատանքի արդյունքն էր, որ հայությունը հետագայում Իրանում և արտասահմանի այլ գաղթօջախներում ունեցավ կուռ, ամուր և համայնքներ՝ իրենց ազգային և մշակութային ընդգծված դիմագծով:

Մհեր Ղազարյան
Փաստաթուղթ

1920 թվի սկզբներից մեր շրջանի¹ կազմակերպութեան մեջ ծայր տուեց մի ներքին երկպառակութիւն, որը գնալով աւելի և աւելի լայնացաւ ու խորացաւ ծառայելով բացառապէս գաղթանական կազմակերպութիւնների շարքերում: Ներքին այդ տարաձայնութիւնները մեծ մասամբ առաջացել էին 1918 թվի մեր գաւառներում տարւած պայքարին և դրա շարունակութիւնը

¹ Խոսքը գնում է Իրանի հյուսիսային շրջանի մասին:

կազմող դժբախտ գաղթին²: Օրըստօր է վատթարանալով մեր գաւառական մասսաների քաղաքական վիճակը, միւս կողմից երկու տարի շարունակ թափառական վիճակում, անգործ և միայն նպաստով ապրելուց ստեղծած հոգեկան վիճակը աւելի ևս փափուկ հող էր ստեղծում փոքրիկ դժգոհութիւնները մեծանալու և յաճախ սովորական բամբասանքների շուրջ գծտութիւնների հող ծառայեցնելու:

Վերադարձող գաղթականութեանը վերակազմելով Կ. Կօմիտէն յոյս ունէր, որ այդ միջոցով հնարաւորութիւն կ'ունենայ աւելի տանելի դրութիւն ստեղծել գաղթական վիճակում գտնուող դաշնակցական զանգւածների համար, սակայն այդ կազմակերպութեան վարիչ մարմինները անհրաժեշտ ընդունակութիւնը ցոյց չտւին և մինչև իսկ որոշ շրջաններում իրենց բռնած ընթացքով աւելի ևս բորբոքեցին ներքին տարաձայնութիւնները և տւին VII շրջանային ժողովը, որի ընթացքն ու վերջը ձեզ լաւ յայտնի է:

Բացի այդ ներքին տարաձայնութիւններին, ինչպէս յետագայում պարզեց, որոշ դժգոհութիւններ կային Կ. Կօմիտէի դէմ, որը իբր զանազան նկատումներով ընթացք չէր տրուել գոյութիւն ունեցող տարաձայնութիւններին, հովանաւորել էր զանազան յանցաւոր ընկերների և հալածել դժգոհ տարրերին:

Երևան եկան նաև այսպէս ասուած սկզբունքային հողի վրայ տարաձայնութիւններ, որոնք թէն շատ թոյլ կերպով շեշուեցին, սակայն նկատելի էին ձախ ու աջի հարցերը:

VII շրջանային ժողովը երեք ամիս և աւելի տևելուց յետոյ, 70-ից աւելի նիստեր ունենալով շատ քիչ բան կարողացաւ պարզել և ոչ մի դրական արդիւնք չտալով լուծեց. հազիւ իր ընթացքին կարողանալով ընտրել թերթի խմբագրութիւն³. մի ֆինանսական մարմին և դատական ատեան⁴, որը պէտք է պարզէր կազմակերպութեան մէջ առաջացած տարաձայնութիւնները պէտք եղած մաքրումը կատարելով մեր շրջանի կազմակերպութեան մէջ: Սակայն այդ ևս զուր անցաւ, որովհետև դատական մարմնի աշխատանքները ընթացան խիստ դանդաղ, մինչև որ վերջապէս դադարեց գործելուց, առանց մի հատիկ որոշում կայացնելու:

VII Շրջ[անային] ժողովը ոչ մի դրական աշխատանք չկատարելուց բացի այն վնասակար ազդեցութիւնն ունեցաւ, որ կրքերը այդ ձգձգող

² Դժբախտ գաղթը վերաբերվում է Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո Ատրպատական գաղթած հազարավոր հայերին:

³ Խոսքը «Այգ» շաբաթաթերթի մասին է:

⁴ Դատական ասյանը կյանքի էր կոչվում քննելու դաշնակցության ներսում ընկերների կողմից թույլ տված կանոնազրային և կարգապահական խախտումները:

ժողովներում աւելի ևս բորբոքեցին և կատարեալ կազմալուծման մատնեցին մեր շարքերը: Այլևս կազմակերպչական ոչ մի օրգան չմնաց ոչ Ուրմիայի, ոչ Սալմաստի, ոչ Խոյի, ոչ Ղարատաղի և ոչ էլ Ջուղայի աշխատատրութեան շարքերում: Միայն Վրէժի շրջանն էր, որ պահել էր իր կազմակերպութիւնը, այն ևս խիստ թոյլ վիճակում:

Քննադատութեան պատրուակով արած անւանարկութիւնները և ինքնախայտառակումները ստեղծեցին մի դրութիւն, ուր ոչ մի մարմին այլևս չէր կարող ասպարէզ գալ ղեկավարողի դերում և վերականգնել փտած կազմակերպութիւնը, մինչև որ դատական ատեանի որոշումները ասպարէզ չհանւէին և ասէին թէ ո՞վ էր, որ պիտի տէր կանգնէր գործին: Մակայն ինչպէս ասացինք, այդ հնարաւոր չէրաւ դատական ատեանի չլինելու պատճառով:

Կ. Կօմիտէն, որ դեռ շարունակում էր պահել արտաքին յարաբերութիւնները, չէր կարող կազմակերպչական աշխատանքների այն ձևով, որ հնարաւոր լինէր վերականգնել մեր շրջանի կազմակերպութիւնը նախկին չափով: Ինչպէս յետագայ դէպքերն էլ եկան ապացուցելու, որոշ շրջաններում և որոշ ընկերների մէջ համակենտրոնական կրքերը այնքան ուժեղ էին, որ միամտութիւն պիտի լինէր Կ. Կօմիտէի կողմից կազմակերպչական աշխատանքներ սկսել այդ շրջաններում և նորանոր աղմուկների առիթ չտալ, որոնք կարող էին այս անգամ ճակատագրական նշանակութիւն ունենալ մեր շրջանի դաշնակցութեան համար առաւել ևս վարկաբեկելով այն և թերևս շատ աւելի երկար ժամանակով լքելով մեր շարքերը: Տեղն է յիշել այստեղ այն դէպքը, երբ մենք իրագեկ դարձնելու համար մեր շարքերին և արտաքին աշխարհին, որ «Մինարէթ» թերթը որևէ կապ չունի կազմակերպութեան հետ, «Այգ»-ին մէջ մի երկու տողով յայտարարեցինք այդ մասին, անմիջապէս գաւառական շարքերից զանազան, կուսակցական տիտղոսների և անգամ անհատաբար մի արշաւանք սկսեց Մինստէթում Կ. Կօմիտէի դէմ, որին ի պատասխան գրեցինք մեր կուսակցական մարմիններին ու խմբերին մի շրջաբերական նամակ մանրամասն լուսաբանելով ստեղծւած դրութիւնը և տեղի ունեցող տգեղ երևոյթները (Կարդալ «Այգ», N 2 և «Մինարէթ», N 5, ապա մեր շրջ. նամակը):

Բարեբախտաբար գտնեցին այնպիսի շրջաններ, նախ Վրէժի կօմիտէութիւնը և կազմակերպւած խմբերը, որ սկզբից կարգապահ և աչալուրջ վերաբերմունք ցոյց տւին մտքերի այս շփոթի մէջ, ապա Մինարէթի շրջանը հետզհետէ սկսեց աւելի զգաստանալ և համախմբւել: Մնացած շրջաններից Ուրմիայի, Ղարատաղի և Խոյի գաղթականութիւնը շարունակում է մինչև այսօր ներքուստ երկպառակւած վիճակում մնալ և որևէ դաշնակցական կազմակերպութիւն չունենալ իրենց մէջ:

Հաղորդակցութեան կատարեալ բացակայութիւնը չորս տարի է ինչ գրկել է մեզ կուսակցական ընդհանուր կապից մեր կազմակերպութեան բարձր մարմինների հետ, և անհնարին էր ստեղծած այդ վիճակում օգտուել այդ մարմինների հեղինակաւոր ձայնից, որը վճռական նշանակութիւն կարող էր ունենալ ստեղծած պառակտումների և մտքերի շփոթութեան նկատմամբ:

Այսպէս էր մեր վիճակը ընդհանուր առմամբ վերջին երկու տարւայ ընթացքում:

Ինչքան էլ մեծ համարի այն դժբախտ հանգամանքը, որ ստեղծուեց մեր կուսակցութեան համար Հայաստանում, որի հետևանքով գերագոյն դատական ատեանը իր աշխատանքն երբ սկսեց մեր շրջանում, այնուամենայնիւ դա ունեցաւ այն դրական հետևանքը մեր շրջանի կազմակերպութեան համար, որ պարզեց տարաձայնութիւնները և իր որոշումներով խաղաղեցրեց մտքերը վերջին օրերում: Որպէսզի մի ընդհանուր գաղափար տւած լինենք մեր շրջանը յուզող խնդրների և այդ խնդրների լուծման դատական ատեանի կողմից յիշենք այստեղ նրա տւած վճիռները: (Տես դատական ատեանի վճիռները Կ. Կօմիտէի, 13 պատգամաւորների մասին):

Մնում են դեռ ևս զրպարտւած Յ. Սարգսեանի, Ա. Նազարեանի և Ճերմակի հարցերը, որոնցից վերջինս ունի լուրջ հիմունքներ և կապւած է Ուրմիոյ Սալմաստի կօմիտէների և մեր ու Վասպուրականի 1918 թի Կ. կօմիտէների հետ, իսկ վերջերս էլ Շահաստանի շրջանի խլրտումների հետ:

1920 թի սեպտեմբերից, երբ Կ. Կօմիտէն կանգնած էր կազմալուծւած և ներքին խլրտումներով լի մի շրջանի առաջ, ուրիշ ոչինչ չէր մնում նրան անել եթէ ոչ բաւականանալ միայն արտաքին յարաբերութիւնները պահելու մեր կուսակցական միւս շրջանների, մարմինների, քաղաքին, հասարակական հիմնարկութիւններ, հայ և օտար կուսակցութիւնների հետ և ապա միևնոյն ժամանակ տէր կանգնելու կազմակերպութեան:

Արտասահմանեան մարմիններից համարեա կտրւած ենք եղել, միայն որ յարաբերութեան մէջ ենք գտնուել և ամէն կարգի բարոյական աջակցութիւն ցոյց տւել այնտեղ գործող մեր ընկերներին և նրանց մղած հերոսական պայքարին: Կ. Կօմիտէն միաժամանակ կատարել է տեղեկատու Բիւրոյի դեր Իշխանի և Սիւնիքի մէջ ու նրանց միջոցով էլ Հայաստանի ու արտասահմանի հետ: Մեր փորձերը, որտեղ ուրիշ գծեր ևս ստեղծել այդ աշխատանքի համար յաջողութիւն չունեցան շնորհիւ մեր սահմանի նախկին հայաբնակ վայրերի ամայութեան և միւս արհի պատերազմական վիճակի: Հայաստանի մեր կազմակերպութիւններն ու կառավարութիւնն էլ այդ ուղղութեամբ աշխատանք չէր ցոյց տալիս, իսկ առիթ եղած դէպքում էլ գերադասել է կապ պահպանել այստեղ

եպիսկոպոսի հետ քան թե մեզ հետ: Քիչ չէր խանգարում այս աշխատանքներին նաև վերջին տարիներին մեզ համար այս երկրում ստեղծված այն աննորմալ վիճակը, ըստ որի որևէ հայ քաղաքից դուրս գալու և ազատ երթևեկելու հնարատրությունից զրկված է: Տեղեկատու աշխատանքները երբեմն դանդաղել են մեր դրամական սուղ պայմանների շնորհիւ, իսկ ընդհանրապես այդ աշխատանքի ծախսերը հոգացել է Արդյութեանի այդ նպատակով տրամադրված գումարներից:

Մեր օժանդակությունը Սիւնիքին անուանեցինք բարոյական այն տեսակետից որ այն բոլոր օժանդակությունը որ նա ստանում էր Թաւրիզից, դրա մեջ Կ. Կօմիտէի դերը, չնչին բացառութեամբ, եղել է դիմողի, խնդրողի և ծրագրողի դեր, միւս կողմից մեր շրջանի թեմ[ական] իշխանութեան մեջ ունենալով գերակշիռ ձայն ընդհանրապես այդ շրջանում Սիւնիքը իր առաջ բաց է տեսել մեր շրջանի գիրկը սկսած թեմ[ական] իշխանութիւնից մինչև կազմակերպական մարմինները, որը նիւթականից գատ իր բարոյական ոգևորիչ ազդեցութիւնն է ունեցել այդ շրջանի աշխատանքների վրայ այն մտմենտին, երբ նա ամէն կողմից կտրւած էր: Այս գործում մեծ նշանակություն է ունեցել և այն հողը, որ ստեղծված է եղել ժամանակի ընթացքում և քաղաքի յեղափոխական կազմակերպությունների մեջ, որը ըստ ամենայնի բարեկամական էր և նպաստաւոր:

Ապա Կ. Կօմիտէն շարունակ կապ է պահել Շահաստանի⁵ Կ. Կօմիտէի հետ, որը վերջերս լուծւելով պառակտւել է: Մենք ի հարկէ ոչնչով օգտակար չէինք կարող լինել, երբ այնտեղ կար արդէն բիւրոյի լիազօր, որը անզօր եղաւ դրա առաջն առնել և երկրորդ, որ մեր իսկ շրջանում կազմակերպական վիճակը այդ տեսակետից հեռու էր ամուր լինելուց:

Նախքան մեր կազմակերպական ներքին աշխատանքների մասին խօսելը մի քանի խօսքով գծենք մեր շրջանի կուսակցական գործի բնոյթը ընդհանուր գծերով: Մեր կուսակցական աշխատանքները Ատրպատականի շրջանում երկու գլխաւոր ճիւղաւորութիւն է ունեցել. ա) հասարակական-կուլտուրական և բ) յեղափոխական: Դրանցից առաջինը տևական և մնայուն բնոյթ ունի ու կլանում էր մեր աշխատանքների մեծագոյն մասը, իսկ երկրորդը պատահական ու ընդհանուր - ընդհատ է երևան գալիս, որը համեմատաբար անելի փոքր տեղ է բռնում մեր աշխատանքների մեջ: Առաջինը իր մեջ առնում է թեմակ[ան] իշխանութիւնը, դպրոցական, բարեգործական հիմնարկութիւնները, իսկ երկրորդը՝ ժողովրդի ինքնապաշտպանութեան, մեր երկրի յեղափոխական կեանքի և Հայաստանի յեղափոխական գործի շուրջը մեզ բաժին ընկած

⁵ Իրանում Դաշնակցությունն ունեցել է երկու կենտրոնական կոմիտէներ:

աշխատանքներից: Առաջինի վերաբերմամբ մեր և առաելապես մեր մարմինների ջանքերը այն արդիւնքն են տուել, որ անգամ այժմ, երբ մեր կազմակերպութիւնը լիովին վերակազմած չէ, երբ երկու տարուց ի վեր մեր տեղական կազմակերպութեան մէջ տարաձայնութիւնները մեծ չափերի են հասել, երբ մեր կազմակերպութեան ծոցից ինտրիզներ եղան մեր ձեռքում գտնուող հիմնարկութիւնների դէմ, այժմ դարձեալ մեր ձեռքում է գտնուում թեմ[ական] իշխանութիւնը, բոլոր կուլտուրական հիմնարկութիւնները, շնորհիւ այն հանգամանքի, որ մեր կազմակերպութիւնը տարիների ընթացքում կարողացել էր մի այնպիսի լայն համակրանք ստեղծել իր շուրջը, որ մինչև իսկ մեր կուսակցական ճգնաժամերին իսկ նա անմրցակից է մեր իրականութեան մէջ և երկրորդ՝ որ մեր կուսակցութիւնը ամենածանր ժամերին էլ չի լքել ժողովրդին, որ մեր ընկերները անսահման գոհաբերելու կամքով լծել են այդ աշխատանքներին: Այսօր, երբ տնտեսական մի սահաւոր, կարելի է ասել կատաստրոֆիկ վիճակ է ապրում մեր ժողովուրդը ողջ Ատրպատականում, իսկ բոլոր հիմնարկութիւնները կատարեալ սնանկութեան են մատնւած, դարձեալ իրենց գոյութիւնը պահում են մեր կուսակցական ընկերների ջանքերով: Կ. Կօմիտէն լիովին ըմբռնել է այս վիճակը և վստահօրէն տօն տուել պայքարին, որից միշտ էլ մեր կազմակերպութիւնը յաղթանակով է դուրս եկել: Պատգամաւորական ժողովի վերջին ընտրութիւնները եկան մեզ համոզելու որ մեր հակառակորդները շատ անգօր են մեր դէմ պայքարելու գործում: Երկու տարի առաջ պէտք էր մեզ ս...դ համագործակցութեամբ տապալել հակադաշնակց[ական] բլօկը, իսկ այս տարի մենք մենակ էլ հերիք էինք, որպէսզի հակադաշնակցական տարրերը հրապարակից քաշուեն:

Դժուար է այստեղ յիշել թէ ինչպիսի աշխատանքներ են տարւել թեմ[ական] իշխանութեան մէջ, որոնք գուտ տեղական բնոյթ կրելուց գատ ունեցել են և ընդհանուր ազգային խնդիրներ: Գաղթականական, կուլտուրական, ազգային բազմաթիւ գործեր կան այդ հիմնարկութիւնների աշխատանքների հետ կապւած:

Երկրորդի, այսինքն յեղափոխական աշխատանքների վերաբերմամբ դժբախտաբար քիչ բան ունենք ասելու: Ինքնապաշտպանութեան գործում որևէ նոր աշխատանք չի կատարւած, որովհետև որևէ կարիք այս մի տարւայ ընթացքում չի զգացւել: Մեր համագործակցութիւնը ս.դ.-երի հետ մնում է նախկին վիճակում, թէպէտ և ս.դ.-երի մէջ մեծ փոփոխութիւններ են առաջացել, որոնք դրութիւնը այդ խնդրի շուրջը բաւական փափուկ են դարձրել: Ապագայ Կ. Կօմիտէին է մնում այս հարցը աւելի նպատակայարմար եղանակով կարգաւորել: Ստեղծւած քաղաքական վիճակը խանգարեց Կ. Կօմիտէին մինչև այսօր այդ խնդրին որևէ լուծում տալ:

Կ. Կօմիտէի երկրորդ տարեշրջանի սկիզբը զուգադիպում է պարսիկ դեմոկրատ կուսակցութեան կրած պարտութեանը, և մինչ այդ մեր ստեղծած յարաբերութիւնները ընդհատուեցին ու այդպէս ընդհատուած էլ մնում են, շնորհիւ այդ կուսակցութեան շարքերում տիրող տարտամ վիճակի ու պառակտման: Սակայն անհատական հողի վրայ շարունակուում են մեր յարաբերութիւնները քաղաքին յառաջադէմ խմբակցութիւնների հետ և մեր բարոյական աջակցութիւնը չենք խնայել երբ պէտք է եղել: Այդ խմբակցութիւններն են դեմոկրատները, գործաւորները և ընչազուրկները, որոնց համակրանքը դէպի մեր կուսակցութիւնը նրանք չեն թագցնում, սակայն սովորական ծածկամտութիւնն ու երեսպաշտ քաղաքականութիւնը նոյնպէս ձեռքից չեն թողնում:

Շնորհիւ VII շրջ[անային] ժողովի քանդող և ոչինչ չշինող ազդեցութեան Կ. Կօմիտէն այլևս հնարաւորութիւն չունեցաւ ցանկալի հիմքերի վրայ դնել մեր կազմակերպած շրջանների պրոպագանտի գործը: Դաշնակցութեան տան փակման որոշումը տալով շրջ[անային] ժողովը և լուծելով պրոպագանտայի ֆոնտի վարչութիւնը, տեղը ստեղծել մի ֆինանսական մարմին, որի նպատակը թերթի հրատարակութեան դրամականը հայթայթելուց դէնը չպիտի անցնէր և չանցաւ, իսկ Կ. Կօմիտէն զուրկ լինելով դրամական միջոցներից հնարաւորութիւն չունեցաւ վերաբացելու Դաշն[ակցութեան] տունը: Այդպիսով պատահականութիւնների և դժարութիւնների ենթարկուեց պրոպ[ագանտի] գործը, խմբակների աշխատանքները: Մնաց կօմիտէներին ըստ իրենց յարմարութեանց մի կերպ պրոպագանտի գործը առաջ մղել: Յետագայում, երբ քաղաքում կարող ընկերների մի մեծ թիւ էր հաւաքուած, շնորհիւ ստեղծուած շփոթ վիճակի և Կ. Կօմիտէի հետ ստեղծուած անակնկալ բազմապիսի զբաղմունքների մինչև այսօր էլ պրոպագանտայի գործը լուրջ հիմունքներով ու որոշ սիստեմով կազմակերպելու ցանկութիւնը մնաց լոկ ցանկութիւն: Այժմ, երբ արդէն տարագիր ընկերների վերակազմութիւնը շատ աւելի են դարձնում կուսակցական ներքին կեանքը և Կ. Կօմիտէից վերցնում են որոշ աշխատանքներ, ամենալաւ առիթն է պրոպագանտայի գործը ցանկալի հիմունքների վրայ դնելու:

Հայաստանի հետ ունեցած մեր կապերի թուլութեան մասին (չպիտի կարողանայինք ճշգրիտ գաղափար կազմել իր տեղում յիշեցինք: Պարզ է, որ այդպիսի հանգամանքներում մենք չպիտի կարողանայինք ճշգրիտ գաղափար ունենալ թէ Հայաստանի քաղաքական և թէ մասնաւորապէս կուսակցական կեանքի, յուզող հարցերի, այդ հարցերի ստացած լուծման մասին: Մեր ծանօթութիւնները հիմնուում էին արտասահմանեան ամիսներով ուշացած թերթերի անկատար տեղեկութիւնների և միտումնաւոր ու կցկտուր լուրերի վրայ, որոնց վրայ յենել և լուրջ

Եզրակացություններ անել անկարող էր մի պաշտօնական մարմին և այդպիսի եզրակացություններով ղեկավարել իր շրջանի կազմակերպությունը, այնպիսի փափուկ հանգամանքներում, երբ հասկացողությունների, կուսակցական ըմբռնումների մի քառու էր ստեղծված, իսկ քննադատությունների մի անպատասխանատու ձև, ուր դժար էր որոշել սահմանը թե որտեղ է վերջանում կուսակցական սրտացալությունը և որտեղից է սկսում անհատական կիրքը կամ վատ նպատակը: Այդ էր պատճառը, որ Կ. Կօմիտեն զգուշանում էր շրջաբերականներով կամ ժողովներով քննութեան առնել Հայաստանին վերաբերեալ քաղաքական ու կուսակցական հարցերը մեր կազմակերպւած շրջաններում և բաւականանում էր այս կամ այն առթիւ մեզ մօտ եկած ընկերների զեկուցումներով:

Ինչքան անակնկալ էր մեզ համար փետրւարեան յեղաշրջումը, կրկնակի անակնկալ եղաւ մի քանի շաբաթ յետոյ կատարւած նահանջը, որի վերաբերմամբ առաջին հերթին քաղաք հասնող ընկերների զեկուցումներն ու տւած տեղեկությունները այնուամենայնիւ յուսահատական չէին: Առաւել ևս սրտապնդիչ էր Հայաստանի Կօմիտէի հաղորդած տեղեկությունները դրութեան մասին: Մայիսի 1-ի գրութեամբ: Մակայն կուսակցական շարքերում գոյութիւն ունէին ստեղծւած դրութեան հանդէպ խոշոր տարաձայնություններ, դատելով պաշտօնական և անպաշտօն կերպով կատարւած մտքերի փոխանակութիւնից, որը տեղի էր ունենում մեր և տարագիր ընկերների ղեկավար շրջաններում:

Մեզ մօտ ինքնաբերաբար առաջանում է կուսակցական մի կոնֆերանս ունենալու և մոմենտի⁶ հանդէպ մի ընդհանուր տեսակետ մշակելու անհրաժեշտութիւնը: Այնինչ ամէն օր անվերջ շարքերով քաղաք են հասնում տարագիր ընկերներ: Եւ ոչ ոք չգիտէր թէ մինչև երբ շարունակէր այդ գաղթը, էլի՞ քանի հոգի պիտի գային: Մեզ անակնկալ այդ խուճապը, հայկական թաղերի նեղւածքը, մեր դրամական տագնապը, ընկերների մէջ գոյութիւն ունեցող հակադիր ըմբռնումները մի իսկական շփոթ առաջացրին նաև մեր մէջ: Մինչ մի կողմից կոչւած էինք զգում մեզ, որպէս շրջանի բարձր մարմին, որոշ կուսակցական կարգ, ընկերական աջակցութիւն և որ գլխաւորն է ղեկավարող դեր ստանձնելու, այս շփոթի ու անձանօթութեան մէջ անզօր զգացինք մեզ, որոշելով մի պահ թողնել, որ դէպքերը իրենց ընթացքով գնան:

Մենք ենթադրում էինք, որ տարագիրների շարքերում տիրող զգայնութեան մեծագոյն մասը առաջանում էր նիւթական պայմանների

⁶ Հայերենում՝ պահ:

աղութինից և այն անտանելի կացութիւնից, որի մէջ ապրում էին ընկերների 99%-ը: Այս առթիւ խորհրդակցելով ընկեր Վրացեանի⁷ հետ և պարզելով, որ եղած օգնութիւնը մեր քաղաքի պայմաններում խիստ անբաւարար է, նա խոստացաւ Կ. Կօմիտէի տրամադրութեան տակ դնել որոշ գումար տարագիր ընկերներին օգնելու: Յետագայում նա դրեց մեր տրամադրութեան տակ այդ գումարը, որի մեծ մասը բաժանւեց ընկերներին, տարագիր ընկերներից կազմած մի յանձնախմբի կազմած ցուցակի համաձայն չնչին միանուագ դրամ վճարելով, իսկ յետոյ էլ Հայաստ[անեան] Կօմիտէի անդամների տւած յանձնարարականների համաձայն:

Այսպէս խառն վիճակի մէջ էր մեր շրջանը, երբ ստացանք Լեռնահայաստանից Հայաստ[անեան] Կօմիտէի հրաւերը մասնակցելու Յուլիս 5-ին Գորիսում կայանալիք կոնֆերանսին, որտեղ պէտք է տրւէին հետևեալ խնդիրները. 1) Հայաստանի նախկին Կօմիտէի զեկուցումն ու հաշուետւութիւնը, 2) նոյնը ներկայ Կօմիտէի, 3) կառավարութեան զեկուցումը, 4) քաղաքական մոմէնտը, 5) կուսակցական կազմակերպչական խնդիրներ, 6) ընթացիկ հարցեր: Մեր շրջանին տրւած էր 3 ձայն և յանձնարարւած էր տարագիր ընկերների պատգամաւորների ընտրութեան գործը կազմակերպել: Կ. Կօմիտէն այդ առթիւ պէտք եղածը առաւ, սակայն քաղաքական վիճակի նոր դասաւորութիւնները, այն է սկսւած կռիւներն ու դրանց հետևող մեր պարտութիւններն ու նահանջը Լեռնահայաստանից խանգարեցին կոնֆերանսին երբ արդէն Լեռնահայաստանի կռիւն էլ լիկվիդացիայի ենթարկւեց և մեր բոլոր ընկերները հաւաքւեցին Թաւրիզ, կարիք զգացւեց կուսակցական կարգն ու իրաւասութիւնները ճշտելու և որոշ հարցերի վերաբերմամբ եթէ ոչ պաշտօնական, գէթ անպաշտօն կերպով մի ընդհանուր մտածելակերպ մշակելու: Հայաստանի Կօմիտէն հրաւիրեց Կ. Կօմիտէին կառավար[ական] և կուսակց[ական] մարմինների անդամներին, բիրոյի և մի քանի այլ ընկնող ընկերների ոչ բազմամարդ մի ժողով, և մի շարք նիստերում որոշւեց լուծած համարել տարագիր կամ բարձր մարմինները և շրջանում միակ օրինաւոր մարմինը ճանաչել Ատրպ[ատականի] Կ. Կօմիտէն: Վերակազմել տարագիր շարքերը, կառավարութիւնը լիկվիտացիայի ենթարկել իր գործերը և այլն: Խորհրդակցութեան տրւեցին նաև վերադարձի մոմէնտի հարցերը և որոշ ձևակերպութիւն ստացան:

⁷ Միմոն Վրացյան:

Այդ շրջանում էր, որ ստացանք Բուխարեստի կոնֆերանսի որոշումները⁸, սակայն այդ որոշումների մասին ոչինչ չի յայտնված մեր շարքերում այն պատճառով, որ պատասխանատու մարմնի հրահանգի համաձայն այդ որոշումները յայտնված էր Կ. Կոմիտեին ի գիտություն, որը չպիտի յայտարարեր այլ միայն ի նկատի առնելին պիտի Կ. Կոմիտեի գործունեության պրոպագանդի և այլ աշխատանքների ընթացքում, որպես ուղեցոյց այնտեղ արժարժուած հարցերի նկատմամբ:

Տարագիր ընկերների վերակազմության խոստովանելով մեր լիակատար անձանօթությունը: Թողենք այդ բիրոյի ներկայացուցչին, որի վաերացումով կազմակերպւած են 25 խմբեր, բաժանւած չորս ենթակոմիտեիներին, որ կազմում էր մի կոմիտեի մօտ 300 անդամներով: Արդէն ընտրւած են բոլոր մարմինները այդ կազմակերպութեան մէջ Շրջ[անային] ժողովի նախօրեակին և կցւած են կոմիտեիներին:

Այսպիսով մեր Կ. Կոմիտեի շրջանը ունենում է 3 կոմիտեիներին. 1) Վրէժի - 16 խումբ 200 անդամներով, 2) Մինարէթի - 14 խումբ 130 անդամներով և 3) 15 խումբ 300 անդամներով: Չկազմակերպւած վիճակում մնում են Ուրմիայի (կուլտուրան) Ղարատաղ (ածխահանք) և Մարաղայի շրջանները: Դատական ատենախնայի քննութիւններից ու որոշումներից յետոյ և նոր Կ. Կոմիտեի ընտրութեամբ թոււմ է թէ վերացած է այդ շրջանները վերակազմելու խոչընդոտները և առաջիկայում այդ շրջանների վերակազմութիւնը դնել կազմակերպական հարցերի առաջին հերթին:

Այժմ մի քանի խօսք Կ. Կոմիտեի նիւթական վիճակի մասին: Մեր կազմակերպւած շրջանները դրամական մուտքեր չեն տւել Կ. Կոմիտեին, բացառութեամբ Վրէժի շրջանի, որի տւածը ինչպէս հաշիւներում կը տեսնէք, շատ չնչին է համեմատւած այն կարիքներին, որ զգացել է Կ. Կոմիտեն, որն էլ աշխատանքի կամ գործի ձեռնարկելու համար: Կ. Կոմիտեի գոյութիւնը և ընդհանրապէս մեր շրջանի կազմակերպութիւնը պահել է խօսքի և այն հմայքի զօրութեամբ, որ ունի դաշնակցութիւնը մեր մասսաների ու կազմակերպւած ընկերների շարքերում: Ամենից աւելի Կ. Կոմիտեն է զգացել թէ որքան անդամալուծող ազդեցութիւն ունի մեր կազմակերպութեան համար նիւթական միջոցների բացակայութիւնը:

⁸ Բուխարեստի կոնֆերանսը գումարվել է 1921թ. ապրիլի 7-25-ը: Կոնֆերանսի ժամանակ քննարկվել է ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովին հաջորդած շրջանում կուսակցության ծավալած գործունեությունը և որոշումներ կայացվել տարբեր հարցերի կապակցությամբ:

Աշխատանքների մի մասը տարել են այս ու այն կողմից ստացած դրամներով, որոնց վերաբերմամբ Կ. Կոմիտեն չէր կարող լիազորություններ ունենալ և պարտաւոր էր գործադրել որոշւածը:

Մեր դիմումները հարևան (Մեր կուսակցական) կազմակերպութիւններին, որոնց վիճակը համեմատաբար լաւ էր, մնացել են անհետևանք: Ամերիկայի և Փարիզի դիմումները նոյնպէս արդիւնք չեն տւել: Այսպիսի պայմաններում մեզ մնում էր ամփոփուել մեր մէջ և բաւականանալ ունեցած չնչին միջոցներով, որոնք գրասենեակային պետքերին անգամ բաւարարել չեն կարող, եթէ Կ. Կոմիտեն ցանկանար մի քիչ աւելի լայն ու արագ հաղորդակցութեան միջոցներից օգտուել (Տես մեր հաշւեկշիռը):

Կ. Կոմիտէին 1920թ. Յունիս 1-ից մինչև 1921թ. նոյ[եմբեր]. 1 հաշւեկշիռը հետևեալ պատկերն է ներկայացնում.

Սալտօ - 57-60	Այգ շաբաթաթերթից 834
Վրէժի կօմ. 750	Պոստ, հեռագիր 88-40
Տեղ. բիւրոյից - 153-25	Դաշն.տան. ցիկլից 46-20
Ընկ. Վրացեանից 100-	Տեղ. բիւրոյին 700-
	Ապահով կօմ - 25-40
	Գրասեն. ծախս - 77%
	1271-90
Գումար 1060-85	1271-90
Պարտք <u>211-05</u>	

Հ. Յ. Դ. Ատրպ[ատականի] Կ. Կոմիտէի
Անդամներ

Միեր Ղազարյան

Տեղեկագիր

**Հ. Յ. Դաշակց[ութեան]. Ատրպատականի Կենտրոն[ական] Կոմիտէի
1920 Մայիսից - 1921 Նոյեմբեր
(ներկայացրած VIII Շրջանային Ժողովին)**

Ամփոփում

Ներկայացված արխիվային բացառիկ փաստաթուղթը որոշ չափով լույս սփռեց Իրանի Ատրպատականի շրջանում Հայ Հեղափոխական Դաշնակցության և հայ գաղթականության շրջանում տիրող իրավիճակի վրա: Արձանագրենք, որ եղել են պատմական ծանր օրեր, վիճակը

անելանելի է եղել նաև Հայաստանում, ինչն էլ կրկնակի վատթարացրել է իրավիճակը: Այդ սուղ պայմաններում, սակայն, ՀՅԴ կառույցները փորձել են անել հնարավորն ու անհնարինը գաղութահայության համար: Ցավոք, սակայն, պետք է նշենք, որ չի եղել միասնականություն այդ քառսային ժամանակաշրջանում: Տարաձայնություններ եղել են թե՛ գաղթականության շրջանում, թե՛ կուսակցական մարմինների ներսում և համայնքում առհասարակ, ինչ էլ իր բացասական ազդեցությունն է ունեցել: Բայց, այնուամենայնիվ, այդ դժվարին օրերին կատարված աշխատանքը ուշացնել չի տվել իր արդյունքները, և հայությունը Իրանում կարողացել է համախմբվել և դառնալ հզոր միավոր:

Мгер Казарян

Информационный бюллетень:

А. Р. Дашнакцтյун. Атрпатакан Центральный Комитет

1920 май - 1921 ноябрь.

(представлен VIII Региональной ассамблее)

Резюме

Представленный эксклюзивный архивный документ пролил свет на положение Армянской революционной федерации и армянской диаспоры в Атрпатаканском районе Ирана. Скажем, были тяжелые исторические дни, безвыходная ситуация и в Армении, что удвоило ситуацию. Однако в этих узких условиях структуры АРФД пытались сделать для армянской общины все возможное и невозможное. К сожалению, приходится констатировать, что в тот хаотический период единства не было. Были разногласия как в период миграции, так и внутри партийных органов, в обществе в целом, что оказало негативное влияние. Однако работа, проделанная в те тяжелые дни, не отсрочила ее результаты, армяне Ирана смогли объединиться и стать мощной единицей.

Bulletin

A. R. Dashnakutyun. Atrpatakan Central Committee

1920 ay - 1921 November.

(presented to the VIII Regional Assembly)

Summary

The presented exclusive archival document shed light on the situation of the Armenian Revolutionary Federation and the Armenian Diaspora in the Atrpatakan region of Iran. For example, there were difficult historical days, a desperate situation in Armenia, which doubled the situation. However, in these narrow conditions, the structures of the ARF tried to do everything possible and impossible for the Armenian community. Unfortunately, we have to admit that there was no unity in that chaotic period. There were disagreements both during the migration period and within party bodies, in society as a whole, which had a negative impact. However, the work done in those difficult days did not delay its results, the Armenians of Iran were able to unite and become a powerful unit.

Խմբագրություն է ուղարկվել 10. 03. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 25. 03. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

**ՏԻՐԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑՈՒ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Տիրան Արշակունի, Հուսիկ կաթողիկոս, Մեծ Հայքի թագավորություն, եկեղեցի, փոխհարաբերություններ, կրոն, հավատ, պայքար, Սասանյան Պարսկաստան, Հռոմեական կայսրություն, կողմնորոշում, կենտրոնախույս ձգտումներ, պետական իշխանություն:

Ключевые слова и выражения: Тиран Аршакуни, Католикос Хусик, Королевство Великой Армении, церковь, отношения, религия, вера, борьба, Сасанидская Персия, Римская империя, ориентация, центробежные устремления, государственная власть.

Keywords and expressions: Tiran Arshakuni, Catholicos Husik, Kingdom of Greater Armenia, church, relations, religion, faith, struggle, Sasanian Persia, Roman Empire, orientation, centrifugal aspirations, state power.

Տիրան արքայի կերպարը Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության պատմության մեջ պետք է վերջնականապես հիմնավորվի որպես անկախ պետականության համար աննկուն պայքար տանող անձի կերպար, քանի որ Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագրի (298) ժամկետի լրանալուց հետո անկտրում պայքար էր տանում թե՛ պարսկա – հռոմեական դավադրությունների, որոնք միտված էին թագավորության վերացման կամ բաժանման և թե՛ ներքին պառակտիչ կամ քայքայիչ նկրտումների դեմ: Ավատատիրական հարաբերությունների զարգացմամբ և այլ քաղաքական գործոններով պայմանավորված խիստ ուժեղացել էին կենտրոնախույս ուժերը, որոնց ժամանակավորապես կարողացել էր չեզոքացնել նրա հայրը՝ Խոսրով Կոդակը՝ վերացնելով մասնավորապես Մանավազյանների և Որդունիների նախարարական տները և նրանց հողերը գրավելով հարքունիս, բայց այդ ուժերը տակավին ժամանակ առ ժամանակ ակտիվանում էին, որոնց արդյունքում նաև ընկավ Արշակունյաց թագավորությունը: Տիրանին, ինչպես և նրա հաջորդներ Արշակին, Պապին և Վարազդատին կարելի է բնորոշել հերոսական, բայց ողբերգական կերպարներ, քանի որ նրանց աննկուն ջանքերը բախվում էին երկու՝ ներքին և արտաքին ուժերի, որոնք կտրելով նրանց թևերը՝ կործանման տարան

Մեծ Հայքի թագավորությունը, ի վերջո թողնելով նրանց պետականության ամրապանդման միտված խելացի քայլերն անկատար կամ կիսակատար: Տիրան արքայի (մոտավորապես 339 – 350թթ.) գործունեության մասին այնքան էլ սիրով չեն արտահայտվել հայ պատմիչները, ավելին՝ նույնիսկ թշնամանքով, քանի որ ներքին կայունություն ստեղծելու համար նա պայքարի սլաքներն ուղղեց նաև հայոց եկեղեցու դեմ, որը դեռևս չէր ամրապնդվել հայոց հոգիներում լիարժեքորեն և որը, սակայն, արդեն հավակնում էր վերածվելու ներքին հզոր մի ուժի, որն իշխելու հակումներ էր դրսևորում ի վնաս արքայի: Իսկ հետո արդեն իր հետևից տանել էր փորձելու շատ նախարարների: Մա, անշուշտ, հասկացավ Տիրանը, հասկացավ նաև, որ քրիստոնեության՝ որպես պետական կրոն ընդունումը ուղիղ համեմատական չէր ազգովի ընդունմանը և փորձեց փաստորեն գնալ այն ճանապարհով, որով գնալ էր ցանկանում ժողովուրդը, որը տակավին թաքուն պաշտում էր իր հին աստվածներին, պահել էր ցանկանում իր դարավոր հավատը և չէր համակերպվում նոր կրոնական պաշտամունքին: Այսինքն՝ Տիրանը հասկացավ երկու կարևոր հանգամանք՝ ա. եկեղեցին դառնում է կենտրոնաձիգ կառավարմանը խոչընդոտող հզոր ուժ, բ. որ պետության ամրապնդման գաղափարական հիմքում դարեր շարունակ ընկած հեթանոսական կրոնը արհեստականորեն փոխարինել էին փորձում մի կրոնով, որն իր ժողովրդին չէր և ոչ էլ տվյալ ժամանակահատվածում ընկալելի էր, քանի որ բռնությամբ նրա տարածման փորձն ամենևին չէր ենթադրում համահայկական կրոնի վերածում, որի համար սուկ սուրը և սպանելու վախը բավարար չէր, անհրաժեշտ էր քարոզչություն, **անհրաժեշտ էր նոր դպրոց, որը պետք է լիներ նոր գաղափարախոսության դարբնոցը և որը հետո ստեղծեց Մեսրոպ Մաշտոցը:**

Որ իրոք այսպես էր՝ վկայում են որոշ առումով եթե ոչ միամիտ, ապա իրենց կրոնական ղեկավարներից դատափետելու մղված պատմիչները, որոնց վկայությունների խորքային քննությունը բերում է այն համոզմունքին, որ իրոք Տիրանի օրոք այս գաղափարախոսությունն արմատացած չէր և ավելին՝ նա պատմական պահի ճիշտ ընկալմամբ գործող չափազանց խելացի պետական այր էր: Լիովին ճիշտ է Լեոն, գրելով հետևյալը՝ «Տիրանը Խոսրով Կոտակի որդին էր, և նրա հետ միաժամանակ կաթողիկոսական գահն էր բարձրանում Վրթանեսի որդի Հուսիկը, որ դեռ չէր դուրս եկել երիտասարդական հասակից: Այս երկու անձինք էլ դառնում են ներկայացուցիչներ այն հակամարտ հոսանքների, որոնց մրցությունը

վճռական ազդեցություն ունեցավ Հայաստանի քաղաքական ճակատագրի վրա»¹:

Բայց, կարծում ենք, ճիշտ է ոչ այն առումով, որ նրանցից ամեն մեկը ներկայացնում էր հռոմեասերների և պարսկասերների կուսակցությունը, որի և Տիրան – Հուսիկ հակասությունների այլ, թերևս անձնական պատճառները, տալիս է այնուհետև²:

Այս շրջանում Պարսկաստանի և Հռոմի միջև քաղաքական կողմնորոշման ընտրությունը՝ պայմանավորված ընդհանուր կրոն ունենալու հիմքով, դեռևս ընթացք չէր ստանում: Պատճառները միանգամայն այլ էին՝ թերևս Տիրանի անձնական հակակրանքն իր նախկին փեսայի՝ Հուսիկի նկատմամբ և արդեն առկա արտաքին վտանգը: Չի կարելի համաձայնվել Լեոյի այն տեսակետի հետ, որ նա հակված էր դեպի Սասանյան Պարսկաստանի հետ հարաբերությունների նորմալացումը: նա մասնավորապես հետևյալն է գրում. «Տիրանը, բյուզանդացիների թուլության պատճառով մենակ մնալով այդ ուժեղ քաղաքականության առջև (Շապուհի՝ Հայաստանն իր տերության ազդեցության տակ առնելու կամ նրան կցելու – Ա. Ն.), թեքվեց, ինչպես բնական էր մի թույլ ու տկար տիրապետողի համար, դեպի ուժեղի, դեպի Շապուհի կողմը: Իսկ այդ հանգամանքն անխուսափելիորեն պիտի ծառայեր նրա դեմ հայ կազմակերպված եկեղեցականությունը: Հուսիկ կաթողիկոսը, որին Փավստոսը շարունակ անվանում է «մանուկ», երիտասարդական ավյուրով պայքարեց նրա դեմ»³:

Տիրանն այնքան էլ «թույլ և տկար տիրապետող» չէր: Ընդհակառակը, երբ խորությամբ ուսումնասիրում ենք նրա քաղաքական գործունեությունը, համոզվում ենք, որ նա բավականին ուժեղ և ճկուն դեմք էր, քանի որ խուսանավում է Պարսկաստանի և Հռոմի միջև: Մինչև այդ, հարկ ենք համարում մատնանշել, որ Տիրանի – Հուսիկ հակասություններին անդրադառնալիս պատմահայրը գրում է, որ Տիրանը, որը պարսիկների դեմ պատերազմում ընդառաջել էր Հուլիանոսին (այս առիթով այնքան էլ էական չի նրա այն սխալը, որ վերջինս թագավորել է Տիրանի ժամանակ) և Միջագետքում պարտության էր մատնել նրանց, վերջինիցս ստանում է «տախտակի վրա նկարված իր պատկերը»՝ դների հետ և հրամայում է կանգնեցնել եկեղեցում: Տիրանը հասնելով Օռփից գավառը ցանկանում է այն դնել իր արքունիքի եկեղեցում: Այնուհետև Խորենացին գրում է. «Սուրբ Հուսիկը պատկերը հափշտակեց թագավորի ձեռքից, գետին գցեց և ոտով

¹ Լեո, Երկերի ժողովածու, Առաջին հատոր, Երևան, 1966, էջ 437:

² Տես նույն տեղում, էջ 437 – 440:

³ Նույն տեղում, էջ 438:

տրորեց ու մանրեց՝ հասկացնելով թագավորին քանի խորամանկությունը», այսինքն այն, որ դևերի հետ իր պատկերը դնելով, Հուլիանոսը նպաստում էր նրանց պաշտամունքին⁴: Մրանից հետո Տիրանը սպանել է տալիս Հուսիկին:

Այսպիսով, ստացվում է, որ, իրոք, Տիրանը պարսկամետ քաղաքականություն չի վարել և Հուսիկն էլ չի եղել հռոմեասեր, ինչպես պնդում է Լեոն, քանի որ հռոմեասեր Հուսիկը վերոհիշյալ արարքների համար չէր ընդդիմանա Տիրանին: Անկախ այն համզամանքից, թե այս պատմությունն իրոք եղել է, թե ոչ, Տիրանի պայքարն հիմնականում Շապուհի դեմ էր, որն ինքնին հիմք է տալիս եզրակացնելու, որ եթե խոսք է գնում հռոմեասեր լինելու մասին, ապա՝ դա ավելի շատ կարելի է վերագրել նրան, քան թե Հուսիսկին, իսկ պայքարը նրանց միջև պայմանավորված էր միայն ու միայն Տիրանի կողմից ներքին ճակատը ամրացնելու ցանկությամբ, որը տվյալ իրավիճակում ամուր չէր կրոնական գաղափարախոսության ոչ միանշանակ ընդունվելով պայմանավորված: Հուսիկն, անշուշտ, ունեցել է քաղաքական լուրջ նպատակներ, որոնց հետևում չէին կարող կանգնած չլինել որոշ նախարարներ, որը հաստատում է նաև Հ. Մանանդյանը: Մինչև դրան անդրադառնալը հարկ ենք համարում շեշտել, որ Տիրանը վարել է սեփական ուժերին ապավինելու քաղաքականություն, որի իրականացման մեջ նրան մեծապես օգնել է Հայր Մարդպետը, որի վրա նույն Մանանդյանի արտահայտությամբ «շանթ ու թույն է թափում» Փավստոսը: «Բայց այս անմիտ թագավորության ժամանակ, - գրում է նա, - թչ միայն թշնամիները թշնամիներին, այլ նաև բարեկամները բարեկամներին, ընկերները ընկերներին դավաճանում ու մատնում էին հայոց աշխարհում և տեսակ – տեսակ թշնամություններ էին անում միմյանց նկատմամբ: ... Բայց բոլորից գերազանցում էր մի անօրեն, սատանյաբարո մարդ, որ Տիրան թագավորին գրգռում էր մանավանդ նախարարական տոհմերի դեմ, այսինք՝ մեծ մարդպետության պատիվը կրող ներքինին, մի չարասիրտ, չարամիտ, չարագործ մարդ, որին Հայր էին ասում»⁵: Ըստ Փավստոսի Հայր Մարդպետը շատ նախարարների է կոտորել տալիս, մասնավորապես Ռշտունյաց և Արծունյաց տոհմերը սրի են քաշվում, որոնցից փրկվում են միայն երկուսը՝ Տաճատը և Շավասպը: Առհասարակ Հայր Մարդպետի կերպարը հայ պատմիչների ձեռամբ միշտ խեղաթյուրվել է, բայց իրականում նրանք եղել են պետականասեր և թագավորասեր, կենտրոնաձիգ կառավարման կողմնակից անձինք, չնչին

⁴ Մովսես Խորենացի Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 249 – 250:

⁵ Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 103:

բացառություններով, որով էլ պայմանավորված է եղել այս քաղաքականությունը: Տիրանը վերջինիս հետ վարել է ամուր պետության ստեղծմանը միտված քաղաքականություն, որի հակադիր կողմում են կանգնած եղել այս տոհմերի ներկայացուցիչները և, նաև, հաճախ Մամիկոնյանները: Պատահական չէ, որ նրանք հեռանում են քաղաքական ասպարեզից և փակվում Տայքում, իրենց Երախանի տոհմական նստավայրում⁶: Հակաթագավորական ուժերի շարքերը, անվարան կարելի է պնդել, համարել է նաև Հուսիկը, թերևս անձնական պատճառներից ելնելով: Հարկավ, մյուս շարժառիթը հին հեթանոսական հավատի պաշտամունքը Տիրանի կողմից չարգելելն էր, որը տվյալ իրավիճակում չէր կարող չունենալ քաղաքական դրական հետևանքներ և ժողովրդի մեծամասնությանն իր կողմը գրավելու և՛ կաթողիկոսին իրեն ենթարկեցնելու և՛ Պարսկաստանին սիրաշահելու առումներով: Հղում անելով Մարկվարտին, Հ. Մանանդյանը հետևյալն է գրում, որի հետ լիովին կարելի է համաձայնվել. «Արծրունիների ու Ռշտունիների տոհմերի բնաջնջումը, որ նկարագրված է Փավստոսի վկայության մեջ, Մարկվարտը բացատրում է նրանով, որ նախարարական այդ տոհմերի երկրները, գտնվելով Ատրպատականի, Ադիաբենի և Մոկքի սահմանների մոտ, ունեին ռազմական մեծ կարևորություն, ուստի և այդ շրջաններն անհրաժեշտ էր ենթարկել Արշակունիների անմիջական ազդեցության»⁷:

Մարդպետները «Նպատակ էին դրել իրենց վերականգնել Արշակունիների թագավորության հին փայլը և թուլացնել բարձր ազնվականության և եկեղեցու ուժը»⁸:

Իրոք այդպես էր և դրանով միայն պետք է բացատրել Տիրան – Հուսիկ հակասության խորքային պատճառները:

Առկա փաստերի վերլուծությունն այն եզրակացությանն է բերում, որ կենտրոնախույս ձգտումների դեմ պայքարում Տիրանը հաղթում է: Դրա վկայությունն է վերոշարադրյալը նախարարական տների վերացման և Մամիկոնյանների մեկուսացման մասին: Իսկ Հուսիկին մեջտեղից հանելու առիթը, ըստ պատմիչների, չի ուշանում: Փավստոսի տեղեկություններն այդ մասին, չնայած դրանց հաջորդած անընդունելի եզրակացություններին, անփոխարինելի են: Նախ, այն պատճառների մասին, որոնք ըստ նրա, ստիպում են Հուսիսկին նախատելու թագավորին և արգելելու մտնել եկեղեցի: «Իսկ Տիրան թագավորը և մյուս ավագ նախարարներն ու ամբողջ

⁶ Հայ ժողովրդի պատմություն, հատոր II, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, էջ 86:

⁷ Հակոբ Մանանդյան, Երկեր, Բ, Երևան, 1978, էջ 160:

⁸ Նույն տեղում:

երկիրը, - գրում է նա- չէին վարվում Աստծու կամքով, խելացի կյանք վարելով: Մանավանդ թագավորն ու իշխանները առավելապես անխտիր սպանություններ էին գործում, զուր տեղը անմեղ արյուն թափում և ուրիշ շատ մեղքեր էին գործում: Նրանք ուշք չէին դարձնում տիրոջ հրամաններին, չնայած որ (Հուսիկը) անդադար խրատում էր նրանց և հիշեցնում Աստծու պատվիրանները»⁹:

Բայց մենք արդեն անդրադարձանք այդ սպանությունների բուն պատճառներին: Իսկ հավատից կամ Աստծու պատվիրաններից շեղվելու պատճառաբանություններն արհեստական են, որոնցով պատմիչն ուզում է սքողել Հուսիկի հակապետական արարքները: Տիրանն ինքը քրիստոնյա թագավոր էր, այցելում էր եկեղեցի և միայն չէր արգելում այլոց դավանել այն աստծուն, որն իրենց համար ընդունելի էր: Իսկ դա օրինաչափ էր և ճիշտ, քանի որ ժողովրդի մեծամասնությունը գաղափար անգամ չունեի քրիստոնեական վարդապետությունից: Այդ հաստատում է նույն Փավստոսը, ակամա գրելով հետևյալը. «Այն ժամանակ մարդիկ իրենց համար չար օրինակ վերցրին թագավորին, նրա պես սկսեցին վարվել, նրա պես գործել: Որովհետև վաղուց ի վեր, երբ նրանք քրիստոնյա անունն ստացան՝ այդ (կրոնը) հանձն առան հարկադրաբար՝ իբրև մի մարդկային մոլորություն, առանց ջերմեռանդ հավատի: (Կրոնն ընդունեցին) ոչ գիտակցաբար, հույսով ու հավատով, ինչպես որ հարկն էր: Միայն քչերը, որոնք փոքրիշատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտության, մասամբ հասկանում էին այդ (կրոնը): Իսկ որոնք գրագիտության արվեստից զուրկ էին, այսինքն ժողովրդի՝ նախարարների ու շինականների խառնիճադանճ բազմությունը – եթե ուսուցիչները նստելով գիշեր – ցերեկ ամպերի նման ուսումը ինչպես հորդ անձրև նրանց վրա հոսեցնեին, նրանցից ոչ մեկը ոչ մի խոսք , ոչ կես խոսք, ոչ մի բան, ոչ մի նշույլ իրենց լսածներից չէին կարող մտքում պահել կամ հասկանալ: ...Նրանք սիրում էին իրենց երգերը, առասպելները, վիպասանությունները, նրանց հանդեպ փութեռանդ էին, նրանց հավատում էին, նրանց մեջ հարատևում»¹⁰:

Եզրակացությունը մեկն է՝ **հայ ժողովուրդը մեծամասամբ մնում էր հին հավատին, չէր հասկանում նոր կրոնը, որի համար նաև բացակայում էին անհրաժեշտ ուսուցիչները և այս պարագայում միանգամայն ճիշտ քաղաքականություն էր որդեգրել Տիրանը:** Այսինքն՝ նա ժողովրդի հավատին նրբորեն էր վերաբերվում, որը նաև պետության ամուր պահելու կարևոր կովաններից էր: Ասվածի հետևախորքի վրա միանգամայնորեն

⁹ Փավստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 89:

¹⁰ Նույն տեղում, էջ 91:

օրինաչափ էր Հուսիկի փոխարեն իրեն հավատարիմ կրոնապետ տեսնելը, որը կգործեր իր ծրագրերի համապատասխան: Արդեն ծայրահեղորեն լարված հակասությունը պետք է հանգեցներ ողբերգական ավարտին: Արքային եկեղեցի մտնել արգելած Հուսիկը բրածեծ արվեց և մեռավ՝ թաղվելով Դարանաղյաց գավառի Թորդան գյուղում: Խեղդամահ արվեց նաև Դանիել ասորին, որը համարձակվել էր Հուսիկին հետևելով քննադատել արքային: Կաթողիկոս է կարգվում նախ՝ Փառեն Աշտիշատցին, ապա, վերջինիս մահից հետո Շահակը՝ Աղբիանոսների տոհմից, որոնք հլու – հնազանդ էին արքայի որոշումներին և չէին հակադրվում նրան: Ըստ մեզ՝ նրանք ճիշտ էին, քանի որ արտաքին ահագնացող վտանգի պայմաններում չափազանց կարևոր էր թագավորի շուրջ համախմբվելը: Փաստորեն, կարելի է պնդել, որ Տիրանը կարողանում է վերջ տալ կենտրոնախույս ձգտումներին և չեզոքացնել դրանք: Բայց, ցավոք, արտաքին ուժերը հասնում են նրա կործանմանը: 350թ. նա կուրացվում է Շապուհի կողմից, ապա՝ Հռոմի պահանջով ազատ է արձակվում, այնուհետև հեռու քաշվելով պետական գործերից: Այս մանրամասների մեջ խորանալը մեր ուսումնասիրության նպատակից դուրս է: Վերոշարադրյալից գլխավոր եզրակացություններն են.

Առաջին. Տիրան արքան հանդիսացել է Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության անկախության ամրապնդման համար պայքարող ուժեղ և խելացի գործիչ և նրան սովերեյնու պատմիչների ձգտումները չեն հիմնավորում և հակասական են:

Երկրորդ. Նրա և եկեղեցու փոխհարաբերությունները սրվել են այն պատճառով, որ հասկանալով իր ժողովրդի համար քրիստոնեական վարդապետության տակավին ոչ ընդհանրության հասած լինելու հանգամանքը, չի արգելել հին դավանանքը, դարձյալ ելնելով պետության ամրապնդման շահերից:

Երրորդ. Նրա և Հուսիկ կաթողիկոսի միջև հակասությունը պայմանավորված է եղել վերջինիս կենտրոնախույս ձգտումների առկայությամբ և կապով այն նախարարների հետ, որոնք ունեցել են նույն ձգտումները:

Չորրորդ. Հուսիկի սպանությունը եկեղեցուն պետական իշխանության ենթարկեցնելու հիմքով պայմանավորված գործողություն էր, որում, թերևս, առաջին մեղավորը հենց ինքն էր:

Արշակ Ներսիսյան

**Տիրան Արշակունու և հայոց եկեղեցու փոխհարաբերությունների
քննական վերլուծություն
Ամփոփում**

Տիրան Արշակունի թագավորի օրոք սրվում են հարաբերությունները պետական և հոգևոր իշխանությունների միջև: Հուսիկ կաթողիկոսը չի հանդուրժում թագավորի քաղաքականությունը, որը չէր արգելում ժողովրդին հետևելու հին, հեթանոսական հավատալիքներին: Թագավոր – եկեղեցի հակասությունները պայմանավորված էին Տիրանի կողմից կենտրոնաձիգ պետություն ստեղծելու ցանկությամբ, որին որոշ նախարարական տների հետ դեմ էր Հուսիկը, քանի որ դրանով թուլանում էր եկեղեցին: Այս ամենն հանգեցնում է նրա սպանությանը և եկեղեցու ենթարկվածությանն արքային:

Аршак Нерсисян

**Анализ отношений Тирана Аршакуни и Армянской Церкви
Резюме**

В период правления Тирана Аршакуни отношения между государством и религиозными властями обострились. Католикос Хусик не терпел политики короля, который не запрещал людям возвращаться к старым, языческим верованиям. Противоречие между королем и церковью было вызвано желанием Тирана создать центристское государство, против которого Хусик выступил с некоторыми министерскими домами, поскольку это ослабило церковь. Все это приводит к убийству католикоса и подчинению церкви королю.

Arshak Nersisyan

**The analysis of relations between Tiran Arshakuni and the Armenian church
Summary**

During the reign of Tiran Arshakuni, relations between the state and religious authorities became tense. Husik Catholicos did not tolerate the policy of the king, who did not forbid the people to go back to the old, pagan beliefs. The King-Church controversy was driven by Tiran's desire to establish a centrist state, which Husik opposed with some ministerial houses, as it weakened the church. All this leads to assassination of Catholicos and the submission of the church to the king.

*Խմբագրություն է ուղարկվել 15. 03. 2021թ.
Հանձնարարվել է գրախոսության 05. 04. 2021թ.
Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.*

ՄՇԱԿՈՒՅԹ

ԼՈՒՍԻՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Մանկ. գիտ. թեկն., դոցենտ

sogomonyan_mad@mail.ru

ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

Կուլտուրայի ֆակուլտետ

hayk.ulunts@mail.ru

ՄՇԱԿՈՒՅԹԸ ԱՅՍՕՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. սերունդ, ավանդ, մշակույթ, ժառանգություն, հասարակագիտություն, քաղաքականություն, տեխնոլոգիա, հոգևոր մշակույթ, բնություն, ոլորտ:

Ключевые слова и выражения: поколение, депозит, культура, наследство, социальная наука, политика, социальная культура природа, сфера.

Keywords and expressions: generation, deposit, culture, social science, politics, technology, careful culture, nature, field.

Ցանկացած ժողովրդի ներկայի և հեռանկարի ամենապատասխանատու առաքելությունը վերապահված է նրա մշակույթին:

Ճշմարտություն, որ հատկապես անշրջանցելի է փոքր ժողովուրդների համար և ապացուցելու կարիք չկա, թե որքան կենսական է համաշխարհայնացման մեր օրերում մշակույթի դերակատարությունը ազգային ինքնության համար և որքան կործանարար վերջինիս թերագնահատումը՝ ազգային պետականության և անվտանգության համատեքստում:

Մենք՝ հայերս, պատմականորեն բաց ենք եղել համաշխարհային քաղաքակրթական առաջընթացի նկատմամբ և մինևույն ժամանակ ինքնապաշտպանական առողջ բնագործ և կենսափիլիսոփայությամբ կարողացել ենք պահպանել մեր ինքնությունը՝ խարսխելով այն լեզվի, հավատքի և հատկապես մշակույթի վրա:

Հազարամյակների պատմություն ունեցող հայկական մշակույթը առանձնահատուկ դեր է կատարել մեր ժողովրդի կյանքում: Աստիճանաբար ձևավորվել է նաև հայկական ազգային մշակութային ավանդույթը, որը թույլ է տվել բյուրեղացնել այդ մշակույթի առավել բնորոշ գծերը և հաղորդել հաջորդ սերունդներին:

<<Հայկական մշակույթը հանդես է եկել որպես բարդ և ճկուն մի համակարգ, որը ճշգրտորեն արտացոլելով դարաշրջանի էական խնդիրները՝ արձագանքել է ժամանակի և միջավայրի պահանջներին>>¹: <<Հետևաբար, հայ ազգային մշակույթը մշտապես գտնվել է տարբեր ժողովուրդների փոխազդեցությունների ոլորտում՝ միաժամանակ պահպանելով իր ինքնատիպությունը և եզակիությունը>>²:

<<Ունենալով սեփական մշակութային ավանդների հստակ գիտակցում, նկատի առնելով նախորդ սերունդների վաստակը՝ հայկական մշակույթի գործիչները գրեթե բոլոր ժամանակաշրջաններում բախվել են այնպիսի սպառնալի իրադրության հետ, երբ կտրուկ ու համակողմանի փոփոխություններ են տեղի ունեցել ողջ տարածաշրջանի ռազմաքաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում: Նմանատիպ հանգամանքներում հայ ազգային մշակույթը ի հայտ է բերել նորացման, արտաքին միջավայրից բխող երևույթներին համարժեք արձագանքելու զարմանալի կարողություն>>³:

Արագընթաց 21-րդ դարը նոր թիրախներ ու խնդիրներ է դնում ազգային պետականության առջև, դրդում գտնել որակներ ու լուծումներ, որոնք միջազգայնորեն մրցունակ են, ազգային հեռանկարի առումով՝ շահեկան: Օրեցօր զարգացող տեխնոլոգիան ընդլայնում է մշակույթի լսարանների շրջանակը: Այսպես, օրինակ՝ բջջային հեռախոսի համար նախատեսված յուրաքանչյուր ծրագիր ունի մշակութային իր առանձնահատկությունները: Պետք չէ թերագնահատել տեխնոլոգիայի դերը, քանի որ այն մեզ կարող է տալ ցանկացած տեսակի տեղեկատվություն: Մեր ներկայացրած բովանդակության շնորհիվ՝ գրաֆիկական դիզայներները կարողանում են փոխել մշակութային առանձնահատկությունները՝ ըստ ծրագրերի: Յուրաքանչյուր հասարակ խաղ հիմնված է մշակութային առանձնահատկությունների վրա: Տեխնոլոգիան արտակարգ գործիք է, որը մարդկանց հնարավորություն է ընձեռում ծանոթանալ այլ երկրների և դրանց մշակույթի հետ: Տեխնոլոգիան և մշակույթը գործում են զուգահեռ՝ միմյանց լրացնելով և օգնելով, որ ամեն անգամ ավելի լայն լսարաններ ներգրավվեն:

¹ Հ.Գ.Մարգարյան <<Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները>>, 2007, էջ 42:

² Культура: теории и проблемы./ Под ред.Т.Ф.Кузнецовой. М.: Наука, 1995:

³ Հ.Գ.Մարգարյան <<Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները>>, 2007, էջ 54:

Փորձենք հասկանալ, թե վերջին քսան տարիներին Հայաստանում իրականացվող մշակութային քաղաքականությունը կարողացա՞վ պատասխանել կամ լուծել հայ հասարակության առջև կանգնած կարևորագույն խնդիրներին. ի՞նչ երկիր ենք կառուցում, ո՞վ է նրա քաղաքացին, ու ր ենք գնում: Այս հարցերի պատասխանին պիտի ծառայեր շրջանակային մշակութային քաղաքականությունը, որը կենսունակ պիտի լիներ ամենուր՝ հանրակրթության մեջ, մասսայական լրատվամիջոցներում, քաղաքաշինության և ճարտարապետության մեջ, արդարադատության համակարգում և առհասարակ երկրի կառավարման մոդելում, պատասխանատվություն և դերակատարություն պիտի ստանձներ երկրի ապագայի, մարդաբանական ու սոցիալ-քաղաքական փոփոխությունների համատեքստում:

Ավաղ, այս տեսլականն, ըստ էության, չի աշխատում մեզանում, և մշակութային քաղաքականություն ասելով նախևառաջ ընկալվում է մշակութային ծրագրերի, նախագծերի իրականացում, երբ առաջնահերթությունը նախևառաջ «մշակութային-քաղաքական գործառույթների ինստիտուցիոնալ հենքի ապահովումն է»: Հաստատապես կարելի է մեղադրել նրանց, ովքեր իրական մշակույթը, մշակութային քաղաքականությունը և հետագիծ չթողնող միջոցառումը միմյանցից զանազանելու կարողություն չունեն: Անշուշտ, նման մոտեցումը երբեք չէր կարող արժանապատիվ, հեռանկարային կյանքի բազային արժեքներ ու մոտիվներ առաջարկել, դարմանել մեր հասարակության մեջ համատարած անհեռանկարայնության և անհուսալիության հոգեվիճակը: Ավաղ, անցնող տարիների ընթացքում չի հաջողվել լուծել մշակույթի ոլորտում արդյունավետ կառավարման, մշակութային ընդհանուր ռազմավարություն և առաջնահերթություններ հստակեցնելու հետ առնչվող մի շարք խնդիրներ: Մեր իրականության մեջ Մշակույթի նախարարության հիմնական գործառույթը ոլորտային կառավարումն է, որն ըստ էության մշակութային քաղաքականության բաղադրիչ է, բայց ոչ բավարար պայման, նույնիսկ ամենակատարյալ իրականացման դեպքում:

Գոյություն ունեն մշակույթի բազմաթիվ, իրար հակասող սահմանումներ: Ժամանակակից հասարակագիտության մեջ «մշակույթ» հասկացությունը պատկանում է հիմնային կատեգորիաների թվին:

<<Դժվար է մատնացույց անել մեկ այլ բան, որն այդքան շատ իմաստային նրբերանգներ ունենա: Հաճախ մշակույթը սահմանում են որպես «երկրորդ բնություն»: Այս ըմբռնումը սկզբնավորել է դեռևս անտիկ Հունաստանում անտիկ փիլիսոփա Դեմոկրիտի կողմից: Բնությունը

ստեղծված է մարդու համար, մարդը անդադար աշխատանքով ստեղծել է «երկրորդ բնությունը»՝ մշակույթի տարածությունը»⁴:

Կ. Յասպերսի բնորոշմամբ «Մշակույթը մարդկային գործունեության առանձնահատկությունն է, այն, ինչ մարդուն բնորոշում է որպես տեսակի: Մարդու որոշումները մինչ մշակույթը անտեղի են, նրա՝ պատմության թատերաբեմում ի հայտ գալն անհրաժեշտ է դիտել որպես մշակութային երևույթ: Մշակույթը խորապես համահունչ է մարդու էությանը, այն հանդիսանում է, որպես այդպիսինի սահմանման մի մասը»:

Լուսինե Սողոմոնյան, Հայկ Հովհաննիսյան
Մշակույթը այսօր և հեռանկարում
Ամփոփում

Փորձենք հասկանալ, թե վերջին 20 տարիներին Հայաստանում իրականացվող մշակութային քաղաքականությունը կարողացա՞վ պատասխանել կամ լուծում տալ հայ հասարակության առջև կանգնած կարևորագույն խնդիրներին՝ ի՞նչ երկիր ենք կառուցում, ո՞վ է նրա քաղաքացին, ու՞ր ենք գնում: Այս հարցերի պատասխանին պիտի ծառայեր շրջանակային մշակութային քաղաքականությունը, որը կենսունակ պիտի լիներ ամենուր՝ հանրակրթության մեջ, մասսայական լրատվամիջոցներում, քաղաքաշինության և ճարտարապետության մեջ, արդարադատության համակարգում և առհասարակ երկրի կառավարման մոդելում, պատասխանատվություն և դերակատարություն պիտի ստանձներ երկրի սպազայի, մարդաբանական ու սոցիալ-քաղաքական փոփոխությունների համատեքստում:

Лусине Согомонян, Айк Оганнисян
Культура сегодня и в перспективе
Резюме

Статья обусловлена необходимостью понять, как культурная политика, проводимая в Армении за последние 20 лет, смогла ответить или решить самые важные проблемы, стоящие перед армянским обществом: какую страну мы строим, кто ее гражданин, куда мы идем?

⁴ << Источник культуры>. 1994, Москва, стр. 15-22, 56-59.

Lusine Soghomonyan, Hayk Howannisyan
Culture today and in prospect

Summary

The condition of necessary necessity is known as cultural policy, conducted in Armenia for the last 20 years, smog answer or solve only important problems, standing in front of the Armenian society: How do I build a country, who is a citizen, where do I go?

Խմբագրություն է ուղարկվել 26. 04. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 15. 05. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

ԱՐՓԻՆԵ ԹՈՐԻԿՑԱՆ

Երևանի պետական հումանիտար քոլեջի
գարդակիրառական արվեստ և ժողովրդական
արհեստների ամբիոնի դասախոս

**ՕՍԱՐ ԽԱՅԱՍԻ «ՌՈՒԲԱՅԱԹԻ» ՆԿԱՐՁԱԴՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՐԳԻՍ
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. պատկերազարդումներ, ռուբայաթ, սիմվոլիկա, արևելյան արվեստ, Օմար Խայամ, պարսկական նկարչություն, հոգևոր ներդաշնակություն, կենսափիլիսոփայություն, սիրո գովք, եթերային կերպարներ:

Ключевые слова и выражения: иллюстрации, рубаят, символика, восточное искусство, Омар Хайям, персидская живопись, духовное равновесие, биофилософия, дань любви, неземные персонажи.

Key words and expressions: illustrations, rubayat, symbolism, Eastern art, Omar Khayyam, Persian painting, spiritual harmony, biophilosophy, praise of love, ethereal characters.

Սարգիս Խաչատուրյանը XX դարի սփյուռքահայ խոշորագույն նկարիչներից մեկն է, ով իր ստեղծագործական գործունեության ընթացքում անդրադարձել է ոչ միայն իր հայրենի ժողովրդի ազգային ավանդույթներին ու մշակույթին, այլև կործանումից փրկել է երկու հինավուրց ու խոշոր երկրների՝ Հնդկաստանի և Պարսկաստանի մշակութային գոհարները, որոնք Խաչատուրյանի վրձնով կենդանացել են դարավոր մոռացությունից: Հետաքրքրությունների լայն շրջանակը, հասարակական ակտիվ գործունեությունը, քաղաքական իրավիճակը և իր եռանդուն խառնվածքը նկարչին մղել են մշտական ճանապարհորդությունների, ինչով էլ պայմանավորված է նրա արվեստի բազմաբովանդակ լինելը: Ինչպես արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանն է նշում. «Խաչատուրյանը եղել է թուրքահայ տարագիր նկարիչներից ամենից ավելի թափառականը: Նա իր ողջ կյանքն անց է կացրել շարունակ տեղափոխումների մեջ, մերթ քաղաքական պայմաններից հարկադրված, մերթ ստեղծագործական նպատակներով, մերթ էլ ցուցահանդեսներ կազմակերպելու համար»¹:

¹ Շիշմանյան Ռ., Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958 «Հայպետհրատ», էջ 339:

Խաչատուրյանը ծնվել է 1886 թվականին Մալաթիայում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ուսումնական հաստատությունում, ապա ուսումը շարունակելու համար մեկնել է Կարին՝ Մանասարյան վարժարան, որտեղ էլ հետագայում նաև դասավանդել է: Մասնագիտական կրթություն ստանալու համար պատանի Սարգիսը մեկնում է Հռոմ՝ Գեղարվեստի ակադեմիա, ապա Փարիզի դեկորատիվ արվեստների դպրոց, որից հետո կատարելագործվում Ժնևում և Մյունխենում:

Խաչատուրյանի արվեստը բազմաժանր է և ինքնատիպ: Այն պայմանավորված է թե՛ կատարողական տեխնիկայով, թե՛ իր յուրահատուկ ոճով: Արվեստագետի աշխատաքները ոչ միայն հարուստ են գունային գամմայով, կատարողական տարաբնույթ ոճական դրսևորումներով, այլև կոմպոզիցիոն բազմապիսի գեղարվեստական հնարներով:

1925 թվականին Խաչատուրյանը մեկնում է Լոնդոն: Այդ ընթացքում իրանահայ թարգմանիչ, հրապարակախոս ու խմբագիր Հովհաննես Մասեհյանը թարգմանություններ էր կատարում Օմար Խայամի, Մաադիի, Հավելի աշխատանքներից: Խաչատուրյանը Օմար Խայամի ստեղծագործությունների սիրահար էր. անգիր գիտեր նրա խոհա-փիլիսոփայական ռուբայաթները: Ահա և սրանցով ոգևորված՝ Խաչատուրյանը նկարագարողում է Օմար Խայամի անգլերեն թարգմանությամբ գիրքը²:

Խաչատուրյանը մինչ իր կյանքի վերջը տպավորված մնաց պարսիկ բանաստեղծով: Խայամի «Մահվան քաշած նետի առաջ ամեն վահան անօգուտ է» ճակատագրին ձոնված փիլիսոփայական տողերը հաճախ էին արտասանվում Խաչատուրյանի կողմից, մասնավորապես արվեստագետի կյանքի վերջին տարիներին:

Ահա այդ շրջանում Հովհաննես Մասեհյանը, ով այդ ժամանակ Պարսկաստանի դեսպան էր Լոնդոնում, հորդորում է Խաչատուրյանին մեկնել Պարսկաստան³:

Խաչատուրյանը պարսկական նկարչության անկրկնելի վարպետ էր: Ալի Ղափուի⁴ Չեհել Սոթունի (պարսկերեն «Քառասուն սյուների պալատ») և այլ պալատների որմնանկարների իր զմայլելի վերարտադրությունները բարձր են գնահատվել և մեծ համբավ բերել գեղարվեստի աշխարհում:

² Այդ մասին տե՛ս, Զաքարյան Ռ., Հրաշալիքների աշխարհում, Սովետական արվեստ, Երևան, 1981, թիվ 7:

³ Հարցազրույց արուեստագիտուհի Վավա Խաչատուրեանի հետ, Յառաջ, Փարիզ, 1967:

⁴ Բառացիորեն՝ «Բարձր դարպասներ»:

Խաչատուրյանը բացառիկ հմտություններ է ցուցաբերել այս պալատների որմնանկարները ընդօրինակելիս, որոնք, ցավոք, ժամանակի ընթացքում փչացել և ջնջվել են: Արվեստագետն ապրած լինելով 17-րդ դարի և դեռ ավելի վաղ շրջանի իրանական կենցաղը ու առօրյան, ասես ամբողջությամբ թափանցել և յուրացրել է պարսկական ոճն ու ոգին:

Լինելով Պարսկաստանում՝ նա այցելում է Օմար Խայամի, Ֆիրդուսի և Հավեզի գերեզմաներին⁵: Ըստ հայագի գրող, թարգմանիչ Միհրդատ Թիրյաքյանի՝ Խաչատուրյանը Օմար Խայամի «Ռուբայաթի» նկարագրողումները ավարտել է 1945 թվականին: Դրան է վկայում այն փաստը, որ մի հավաքույթի ժամանակ նկարիչը Թիրյաքյանին դիմել է. «Կը փափաքիմ որ Օմար Խայեամի նկարներս տեսնեք, ըսաւ նոր վերջացուցած եմ»⁶: Պետք է ասենք, որ Խաչատուրյանի նկարագրողումներով առաջին անգլերեն թարգմանությամբ գիրքը հրատարակվել է 1946 թվականին «Grossett & Dunlap» հրատարակչության կողմից⁷:

Օմար Խայամի «Ռուբայաթների» գունավոր նկարագրողումներն առավել հարազատորեն են ներկայացնում իրանական վաղեմի միջավայրի շունչը: Դրանք ստեղծելիս Խաչատուրյանը ներշնչվել է մեծ բանաստեղծի քառյակներից: Այդ նկարների մեջ կարծես Խայամն է խոսում: Ակամայից պատկերացնում ես, թե նկարիչը վրձնի ամեն հպումի հետ մտքում կրկնել է մեծ մտածողի այս կամ այն տողը: Խաչատուրյանը զգացել է պարսկական ոգին, թափանցել դրա խորքերը:

Օմար Խայամի «Ռուբայաթները» թարգմանվել է նաև Էդվարդ Ֆիցջերալդի կողմից: Այն առաջին անգամ տպագրվել է 1859 թվականին, հետագայում բազմիցս նկարագրողվել մի շարք ճանաչում գտած նկարիչների կողմից՝ Էդմունդ Դյուլակը, Վիլի Պոզանի, Ռենե Բուլ, Հուսեյն Բեհզադ, Էլիուուս Վեդդեր, Արթուր Շիկ, Չարլզ Ռոբինսոն, Ադելաիդա Հանսթոմ, Ռոնալդ Բալֆոր: Սակայն ինքնատիպությամբ և բովանդակությանն շատ ավելին հարազատ մնալու հատկությամբ Խաչատուրյանի նկարագրողումներն առանձնանում են:

Պետք է ասենք, որ Խայամի ստեղծագործությունները հայերեն թարգմանվել են Արամ Չարրզլի, Հովհաննես Մասեխյանի, Հովսեփ

⁵ Թորանեան Թ., Արուեստի երկու երկրպագուներ Սարգիս եւ Վավա Խաչատուրեան, Նիւ Եորք, 1983, էջ 11:

⁶ Թիրեաքեան Մ., Օմար Խայամ Սարգիս Խաչատուրեանի վրձնով, Հայաստանի Կոչնակ, Նյու Յորք, 1945, հուլիս:

⁷ Տե՛ս, The Rubaiyat of Omar Khayyam, tr. by Edward FitzGerald, illustrated by Sarkis Katchadourian, Grossett & Dunlap, NY, 1946, 132 pages: Ի դեպ, գիրքը հրատարակվել է նաև 1947, 1956, 1971, 1974 և 1979 թվականներին:

Միրզայանի կողմից: Դրանք նկարագարովել են մի շարք արվեստագետների վրձնով: Սակայն այստեղ էլ ավելին շահեկան և տպավորիչ են Խաչատուրյանի կատարած թղթերը, որոնք ավելին հարազատ են բանաստեղծի էությանը:

Օմար Խայամի «Ռուբայաթները» գրքում կա 11 գունավոր նկար, մյուսները պատկերագարոված են սև եզրագծերով: Վերջիններս նույնպես տպավորիչ են. դրանք պատկերավոր կերպով ներկայացնում են քառյակների բովանդակությունը:

Օմար Խայամը չի ձգտում իրական աշխարհից այն կողմ փնտրել կյանքի իմաստը: Նրա միտքը այստեղ է, այս պահի մեջ. նա համոզված է, որ երջանկությունը հեռու տեղ փնտրել պետք չէ: Խայամի կենսափիլիսոփայությունն ամուր կապված էր երկրային կյանքին, սակայն Խաչատուրյանի նկարներում կերպարները եթերային ու երկնային էակների տպավորություն են թողնում: Այստեղ հակասություն չկա. կերպարների հանգստավետ, երանելի վիճակը Խայամի գովերգած վայելքների բերած երջանկության արդյունք է: Բոլոր նկարներն էլ իրենց անթերի գծագրությամբ, գույների շքեղությամբ ու կառուցվածքի վարպետությամբ դիտողին տեղափոխում են Խայամի արևոտ ու պայծառ երկիրը:

Աշխատանքներից մեկում բաց կապույտի և մուգ վարդագույնի ներդաշնակ համադրությամբ ստեղծված նրբերանգների միջից տեսնում ենք Օմար Խայամին՝ նստած գետի եզերքին, թևը հենած պտղատու ու սաղարթախիտ ծառի ճյուղին, իսկ գլուխը հակած ուսին: Խաչատուրյանն այստեղ պատկերել է խորհող փիլիսոփայի ամփոփ մի կերպար: Խայամի կողքին դրված է կուժն ու գավաթը՝ կենարար գինու խորհուրդը, իսկ առջևում բացված գիրքը՝ գիտելիքի ու իմաստության խորհրդանիշը (նկ. 1)⁸:

Մեր կողմից «Գայթակություն» անվանված 62-րդ ռուբայաթի նկարագարումը ներկայացնում է գինու գովքը, որը Խայամի քառյակներում հաճախ է հանդիպում որպես առօրյա վշտերից ձերբազատվելու միջոց: Աստվածաշնչյան Ադամն ու Եվան հիշեցնող թեման մեկնաբանված է յուրովի, այստեղ գայթակղիչ պտղին՝ խնձորին փոխարինելու է գալիս գինին: Քննարական այս պատկերում տեսնում ենք ծունկի եկած բարձրահասակ մի պատանու: Կապտագետ տղայի դեմքը ուղղված է իրեն գինի հրամցնող սլացիկ կնոջը: Գեղեցկուհու գլխից մինչև հատակ

⁸ Խայամը իր հայրենիքում առավել ճանաչված էր իբրև գիտնական, աստղագետ քան բանաստեղծ: Շնորհիվ անգլիացի թարգմանիչ Էդվարդ Ֆիցջերալդի նրա համբավը՝ որպես մեծ բանաստեղծի, տարածվեց աշխարհով մեկ: Խայամի քառյակների ազատ թարգմանությունն անգլիական գրականության գոհարներից է համարվում:

իջնող ճերմակ քողը նրան հիրավի եթերային էակ է դարձնում: Կնոջ բաց վարդագույն զգեստը հակադրվում է կենտրոնի վառ կապույտին՝ երիտասարդի զգեստին: Նկարի ձախ կողմում՝ հետին պլանում երևում է հեռացող կնոջ սովերային կերպարանք, որի միջոցով Խաչատուրյանը խորհրդանշում է երկնային հասուցումը, ինչից Խայամը իր ռուբայայթում կոչ է անում չվախենալ ու չհրաժարվել կյանքի բալասանից (նկ. 2):

Այս կուժն՝ ինձ պես սիրով տարված է եղել,
Սիրունի սև ծամին գերված է եղել,
Կժի վզին փարված այս կանթը սիրուն,
Ձեռք է, որ իր յարին փարված է եղել...⁹

Աշխարհն առանց գինի ու յար ոչինչ արժե,
Առանց երգ ու առանց քնար ոչինչ արժե,
Ինչ նայում եմ խառն ու խռով ժամանակին,
Հաճույքներից հեռու մնալ ոչինչ արժե¹⁰:

Խաչատուրյանի ստեղծագործություններից «ծորոդ» լույսը, գույները, դրանց հրապույրը մարդու հոգին լցնում են գոհունակությամբ և հրճվանքով: Դրանցում արտահայտված է սեր, հաճույք, հանգստություն: Այս պատկերներից կյանքի քաղցրություն է հորդում, միևնույն ժամանակ դրանք դիտողին տեղափոխում են մեկ այլ՝ իրականից հեռու աշխարհ, որտեղ ամեն ինչ գեղեցիկ է, չկա թախիծ, տարակուսանք, դառնություն: Բանաստեղծական այս թերթերը իրենց նրբերանգներով ու սլաձիգ գծերով դիտողին տանում են խաղաղ ու հարմունիկ մի աշխարհ, իսկ ֆիգուրաների ճկուն ու քաղցրածոր շարժումներն արևելյան քնարաշունչ պար են հիշեցնում: Դրանք զգայական հրճվանքների դրախտ են: Յուրահատուկ իմաստությամբ կատարված աշխատանքներում գրկախառնված զույգեր են, տղամարդիկ և կանայք՝ նստած ծաղիկների մեջ, բոլորն էլ թողնելով կյանքի վայելքի արժեքը հասկացած մարդկանց տպավորություն, որոնց համար աշխարհն ու նրա հոգսերը մանր ու սին են: Այս կերպարները մեզ հորդորում են ապրել, վայելել, սիրել և խանդաղատանքով վերաբերվել միմյանց: Նկարների մի մասի մեջ կապույտը, կարմիրը, վարդագույնը,

⁹ Օմար Խայամ, Քառյակներ, Գևորգ Էմինի թարգմանությամբ, Երևան, 1993, , հրատ. Նաիրի, էջ 30:

¹⁰ Օմար Խայամ, Քառյակներ, Ազատ Մաթյանի թարգմանությամբ, Սպահան, 2007, հրատ. «Թահդիդաթե նագարի», 201 էջ:

մանուշակագույնը արշալույսի գույներին են մոտ, իսկ մյուս մասում երանգները մեղմ են՝ կարծես լուսնի լույսով շղարշված:

Հետաքրքրական է Օմար Խայամի «Ռուբայթների» շապիկի վրայի պատկերը: Այստեղ ծաղկազարդ դաշտում՝ խոնհարված ծառի տակ, կողք կողքի նստած սիրահարներ են: Երիտասարդը մի ձեռքով գրկել է սիրած աղջկա ուսը, մյուս ձեռքով նրան գինի է մատուցում: Գեղանու ձեռքում թառի նմանվող երաժշտական գործիք է, որի ներքևի մասի սուր ձողը խրված է հողի մեջ: Կնոջ կողքին՝ գետնի վրա տեսնում ենք սրածայր սափոր՝ նույնպես գինու առկայության խորհուրդ: Երիտասարդ տղամարդու աջ ծունկի մոտ նուրբ, երկար պարանոցով կուժ է դրված, իսկ առջևում՝ բացված մի գիրք, մրգերով լի սկուտեղ և մի կտոր հաց: Նրանց դեմքերից հանդարտություն է ծորում: Այս ամենը պատկերված է հեքիաթային բլուրների, կապույտ երկնքի ու շեշտադրված սպիտակ ամպերի ֆոնի վրա:

Ի դեպ, Խաչատուրյանի բոլոր նկարագարողներում առկա է բնության տարրը: Խաչատուրյանը խորությամբ ընկալել էր Խայամի փիլիսոփայությունը և ոգին: Ակնհայտ է, որ Խայամը ձգտում էր հոգևոր ներդաշնակության, որը ոչ մի տեղ այնքան կատարյալ չէ, որքան բնության մեջ (նկ. 3):


Խաչատուրյանի նկարագարողումներն առաջին հայացքից տարակուսանք առաջացնող պարզության տպավորություն են թողնում, սակայն մի նրբություն, արվեստագետի ստեղծած պատկերների խորությունն իրենց պարզության մեջ ավելի տպավորիչ են ու խոսում:

Սարգիս Խաչատուրյանի նկարագարողումները համահունչ են Խայամի ստեղծագործությունների ոգուն: Խայամը ընդամենը մի քանի տողի միջոցով արտահայտում է կյանքի փիլիսոփայությունը, լինել-չլինելու, չար ու բարու, իրական արժեքների գաղափարները: Խաչատուրյանի պատկերների անպաճույճ ձևերը, հեքիաթին բնորոշ գույները մեխվում-մնում են դիտողի հիշողության մեջ: Կոմպոզիցիան պարզ է, չկա ոչ մի ավելորդ դետալ: Պատկերված յուրաքանչյուր առարկա պատահական չէ: Դրանք զուտ դեկորացիա չեն, և բոլորն ունեն իրենց խորհուրդը՝ հաճախակի կրկնվող, սակայն իմաստալից. սափոր, գինու գավաթ, ծաղիկ, պտուղներով լի սկուտեղներ և այլն: Անգամ ֆիգուրների դիրքերը ոչ միայն ընդգծում են պլաստիկությունը, ճկունությունը, նազանքը, այլև դրանցով մեր ուշաադրությունը հրավիրում գտնվող սիմվոլների վրա: Ասածի տիպիկ օրինակն է 1-ին ռուբայթի սյուժեով արված նկարը: Այստեղ սիմվոլներն աղջկա ձեռքի ծաղիկն ու գավաթն են: Այս գրավիչ նկարում ծաղկառատ մարգագետնում՝ ջրի ափին, պատկերված է քարերին նստած երիտասարդ

մի կին՝ արտահայտիչ, լուսավոր դեմքով: Աջ ձեռքի մեջ փոքրիկ ծաղկեփունջ է, իսկ ձախ ձեռքի մատների ծայրով գինու գավաթն է նրբորեն բարձրացրած: Գլուխը աջ ուսին թեքած և ձեռքերը դեպի ձախ կողմն ուղղված դիրքը, կրծքի մոտ պահած ծաղիկն ու գինու գավաթը խորհրդանշում են սիրո վայելքը: Կնոջ երկու կողմերում զույգ կուժեր և խնձորներ են դրված: Կարմրավարդագույն ծաղկավոր զգեստի քղանցքը, գլուխնիվայր իջնող ճերմակ շղարշի հետ միանալով, ակնաթով տեսարան է ստեղծում, իսկ նկարից ամբողջությամբ զարնանային թարմություն է ծորում (նկ. 4):

Ամփոփելով մեր խոսքը, նշենք, որ սփյուռքահայ կերպարվեստի խոշորագույն վարպետ Սարգիս Խաչատուրյանը իր բեղուն գործունեության ընթացքում ստեղծեց կամերային բնույթի չքնաղ ու տպավորիչ բազմաթիվ ստեղծագործություններ ու որմնանկարներ: Այդ ամենի հետ մեկտեղ նույնքան էլ չքնաղ են նրա պատկերագարդումները: Օմար Խայամի «Ռուբայաթի» նկարգարդումները խորն ու ներդաշնակ են: Գեղարվեստական բարձր ճաշակով կատարված այդ աշխատանքներից բխում է հանդարտություն ու անդորր, որոնք էլ մարդու հոգուն խաղաղություն են բերում:


Նկ. 1 «Օմար Խայամը»




Նկ. 2 «Գայթակղություն»



Նկ. 3 «Միրահարներ»



Նկ. 4 «Երիտասարդ կինը»



Արփինե Թորիկյան

**Օմար Շայամի «Ռուբայաթի» նկարզարդումները
Սարգիս Խաչատուրյանի արվեստում
Ամփոփում**

Հոդվածում ներկայացված են մեծանուն պարսիկ բանաստեղծ, փիլիսոփա և գիտնական Օմար Խայամի «Ռուբայաթի» նկարզարդումները՝ կատարված Սարգիս Խաչատուրյանի կողմից: Սփյուռքահայ նկարիչ Սարգիս Խաչատուրյանը (1886-1947), որոշ ժամանակ ապրելով և ստեղծագործելով Պարսկաստանում, խորապես ուսումնասիրել է տեղի արվեստը, բանասիրությունը ու կենցաղը: Նրա կատարված նկարզարդումները այսօր էլ մեծ հիացմունք են պատճառում արվեստասեր հանրությանը:

Հոդվածում ամփոփ խոսք է ասվում Սարգիս Խաչատուրյանի այն նկարզարդումների մասին, որոնք էլ ավելի են բնորոշում հինավուրց պարսիկ ժողովրդի տիպային նկարագիրը: Օգտվելով պարսկական մանրանկարչական արվեստի տարրերից՝ Խաչատուրյանը ստեղծեց ինքնատիպ թերթեր, որոնք իրենց գմայլքով, արտահայտիչ ձևերով ու վառ գունաշարով նոր շունչ տվեցին հայ գրքարվեստին:

Արփինե Թորիկյան

**Иллюстрации «Рубайята» Омара Хайяма в искусстве Саркиса Хачатуряна
Резюме**

В статье представлены иллюстрации «Рубайята» персидского поэта, философа и ученого Омара Хайяма, сделанные Саркисом Хачатуряном. Художник из диаспоры Саркис Хачатурян (1886-1947), некоторое время живя и занимаясь творчеством в Персии, глубоко изучил персидское искусство, философию и быт. Его иллюстрации и в наши дни восхищают любителей искусства.

В нашей статье обобщенно говорится о тех иллюстрациях Саркиса Хачатуряна, которые больше всего особенно характеризуют типичный образ древнего персидского народа.

Используя элементы персидского миниатюрного искусства, Хачатурян создал оригинальные страницы, которые своей привлекательностью, цветовой гаммой и выразительными формами дали новое дыхание армянскому книжному искусству.

The “Rubaiyat” of Omar Khayyam illustrations by Sarkis Katchadourian

Summary

It is presented in the article that the illustrations of "Rubayat" by the Persian poet, philosopher and scientist Omar Khayyam, made by Sarkis Katchadourian. An artist from the diaspora Sarkis Katchadourian (1886-1947), who had been living and working in Persia for a few years, deeply studied Persian art, philosophy and everyday life. His illustrations continue to delight art lovers today.

Our article summarizes those illustrations by Sarkis Katchadourian, which characterize the typical image of the ancient Persian people most of all.

Using elements of Persian miniature art, Katchadourian created original pages, which gave a new breath to Armenian book art, with their attractiveness, colors and expressive forms.

Խմբագրություն է ուղարկվել 24. 03. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 15. 04. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Գեղարվեստական կրթության ֆակուլտետ
Արվեստի պատմության, տեսության և
մշակութաբանության ամբիոն
avet1syan.armen@inbox.ru

ԿԱՎՃԱՄՍՏԻՏԻ ՎԱՐՊԵՏ ԱՐՄԵՆ ՇԱԲԱՆՅԱՆԸ

Բանալի բառերն արտահայտություններ. կավճամատիտ, իմպրեսիոնիզմ, նկարչաձև, տեխնիկա, նկար, պատկեր, տպավորություն, ստեղծագործություն, արվեստագետ

Ключевые слова и выражения: мел, импрессионизм, живопись, техника, живопись, образ, впечатление, работа, художник

Keywords and expressions: chalk, impressionism, painting, technique, image, impression, creativity, artist

Հայ կերպարվեստի անդաստանը հարուստ է բազմաթիվ տաղանդավոր արվեստագետներով: Նրանցից շատերը աշխարհաքաղաքական պայմաններից ելնելով ապրել և ստեղծագործել են հայրենիքից դուրս, մեծարվել և արժանացել պատվավոր շքանշանների: Դրանցից մեկն է ֆրանսիայում ստեղծագործած նկարիչ Արսեն Շաբանյանը (1864–1949)՝ հայ և եվրոպական ծովանկարչության երևելի դեմքերից մեկը:

Արսեն Շաբանյանը ծնվել է Արևմտյան Հայաստանի Կարին (Էրզրում) գավառի Սունից գյուղում: 1874թ. մեկնում է Վենետիկ՝ ուսանելու Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, նկարչության դասեր առնելով նշանավոր վարպետներ Անտոնիո Էրմոլաո Պաոլետտիի (1834–1912) և Լուիջի Քուերենայի (1820/24–1887) մոտ: 1883 թվականին ավարտելով ուսումը՝ Շաբանյանը վերադառնում է հայրենի Կարին, ապա Բաթում: Ապագա նկարչի համար ճակատագրական էր 1890 թվականը: Արսենը մեկնում է Թեոդոսիա, ինն օր շարունակ հյուրընկալվում հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն: Այստեղ էլ վերջնականապես որոշվում է Շաբանյանի մասնագիտական ուղին: Համոզված լինելով իր դիրքորոշման մեջ՝ Շաբանյանը մեկնում է Փարիզ, ընդունվում Գեղարվեստի ազգային բարձրագույն դպրոց՝ դասառություն վերցնելով Գուստավ Մորոյի արվեստանոցում, այնուհետև տեղափոխվում Ժյուլիան ակադեմիա՝ ուսանելով ֆրանսիացի նկարիչներ Ժան Պոլ Լորանին (1838–1921) և Բենժամեն Կոնստանին (1845–1902):

Շաբանյանը նոր ու գեղեցիկ տեսարաններ գտնելու համար հաճախ է ճանապարհորդել դեպի Իտալիա, Բելգիա, Հոլանդիա, Անգլիա, Միջերկրականի ափերը՝ Մարսել, Նիցցա, Տուլոն, Ադրիատիկի մարզարիտը՝ Վենետիկ: Գնալով մեծանում է Շաբանյանի ճանաչումը. արվեստագետը մի շարք խմբակային ցուցահանդեսներից զատ ցուցադրվում է Փարիզի ազգային սալոնում, իսկ 1899 թվականին՝ Փարիզի «Շորժ Պտի» պատկերասրահում (Galeriies Georges Petit) վաթսուն աշխատանքով կազմակերպում է նկարչի առաջին անհատական ցուցահանդեսը, որտեղ յուղաներկ, կավճաներկ աշխատանքների կողքին ցուցադրվում են Շաբանյանի օֆորտով կատարված գործերը¹: Ֆրանսիական մամուլը՝ մասնավորապես «Revue Illustrée» հանդեսը, «Le Figaro» և «Le Journal» թերթերը անդրադառնում են Շաբանյանի մասին, իսկ հեղինակավոր «L'Illustration» հանդեսը գրում է. «Շաբանյանը ամենահինքնատիպ նկարիչներից է, նա այն խուզարկուներից մեկն է, որին վերագրվում է գունավոր փորագրության վերածնության գործը»²:

Շաբանյանը դառնում է «Փարիզի Ծովային նկարիչների ընկերության» հիմնադիրներից մեկը, իսկ 1902 թ. արվեստագետն արժանանում է ֆրանսիական «Ակադեմիայի սպայի» տիտղոսին: 1910 թվականին ֆրանսիական կառավարությունը Շաբանյանին պարգևատրում է «Պատվո լեգիոն» շքանշանով: Պատվաբեր է նաև այն փաստը, որ 1918 թ. Փարիզում կազմակերպվում է «Գունավոր փորագրության ընկերություն», որի հիմնադիրներից էր Արսեն Շաբանյանը³:

Շաբանյանը բացի յուղաներկի, ջրաներկի և օֆորտի տեխնիկաներին տիրապետելուց մեծ սեր է ունեցել կավճամատիտի հանդեպ:

Կավճամատիտը (pastel) համարվում է գրաֆիկայի տեսակներից մեկը: «Պատտել» տերմինը առաջին անգամ շրջանառության մեջ է դրել մաներիզմի դարաշրջանի իտալացի նկարիչ, պոետ և արվեստի տեսաբան Ջովաննի Պատոլո Լոմացցոն (1538-1592) իր «Տրակտատ գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության արվեստի մասին» (1584) աշխատությունում: Այստեղ նկարագրվում է, որ դեռ վերածնունդի շարջանում կավճամատիտի տեխնիկային մոտ՝ գունավոր մատիտներով,

¹ Պետք է ասենք, որ հետագայում, ստեղծագործական ակտիվ գործունեության ընթացքում Շաբանյանը կազմակերպում է գրեթե հարյուր անհատական ցուցահանդես:

² «L'Illustration», Paris, 1907, N 3366.

³ Այդ մասին տե՛ս u Frédéric Macler, La France et l'Arménie, à travers l'Art et l'Histoire, Paris, 1917, էջ 37:

կարմիր սանգինայով և սև իտալական մատիտով նախանկարներ է կատարել Լեոնարդո դա Վինչին: Ամեն դեպքում կավճամատիտի հայրենիքը համարվում է Ֆրանսիան, որտեղ տվյալ ներկերով ստեղծագործել են մեծանուն նկարիչներ Ֆրանսուա Բուշեն, Մորիս Կանտեն դե Լատուրը, Ժան Բատիստ Շարդենը, Ժան Էտյեն Լիոտարը, Ժան Հյուբերը, Ժան Բատիստ Գրյոզը, Էժեն Դելակրուան, իսկ ավելի ուշ կավճամատիտով էին աշխատում մի շարք իմպրեսիոնիստ նկարիչներ՝ այն դարձավ Էդգար Դեգայի նկարչական հիմնական մատերիան⁴:

Կավճամատիտը Շաբանյանի սիրելի նյութերից մեկն էր: Արվեստի քննադատ Ռոժե Միլեն գրում է. «Շաբանյանը շահագրգռության արժանի է արտակարգ ուշադրության թե՛ իբր նկարիչ եւ թե՛ իբր ներկամատիտի (կավճամատիտ — Ա. Ա.) վարպետ»⁵:

Հենց կավճամատիտով են ստեղծվում Շաբանյանի իմպրեսիոնիստական աշխատանքները: Սակայն պետք է նշենք, որ նկարչի վաղ շրջանի աշխատանքները մասամբ կրում են ռոմանտիկ շունչ՝ գուցե Հովհաննես Այվազովսկու ազդեցությունը: Անդրադառնալով Շաբանյանի վաղ շրջանի ստեղծագործություններին՝ արվեստաբան Եղիշե Մարտիկյանը նշում է. «Նկատելի է նաև, որ ծովանկարներում նկարիչը նախասիրությունը տալիս է բնության խաղաղ, լուսնկա գիշերներին..., իր այդ հատկությամբ նա մոտ էր իր հանճարեղ ուսուցչին՝ Այվազովսկուն, որի նույնպիսի մոտիվներով, քնարականությամբ հուզիչ գիշերային ծովանկարները խոր տպավորություն էին թողել նրա վրա Թեոդոսիա այցելած տարիներին»⁶:

1901 թվականին արվեստագետը կավճամատիտով ստեղծում է իր լավագույն թեմատիկ պատկերներից մեկը՝ «Ձկնորսները»: Ինչ որ տեղ պահպանելով ռոմանտիկայի տարրերը՝ Շաբանյանը զգուշորեն անցում է կատարում դեպի իմպրեսիոնիստական նկարչաձևերին: Հեռանկարի և

⁴ Հանճարեղ Դեգայի ստեղծագործությունների մեջ, մեզ համար իր ուրույն տեղը ունի հայ նատյուրմորտի ժանրի հիմնադիր Զաքար Զաքարյանի դիմանկարը կատարված 1886 թվականին: Կամերային բնույթի այս աշխատանքը (38x39,5 սմ.) կատարված է կավճամատիտներով: Զաքար Զաքարյանը եղել է իմպրեսիոնիստների ընկերը, մասնավորապես մտերիմ էր Էդգար Դեգայի հետ: Վերջիններս Զաքարյանին բնորոշել են որպես «Մեր օրերի Շարդենը»:

Ի դեպ, Զաքար Զաքարյանի արվեստում քիչ չեն կավճամատիտով կատարված նատյուրմորտները, որոնք կրում են իմպրեսիոնիստական ազդեցություն:

⁵ Հայր Արիստակես վարդապետ Պօհճալեան, Ակնարկ մը հայ նկարչութեան վրայ, Վիեննա, 1989, էջ 88:

⁶ Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն, Գիրք Դ, Եր., 1987, էջ 40:

օդային լուծումների վարպետորեն կատարում, լուսնից իջնող ցուլքերի անդրադարձումը ծովին, կավճամատիտի թրթռուն հարվածները ստվարաթղթին պատկերին տալիս են իմպրեսիոնիստական տպավորություն, իսկ նկարի հիմնական հերոսները՝ ձկնորսները՝ դիտողի ուշադրությունը կենտրոնացնելով իրենց վրա, իմաստալի և բովանդակալից են դարձնում աշխատանքը:

Դիպուկ է նկատում արվեստաբան Շահեն Խաչատրյանը. «Շաբանյանի վաղ շրջանի աշխատանքները կատարված են իմպրեսիոնիստական տպավորությամբ: Ավելի ուշ նրա ստեղծագործություններում գերակշռում է բանաստեղծական երազկոտ տրամադրությունը: Նա հաճախ և սիրով է պատկերում արևամուտը ծովի վրա, լուսնյակ գիշերներ... Նայելով Շաբանյանի կտավները՝ զգում ես նկարչի ռոմանտիկ անկեղծ փայլատակումը, ալիքների վրա արևի լույսի խաղերի ցուլքի և հորիզոնի մշուշում թաքնվող արևամուտի գեղեցկության հիացմունքը»⁷:

Շաբանյանի արվեստում իրենց ուրույն տեղն ունեն ծովախեցգետիններ հավաքողներ թեման: Արվեստագետը տվյալ մոտիվին անդրադարձել է մի քանի տարբերակով ու տարբեր նյութերով՝ յուղաներկ, օֆորտ, կավճամատիտ: Մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում կանգ կանոնք «Ծովախեցգետին հավաքողները» (1901), «Ծովախեցգետին որսացող կանայք» (1900–ական թթ. սկիզբ), «Ծովի հաճույքը» (1900–ական թթ. սկիզբ) կավճաներկերով կատարված աշխատանքներին:

Մրանցում Շաբանյանը անհարթ թղթի կամ ստվարաթղթի վրա տեղտեղ բաց է թողնում երևացող մակերեսը, որի տոնային գամման էլ ավելի տպավորիչ և էֆեկտիվ է դարձնում աշխատանքները: Իմպրեսիոնիստական աշխատաձևով կատարված այս նկարներում մեծ դերակատարում է ունենում գունային մեղմ ու ներդաշնակ կոլորիտը: Այստեղ աշխատավոր կանայք են, որոնք իրենց ուրվապատկերային ձևով ու մարմինների սահուն շարժումներով նկարներին տալիս են դրամատիկ տրամադրություն ու գաղափարական իմաստ: Փորձելով չշեղվել գաղափարի ընդհանրական իմաստից՝ նկարիչը մուգ երանգավորմամբ շեշտադրում է աշխատավոր կանանց, իսկ ծովի և երկնքի գունային միաձուլումները տպավորիչ միջավայր են ծառայում:

1900-1910–ական թթ. սկիզբի կավճամատիտով կատարված կոմպոզիցիոն ստեղծագործություններում երևում է նկարչի հիացմունքը դեպի ձկնորսական նավակատեղերի ու ջրափնյա տնակների տեսարանների հանդեպ: Այդ շրջանի աշխատանքներից կարելի է առանձնացնել

⁷ Ս. Хачатрян, Айвазовский. Известный и неизвестный, Самара, 2000, ст. 178.

«Ձկնորսական նավակները իրիկնամուտին», «Առագաստները ափում», «Ձկնորսական տնակներ», «Նավակներ» նկարները: Արևշատ այս պատկերներում դրսևորվում է բացօթյա աշխատանքի կիրառման մեթոդը: Ջրի թափանցիկ ու աշխույժ գունացույթերը, լուսային և օդային խաղերը կարծես վազվզում են ողջ պատկերով՝ աշխատանքներին տալով վառ ու ժիր տրամադրություն: Իմպրեսիոնիստական տրամադրությամբ կատարված ստեղծագործություններում մեծ սիրով են արտահայտված առափնյա տնակները, ափին մոտ ճոճվող նավակները, ձկնորսական տնակները, որոնք իրենց գողտրիկ դիրքերով ու գունային վառվռուն լուծումներով լավատեսական ու լուսավոր շունչ են ներկրում:

Իմպրեսիոնիստական մոտեցումներին հատուկ նկարչաձևով է պատկերված «Կանայք ալիքների մեջ» (1910–ական թթ. սկիզբ) կենսուրախ նկարը: Այստեղ նկարիչը տիրապետելով կավձամատիտի տեխնիկայի վարպետությանը՝ կարողանում է հասնել բարձր տրամադրության: Նկարում երևացող լողագզեստով կանյք իրենց ռիթմիկ շարժումներով էլ ավելի կենսառատ են դարձնում պատկերը, իսկ ծովից դեպի ափ վազող ալիքների սպիտակավուն փրփուրները աշխատանքին տալիս են կենդանի շունչ:

Շաբանյանի կավձամատիտով պատկերված աշխատանքները բազմաժանր են: Դրանք թեմատիկ հորինվածքներ են, ծովանկարներ, նատյուրմորտներ: Այդ ամենի հետ մեկտեղ արվեստագետին գերել է նաև ցամաքային տեսարանները: Հետաքրքրական է «Ծաղիկներով պարտեզ» (1910–ական թթ. սկիզբ) կավձամատիտով կատարված նկարը: Դիտողը հմայվում է պատկերի առջևի պլանում երևացող ծաղիկների վառ գունային խաղով: Դրանք իրենց ժպտուն և պայծառ տեսքով անմոռանալի տրամադրություն են թողնում:

Մի առանձին խումբ են կազմում Շաբանյանի նատյուրմորտները: Դրանց մեջ առավել հաջողված են իմպրեսիոնիստական տրամադրությամբ կատարված ծաղիկները: Նկարչի ծաղիկներով նատյուրմորտները գրեթե միշտ ցուցադրվել են իր անհատական նկարահանողեսներում և փարիզյան սալոններում: Անդրադառնալով Շաբանյանի ծաղիկներին՝ ֆրանսիացի արվեստաբան Լ. Ռոժե Միլեն գրում է. «Ստուգիւ ծաղիկնե՛րը պիտի ըլլան ամենէն գրաւիչ յայտնութիւնը սոյն պատկերահանդէսին: Վաղուց մենք գիտենք, թէ որպիսի կուռ տաղանդ մըունի Ա. Շապանեան, թէ ո՞րքան յարատէ աշխատող մէ ան՝ իր անյագ տեսութեան ընծայելով մշտանորոգ սնունդ մը: Բայց մենք կանգիտանայինք իր կատարած այնքան բեղմնաւոր ճամբորդութիւնը ծաղիկներու աշխարհին մէջ: Իր նպատակը եղած է մեզի ապացուցանել, թէ ծաղիկը ապրող էակ մէ, թէ ան մտածողին համար ունի խորհուրդի նշանակութիւն մը, և թէ ան իր հոգին մեզի կը յայտնէ մերթ

շողշողուն, մերթ քնքուշ գեղեցկությամբ... Շապանեան գիտէ տալ իր ծաղիկներուն ուշադրութիւնը, որով մենք պարտինք ջանալ թափանցել անոր համար բարբառի մէջ»⁸:

Հիրավի, ֆրանսահայ գեղանկարիչ Արսեն Շաբանյանը իր ստեղծագործական բեղուն գործունեության ընթացքում ստեղծեց աննման աշխատանքներ, որոնք իրենց ուրույն տեղը և դերը ունեցան եվրոպական միջավայրում: Բազմաժանր նկարչի ստեղծագործությունները հարստացրին հայ կերպարվեստի անդաստանը՝ բերելով նոր ու թարմ շունչ մեր արվեստում:

Արսեն Ավետիսյան

Կավճամատիտի վարպետ Արսեն Շաբանյանը

Ամփոփում

Ֆրանսահայ գեղանկարիչ Արսեն Շաբանյանի (1864–1949) մասին մեզանում առկա է պատշաճ գրականություն: Սակայն տաղանդաշատ արվեստագետի կավճամատիտով կատարված աշխատանքների մասին առանձին խոսք դեռ չկա: Հայ կերպարվեստում կավճամատիտով ստեղծագործած նկարիչների թիվն այնքան էլ հարուստ չէ. Ենոք Նազարյան, Զաքար Զաքարյան, Էդգար Շահին, Փանոս Թերլեմեզյան, Պետրոս Կոնտուրաջյան, Գրիգոր Խանջյան և ևս մեկ երկուսը: Արսեն Շաբանյանը գալիս է լրացնելու այս երախտավորների պատվավոր շարքը:

Հոգիվածում համառոտ ներկայացվում է Շաբանյանի կյանքը և ստեղծագործական գործունեությունը, բերվում կավճամատիտով կատարված նկարչի աշխատանքներից մի քանիսը, տրվում վերլուծական մեկնաբանումներ, նշվում արվեստագետի բազմաժանր լինելու և իմպրեսիոնիստական նկարչաձևին հոգեհարազատ մնալու պարագան:

Армен Аветисян

Мастер мела Арсен Шабанян

Резюме

На данный момент достаточно литературы о французско-армянском художнике Арсене Шабаняне (1864–1949). Однако о работах мелом талантливого художника пока нет ни слова. В армянском изобразительном искусстве не так много художников, пишущих мелом: Енок Назарян, Закар Закарян, Эдгар Шагин, Панос Терлемезян, Петрос Контураджян, Григор Ханджян и еще несколько. Арсен Шабанян пополняет этот почетный список.

⁸ Լ. Ռոժէ Միլէ, Արսեն Շապանեան, «Գեղունի», Վենետիկ, 1927, էջ 42:

В статье кратко представлена жизнь и творческая деятельность Шабаяна, некоторые работы художника, выполненные мелом, даны аналитические интерпретации, а также отмечается верность многожанрового художника импрессионизму.

Armen Avetisyan

Chalk pencil master Arsen Shabanyan

Summary

We have proper literature about the French-Armenian painter Arsen Shabanyan (1864–1949). However, there is no proper information about the works of the talented artist in chalk yet. The number of artists using chalk in Armenian fine arts is not so rich. Yenok Nazaryan, Zakar Zakaryan, Edgar Shahin, Panos Terlemezyan, Petros Konturajyan, Grigor Khanjyan and some others. Arsen Shabanyan is coming to fill the honorable list of these grateful people.

The article briefly describes the life and creative activity of Shabanyan, presents some of the artist's works made by chalk, gives analytical comments, notes the cases of the artist's multi-genre nature and proximity to the impressionist image:

Խմբագրություն է ուղարկվել 08. 04. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 25. 04. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

**ԻՆՆՈՎԱՅԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ» ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. իննովացիա, գեղարվեստական մշակույթ, գեղարվեստական կրթություն, տեղեկատվություն, էլեկտրոնային էջ, դասընթաց:

Ключевые слова и выражения: инновация, художественная культура, художественное образование, инфоматика, электронная страница, курс.

Keywords and expressions: innovation, art culture, art education, information, electronic page, training.

Ներկա ժամանակաշրջանը բնորոշ է տեղեկատվական և կապի միջոցների հսկայածավալ աճով, որի հետևանքով աշխարհընկալումը դառնում է ընկալելի ու տարաբնույթ:

Արվեստի առարկաների դասավանդման ճիշտ մեթոդների ընտրության դեպքում սովորողների մոտ պետք է ձևավորվի աշխարհի ընդհանրական, այլ ոչ թե նրա առանձին մասերի պատկերների յուրացում:

Գաղտնիք չէ, որ մանկավարժությունն ինքնին ստեղծագործություն է, իսկ այս օրվա և ապագայի մանկավարժը իննովացիոն գիտելիքներով օժտված մանկավարժն է, ում համար անիմացիոն տեխնոլոգիաների ուսումնասիրումն ու դրանց գործիմաց տիրապետումը մանկավարժական ստեղծագործության հիմքն է, որի շնորհիվ գիտակցվում է նաև դաստիարակությունը տեխնոդաստիարակության փոխակերպելու և տեխնոդաստիարակչական փոխներգործության գերակայությունը հասկանալու, այն իբրև նորարարություն դիտարկելու, ընկալելու և ընդունելու անհրաժեշտություն ու հրատապություն:

Սակայն ժամանակակից կրթության հիմնախնդիր է հանդիսանում ոչ միայն տեղեկատվության դյուրին ընկալումն ու մտապահումը, այլ նաև դրա վերարտադրումը, արտացոլումն ու մտապահումը, այլ նաև դրա վերարտադրումը, արտացոլումն ու արտահայտումը: Հետևաբար օրհասական է դառնում իննովացիոն կրթության ներմուծումը, հատկապես մանկավարժական բուհերի ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման գործընթաց, քանի որ համակարգչային

հնարավորությունները ինովացիոն տեխնոլոգիաների անքաքտելի և կարևոր բաղադրամասն է:

Մանկավարժական գիտությունների համակարգում նոր գիտաճյուղերի՝ ինովացիոն տեխնոլոգիաների ներմուծման, կրթական համակարգի տարբեր աստիճաններում ներդրման և զարգացման տեսականում, որպես դաստիարակության գործընթաց առանցքային բաղադրատարր դիտարկվում է տեխնոդաստիարակությունը, իսկ որպես նպատակ սահմանվել է համակողմանի և ներդաշնակ զարգացած անձնավորություն ու ինովացիոն տիրույթի միջև գրագետ փոխներգործության ձևավորումը, ինչը ենթադրում է՝

- ինովացիոն տեխնոլոգիայի հետ հարաբերվող անձի ստեղծագործական կարողությունների և հաղորդակցական հմտությունների ձևավորում:
- Ինովացիոն թեմաների ընկալման և գրագետ մեկնաբանման ընդունակության զարգացում,
- ինովացիոն տեղեկատվության որակական՝ գեղագիտական, գեղարվեստական, մշակութային, բարոյագիտական, դաստիարակչական կրթական, իմաստային, գաղափարական, ինովացիոն տեխնոլոգիական, տեխնիկական և այլ հատկանիշների արժևորում,
- ստեղծագործական էներգիայի (ներուժի) կուտակում և արդյունավետ դրսևորում,
- քննադատական, ստեղծագործական, տրամաբանական մտածողության և հուզական իմացության զարգացում:

Այսպիսով, ինովացիոն կրթությունը, մանկավարժական ամբողջական գործընթացում մեղիամշակութային ոլորտի ստեղծագործությունների օգտագործման միջոցով մանկավարժներին ընձեռում է ժամանակակից կրթական փոխներգործուն մեթոդներն ու հնարները նորովի կիրառելու հնարավորություն:

Այս կապակցությամբ կարևոր է, որ ինովացիոն տեխնոլոգիաներով դասը ներկայացնելիս այն ունենա գեղագիտամանկավարժական և բարոյական գաղափար:

Դպրոցում ՀԳՄ-ի (համաշխարհային գեղարվեստական մշակույթ) դասընթացը անհրաժեշտ է սովորողներին այդ բնագավառի՝ ՀԳՄ-ի գլուխգործոցների, նրանց ստեղծագործողների և գեղարվեստական ոճերի հետ ծանոթացնելու համար: Այս մոտեցումը պայմանականորեն կարելի է անվանել որպես կողնորոշված գիտելիքներ, որոնց կողմնակիցները առաջնահերթությունը տալիս են տեղեկատվության հաղորդմանը, փոխանցմանը՝ ուսուցչից - աշակերտին, հաճախ շատ վաղ և տպավորիչ

ձևով: Այս հարցում անփոխարինելի դեր ունի դասագիրքը, որը անհրաժեշտություն է սովորողի համար, լի բացատրական շարադրանքով, հարցերով և առաջադրանքներով:

Հաջորդ տարածված մոտեցում այս գործընթացին՝ անհատական - կողմնորոշման եղանակն է ՀԳՄ-ին: Սրա կողմնակիցները գտնում են, որ ՀԳՄ-ն հասկանալը, յուրացնելը աշակերտի անձի ձևավորման յուրահատուկ մանկավարժական միջոց է:

Այս մոտեցման դեպքում արվեստաբանական տեղեկատվությունը ընդամենը միայն օգնող միջոց է (յուր չ), իսկ իննովացիոն տեխնոլոգիաների օգտագործումը սովորողների ինքնուրույն գործունեության հիմնական միջոցներն են, որոնք նպաստում են նրանց ստեղծագործական կայացման և աշխարհընկալման ձևավորմանը:

ՀԳՄ-ի ուսումնասիրման տեղեկատվական բնույթի հեղինակային մոդելներ են հանդիսանում Յու.Ս.Ուսով մշակումները՝ որտեղ իննովացիոն տեխնոլոգիաների հայեցակարգային հիմք են հանդիսացել գեղագիտական և մշակութաբանական մեդիակրթական տեսությունները:

Յու.Ս.Ուսովի մոդելի մշակման, ներդրման և կիրառման նպատակն է գեղարվեստական բնույթի թեմաներում պարունակվող նյութերի միջոցով սովորողներ անձի համակողմանի զարգացումն ու նրանց հուզական իմացության արդյունավետ ձևավորումը:

Այլ կերպ ասած՝ Յու.Ս.Ուսովի կրթական նման մոդելի մշակման, ներդրման և կիրառման նպատակը, անձնավորության գեղագիտական տեսաձայնային, պատկերավոր և հուզաիմացական զարգացնող կրթությունն է¹:

Լ.Ս. Ջազնոբինան մշակել է հանրակրթական պարտադիր առարկաների դասավանդման գործընթացում իննովացիոն կրթական մոդելի ներդրման արդյունավետ եղանակներ և համապատասխան մեթոդիկա: Գիտնականի ներկայացրած մեթոդիկան ենթադրում է այս կամ այն պարտադիր առարկայի դասավանդման գործընթացում իննովացիոն տեխնոլոգիաների ներառումը, իննովացիոն տեխնոլոգիական միջոցների կիրառումը, տեսական և գործնական առաջադրանքների կատարումը, անհրաժեշտ տեղեկատվության որոնումն ու համակարգումը, պատկերավոր իննովացիոն տեղեկատվության խոսքային կրկնօրինակի կառուցարկումն ու հակառակ փոխակերպումը, ստացված իննովացիոն տեղեկատվության թյուր կողմերի բացահայտումը, թեմաների գրախոսումը,

¹ Усов Ю.Н., Виртуальное мышление школьников в приобщении к различным видам искусства // Искусство в школе, №6, 2000, с. 3-6.

նրանց գլխավորի և երկրորդականի տարանջատումը, իննովացիոն տեխնիկայի հետ աշխատելու գործիմացությունն ու անվտանգության կանոնների պահպանումը²:

Ինչպիսին պետք է լինեն դասագրքերը և ուսումնամեթոդական համալիրները անհատական - կողմորոշիչ իննովացիոն կրթության համար: Իհարկե, բոլոր ուսումնական նյութերի համար հիմնավորորոշ պետք է լինեն «ավանդական» դիդակտիկ սկզբունքները, մշակված հայրենական մանկավարժ-տեսաբանների, մեթոդիստների մի քանի սերունդների կողմից-տարիքակողմորոշիչ հասանելիությանը, համակարգվածությունը և այլն:

Սակայն, որպեսզի ՀԳՄ-ն դառնա նորովի և նպաստի սովորող անհատի աճին ու զարգացմանը, պահանջների ցանկը պետք է բավականին ընդլայնվի: Գիտական գրականության վերլուծությունը թույլ է տալիս ձևակերպել «Ջարգացնող» ուսումնական նյութերին ներկայացվող հետևյալ պահանջները.

- բոլոր ուսումնական նյութերի բովանդակությունների ընտրությունը կատարվում է հաշվի առնելով նյութերի հետ փորձարքների կազմակերպման հնարավորությունը, սովորողների համար սեփական տեսակետ առաջ քաշելու, տարբերակներ և վարկածներ առաջարկելու և հիմնավորելու, փորձեր կազմակերպելու հետազոտությունների և հեռանկարային աշխատանքներ,
- ուսումնական նյութի կառուցում ճանաչողական խնդիրների առաջնակի լուծման համար կյանքի ոչ ավանդական իրավիճակում,
- միջառարկայական բնույթ ունենա ուսումնական նյութը- ուսումնական գործընթացն արագացնելու համար ուսումնական առարկաների ինտեգրացիա մարդու և նրա շրջապատի մասին ամբողջական պատկերացում ձևավորելու, հանգուցային հարցերը միջառարկայական կապի դիրքերից դիտելու համար,
- աշակերտի անհատական - ուսուցողական ուղու մշակման հնարավորություն նրա կարողությունների և հակումների հիման վրա,
- ուսումնական նյութերի բաց բնույթը - հին տեղեկատվության արագ փոփոխման հնարավորություն, մանկավարժի և աշակերտի ազատ ժամանակի օպտիմալ համակցում ուսուցման գործընթացի ծրագրով,

² Зазнобина Л.С., Стандарт медресования интегрированного в дисциплины начального и среднего об. Резования . Изд-во Москва, 2006, с.72-78.

- տեղեկատվության վերքանակ, որը հնարավորություն կտա ուսուցչին և սովորողին ընտրելու անհրաժեշտ տեղեկությունները,
- մեծացնել սովորողների ուշադրությունը տեղեկատվության արտադարձական աղբյուրների նկատմամբ որոնք նպաստում են նրանց գործունեության կազմակերպմանը: Անհրաժեշտ է մշակել նորագույն ուսումնական մեթոդներ և ներդնել ժամանակակից գեղարվեստական կրթօջախներ, իննովացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ:

Այս եզրակացությանը հանգել են իննովացիոն «Տարածական արվեստներ» ուսումնամեթոդական համալիրների փորձագիտական արդյունքների վերլուծությամբ:

Այս կենտրոնը /ՌԻՄԿ/-ն ստեղծվել է իննովացիոն տեխնոլոգիաների հիման վրա, և իր մեջ ներառում է 3 բաղադրիչ՝ տեղեկատվական, գործնական և կազմակերպչական-մեթոդական:

Տեղեկատվական բաղադրիչը-մուլտիմեդիական գրադարան է, թվային պահուստների, որն ապահովում է համալիր գեղարվեստական մշակույթը ՀԳՄ (պատմության, գրականության, կերպարվեստ) հնագույն քաղաքակրթությունից սկսած:

Գործնական բաղադրիչը ընդգրկում է տարրատեսակ և բազմաթիվ համակարգային գործիքներ սովորողների ինքնուրույն ստեղծագործական հետազոտական գործունեության համար, ինչպես նաև երկխոսության ժամանակ ցուցադրական նյութ պատրաստելու համար:

Կազմակերպչական-մեթոդական բաղադրիչը իրենից ներկայացնում է ՌԻՄԿ-ի նկարագրություն - ծրագիրը և ՀԳՄ -ի դասաժամային պլանավորում, ինչպես նաև ուսուցչի համար մեթոդական ցուցումների ձեռնարկ:

Պետք է նշել, որ տվյալ ՌԻՄԿ-ի շրջանակներում իննովացիոն տեխնոլոգիաների կիրառումը օգնում են ուսուցչին մատուցելու «Արվեստ» առարկայի բնագավառի հիմնադրույթներն ու հեղինակային մեթոդները (տեսողական կապերի զարգացում, ուսումնական էքսկուրսիոն մեթոդ և այլն) ուղղված սովորողի -անհատի զարգացմանը³:

Իննովացիոն ուսումնական նյութերի ներդրման ճանապարհին շատ կարևոր հարց է, թե պատրաստ է արդյոք ուսուցիչը ինքնուրույն մշակելու ու իր պարապմունքների գործընթացը ՌԻՄԿ-ի կողմից պատրաստ ստանալու այդ բոլորը:

³ Шульга Н.Н., Педагогическая анимация в практике социального воспитания за рубежом // школьные технологии, 2008, N 3, с.134-136.

Նայած ստեղծագործող է ուսուցիչը, թե միայն ստացած տեղեկատվության փոխանցող: Ուսուցիչը կարող է օգտվել ՌԻՄԿ-ից, դրանով հարստացնելով իր ծրագիրը «մուլտի-մեդիալ գրադարանից»: Նախապատրաստվելով նա կազմում է իր դասի էլեկտրոնային տարբերակը:

Օգտագործում են տարբեր գործիքներ, «շրջանակ», «աչքս», արվեստի կոթողի առանձին մասեր, ուսումնասիրման ընթացքում համեմատելու համար:

Գոյություն ունի նաև «կլիպ» գործոնը, որը հնարավորություն է տալիս բովանդակային մասը ներկայացնել բազմաթիվ կտորներով, իսկ «մոնտաժը» օգնում է կպցնել իրար տեսաշարը և ձայնը: Ճիշտ է սա դժվարացնում է ուսուցչի աշխատանքը, բայց և ապացուցում է այն ճշմարտությունը, որ չի կարելի պատրաստվել դասին մեկ անգամ և ընդմիջտ: Առավել ևս, երբ խոսքը գնում է կրթության անհատական կողմնորոշված մոդելի մասին:

Յուրաքանչյուր ուսուցիչ ինքն է կազմակերպում իր դասը, հավաքելով նյութեր, ընտրելով և մշակելով, հաշվի առնելով երեխաների հոգեբանական, տարիքային առանձնահատկությունները, նրանց զարգացվածության աստիճանը, նախասիրությունները:

Դասի ընթացքի հսկողությունը և գնահատականը ՀԳՄ-ի դասավանդման տեսության և պրակտիկայի ամենավիճելի հարցերից մեկն է:

ՌԻՄԿ-ի ընթացիկ և եզրափակիչ գնահատականի հսկողության ամենահարմար ձևը հետազոտողները համարում են վերատպությունները (ալբոմները): Քանի որ դասընթացի ուսումնասիրության ձևը հանդիսանում են սովորողների ստեղծագործական և հետազոտական աշխատանքները: Այդ աշխատանքները կատարվում են էլեկտրոնային և գրառման (թղթային) տեսքով: Դրանց համապատասխան ստեղծվում է ալբոմ-վերատպությունների երկու ձև՝ էլեկտրոնային և թղթային:

- Էլեկտրոնային ձևը իրենց ներկայացնում է ֆայլերի հավաքածու, որոնք ստեղծվել են աշխատանքի ընթացքում, տարբեր համակարգչային գործիքներով: Այդ բոլորը պահպանվում է դպրոցական ցանցում, յուրաքանչյուր սովորողի համար առանձնցված տեղեկատվական տարածքում: Դրանց մեջ են մտնում նաև սովորողների կողմից տանն ստեղծված ֆայլերը: Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը կարող է ծանոթանալ դրանց բովանդակությանը:
- Թղթայինում պահպանվում են ավանդական եղանակով ստեղծված աշխատանքները: Ճեպանկարները, թեստային առաջադրանքների պատասխանները, շարադրությունները և այլն:

- Դրա համար ՈԻՄԿ-ի կազմում կան նախապես պատրաստված գրաֆիկական ձևանմուշներ /շաբլոն/, որոնք կարող են տպվել և օգտագործվել թղթի վրա վերատպությունների ձևով:
- Սովորողների ստեղծագործական աշխատանքների համար կան համակարգչային առանձին գործիքներ (պլանշետ-ներկայացում): Մրանք սովորողին առանձնահատուկ հնարավորություն են ընձեռում, ստեղծելու սեփական <<մշակույթի տեքստ>>-ը հորինվածքներ, որոնց հիմքում ընկած են այս կամ այն դարաշրջանի կամ քաղաքակրթության գրաֆիկական տարրերը և խորհրդանիշները: Այդ սարքի համար մշակված են նշանների գրապահոցներ:
- Գրաֆիկական տարրերը կարելի է ազատ տեղաշարժվել <<թերթի>> (համակարգչի էկրան) վրա՝ մեծացնել, փոքրացնել, շրջել, ստանալ հայելային պատկեր: Արդյունքում կստացվի ընտրված տարրերով հորինվածք, ըստ թեմայի: Այն պահպանվում է ֆայլի ձևով, հետագայում աշխատանքը շարունակելու, կամ ցուցադրելու միտումով:

Հորինվածքի թեման կարող է հանձնարարվել ուսուցչի, կամ ընտրվել սովորողի կողմից, ուսումնասիրվող դասընթացի շրջանակներում:

Օրինակ՝ սովորողը կարող է ինքնուրույն ստեղծել հորինվածք հին հայկական աստվածների թեմաներով, նորովի մշակելով հին զարդանախշերը, վերամշակել թեմաները, սափորների նախշազարդման, գրքի նկարազարդման համար:

Նման փոփոխումներին այսօր պատրաստ չեն ինչպես ուսուցիչներից շատերը, այնպես էլ շատ ուսումնական հաստատությունների կազմակերպիչներ, ղեկավարներ: Քանի որ դրա համար արմատապես պետք է ստեղծվեն ուսումնական կաբինետներ, հագեցված համակարգչային տեխնիկայով:

Այս հարցը ըստ իս բավականին բարդ է, վերափոխման, փորձարարության ժամանակ /ընթացքում/, քանի որ դասի ժամանակ սովորողները օգտվում են ոչ միայն համակարգչից, այլև թղթերից, մատիտներից և այլ նյութերից:

Այսպիսով արվեստի մեր դեպքում ՀԳՄ-ի դասավանդման արդի մեթոդներն ու միջոցները ենթադրում են դասավանդողի-իննովացիոն հնարավորությունների իմացության բարձր մակարդակ, որի առկայությունը Ռ.Կուբեյը բնութագրել է իբրև տարատեսակ հաղորդագրություններ

վերլուծելու, մեկնաբանելու, գնահատելու, արժևորելու, կիրառելու, պահպանելու և փոխանցելու կարողություն⁴:

Գոռ Մելիքսեթյան

**Իննովացիոն տեխնոլոգիաների կիրառումը «Համաշխարհային
գեղարվեստական մշակույթ» դասընթացում
Ամփոփում**

Հոդվածում քննարկվում է կրթական համակարգ ներմուծվող իննովացիոն տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները «Համաշխարհային գեղարվեստական մշակույթ» առարկայի ուսուցման գործընթացում: Գեղարվեստական կրթօջախներում, ինչպես նաև ժամանակակից հանրակրթական դպրոցների ծրագրերում ՀԳՄ-ի ներառումը միտված է սովորող անձի համակողմանի զարգացմանն ու նրանց հուզական գործունեության արդյունավետ ձևավորմանը՝ սովորողների գեղագիտական, տեսաձայնային, պատկերավոր և հուզախմացական զարգացնող կրթությանը: Նաև այն ենթադրում է ուսումնական նյութերի բաց բնույթ, հին տեղեկատվության արագ փոփոխման հնարավորություն, մանկավարժի և սովորողի հաղորդակցման օպտիմալացում՝ ուսուցման գործընթացի ծրագրով:

Гор Меликсетян

**Применение инновационных технологий в курсе
«Мировой художественное культуры»**

Резюме

В статье обсуждаются особенности применения инновационных технологий: в общеобразовательной системе в процесс обучения курса «Мировой художественной культуры.» В худ. Образовательных учреждениях, в современных общеобразовательных школах внедрение «МХК» имеет цель всестороннего развития личность-учащихся, эффективного оформления их эмоциональной деятельности, способствовать эстетически аудио-видео образовательному, эмоциональному когнитивному развивающему образованию учащихся. Предполагается открытый характер образовательных материалов, возможность быстрого изменения старых информации, оптимизация общения педагогам учащегося в программе процесса образования.

⁴ Kubey R./Ed/. New Brunswick, London, 1997, p. 163-184.

Innovative technologies application in the <<World art culture>> training

Summary

The article discusses the particular qualities of the use of innovative technologies imported into the educational system in the educational process of the subject <<World Art Culture>>.

In the schools, also in modern public school programs the including of as is for the comprehensive development of a student person and the effective forming of their emotional activity. It also means the open source of educational materials, opportunity to quickly change old information optimization of teacher and student communication through the training program.

Խմբագրություն է ուղարկվել 16. 01. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 05. 02. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. Ժառանգություն, ռեսուրսների, մարքեթինգ, ծեսեր, տոնակատարություն, հանրություն, ազգագրական, ստեղծագործություն, ֆոնդեր, սովորույթներ

Ключевые слова и выражения: Наследство, ресурсы, маркетинг, ритуал, праздник, сообщество, этнографические, произведение, фонд, обычи.

Keywords and expressions: Inheritance, resources, marketing, ritual, holiday, community, ethnographic ,composition, fund, customs.

Մշակութային ժառանգության պահպանումը ինքնին վերջնական նպատակ է, ինչպես նաև մի շարք այլ կարևոր նպատակների հասնելու միջոց: Յուրաքանչյուր սերունդ պահպանում, պաշտպանում և ավելացնում է մշակութային ժառանգությունը հաջորդ սերունդների համար: Մշակութային ժառանգության պահպանման պատճառները և դրան վերաբերող հայեցակարգերը բազմաթիվ են՝ սկսած փյուզման կանխարգելումից, վերջացրած վերականգնմամբ կամ այլ նպատակների համար օգտագործման համար հարմարեցմամբ: Մշակութային արժեքների փյուզումը կամ վիճակի վատթարացումը կանխելուց հետո առաջնայինը դրանց գույքագրումն է և դասակարգումը առարկայական չափանիշների հիման վրա՝ հանրության համար հասանելի եղանակով:

Մենք ունենք բացառիկ ու բազմազան ժառանգություն՝ պատմական հուշարձաններ, թանգարաններ, արխիվներ, գրադարաններ, ավանդույթներ, պատմություն և սովորույթներ: Մշակութային ժառանգությունն է պայմանավորում մեր առանձնահատկությունները, շեշտում այն ամենը, ինչը մեզ իրար է կապում և իրարից բաժանում: Գրեթե մեկ տասնամյակ առաջ մենք նշեցինք հանուն մշակույթի պաշպանության ստեղծված կարևորագույն փաստաթղթերից Հաագայի և Եվրոպական մշակութային կոնվենցիաների 50-ամյակը, արդեն շուրջ կես դարից ավելի է, ինչ ժառանգության պահպանությունը բարոյականից գատ նաև միջազգային իրավունքի նորմ է: Մեր՝ ժառանգության պահպաններին ջերմեռանդությունն ու պատվախնդրությունը, որքան էլ, որ այն մեծ լինի, արդյունավետ է միայն ամուր օրենսդրական դաշտում: Այսօր ընդհանուր նպատակը մեկն է՝

մշակութային ժառանգությունը դիտարկել որպես կայուն-տևական զարգացման խթանիչ և միասին խորհրդածել մեր երկրներում ժառանգության պահպանության խնդիրների և հեռանկարների շուրջ: Այս համատեքստում էլ կներկայացվի մշակութային անշարժ ժառանգության պահպանության օրենսդրական դաշտն ու այսօրվա իրողությունները Հայաստանում՝ բերելով վերջին տասնամյակում արված ուսումնասիրությունների տվյալները:

Մշակութային ժառանգության պահպանման գործում Հայաստանը հանդիպում է մի շարք յուրօրինակ խնդիրների: Չնայած այն բանին, որ հայերը հարուստ մշակույթով հնագույն ժողովուրդ են, Հայաստանի տարածքի և բնակչության փոքր չափերը խոչընդոտում են միջազգային ասպարեզում Հայաստանի մշակույթի մրցունակությունը այլ մեծ երկրների մշակույթների հետ, որոնք ունեն առավել մեծ շուկա խթանելու իրենց մշակութային ժառանգությունը: Բնակչության կողմից մշակույթի բարձր գնահատման պատճառով Հայաստանում մշակութային ժառանգությանն ուղղվելիք ֆինանսական միջոցների պահանջարկը ավելի մեծ է, քան մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի միևնույն մակարդակ ունեցող այլ երկրում:

Հայաստանի մշակութային ժառանգության մեկ այլ կարևոր բաղադրիչ է բազմադարյան հայկական Մփյուռքը, որն աշխարհով մեկ տարածեց հայկական մշակույթը՝ ստեղծելով հայ մշակութային կյանքի կարևոր կենտրոններ հայրենիքից դուրս: Հայաստանի մշակութային ժառանգության այս առանձնահատկությունն ավելի է բարդացնում մշակութային ժառանգության գույքագրումը և հաշվառումը, մասնավորապես՝ շարժական արժեքների (արվեստի գործեր, արխիվներ), ինչպես նաև ոչ նյութական մշակույթի համար (ազգային ավանդույթներ, պարեր, բանահյուսություն և այլ): Եթե հաստատությունները, օրենքները և քաղաքականությունը պատշաճորեն մշակվեն, Մփյուռքն իր միջոցների շնորհիվ կարող է դառնալ Հայաստանի մշակութային ժառանգության աջակից և այն համաշխարհային ասպարեզում տարածող, ինչպես նաև կարող դառնալ սեփական փորձով Հայաստանում մշակութային զբոսաշրջության առաջին խթանողը:

Ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հայկական մշակութային ժառանգության մեծ մասը գտնվում է Հայաստանի Հանրապետության ժամանակակից սահմաններից դուրս, ուստի արտասահմանում գտնվող մշակութային արժեքները ևս մեծ նշանակություն ունեն Հայաստանի մշակույթի համար, մասնավորապես՝ անշարժ մշակութային արժեքները, որոնց նշանակալից մասը գտնվում է Թուրքիայում, Վրաստանում, Ադրբեջանում և Իրանում: Շատ կարևորվում է միջազգային համագործակցությունը հայկական մշակութային ժառանգության պահպանման համար:

Միջազգային պայմանագրերի և ծրագրերի միջոցով հայկական մշակութային ժառանգության պաշտպանությունը հատկապես կարևոր է Թուրքիայում, Ադրբեջանում և Վրաստանում, որտեղ հայկական մշակութային հուշարձանները քանդվում և ոչնչացվում են:

<<Ինչպես նշվեց, Հայաստանն ունի մեծ և բազմաբնույթ մշակույթ, չնայած այսօրվա իր համեմատական փոքր տարածքի և բնակչության: Հայկական մշակութային ժառանգությունը չի ստանում համապատասխան ֆինանսավորում: Այսօր չեն ստեղծվել այնպիսի մշակութային ֆոնդեր, մշակութային ժառանգության հիմնադրամներ, որոնք կկարողանային լուծել Հայաստանի մշակութային ժառանգության պահպանության և տարածման ընթացքում առաջացող հիմնախնդիրները: Հայաստանի մշակութային ժառանգության մեծ մասը, ինչպես անշարժ, շարժական, այնպես էլ ոչ նյութական՝ վտանգված է: Դա կապված է խորհրդային շրջանում կիրառված քաղաքականության, անցումային շրջանի միջոցների սղության և Մփյուռքում տեղի ունեցող սերնդափոխության հետ>>¹:

Ցանկացած մշակութային ժառանգության պաշտպանության, կառավարման և օգտագործման համակարգի հիմքը տվյալների կենտրոնացված շտեմարան է, որը տեղեկություններ է պարունակում մշակութային ժառանգության յուրաքանչյուր առարկայի մասին, դասակարգում է դրանք օբյեկտիվ չափանիշների հիման վրա՝ հստակ նշելով առարկաների յուրաքանչյուր կատեգորիայի համար նախատեսված իրավունքները և պարտականությունները: Տվյալների շտեմարանը պետք է մատչելի լինի մշակութային ժառանգության պաշտպանության հետ առնչվող պետական և մասնավոր բոլոր կազմակերպությունների և անհատների համար: Բնական, անշարժ, շարժական և ոչ նյութական մշակութային ժառանգության համապարփակ գույքագրումը նպատակահարմար է նաև արդյունավետության, հետևողականության, կանխատեսելիության առումով, քանի որ այն հեշտացնում է մշակութային փոխկապակցված ոլորտներում իրականացվող քաղաքականության համակարգումը և տեղեկատվության միջազգային փոխանակումը:

<<Հայաստանի Հանրապետությունում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության խնդիրներն իրականացնում են տարբեր գերատեսչություններ՝ երկար տարիների ընթացքում ուսումնասիրելով, հավաքելով և արխիվացնելով մեծ ծավալի նյութեր: Սակայն ընդհանուր քաղաքականության և ծրագրերի բացակայության պայմաններում առաջացել են մի շարք հիմնախնդիրներ, որոնք շտապ լուծման կարիք

¹ http://www.arak29.am/PDF_PPT/8-Culture/cultural_Heritage.htm

ունեն (հավաքված նյութերի ընդհանուր ցանկերի ստեղծում, արխիվացրած նյութերի թվայնացում, նոր գիտարշավների կազմակերպում, արհեստագործների աջակցության տրամադրում, ժողովրդական ավանդական ծեսերի, սովորույթների և տոնակատարությունների ներկայացումը հանրությանը, ազգագրական կենտրոնների ստեղծում և այլն)>>²:

<<Կարևոր է նաև ուշադրություն դարձնել այն փաստին, որ ժամանակակից աշխարհում մշակույթի ոլորտը ոչ միայն ստեղծագործության, հոգևորության կամ ավանդույթի վայր է, այլ նաև հումանիտար շերտ է, որը արտադրում է որոշակի ապրանքներ և ծառայություններ: Ներկայումս մշակույթը կարևոր ռեսուրս է ցանկացած տարածաշրջանում, որը կարող է ընդգրկել և՛ մշակութային հուշարձաններ, և՛ ժամանակակից արվեստի կենտրոններ: Այս ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը մեծ մասամբ կապված է մշակութային ժառանգության հարստության, կառավարման և մարքեթինգային տեխնոլոգիաների զարգացման հետ >>³:

Հայկ Հովհաննիսյան

Ազգային մշակութային ժառանգության պահպանությունը Ամփոփում

Մշակութային ժառանգության պահպանումը ինքնին վերջնական նպատակ է, ինչպես նաև մի շարք այլ կարևոր նպատակների հասնելու միջոց: Յուրաքանչյուր սերունդ պահպանում, պաշտպանում և ավելացնում է մշակութային ժառանգությունը հաջորդ սերունդների համար: Մշակութային ժառանգության պահպանման պատճառները և դրան վերաբերող հայեցակարգերը բազմաթիվ են՝ սկսած փլուզման կանխարգելումից, վերջացրած վերականգնմամբ կամ այլ նպատակների համար օգտագործման համար հարմարեցմամբ:

² http://mincult.am/general_characteristics.html

³ Федотова Н.Г./Менеджмент в сфере культуры/М.2015,с 150

Айк Оганнисян

Сохранение национального культурного наследия

Резюме

Статья обусловлена необходимостью изучения и сохранения культурного наследия, как самоцель, способ достижения ряда других важных целей, а также выявлены причины сохранения культурного наследия и с ним связанных множество концепций, от предотвращения оползней до восстановления или адаптации для использования в других целях.

Hayk Hovhannisyan

Preservation of national cultural heritage

Summary

The article is conditioned by the need to study and preserve cultural heritage as an end in itself, a way to achieve a number of other important goals, and also identify the reasons for the preservation of cultural heritage and many related concepts, from landslide prevention to restoration or adaptation for other purposes.

Խմբագրություն է ուղարկվել 24. 04. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 12. 05. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

albert.makaryan@ysu.am

**ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԻՊԱԿՆԵՐԻ
ՂԱՍՄԱՎԱՆԴՄԱՆ ՇՈՒՐՁ**

Բանալի բառեր և արտահայտություններ. կրթության նոր չափանիշներ, դասավանդման մեթոդիկա, դասագիրք, 7-րդ դասարան, հայ գրականություն, ազգային և համամարդկային հարաբերակցություն, Գուրգեն Մահարի, ինքնակենսագրական վիպակ, «Մանկություն», «Պատանեկություն», արդիականություն:

Ключевые слова и выражения: новые критерии образования, методика преподавания, учебник, 7-й класс, армянская литература, соотношение национального и общечеловеческого, Гурген Маари, автобиографическая повесть, «Детство», «Отрочество», актуальность.

Key words and expressions: new standards of teaching; methods of teaching; textbook; 7th grade; Armenian literature; relationship between the national and the universal; Gurgen Mahari; autobiographical novelette; “Childhood”; “Boyhood”; modernity.

Այս հրապարակումը, ավելի որոշ` ՀՀ հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի **հայ գրականության** դասագրքում տեղ գտած կոնկրետ մի թեմայի («Գուրգեն Մահարի. «Մանկություն» և «Պատանեկություն» վիպակները») դասավանդման իմ կողմից առաջարկվող **նմուշօրինակը**, թվով երրորդն է, որը միտումնավոր տպագրում եմ ՀՊՄՀ-ի հանդեսի «Մանկավարժություն» բաժնում` հուսալով, որ այն կարող է օգտակար լինել հայոց լեզվի և գրականության ապագա ուսուցիչներին: Ուշադիր ընթերցողը ենթատեքստից, հարկավ, կհասկանա իմ խորին անհանգստությունն արդեն մեկ տարի հրապարակ նետված նոր դասագրքերի ստեղծման, այսպես կոչված, նոր չափորոշիչների` հայոց դպրոց ներմուծման ակնհայտ ապագային ծրագրի համար:

Ի պաշտպանություն ազգային դպրոցի` զանազան հարթակներից ելույթ ունեցան խոհուն բազմաթիվ մտավորականներ, նախկին դասագրքերի լրջմիտ հեղինակներ` սթափ հայացքով քանիցս բացատրելով, որ դասագրքերի մատուցվող նյութերում **ազգային և համամարդկային**

հարաբերակցության մեջ ամենից առաջ պետք է գերակայեն հայ ժողովրդի ճակատագրի ու բարոյահոգեբանական կեցվածքի ուրույնությունը, հետո նոր դրանք աղերսվեն համամարդկային արժեքաբանությանը, նաև գրական նյութերի ուսումնասիրությունները կատարվեն միանգամայն թարմ, ժամանակակից՝ 21-րդ դարի ոգուն ու հոգեբանությանը համահունչ՝ այդպիսով լայն հուն բացելով աշակերտի ինքնուրույն մտածողության համար: Պատասխանը... «Ձայն բարբառոյ յանապատի»... Ավելի ճիշտ՝ իտր լռությանը հաջորդած «դատավճիռը»։ «Միննույնն է, պիտի փոխենք»:

Բայց և այնպես՝ ես շարունակում եմ ներկայացնել իմ գիտամանկավարժական կենսափորձից ստեղծված հերթական դասընթացը:

Գ ՈՒՐ Գ Ե Ն Մ Ա Հ Ա Ր Ի

(1903 - 1969)



Դերենիկ Դեմիրճյանի, Եղիշե Չարենցի և Ակսել Բակունցի հետ միասին նորագույն շրջանի հայ գրականության ստեղծմանն ու զարգացմանը մեծ նպաստներ է բերել նաև **Գուրգեն Մահարին**: Նա նուրբ ապրումների և քնքուշ երազների բանաստեղծ է, երևելի արձակագիր ու եղեռնագարկ սերնդի արդարամիտ տարեգիր:

Դու կծանոթանաս

- Գուրգեն Մահարու կենսագրության կարևոր որոշ դրվագների.
- հեղինակի և նրա մասին պատմող հուշերին.
- «Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին», «Օրոք, օրոք...» բանաստեղծություններին.
- «Մանկություն» և «Պատանեկություն» ինքնակենսագրական վիպակների մի քանի հատվածների:

Դու կիմանաս

- Հեղինակի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը.
- նրա քնարերգության ու արձակի որոշ առանձնահատկություններ:


Կտվորես

- Մեկնաբանել ինքնակենսագրական վիպակի բնորոշ հատկանիշները.
- գրական երկը համեմատել նույն թեմաներով ստեղծագործած այլ հեղինակների գործերի հետ:

Հետազոտական և ստեղծագործական աշխատանքի թեմաներ

- Հայրենի եզերքի պատկերները Գուրգեն Մահարու բանաստեղծություններում, հուշերում և արձակ էջերում:
- Վանի ու իր Այգեստան թաղամասի ներկայացում-պոստեր:

ԴԱՍ 1 ԾՆՆԴԱՎԱՅՐՆ ՈՒ ԸՆԴՀԱՏՎԱԾ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ



Վանա լճի ափին գտնվող Վան քաղաքը

ՎԱՆ

Վանը համահայկական առաջին պետության՝ Ուրարտուի մայրաքաղաքն էր, որը կրում էր Տուշպա անունը: Այն հետագայում դառնում է Վասպուրական աշխարհի կենտրոնը և Արծրունիների արքայատոհմի գահանիստը: Նոր և նորագույն ժամանակներում հայ ազգային-ազատագրական պայքարի կենտրոններից էր և 1915 թ. ապրիլին իր հերոսական ինքնապաշտպանությամբ փառավոր էջ գրեց հայոց պատմության մեջ: Ցավոք, հայաթափվեց և այժմ լիովին թուրքարնակ է:

1. *Ղու երբե՛կ լսե՛լ ես Վան քաղաքի, Վանա լճի, Աղթամար կղզու և համանուն վանքի մասին:*
2. *Գիտե՛ս՝ ու՛րքեր են եղել նշանավոր վանեցիները, այդ թվում՝ Գուրգեն Մահարին:*

Գուրգեն Մահարին (Գուրգեն Աճեմյան) ծնվել է 1903 թ. Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում՝ ուսուցչի ընտանիքում: Նա դեռ շատ փոքր էր՝ 4 տարեկան, երբ մի չար արկածով սպանվում է հայրը՝ Գրիգորը: Երեխան տարիներ շարունակ հիմնականում ապրում է տատի՝ Յուդաբերի մոտ, որին հասակակից կանայք Օղիկ էին անվանում: «Օղիկ... լավ է ասված, իսկապես նա մի փոքրիկ, փայլուն օղ էր իմ մանկական հիշողությունների շողշողուն շղթայում», - հետագայում այսպես պիտի գրեր Մահարին սիրելի տատի մասին:

Նախնական կրթությունն ստացել է Վանի Նորաշեն ու Երամյան վարժարաններում: Ցավալիորեն կարճ է տևում *Գուրիսի*, ինչպես տատն էր նրան փաղաքշաբար կանչում, մանկությունը. Մեծ եղեռնի շրջանում՝ 1915 թ. հուլիսի 18-ին, դատարկվում է ինքնապաշտպանական հերոսամարտում հաղթանակած Վանը: «Առավոտ լուսո եղավ,- հիշում է Մահարին իր գլուխգործոց վեպում՝ **«Այրվող այգեստաններ»**-ում,- և, ըստ ամենայնի՝ արդար արեգակ, թեպետ չէին երևում ո՛չ առավոտը, ո՛չ արևը: Չէին երևում, որովհետև փոշին կանգնել էր և՛ առավոտի, և՛ լույսի, և՛ արեգակի, և՛ արդարության դեմ: Փոշի, փոշու մեջ լողացող, աղմկոտ մարդիկ, կանայք, երեխաներ, սայլեր, անասուններ»:

Գաղթի ժամանակ ճանապարհին ուժահատ Օղիկ տատն իրեն նետում է գետը. «Հիշողությանս աղմուկի միջից լսում եմ տատիս «ամա՛ն...» հառաչանքը, տատիս վերջին ձայնը, տատիս ձայնը, որն այլևս չհնչեց ինձ համար ոչ մի արևի տակ...»: Այդ ճանապարհին Գուրիսը կորցնում է նաև իր բոլոր սիրելիներին՝ մայրիկին՝ Հայկանուշին, որին կրճատ Անուշ էին ասում, հոր սպանության վշտից խելագարված քույրիկին՝ Ադրինեին, եղբայրներին՝ Սուրենին ու Խորենին, անգամ՝ շնիկին:



Մի բեկոր Գուրգեն Մահարու տուն-թանգարանից, որը երկար տարիներ ինձամբով պահպանվում էր գրողի այրու՝ լիտվուհի Անտոնինա Պավլիտայտեի (1923-2018) կողմից:

Երեխան սիրել է Վանի հեքիաթային այգեստանները, մրգերը, ծաղիկները, լիճը, կենդանիներին, հատկապես շներին:



Փոքրիկ Գուրգենի սիրելի շան անունը Չալո էր, որին հետագայում ինքը նվիրեց մի գեղեցիկ ստեղծագործություն՝ «**Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին**» վերնագրով (1926): Այն պատմում է երեխայի առաջին անկրկնելի սիրո, առաջին վշտի ու առաջին արցունքի մասին:

Փոքր-ինչ տեսություն

Բալլադը՝ իբրև գրական տեսակ, անցել է զարգացման երկար ուղի: Բալլադի պատմությունը ցույց է տալիս, որ, չնայած դարերի ընթացքում կրած բոլոր փոփոխություններին, նրա մեջ պահպանվել են կայուն մի շարք գծեր, որոնց վրա էլ հենվում է դիպաշարի միասնությունը: Դա դեպքերի և դեմքերի քնարական ուժեղ գունավորումն է, լարվածությունը, համեմատաբար ոչ մեծ ծավալը: Սակայն ամենից կարևորը պետք է համարել բալլադի բովանդակության ոչ սովորական, բացառիկ բնույթը, պայմանական, նույնիսկ ֆանտաստիկ պատկերների առկայությունը:

Հայ գրականության մեջ բալլադի լավագույն օրինակներ են Հովհաննես Թումանյանի «Փարվանան», «Ախթամարը», «Աղավնու վանքը», «Թագավորն ու չարչին», Ավետիք Իսահակյանի «Հավերժական սերը», «Ասպետի սերը» և, իհարկե, Գուրգեն Մահարու «Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին»-ը:

Չքնաղ էր Չալոն, ինչպես Մահարին է ասում՝ չալ-չալ «աչքուն», այսինքն՝ գեղաչ, խատուտիկ աչքերով: Նան աշխույժ էր, քայլում էր հպարտ նազանքով՝ սլվլուն (թեթև) պոչը ցցած: Իսկ երեխան էլ նրան պոչից մինչև վիզը զարդարում էր հին գորոցից (պահարանի արկղիկ) գտած գույնզգույն կտորներով ու ոսկեթել ասեղնագործ ժպավենով՝ սրմայով, և զբոսանքի տանում դաշտերը.

1

Չալոն իմ շո՛ւնն էր, չալ-չալ աչքո՛ւն էր,
Չալոն չքնաղ էր, պայծա՛ռ Չալո.
Ընկնում էր ոտիս, աչքը փակում էր,
Ծածկվում էր տատիս հին շալով:

Ես հանում էի մեր հին գորոցից
Գույնզգույն լաթեր ու սրմա,
Զարդարում էի պոչից մինչև վիզ
Ու տանում դաշտերը նրան:

Չալոն քայլում էր պչրուհու նման,
Սլվլուն պոչը բռնած ցից,
Քավում էր ոտիս, մոռում էր մռայլ,
Մոռում էր հպարտ, հաճույքից:

Տուն էի բերում մութ փողոցներով,
Շների աչքերից անտես.

Դանդաղ իջնում էր կապույտ երեկոն
Ու ծածկում սար ու դաշտեր:

3. Դու սիրո՞ւմ ես շներին, ունե՞ս քոնը:

**4. Կարո՞ղ ես պատկերավոր նկարագրել շնիկիդ. ինչպիսի՞
բնավորություն ունի, արդյոք չարաճճի՞ է, վարքագծով երբեմն
հիշեցնո՞ւմ է քեզ: Այո՛, այո՛, մի՛ գարմացիր, քանի որ տարիների հետ
շներն ինչ-ինչ հատկանիշներով նմանվում են իրենց տերերին:**

5. Դու նրան երբեմն-երբեմն զարդարո՞ւմ ես:

Չալոն, սակայն, զոհ է գնում գաղթի դժվար ճամփեքին՝ մեծ վիշտ
պատճառելով երեխային: Եվ Գուրգենը մնում է անընկեր.

2

Չալոն իմ շո՛ւնն էր, չալ-չալ աչքո՛ւն էր,
Չալոն չքնաղ էր, պայծա՛ռ Չալո,
Ընկնում էր ոտիս, աչքը փակում էր,-
Բայց բանը վերջացավ չարով:

Գաղթի մութ ճամփին կորավ իմ շունը,
Ո՞վ գիտե՛ որ ձին կոխոտեց...
Շուրջը մեռնում էր վերջին աշունը,
Չմնաց ինձ ո՛չ մի ընկեր...

**6. Ի՞նչ խոհ է ծնում քո մեջ «շուրջը մեռնում էր վերջին աշունը»
պատկերը:**

**7. Դու շա՞տ կվշտանաս, եթե կորցնես շնիկիդ: Եթե այո՛, ապա
տխրությունդ ինչի՞ հետ կհամեմատես:**

Բալլադի երրորդ մասում երևում է պատանու արդեն երկրորդ սերը՝
կապտականաչ՝ «Խաժ աչքով մի աղջիկ», որն իր մլարուն՝ մշուշոտ բիբերը
հատել է տղային: Վերջինիս, սակայն, թվում է, թե դրանց միջից իրեն են
նայում Չալոյի աչքերը: Ասել է թե՛ կորսված «մանկության խորասուզվող
ոսկե մակույկից» մշտատև մորմոքում են առաջին զարմանալի սիրո
կարոտն ու կորած ընկերոջ հիշատակին նվիրված հավատարմությունը.

3

Մի աղջիկ եղավ իմ երկրորդ սերը,
Խաժ աչքով աշխույժ մի աղջիկ,
Ոսկեգույն էին նրա մազերը
Ու բուրում էին դարչին:

Մի օր միասին գնացինք այգի,
Հուլիսյան գիշերն էր նազում.

Նա չալ-չալ շորեր ուներ իր հագին,
Իսկ այգում՝ խաղողն էր հասնում:

Նստեցինք մենք թավ որթատունկի տակ,
Նա դրեց գլուխը ծնկիս,
Ես շոյում էի նրա վիզը տաք
Ու նայում մշուշված դեմքին:

Օ, սե՛ր իմ, սե՛ր իմ...– ինձ հառել էին
Բիբերը նրա մլարուն.–
Չալո՛ն է նայում նրա աչքերից,
Չալո՛ն է տխուր նայում:

Անհուշ նագում են որթատունկերը,
Իսկ հետո անձրևն է խշշում.
Քեզ չեմ մոռացել, կորած ընկերքս,
Քեզ չեմ մոռացել, իմ շո՛ւն...

.....
Օրերի հեովում նրա հաչոցը
Հնչում է կարծես լալով...
Չալո՛ն իմ շունն էր, չալ-չալ աչքո՛ւն էր,
Չալո՛ն չքնաղ էր, պայծա՛ռ Չալո...

8. Ի՞նչ ես կարծում՝ «Իսկ հետո անձրևն է խշշում» տողն այլաբանորեն ի՞նչ է ակնարկում:

9. Գեղարվեստական գրականությունից (չափածո կամ արձակ) կարո՞ղ ես հիշել որևէ գործ, որը նվիրված լինի շանը: Ահա, օրինակ, Գուրգեն Մահարու կրտսեր ժամանակակիցներից մեկի՝ Վահագն Դավթյանի (1922-1996) «Շունը» բանաստեղծությունը, որը նս գեղարվեստական ազդեցիկ պատկեր է՝ դարձյալ գաղթի ընթացքում ընտանեկան շան կրած տառապանքների մասին: Մի դեպքում այրվող այգեստանների քաղաքն է՝ Վանը, մյուս դեպքում՝ Մեծ եղեռնից բզկտված Արմավիրը.



Այստեղ կարելի է հղում տալ կայքին՝ Վ. Դավթյանի «Շունը» բանաստեղծությունը՝ Սիլվա Յուզբաշյանի կատարմամբ՝

<https://www.youtube.com/watch?v=cT51kWW8StI>

ՇՈՒՆԸ

Չեմ հիշում հիմա, թե անունն ի՞նչ էր...
Հայացքը տխուր, տխուր ու ջինջ էր:

Մորթը սևուկ էր ու չալ էր պոչը,
Աստղերի հետ էր նրա հաչոցը:

Նրա ոռնոցը լուսնի դեմքին էր,
Ու նրա տեղը մեր տան շեմքին էր:

Հետո ամեն ինչ մեզ-մշուշում է,
Եվ մշուշի մեջ ոռնում է շունը:

Նա մեր գնալու հոտը առել էր,
Ցավից կուչ եկել ու պառավել էր:

Տխուր էր այնպես ու սրտադող էր,
Ոռնում էր անվերջ, փորում էր հողը:

Եվ շան մասին էր իմ տատի հարցը.
- Ի՞նչ պիտի լինի խեղճ արարածը:

Հետո ամեն ինչ մեզ-մշուշում է,
Ու մշուշի մեջ ոռնում է շունը:

Մեր բեռը կապած ու ձին բարձած էր,
Մեր դռան առաջ արցունք ու լաց էր:

Շունը կլանչում, շեմքը թողնում էր,
Փաթաթվում տատիս, տխուր ոռնում էր:

Մերթ վազում դեպի մեր քարավանը,
Մերթ ետ էր դառնում, պառկում դռանը:

Հարցում էր անում, ասես, մեր շունը.
Թե թողնի՞ արդյոք այգին ու տունը,

Ծանոթ աստղերը, ծանոթ լուսինը,
Որ ամեն գիշեր մեր տան ուսին էր:

Հետո ամեն ինչ մեզ-մշուշում է,
Ու մշուշի մեջ ոռնում է շունը:

Տխուր գնգում է ձիու զանգակը,
Մեր ճամփան հեռու երկնքի տակ էր:

Ու քանի անգամ, ախ, քանի-քանի,
Նա եկավ հետքով մեր քարավանի:

Հիհն էր նա, լեզուն հանած էր,
Խոնավ աչքերում խոնավ մի հարց էր:

Փաթաթվում էր ինձ, լիզում էր ձեռքս,
Կիսում էր հացս, կիսում էր վերքս:

Ոռնում, վայում էր նա գիշերն ամբողջ
Ու ետ սլանում իր եկած ճամփով:

Հետո ամեն ինչ մեզ-մշուշում է,
Ու մշուշի մեջ ոռնում է շունը:

Կլանչում է նա, վազում հևիհև
Մեր քարավանի ու մեր տան միջև...

10. Գրի՛ր փոքրիկ շարադրություն՝ ներկայացնելով երկու գրողների շներին, փորձի՛ր համեմատել նրանց:

Գաղթի ճանապարհներին

Շուտով կտրվում է «մանկական հիշողությունների շողշողուն շղթան», և դեռ 12 տարին չբոլորած Գուրգենը, թողնելով ծննդավայրը, տասնյակ հազարավոր գաղթականների հետ բռնում է անհայտ հեռուների ճամփաները, որոնք պարուրված էին մահերով ու սարսափներով, անլուր տառապանքներով: Իգդիր, Էջմիածին, Դիլիջան, Թիֆլիս, Հյուսիսային Կովկասի քաղաքներ, Երևան, կրկին որբանոց և թեմական դպրոց. ահա որբ երեխայի՝ զրկանքներով ու փորձություններով լի ուղին: «1915 թվին ես Էջմիածին ընկա, հետո՝ Դիլիջան, հետո՝ Երևան, քաղաքից քաղաք, փողոցից փողոց, մահճակալից մահճակալ», - «Ինքնակենսագրական»-ի մեջ հետազայում այսպես պիտի գրեր Գուրգեն Մահարին:

Որքան էլ ցավալիորեն դժվար, որբանոցային կյանքի տարիները, այնուամենայնիվ, կոփում են հասակ առնող պատանուն. նա շփվում է ամենատարբեր մարդկանց հետ, ճանաչում կյանքի լույսն ու ստվերը, ձեռք բերում զանազան ընկերներ, որոնցից ոմանց կորուստը նորից ակոսում է արդեն խոցոտված մատղաշ հոգին: «Որքա՛ն տարօրինակ է լինում որբերի սերը, որքա՛ն տարօրինակ», - տարիներ հետո այսպես պիտի գրեր արդեն իմաստնացած գրողը: Եվ ահա մի կողմից հայրենի եզերքի և հարազատների կորուստներն ու կարոտները, մյուս կողմից որբանոցային կյանքի սիրային զգացմունքները փոթորկվում են պատանու ներաշխարհում, և նա Դիլիջանի որբանոցում գրում է իր առաջին ոտանավորները: Դրանք ներաշխարհային նոր դրսևորումներ էին, որոնք դառնում էին հայրենասիրության, մարդու՝ դեպի իր ակունքներն ունեցած ազնվացնող կարոտի արտահայտություններ:

Առաջին բանաստեղծությունը

1917-ին Երևանի «Աշխատանք» թերթում Գ. Արփունի ստորագրությամբ տպագրվում է առաջին բանաստեղծությունը՝ «**Հայրենիք**» վերնագրով: Մահարին հետագայում իրեն հատուկ հումորով պատմում է իր առաջին երկի տպագրության տագնապների մասին. «Թերթեր էինք ստանում, և հաճախ այդ թերթերում ես հանդիպում էի տպված բանաստեղծությունների՝ երջանիկ բանաստեղծների ստորագրությամբ: ... Թող մի

անգամ էլ իմ անունը տպվի թերթում, թեկուզ մերժեն ոտանավորս... Ու ահա 1917 թ. ուշ աշնանը ես դողացող սրտով փոստարկղ նետեցի իմ մի բանաստեղծությունը: Դրանից հետո ես ամեն օր՝ իրիկնամուտին, նստում էի փողոցի վրա նայող որբանոցի պատին և սպասում փոստային ցրիչին: Այսպես, մի օր ցրիչը պարզեց ինձ «Աշխատանք» թերթը, որի երկրորդ էջի վրա ես տեսա իմ բանաստեղծությունը: Ես հուզված ու տագնապահար նետվեցի պատից և թերթը դրոշակի նման գլխիցս բարձր բռնած՝ որբանոց մտա»:

11. Դու երբևէ կատարե՞լ ես բանաստեղծական փորձեր, ի՞նչ զգացումներ կունենայիր՝ տեսնելով քո տպագիր առաջին գործը:

Կորած ու գտնված Անուշ մայրիկը

Հետո այդ ամենին հաջորդում են համեմատաբար երջանիկ օրեր. Գուրգենը գտնում է Անուշ մայրիկին (նա Թիֆլիսում էր ապաստան գտել) ու եղբայրներին, այնուհետև մի միջոց՝ 1923-1925 թվականներին, սովորում Երևանի պետական համալսարանի պատմալեզվագրական բաժանմունքում:



Գուրգեն Մահարին մոր՝ Հայկանուշի հետ

Գուրգեն Մահարու պատանեկության ընկերուհիներից մեկը՝ Թամարա Չոլախյանը, պատմում է, որ Մահարին «միշտ ասում էր, որ հումորը, քնարականությունը և ամենալավ բաները, որոնք իր մեջ կան, ինքը ժառանգել է իր մորից: Իսկ ինչքան հրապուրիչ էր նա»: Իսկ գրողի այրու

Անտոնինայի հավաստմամբ՝ Մահարին նույնիսկ պատկառելի տարիքում անընդհատ հիշում էր մորն ու կրկնում. «Մայրի՛կ ջան, Անո՛ւշ ջան... Գուրգենն իր մոր անունն արտասանում էր մերթ տազնապած, մերթ ցավից, մերթ հուսահատությունից, մերթ ուրախությամբ և սիրով՝ ինչ-որ լավ, լուսավոր բան հիշելով՝ կապված անցյալի, իր սիրելի մոր հետ»: «Դու իմ աչքերի առաջ երևում ես բոլորովին երիտասարդ, բայց արդեն այրիացած, վշտից, արցունքներից և մեծ կորուստներից կռացած... Դու քո կյանքը նվիրել ես քո երեխաներին և արդեն չես մտածել անձնական կյանքի մասին: Հետո ես քեզ տեսնում եմ գաղթի ճանապարհին, որտեղ դու կորցրիր քո աղջկան և մորը: Իսկ հետո թբիլիսյան հիվանդանոցում ես՝ սպիտակ խավաթով: Իսկ հետո ես քեզ տեսնում եմ քո հրաշալի որդու՝ Սուրենի՝ 19-ամյա պատանու շիրմին ողբալիս...»:

Գուրգեն Մահարին Անտոնինային պատմել է, որ իր մտերիմ ընկերներից մեկը՝ Եղիշե Չարենցը, շատ է սիրել Անուշ մայրիկին, և այդ սերը եղել է փոխադարձ: Ահա Մահարու տիկնոջ հուշը. «Մեղանը պատրաստ է: Եվ տարբեր համեղ ուտեստներ, հայկական ճաշատեսակներ սպասում են ինչ-որ մեկի: Մայրի՛կ ջան, չէ՞ որ այն ժամանակ շատերը գիտեին, թե ինչ արվեստով ես դու դրանք պատրաստել: Ահա ամեն ինչ արդեն պատրաստ է, դու սպիտակ գոգնոցով ես... Ներս են մտնում Գուրգենն ու Չարենցը: Նրանք ուրախ են, քանի որ արդեն հասցրել են ինչ-որ բան խմել...

- Մայրի՛կ ջան, մենք սոված ենք:

Այո՛, մայրի՛կ ջան, Գուրգենն ինձ պատմել է, որ Չարենցը շատ էր սիրում քո ճաշերը: Իսկ ո՞վ չէր սիրում»:

«Նա շատ էր սիրում ինձ պատմել իր Անուշ մայրիկի մասին, իսկ ես սիրում էի հարցեր տալ նրան:

- Ահա մի անգամ ես վերադառնում եմ ուշ գիշերին: Եվ, իհարկե, խմած: Կարճ ասած՝ ես և Չարենցը հարբել էինք: Անուշ մայրիկը, տեսնելով ինձ այդ տեսքով, շատ բարկացավ և առաջին անգամ ինձ մայրական ապտակ տվեց:

- Շատ լավ է, քեզ այդպես էլ պետք էր, - ուրախացա ես: - Իսկ դու ի՞նչ ասացիր դրանից հետո, - հետաքրքրվում էի ես:

- Իսկ ես նրան բարձրացրի, պտտեցրի սենյակում, համբուրեցի և ասացի. «Մայրի՛կ ջան, մի՛ բարկացիր, հասկանո՞ւմ ես, ես ու Չարենցը...»: «Ես քո Չարենցին էլ կհասցնեմ», - խոստացավ մայրիկը: Բայց իր այդ խոստումը այդպես էլ չկատարեց... Մայրս սիրում էր Չարենցին և շատ էր հպարտանում, որ նա մեր տուն էր գալիս»:

Որդու աքսորից հետո եղեռն ու գաղթ տեսած Անուշ մայրիկը մնում է միայնակ և այդպես մենակ ու մոռացված էլ մահանում:



Գուրգեն Մահարին կնոջ՝ Անտոնինայի և որդու հետ

Հետաքրքրասերի անկյուն

Ինչպե՞ս Գուրգեն Աճեմյանը դարձավ Գուրգեն Մահարի

Գրական կյանքի սկզբին տարբեր կեղծանուններ օգտագործելուց հետո Գուրգեն Աճեմյանն ընտրել է ***Մահարի*** տխուր ձևը՝ մի կողմից հետևելով 10-րդ դարի արաբ բանաստեղծ Աբու-լ-Ալա ալ-Մահարրիի անվանը, մյուս կողմից՝ պարզապես նկատի ունենալով մահը, որն ամբողջ կյանքում համատրեւն հետապնդել է իրեն՝ մա՛հ, արի՛ :

Գուրգեն Մահարին արտրված

Եղիշե Չարենցի և Ակսել Բակունցի պես Գուրգեն Մահարին ևս անարդարացիորեն մերժվել է խորհրդային իշխանությունների կողմից. նրա հասցեին հնչել են քաղաքական ծանր ու կեղծ մեղադրանքներ: Հայրենի եզերքը կորցրած, գաղթ ու ավեր տեսած և զանազան որբանոցներում տառապած երիտասարդը հանիրավի արտրվել է Սիբիր և իր կյանքի լավագույն տարիները (1936-1954)՝ 444-օրյա չնչին ընդմիջումով, անցկացրել այնտեղ: Հետո արդարացվել է, վերադարձել Երևան՝ շարունակելով իր մասնակցությունը հայրենիքի գրական-մշակութային կյանքի զարթոնքին: Խաթարվել էր, սակայն, առողջությունը, և, իրոք, «արի՛, մա՛հ»-ը գալիս է. դա 1969 թվականին էր:

ԴԱՍ 2 ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՎ ԱՐՁԱԿԱԳԻՐԸ

5 ամենասիրելի բանաստեղծները

- Ավետիք Իսահակյան
- Միսաք Մեծարենց
- Վահան Տերյան
- Եղիշե Չարենց
- Մերգեյ Եսենին

Գուրգեն Մահարին 1920-1930-ականներին տպագրում է «**Բարդիներ**», «**Վարսակներ**» և «**Մրգահաս**» բանաստեղծական ժողովածուները: Դրանց մեջ կան ինքնատիպ բանաստեղծություններ, որոնք նվիրված են հողին, բնությանը, մրգահասի գրավիչ տեսարաններին, երագող հոգիներին: Այդ ամենը բնական երանգներ էր հաղորդում նորագույն շրջանի քնարերգությանը, քանի որ ասպարեզում հիմնականում գրոհային թեմաներն էին թմբուկ, կարմիր, հեղափոխություն...

Ահա «**Օրոր, օրոր**» բանաստեղծությունը (1926), որը բնության հետ մտերմության ազնիվ ապրում է: Ինչպես գորովագութ մայրն օրոր կատեր իր մանկանը, այնպես էլ որդին է օրոր ասում մայր բնությանը.

ՕՐՈՐ, ՕՐՈՐ...

Արևավոր, արևավոր իմ սերերին,
 Իմ հույզերին արևավոր ու նո՛ր, ու նո՛ր,
 Իմ լույսերին ու լուսավոր իմ հույսերին,
 Ընկուզենո՛ւն լայնասաղարթ, օրո՛ր, օրո՛ր,
 Օրոր, օրոր:

Օրոր մարգին, արտույտներին, ծառին, ձորին,
 Կածաններին իմ մենավոր, կանաչ բարդուն,—
 Օրոր, քնքուշ իմ աքսաի՛, օրոր, մորի՛,
 Օրոր սարին, հանդին, արտին, օրո՛ր մարդուն,
 Օրոր, օրոր:

Շամբուտներին ու ամպերին մու՞թ ու անձև,
 Անտառներին, արոտներին, քամուն, քարին,
 Օրո՛ր սրտին իմ՝ արտի պե՛ս անձրևածե՛ծ,
 Օրո՛ր սրտին վարդերի պես արնակարմիր,
 Օրոր, օրոր:

Օրոք նրանց՝ արևային երգիչներին,
Որոնք մի օր երգ երգեցին ու անց կացան,
Կարդացողին օրոք – սրտոտ ու մտերիմ,
Կարդացողին, որ եղել է, հիմա չկա,

Օրոք, օրոք:

Գուրգեն Մահարին ամբողջ կյանքում ապրել է իր Վանի կարոտով ու մորմոքով: ««Վա՛յ, վա՛յ, վա՛յ, Անտոնի՛նա, դու չգիտես՝ ինչպիսի ծաղիկներ, ինչպիսի մրգեր կան այնտեղ: Եթե ես Վան գնամ, ծառի տակ պառկեմ, միանգամից կառողջանամ» (նա շատ հիվանդ էր): Վա՛ն, Վա՛ն, Վա՛ն, ինչպե՛ս էր նա կարոտում: Հարազատ քաղաքը, ծննդավայրը ամենաթանկն է աշխարհում: Նրա համար դա ամենաթանկն էր: Նա այնպե՛ս էր երազում այնտեղ լինել: Պատմում էր, պատմում էր», - հիշում է Անտոնինան:

1. Ո՞րն է մարդ-բնություն այս կապի ու մտերմության ակունքը:

2. Ինչպե՞ս կրացատրես «արևավոր սերեր», «արևավոր հույզեր», «լուսավոր հույսեր», «մենավոր կաճաններ», «անձրևածեժ արտ», «արևային երգիչներ» արտահայտությունները: Կարո՞ղ ես դրանցով կազմել նախադասություններ:

Ինքնակենսագրական վիպակի հայ 5 ամենահայտնի հեղինակները

Այստեղ շրջանակի մեջ խճանկարի տեսքով կարելի է տեղադրել 5 լուսանկար՝

Ղ. Աղայանի, Գ. Մահարու, Վ. Թոթովենցի, Զ. Եսայանի և Ստ. Զորյանի:

20-րդ դարի 20-ականների վերջին և հաջորդ տասնամյակին խորհրդահայ գեղարվեստական արձակի ամենաբազմազան դրսևորումների մեջ հատկապես ընդգծվում է **ինքնակենսագրական վիպակի** ժանրը, որի առաջին արտահայտությունը հայ գրականության մեջ եղել էր դեռևս Ղազարոս Աղայանի «Արություն և Մանվել» ստեղծագործությունը (1866): Այդ ժանրը նորագույն շրջանում ներառում էր մի կողմից՝ ժամանակաշրջանի ազգային ողբերգական ճակատագիրը, մյուս կողմից՝ սարսափների միջով անցած գրողների անձնական վերափոխման պատմությունները: Մեկը մյուսի հետևից լույս են տեսնում Գուրգեն Մահարու («Մանկություն», 1928, «Պատանեկություն», 1929-1930), Վահան Թոթովենցի («Կյանքը հին Հռովմեական ճանապարհի վրա», 1930), Զապել Եսայանի («Միլիտարի պարտեզները», 1935) և Ստեփան Զորյանի («Մի կյանքի պատմություն», 1934, 1939) ստեղ-

ծագործությունները, որոնք, կառուցվածքային նմանություններով հանդերձ, ունեն բազում յուրահատկություններ:

Ինքնակենսագրական վիպակի հեղինակների պատումների 5 ամենաբնորոշ տարբերությունները.

- Դ. Աղայանի մանկական հիշողությունները պարուրված են անսահման հուսահատությամբ, հոր կողմից մերժված լինելու ծանր գիտակցմամբ:
- Գ. Մահարին ինքնակենսագրական դեպքերը ներկայացնում է նպատակալաց գործողության մեջ՝ եղեռնազարկ ընտանիքի գավակի երբեմն ընդմիջվող, բայց անհրաժեշտ հիշողություններով:
- Վ. Թոթովենցն իրար լրացնող, բայց դիպաշարային գիտակցված շեղումներով պատումը կառուցում է անգերազանցելի քնարականությամբ:
- Զ. Եսայանը հիմնականում կենտրոնանում է իր ներաշխարհի, սեփական ներգզացողության և հուզական վերապրումների վրա:
- Ստ. Զորյանը նախապատվությունը տալիս է պատումի հանդարտ եղանակին:

Գուրգեն Մահարին կյանքի տարբեր տարիներին գրել է կենսագրական հնգապատում՝

- «Մանկություն»
- «Պատանեկություն»
- «Երիտասարդության սեմին»
- «Երիտասարդություն» (անավարտ)
- «Ծաղկած փշալարեր»

Բանաստեղծական խառնվածքով օժտված Մահարին իր արձակ էջերում ևս բերում է քնարական շունչ, հույզերի գերող ջերմություն ու նուրբ հումոր: Նրա վրա մի կողմից ցնցող տպավորություն էին թողել Առաջին աշխարհամարտի բերած ավերները, աննախադեպ աղետի՝ Մեծ եղեռնի սարսափները, մյուս կողմից՝ նոր կյանքի հուսատու ազդանշանները: Եվ հայրենի եզերքը կորցրած վանեցի երիտասարդը բնատուր շքեղ ձիրքով սկսում է մասնակցել իր նոր հայրենիքի մշակութային կյանքի ստեղծմանն ու զարթոնքին: Հայացքը հառած գալիքին՝ նա իր պարտքն է համարում անցյալի ցավալի հիշողությունները շաղախել նոր իրականությանը՝ այդպես ստեղծելով հայրենի ժողովրդի անցած ուղու գեղարվեստական ազդեցիկ պատմությունը:

Դրա վառ վկայություններն են «Մանկություն» և «Պատանեկություն» վիպակները:

Փոքր-ինչ տեսություն

Վիպակը կյանքի ընդգրկմամբ, հերոսների քանակով և ծավալով գրավում է պատմվածքի և վեպի միջին տեղը: Այն ավելի փոքր է, քան վեպը, բայց ավելի մեծ է պատմվածքից ու նովելից: Մակայն այդ սահմանները բավական պայմանական են, և չպետք է զարմանալ, որ առանձին երկեր կոչում են և՛ պատմվածք, և՛ վիպակ (Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը», Մուրացանի «Նոյի ագռավը»), իսկ ուրիշ երկեր՝ և՛ վիպակ, և՛ վեպ (Մուրացանի «Առաքյալը», Ալեքսանդր Շիրվանզադեի «Նամուսը»): Այդ ժանրերի միջև կայուն սահմաններ գծել հնարավոր չէ: Սերտորեն կապված լինելով վեպի հետ՝ վիպակը ևս անցել է զարգացման գրեթե նույն ուղին: Վիպակի բնորոշ օրինակներ են Ալեքսանդր Շիրվանզադեի «Չար ոգին», Գուրգեն Մահարու «Մանկությունը» և «Պատանեկությունը», Ակսել Բալունցի «Կյորեւը», Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արևը» և այլ երկեր:

Ինքնակենսագրական վիպակի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ այնտեղ հեղինակի *ես*-ի պատմությունը միշտ ուղեկցվում է կյանքի լայն ընդգրկմամբ: Հերոսը խորհրդածում է կյանքի իմաստի և աշխարհում իր զբաղեցրած տեղի մասին: Ինքնակենսագրական վիպակում գուգահեռաբար երևում է դարաշրջանի մարդկանց ու իրադարձությունների գեղարվեստական պատմությունը, որն ընդլայնում է ինքնակենսագրական ժանրի սահմանները:

ԴԱՍ 3

«ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ» ՎԻՊԱԿԸ

«Մանկություն» վիպակը պարուրված է անհուն թախիծով ու մորմոքող կարոտով: «Ճիշտ է, որ մարդիկ այն ժամանակ են սկսում մտածել իրենց մանկության մասին և հուզվել նրանով, երբ ծերացած են լինում... Չեմ կարծում: Ես միշտ էլ հուզվել եմ իմ մանկության հիշողություններով, միշտ մտածել եմ այդ երազային օրերի մասին և հիմա, երբ դեռ երիտասարդ եմ, ուզում եմ գրել այդ, նորից կրկնենք, երազային օրերի մասին», - այսպես է սկսում իր վիպակը հեղինակը: Եվ ահա ստեղծագործության էջերից ընթերցողի հետ մտերմիկ զրույցով աստիճանաբար մեզ են նայում անցյալի սիրելի դեմքերն ու տպավորիչ դրվագները՝ գորովագութ մայրը, ազնիվ և հրաշալի տատը, որին թոռնիկը «մայրիկ» էր կոչում, լսվում են նրա՝ երգով ուղեկցվող գունագեղ հեքիաթները... Երևում են նաև ցավալի իրողություններ՝ քեռու իբր պատահաբար մտավորական հորն սպանելը, սիրելի քույրիկի խելագարվելն ու մահը, առաջին անարատ սիրո մեղմ

սարսուռները... Այդ ամենը, սակայն, վիպակը չի դարձնում մի ընտանիքի պատմության ժամանակագրություն: Բնավ. դա մի ամբողջ սերնդի, իսկ ամբողջության մեջ՝ ժողովրդի կյանքի *գեղարվեստական* արտացոլանքն է: Իսկ ի՞նչ է այդ *գեղարվեստական*-ը: Այստեղ պետք է ուշադիր լինել և հասկանալ, որ ինքնակենսագրական վիպակի հեղինակը միշտ վեր է կանգնում սուսկ փաստագրական նյութից՝ այդ ընթացքում ստեղծելով տպավորություններ ու բնավորություններ, հոգեբանական իրավիճակներ ու անցումներ, այսինքն՝ *գեղարվեստական կերպարներ և պատկերներ*, որոնք մեծ կամ փոքր ուժով միաձուլվում են կյանքի սոցիալական, քաղաքական, բարոյահոգեբանական երևույթներին:

Ահա քեզ է ներկայացվում վիպակից առանձնացված մի հատված, որը կարծես անկախ պատմվածք է կամ նովել: Պատմվածք, թե՞ նովել: Դու ինքդ կորոշես, իսկ այժմ անհրաժեշտ է ուշադրությամբ ընթերցել այն:

Կարծում եմ՝ այստեղ նպատակահարմար է տեղադրել «Ջուլիակներ» հատվածը՝ «Ես մինչև հիմա դեռ լսում եմ նրանց մաքոքների ձայնը...» տողից մինչև «Ես վազեցի դեպի պատուհանը. ջուլիականոցը շրջապատված էր կրակե լեզվակներով»:

Անձանոթ բառերի բացատրություններ

- ջուլիակ** – կտոր գործող արհեստավոր՝ մանածագործ
- մաքոք** – մանածագործական հաստոցի չխկչխկացող մաս
- հակ** – մեծ կապոց՝ փաթեթ
- դու վի՞ր կառնես** – դու ո՞ւմ հետ կամուսնանաս
- մի՞ք գյավազանա** – մի՛ շատախոսիր
- ձիկ** – ինձ
- վրանբաց** - անպարկեշտ
- տուղտ** - ծաղկաբույս
- թաթ** – բրդյա կարճաճիտ գուլպա
- թոռ** – ուռկան՝ ձկնորսական ցանց
- զե՛ծ** – այժին
- օռոսպի** – անառակ, անբարոյական կին
- արշին** – երկարության հին չափ = 0, 711 մետրի
- պատանք** – դիակը փաթաթելու սպիտակ սավան

1. Հատվածը քեզ պատմվածք հիշեցրեց Դ. Դեմիրճյանի «Ավելորդ»-ի պես, թե՞ նորավեպ. սրընթաց էին գործողությունները, պատումն անսպասելի՞ ավարտվեց:

2. Բնչ ես մտածում այս նախադասության մասին. «Նա ինձ կապեց ջուլիականոցին, այդ ջահել ջուլիակը, որովհետև ինձ հետ խոսում էր ոչ թե որպես փոքրահասակի, այլ կարծես իրեն հասակակից մարդու հետ»: Քեզ դո՞ւր է գալիս, երբ հետո այդպես են խոսում:

3. Բնութագրի՛ր ջուլիակուհի Քինոյին. ինչպիսի՞ աղջիկ էր նա:

4. Բնչ էր պատահել, և ի՞նչ է ուզում ասել հեղինակն այս պատկերով. «Բսկ պատուհանների տակ ավելուկներն ու տուղտերն ավելի անհանգիստ էին օրորվում, ավելի կասկածով»:

5. Հեղինակին արդյոք հաջողվե՞լ է առանց մանրամասների (սիրո ջերմ խոստովանություններ, համբույրներ...) ներկայացնել Քինոյի ու Սեդրակի սիրո պատմությունը. եթե՛ այո՛, ապա ի՞նչ միջոցներով:

6. Բնչպե՞ս կրնոթագրես ջուլիականոցի տիրոջը՝ Հակոբ աղային: Ո՞ր հարցում նրա դաժանությունն իր գազաթնակետին հասավ:

7. Արդարացնո՞ւմ ես արդյոք Սեդրակի վրեժխնդրությունը: Դու ինչպե՞ս կվարվեիր նման իրավիճակում:

8. Կարո՞ղ ես իրարից գատել դեպքին ականատես հեղինակի արձանագրած իրական փաստն ու երևակայականը և մատնանշել զուտ գեղարվեստական պահերը:

9. Ջուլիակներ-Հակոբ աղա հարաբերություններում զգացվո՞ւմ են ժամանակաշրջանի սոցիալական անարդար կյանքի երևույթները:

10. Երբևէ եղե՞լ ես ջուլիականոցում կամ, այսօրվա խոսքով ասած, կտոր պատրաստելու արտադրամասում: Կարո՞ղ է քեզ գրավել այդ մասնագիտությունը: Այն ազնիվ գործ է և պահանջում է որոշակի վարպետություն ու ճաշակ:

Դու հավանաբար խղճացիր դժբախտ Քինոյին և մտածեցիր, թե մեր գրողներն ինչու են հիմնականում գրել տխուր բաների մասին: Բայց դա միշտ չէ, որ այդպես է. համոզվելու համար կարող ես կարդալ Ղ. Աղայանի «Հնարագետ ջուլիակը» փոքրիկ գրույցը և դասընկերներիդ հետ քննարկել այն:

Ավարտվում են երազային օրերը, և Մահարին հրաժեշտ է տալիս իր մանկությանը. «...Մանկություն, հեռավոր օրերի ոսկե գիրք, հեռավոր

օրերի մրգաստան, ահա փակում եմ քո դռնակը, ահա փակում եմ քեզ: Ես պատանի դարձա մի գիշերվա մեջ. քնեցի մի օր մանուկ և զարթնեցի պատանի, որպես մահիկ (կիսալուսին) ննջեցի և արթնացա որպես լիալուսին»:

ԴԱՍ 4

«ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ» ՎԻՊԱԿԸ

Սկսվում է պատանեկությունը, բայց «լիալուսին» դարձած պատանու առջև բացվում են արյունոտ հորիզոններ: 47 բաժիններից բաղկացած «Պատանեկություն» վիպակը շերտ առ շերտ երևան է բերում խուճապի, գաղթի ու փախի ահասարսուռ տեսարաններ: Այն մի դեպքում սրտառուչ հրաժեշտն է Վանին, որն ուղեկցվում է բակից լսվող աքաղաղի վերջին զիլ ու երկար կանչով և Օղիկ տատի տխուր երգ-մրմունջներով, մյուս դեպքում՝ աղետալի ճանապարհի, հանդիպումների, նորանոր հանգրվանների ցնցող պատկերներով:

Վիպակի պատումում հաճախադեպ են դեմքերի ու դեպքերի մանրամասները, որոնք առաջին հայացքից կարող են թվալ աննշան: Դրանց մեջ է, սակայն, ստեղծագործության բուն ոգին, դրանք են, որ վիպակին հաղորդում են հոգեբանական խորք ու շարժում: Եվ ուշարժան է, որ գեղարվեստական հյուսվածքի մոայլ համապատկերում անգամ առկայծում է գալիքին հավատացող հեղինակի լուսավոր ժպիտը՝ ուղեկցված նուրբ հումորով:

Այստեղ կարելի է տեղադրել «Գիշեր և հուշեր» հատվածը՝ «...Կամավորները մտան Վան» տողից մինչև «Իսկ Նազելիենց տանը ողջ գիշեր կերուխում էր»:

Անձանոթ քառերի բացատրություններ

- կը պաքի** – կհամբուրի
- պուպրիկ** – երեխայի խաղալիք, տիկնիկ
- դուդու** (տուտու) – մայրիկ, կանանց համար գործածվող հարգական կոչում
- մեյտեղ** – միասին
- վարդնոց** – վարդանոց
- սաքու** – պատի երկարությամբ շինված քարե թումբ
- բարդիսաբախ, զամբելս** - խոտածաղիկներ
- պտկել** – բողբոջել
- չմբուլ** – սանձ
- չուր** – մինչև
- դոբ** – ուր

ալուչ – խնձորի տեսակ
սալոն – հյուրասենյակ
կշլե – գորանոց
մաղարա – քարայր
հանրմ – տիկին
խուր – հյուր

1. *Բնութագրի՛ր Նազելուն: Ինչո՞ւ են նրան գրավում ազատամարտիկները և հատկապես Վանա իշխանը, որը, ի դեպ, Նիկոլ Պողոսյանն է (1883-1915)՝ 1915-ի ապրիլին Վանի ինքնապաշտպանության կազմակերպիչներից մեկը:*



Վանի պաշտպանները

2. *Համացանցից գտի՛ր 1915-ի Վանի հերոսամարտի կազմակերպիչների անունագգանունները՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ, և հիշի՛ր նրանց. այդ հերոսները հայ ժողովրդի արժանավոր զավակներից են:*

3. *Ինչպե՞ս է հեղինակը մարմնավորել առաջին սիրտ սարսուռները:*

4. *Ի՞նչ նշանակություն ունեն ատրճանակն ու ձին Նազելու համար:*

5. *Ի՞նչ ջանքեր է գործադրում Գուրգենը՝ արժանանալու համար սիրած աղջկա ուշադրությանը, ավելին՝ սիրուն:*

6. *Դու քո սիրտ էակին Գուրգենի պես կփորձե՞ս տանել մինչև աշխարհի ծայրը:*

Այստեղ այնուհետև կարելի է տեղադրել կարճառոտ, բայց շատ բնութագրական մի հատված՝ «Իգդիրում»՝ «Բարդինների փոքրիկ մի պուրակ, ծառերի տակ սպիտակ վրաններ. ահա այն, ինչ որ ինձ համար կոչվում է Իգդիր» տողից մինչև «Ես չեմ մոռանա այդ ածող օրիորդին»:



CHILDREN STRAYED ON THE WAY FROM VAN TO IGDIR
They were picked up and put into a home till they were identified by their parents. Note Russian priest at the right

Անձանոթ բառերի բացատրություններ

Իգդիր – հայկական քաղաք ներկայիս Թուրքիայի կազմում
իյուստրացիա – ցուցադրություն
ածել – լցնել, նաև՝ ձու ածել, նվազել, հարվածել, խփել, ապրել, կյանք վայելել

- 1. Ինչո՞ւ հանկարծ որբերին պատվիրված արհեստական՝ «ցուցադրական լացք փոխվեց իսկական լացի», և նրանք երկար ժամանակ չէին կարողանում հանդարտվել:*
- 2. Ի՞նչ բառախաղի է դիմել հեղինակը «ածել նշանակում է լցնել, իսկ ես կարծում էի...» արտահայտությամբ:*
- 3. Բացատրի՞ր «Արևի ձայնն ածել» դարձվածի իմաստը և դրանով կազմի՞ր նախադասություն*

Գուրգեն Մահարին հավատում էր, որ «ամեն մեկի կյանքում պետք է մի փոքր անձրևային եղանակ լինի, որպեսզի հետո լավ փայլատակի արևը»: Դա, իհարկե, այդպես է, այդպիսին է կյանքի օրենքը, և նրա գրական ամբողջ ժառանգությունը դրա վկայությունն է: Ցավոք, ժողովրդական այդ իմաստությունը չտարածվեց Գուրգեն Մահարու անձնական կյանքի վրա. նա շատ տառապեց՝ շարունակ տեսնելով անձրև ու մշուշ, արյուն ու ցավ, իսկ արևոտ եղանակը նրա համար չափազանց կարճատև էր:

Ալ. Մակարյան

**Գուրգեն Մահարու ինքնակենսագրական վիպակների
դասավանդման շուրջ
Ամփոփում**

Հրապարակումը նվիրված է ՀՀ հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի հայ գրականության դասագրքում տեղ գտած հերթական մի թեմայի («Գուրգեն Մահարի. «Մանկություն» և «Պատանեկություն») դասավանդման հարցերին: Այն պարունակում է ոչ միայն մանկավարժական մեթոդիկայի հնարքներ, այլև տեսական հարցադրումներ:

Գիտամանկավարժական միտվածություն ունեցող այս հրապարակման մեջ նորից շեշտադրվում է այն էական հիմնահարցը, որ դպրոցական «Հայ գրականության» դասագրքերի մատուցվող նյութերում ազգային ու համամարդկային հարաբերակցության մեջ ծանրության կենտրոնը պետք է լինեն ազգային ճակատագիրն ու սեփական ժողովրդի բարոյահոգեբանական յուրահատկությունները, հետո նոր դրանք ներհյուսվեն համամարդկային արժեքաբանությանը:

Альберт Макарян

О преподавании автобиографических повестей Гургена Маари

Резюме

Статья посвящена вопросам преподавания очередной темы из учебника по армянской литературе для 7-го класса – повестей Гургена Маари «Детство» и «Отрочество». В ней получили отражение не только методические навыки, но и постановка теоретических проблем.

В настоящей статье, имеющей научно-педагогическую направленность, вновь акцентируется следующая важная проблема: в материалах, представленных в учебниках по армянской литературе, в соотношении национального и общечеловеческого центр тяжести должен быть направлен в сторону национальной судьбы и морально-психологических особенностей собственного народа, и только затем последние должны вплестаться в общечеловеческую систему ценностей.

Albert Makaryan

On Teaching Autobiographical Novelletes by Gurgen Mahari

Summary

The publication is dedicated to some issues on teaching a subsequent theme (“Gurgen Mahari”: “Childhood” and “Boyhood”) that is included in the textbook on Armenian literature for the 7th grade at schools in RA. It encompasses not only pedagogical means but also theoretical questions.

This scientific-pedagogical publication re-emphasizes the essential issue that in the materials provided at schools in textbooks on "Armenian Literature", in the relationship between the national and the universal the central gravity should be put on the national destiny and the moral-psychological peculiarities of one's own people, which must then be intertwined with the universal valuation.

Խմբագրություն է ուղարկվել 20. 03. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 05. 04. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

**ՈՒՍՈՒՑՉԻ ՌԵՖԼԵՔՍԻՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՍՈՂԵԼՆԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. ռեֆլեքսիվ կոմպետենցիա, մոդել, ռեֆլեքսիվ պրակտիկա, քննադատական ռեֆլեքսիա, ինքնաքննադատություն, ինքնագնահատում, ռեֆլեքսիա, համակարգային, գործառական, արժեքական, հաղորդակցական, ինքնաճանաչում:

Ключевые слова и выражения: Рефлексивная компетентность, модель, рефлексивная практика, критическая рефлексия, самокритика, самооценка, рефлексия, системный, функциональный, ценностный, коммуникативный, самопознание.

Keywords and expressions: Reflexive competence, model, reflexive practice, critical reflection, self-criticism, self-assessment, reflection, systemic, functional, value, communication, self-cognition.

Համառոտ ներածական

Նորարարական տեխնոլոգիաների կիրառումն անհրաժեշտ պայման է կրթության որակը շարունակական բարելավելու ճանապարհին: Խնդիր է դրվում ճիշտ գնահատել, ախտորոշել կրթական գործընթացները և առաջարկել ուսուցման և դաստիարակության, նշված գործընթացները կառավարելու նոր մոտեցումներ: Ասվածից հետևում է, որ կրթության մեջ ներգրավված անձինք պետք է առաջնային խնդիր համարեն մասնագիտական կոմպետենցիայի զարգացումը, որի կարևորագույն բաղադրիչն է ռեֆլեքսիվ կոմպետենցիան: Ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման բավականին արդյունավետ մոդելներ են առաջարկվել տարբեր կրթական համակարգերում /արևմտյան, ռուսական և այլն/: Այդ մոդելների ուսումնասիրությունն անհրաժեշտ պայման է կրթադաստիարակչական գործընթացը բարելավելու, կատարելագործելու ռազմավարությունները մշակելու ընթացքում:

Հիմնախնդիրը

Հայ մանկավարժական հանրությունը պետք է կարողանա ճիշտ ժամանակին և արագ արձագանքել ժամանակակից կրթության մարտահրավերները: Զարգացած կրթական համակարգերում շարունակաբար ներդրվում են նոր տեսական, մեթոդաբանական մոտեցումներ, ռազմավարություններ և տեխնոլոգիաներ: Մի կողմից՝ ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մոդելները կարող են արդյունավետ լինել բարձր զարգացում ապահովող կրթական տիրույթներում: Մյուս կողմից՝ հնարավոր չէ իրականացնել որևէ բարեփոխում կրթության ոլորտում, եթե հաշվի չի առնվում արտերկրում հայտնի առաջավոր փորձը:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն

Ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մոդելների մշակման գործում կարևորվորվում է Ջ. Դյուլիի փորձի վրա հիմնված ռեֆլեքսիվ մտածողության զարգացման տեսությունը, որը հետագայում հիմք ծառայեց Մ.Դ. Բրուկֆիլդի քննադատական ռեֆլեքսիայի, Էբիի, Մ. Էկերբերգի, Տ. Ղայի, Ս. Լիլիմենի քննադատական պրակտիկայի, Կ.Ջ. Ջեյի և Լ.Կ. Ջոնսոնի ռեֆլեքսիվ պրակտիկայի տիպաբանության, Ջ. Մունի ուսումնառության և մասնագիտական զարգացման ռեֆլեքսիայի մոդելները ստեղծմանը :

Հոդվածի նպատակը վերլուծել ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման արդյունավետ մոդելները, հիմնավորել դրանց ներդրման անհրաժեշտությունը ՀՀ կրթության ոլորտում:

Հետազոտության նորույթը

Ուսումնասիրվել և վերլուծվել են տարբեր զարգացած կրթական ավանդույթներ ունեցող համակարգերում հայտնի ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մոդելները, հիմնավորվել է դրանց ներդրման արդյունավետությունը ՀՀ կրթության ոլորտում:

Սահմանելով «ռեֆլեքսիվ կոմպետենցիա» հասկացությունը, Տ.Ֆ.Ուշանան առանձնացնում է ռեֆլեքսիան որպես առանցքային կոմպետենցիա¹:

Առանձնանում են հատկապես այն մոտեցումները, որոնք ներկայացնում են քննադատական ռեֆլեքսիայի մոդելը: Մանկավարժը մշտապես քննադատաբար է մոտենում իր անձին, իր գործողություններին, ինչպես նաև սովորողների և գործընկերների գործողություններին: Ըստ Ջ. Մեզիրոյի (Jack Mezirow)՝ արդյունավետ է սեփական գործողությունների մտահայեցումը և վերլուծությունը: Ջ. Մեզիրոուն համոզված է, որ «քննադատական ռեֆլեքսիան ազատում է մանկավարժին բացասական, ավերիչ զգացմունքներից, ինչպիսիք են ինքնախարազանումը և սեփական մանսագիտական կոմպետենտությանը կասկածով վերաբերվելը»²:

Ջ. Մ. Պեթերսն իր մոդելի կարևոր բաղադրիչ է համարում դասավանդողի հետազոտական և ուսուցական գործառույթները: Ըստ նրա՝ ռեֆլեքսիայի սուբյեկտը տարբեր իրադրություններում կոնկրետ գործառույթներ է կատարում, և ռեֆլեքսիան ունի գործնական նշանակություն³: Կարելի է, ենթադրել, որ դասավանդողը հետազոտում է կոնկրետ իրադրությունը, որպեսզի իրեն զերծ պահի սխալներից: Նույն տրամաբանությամբ է առաջնորդվում Ս. Բրուկֆիլդը: Նա առաջարկում է քննության առնել իրադրությունը տարբեր տեսանկյուններից՝ սեփական, գործընկերների, սովորողների և «տեսական գրականության»: Նրա մոդելում առաջնային է «քննադատական ռեֆլեքսիա» հասկացությունը, այն առումով, որ նրանով պետք է զինվի ոչ միայն ուսուցիչը, այլև սովորողները⁴:

¹ Ушева Т.Ф. Рефлексия как ключевая компетенция будущего педагога // Личность, семья и общество: вопросы педагогики и психологии: Сб. ст. по материалам XLIV междунар. науч.-практ. конф. № 9 (44). Новосибирск: СиБАК, 2014. - С. 65–73.

² Mezirow J. Learning as Transformation: Critical Perspectives on a Theory in Progress. San Francisco: Jossey Bass, 2000. - 371 p.

³ Peters J.M. Instructors-as-researcher – and theorists: faculty development in a community college // Training and Professional Development in Adult and Continuing Education / R. Benn, R. Fieldhouse (eds.). Exeter: CRCE, 1994. – pp.94–101.

⁴ Brookfield S.D. Becoming a Critically Reflective Teacher. San Francisco: Jossey-Bass, 1995. - 298 p.

Ձ. Դյուին առաջիններից էր, ով բացահայտեց, որ ռեֆլեքսիան մտածողության յուրահատուկ ձև է⁵: Ըստ նրա՝ ռեֆլեքսիվ մտածողությունը տարբերվում է ամենօրյա սովորական մտածողությունից նրանով, որ չի ուղղորդվում ավանդությամբ կամ արտաքին հեղինակությամբ: Մասնավորապես, Դյուին պնդում էր, որ մենք «լուծում են խնդիրը» տարբեր իրադրություններում փորձելով և սխալվելով: Ռեֆլեքսիան օգնում է վարկածներ առաջադրել և ստուգել դրանց ճշմարտացիությունը: Հիմք ընդունելով Դյուիի կողմից առաջադրված գաղափարները, Շոնը ներմուծում էն «ռեֆլեքսիվ պրակտիկանտ» հասկացությունը⁶: Նա հետազայում ցույց է տալիս, թե ռեֆլեքսիվ պրակտիկանտը ինչպես է պատկերացում կազմում իր իմպլիցիտ գիտելիքի մասին և ինչպես է դասեր քաղում իր փորձից: Ներմուծում է երկու հասկացություն՝ մտածել դեպքից հետո /reflection-on-action (after-the-event thinking)/ և մտածել գործողություն կատարելու ընթացքում /reflection-in-action (thinking while doing)՝ Նրա հիմնական խնդիրն էր նպաստել ռեֆլեքսիվ պրակտիկայով զբաղվող մասնագետների զարգացմանը, այլ ոչ թե նկարագրել ինքնին ռեֆլեքսիայի կամ անդրադարձման գործընթացը:

Ատկինս և Մըրֆին առաջարկում են Շոնից հետո եռաստիճան մոդել, ըստ որի՝ առաջին փուլում մանկավարժը հույզերի և զգացմունքների մակարդակով է անդրադառնում անհարմարությունների, և տեսած զգացմունքներին: Երկրորդ փուլում նա իրականացնում է զգացմունքների և գիտելիքների քննադատական վերլուծություն: Ռեֆլեքսիայի վերջին փուլում մանկավարժը աշխատում է նոր հեռանկարի ստեղծման ուղղությամբ: Փաստորեն, Ատկինսը և Մըրֆին համադրում են հուզական և ճանաչողական հմտություններն ինքնաճանաչման, քննադատական մտածողության, սինթեզի, գնահատման գործընթացում⁷:

Գրուշկայի, Հինդե-Մակլոդի և Ռեյնոլդսի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի մոդելը կրթական ուղղվածություն ունի⁸: Նրանք

⁵ Ушева Т.Ф. Рефлексия как ключевая компетенция будущего педагога // Личность, семья и общество: вопросы педагогики и психологии: Сб. ст. по материалам XLIV междунар. науч.-практ. конф. № 9 (44). Новосибирск: СиБАК, 2014. - С. 65–73.

⁶ Erault M. Schon shock: a case for reframing reflection in action // Teachers and teaching. 1995. (1). P. 9–22.

⁷ Atkins, S., & Murphy, K. (1993). Reflection: a review of the literature. Journal of advanced nursing, 18(8). -pp.1188-1192.

⁸ Grushka, Hinde-McLeod and Reynolds (2005) Reflecting upon reflection: theory and practice in one Australian University teacher education program. - January 2005: Reflective Practice 6(2):239-246

ուսուցիչներին առաջարկում են մի շարք տեխնիկական, գործնական և քննադատական հարցեր: Օրինակ, ռեֆլեքսիան գործողության համար կիրառվում է ուսուցիչների կողմից ուսումնական ռեսուրսներն ընտրելու գործընթացում: Ռեֆլեքսիան տեխնիկական մակարդակում (reflection in action) ենթադրում է իրականացնել կազմակերպչական հարցեր, որոշել դասի փուլերը, տևողությունը և այլն): Գործնական մակարդակում (reflection on action) նրանք առաջարկում են ունեցած ռեսուրսները համապատասխանեցնել ուսումնառության տարրեր ոճերին⁹:

Գրինվուդը զարգացնելով Շոնի մոդելը, ներմուծում է «ռեֆլեքսիա գործողությունից առաջ» (“reflection-before-action”) հասկացությունը¹⁰: Ըստ նրա Շոնը թերագնահատում է ռեֆլեքսիայի նախապատրաստական փուլը: Մուռնը և Էկեբերգը համոզված են, որ «ռեֆլեքսիան ընթացքում» փուլը, այսինքն՝ ռեֆլեքսիան կոնկրետ իրադրությունում հնարավոր չէ իրականացնել¹¹:

Էբիի կողմից առաջարկվող ռեֆլեքսիվ կոմպետենցիայի մոդելը արտացոլում է ճանաչողական տեսության, գոյապաշտական ֆենոմենոլոգիայի, քննադատական տեսության, և քննադատական մտածողության զարգացման տեսությունները¹²: Այն յուրահատուկ սինթեզ կամ համակցում է ռեֆլեքսիայի, ինքնագիտակցման և քննադատական մտածողության: Ինքնագիտակցումը նա դիտարկում է ֆենոմենոլոգիայի տեսանկյունից, ներկայացնելով այն որպես մտածելու ճանաչողական ունակություն: Քննադատական մտածողությունը քննության է առնվում հեղինակի կողմից սկեպտիցիզմի և քննադատական տեսության շրջանակներում: Նրա մոդելը փաստորեն ներկայացնում է յուրահատուկ ռեֆլեքսիվ պրակտիկա, բաղկացած ինքնագիտակցումից, ռեֆլեքսիայից և քննադատական մտածողությունից:

⁹ Grushka, Hinde-McLeod and Reynolds (2005) Reflecting upon reflection: theory and practice in one Australian University teacher education program. - January 2005: Reflective Practice 6(2): 239-246.

¹⁰ Greenwood, J., 1993. Reflective practice: a critique of the work of Argyris and Schon. Journal of Advanced Nursing, 18(8), pp.1183-1187.

¹¹ Moon, J. (1999). Reflection in learning and professional development. London: Kogan Page. – 240p.

¹² Eby, M.A. (2000) Understanding professional development. In A. Brechin, H. Brown and M.A. Eby(eds.) Critical practice in health and social care. London: Sage.

Ղայան և Լիլիմանը նույնացնում են հինգ տարբեր տիպ՝ կառուցվածքային, հիերարխիկ, կրկնվող, սինթետիկ և ամբողջական¹³: Մոդելները տարբերակվում են ըստ նկարագրության, բացատրության մակարդակների, ըստ քննադատության և ռեֆլեքսիայի աստիճանի: Քուինը (Quinn 2006) ենթադրում է, որ տարբեր մոդելներում կարելի է առանցնել երեք հիմնարար գործընթաց. «Ռետրոսպեկցիա կամ հետահայեցում, ինքնագնահատում, վերակողմնորոշում: Ռետրոսպեկցիայի մակարդակում փորձում են վերամիաստավորել իրադրությունը կամ փորձը: Ինքնագնահատման մակարդակում մասնագետը փորձում է քննադատորեն վերլուծել և գնահատել սեփական փորձի հետ կապված գործողություններն ու զգացմունքները տեսական մակարդակում: Վերակողմնորոշման մակարդակում ամփոփում են ինքնագնահատման արդյունքները, որի նպատակն է ազդել նմանատեսակ իրավիճակների կամ փորձերի ապագա մոտեցումների վրա: Ջեյը և Ջոնսոնը մշակել են ռեֆլեքսիայի տիպաբանություն, որը ներառում է երեք միահյուսված չափումներ. նկարագրական, համեմատական և քննադատական ռեֆլեքսիա¹⁴: Այս համատեքստում առավել հաճախ հիշատակվող մոդելներից Բաուդո, Քեոգի և Ուոքերի (Boud, Keogh and Walker 1985) եռափուլ ռեֆլեքսիայի մոդելը: Ըստ այդ մոդելի սովորողները նախ անդրադառնում են սեփական փորձին, հետո մտովի վերափոխում են այն: Նրանք ներկայացնում են այն նկարագրական, ոչ դատողական ձևով: Երկրորդ փուլը ներառում է փորձի ձեռք բերման ընթացքում առաջացած զգացմունքները՝ թե՛ դրական, թե՛ բացասական: Այդ ընթացքում սովորողները փորձում են լիցքաթափվել, այսինքն՝ ձեռքբերել այն հույզերից և զգացմունքներից, որոնք խոչընդոտում են ռեֆլեքսիային: Հաջորդ փուլում սովորողներն այնուհետև վերագնահատում են իրենց սեփական փորձը: Դա տեղի է ունենում չորս փուլով: Ջուգորդման փուլում նրանք փորձում են գտնել նոր ստացած տվյալների կապը արդեն իսկ ունեցած գիտելիքների հետ: Ինտեգրման փուլում (տվյալների միջև նոր հարաբերությունների որոնում), վավերացում (նոր գաղափարների իսկության որոշում և անհամապատասխանությունների կամ հակասությունների որոնում), յուրացում (նոր գիտելիքները / վերաբերմունքի ձևավորում):

¹³ Ghaye, T. and Lillyman, S. (eds.) (1997) Learning Journals and critical incidents: reflective practice for healthcare professionals. Dinton: Quay Books.

¹⁴ Ghaye, T. and Lillyman, S. (eds.) (1997) Learning Journals and critical incidents: reflective practice for healthcare professionals. Dinton: Quay Books.

Ուիլիսն (Willis 1999) առաջարկում է քննադատական ռեֆլեքսիայի մոդելը: Նրա մոդելը հիմքում ընկած է Ջ. Սմիթի (Smyth 1989) ռեֆլեքսիվ շրջափուլը: Ռեֆլեքսիվ շրջափուլը սկսվում է կարևոր իրադարձության կամ գործողության նկարագրությունից: Հետո այն թնակողում է «տեղեկացնելու» փուլ, որն իրենից ներկայացնում է մեկնաբանող ռեֆլեքսիա: Այդ փուլում տեղի է ունենում իրադարձության կարևորության կամ տիպաբանության: Շրջափուլի հաջորդ մասը ներկայացնում է «հակադրություն», երբ գործընկերներն օգնում են ռեֆլեքսիայի սուբյեկտին դիտարկել նրանց տեսությունները գործունեության ընթացքում և համեմատել իրենց պրակտիկան հարադրվող տեսությունների հետ: Վերջին փուլում տեղի է ունենում «վերակառուցում», որի ժամանակ մանկավարժը կարող է ստեղծել աշխատանքի համար նոր հնարներ, վերլուծելով իրենց կիրառումը: Այդ շրջափուլը հնարավորություն է ընձեռում մեզ զարգացնել մեր պատկերացումները մեր կենսակերպի մասին :

Նմանատեսակ մոդել է նկարագրվում Ֆ. Կորտիսի և այլ Հոլանդացի հետազոտողների կողմից: Այդ մոդելն հայտնի է ALACT-մոդել անվանմամբ¹⁵: Ի տարբերություն նախորդ մոդելի, նրա հիմքում ընկած է ոչ թե ռեֆլեքսիվ շրջափուլը, այլ ռեֆլեքսիվ շրջանը: Այն բաղկացած է հինգ փուլից՝ գործողություն, կարծիք կատարված գործողության մասին, էական հայեցակերպերի գիտակցում, գործողության այլընտրանքային մեթոդների ստեղծում, նոր գործողության փորձարկում: ALACT-մոդելը անվանվում է նաև ռեֆլեքսիվ շրջան, այն առումով որ նախորդ փուլերում գործածած սխալների քննությունը ազդում է մանկավարժան վարպետության կատարելագործման վրա:

Եզրակացություններ, հետագա հետազոտական հեռանկարներ, առաջարկություններ

Քննության առարկա ռեֆլեքսիվ կոմպետենցիաների մոդելներն ունեն հիմնականում նույն բաղադրիչները, սակայն դրանք տարբերվում են ըստ կիրառման փուլերի, ըստ տեսական և գործնական ուղղվածության, ըստ կիրառման ընթացակարգերի և եղանակների: Կարևոր տարբերակիչ հատկանիշ է այն, որ ամեն մի մոդել քննության է առնվել, շեշտադրելով

¹⁵ Ушева Т.Ф. Рефлексия как ключевая компетенция будущего педагога // Личность, семья и общество: вопросы педагогики и психологии: Сб. ст. по материалам XLIV междунар. науч.-практ. конф. № 9 (44). Новосибирск: СибАК, 2014. - С. 65–73.

հոգեբանական, հասարագիտական, փիլիսոփայական, արժեքանական և այլ հայեցակետերը:

Ջ. Մ. Պեթերսի մոդելում կարևոր բաղադրիչ են դասավանդողի հետազոտական և ուսուցական գործառնությունները, իսկ Բրուկֆիլդի կողմից առաջակվող մոդելում՝ «քննադատական ռեֆլեքսիա» հասկացությունը, այն առումով, որ նրանով պետք է զինվի ոչ միայն ուսուցիչը, այլև սովորողները: Դյուիի հայեցակարգի վրա հիմնված Շոնի «ռեֆլեքսիվ պրակտիկայի» մոդելը նպաստեց Ատկինսի և Մըրֆիի հուզական և ճանաչողական հատկություններն համադրման, Էբիի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի, Քուինի եռաստիճան, Ֆ. Կորտիագենի և այլ հոլանդացի հետազոտողներին ALACT-մոդելների ստեղծմանը: Նշված մոդելների շարունակական ուսումնասիրությունը կարող է նպաստել ուսուցչի պատրաստման և վերապատրաստման արդյունավետ մոդելների և ռազմավարությունների մշակմանը:

Նարինե Մատինյան

Ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի զարգացման մոդելները Ամփոփում

Նորարարական տեխնոլոգիաների ուսումնասիրությունն ու օգտագործումը նախապայման է կրթության որակի բարելավման համար: Կրթության համակարգում առաջնահերթ խնդիրը մասնագիտական կարողությունների զարգացումն է, որի կարևոր բաղադրիչը ռեֆլեքսիվ կոմպետենցիան է: Տարբեր կրթական ավանդույթների շրջանակներում առաջարկվել են ուսուցչի ռեֆլեկտիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման տարբեր մոդելներ: Արդյունավետ մոդելների ուսումնասիրությունը կարևոր և անհրաժեշտ պայման է ուսումնական գործընթացը բարելավելու, ուսուցիչների վերապատրաստման և վերապատրաստման նոր ռազմավարությունների մշակման համար:

Нарине Матинян

Изучение и использование новаторских технологий модели развития рефлексивной компетенции учителя

Резюме

Изучение и использование новаторских технологий является необходимым условием повышения качества образования. В системе образования является приоритетной задачей развитие профессиональной компетенции, важным компонентом которой является рефлексивная

компетенция. В рамках разных образовательных традициях были предложены разные модели формирования и развития рефлексивной компетенции учителя. Изучение эффективных моделей является важным и необходимым условием совершенствования учебно-воспитательного процесса, разработки новых стратегий подготовки и переподготовки учителя.

Narine Matinyan

Models of the teacher's reflexive competence development

Summary

The study and use of innovative technologies is a prerequisite for improving the quality of education. Within the framework of different educational traditions, different models of the formation and development of the teacher's reflexive competence have been proposed. The study of effective models is an important and necessary condition for improving the educational process, developing new strategies for training and retraining a teacher.

Խմբագրություն է ուղարկվել 25. 01. 2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 15. 05. 2021թ.

Տպագրության է հանձնարարվել 21. 05. 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՁԻՆՅԱՆ

Արամեացիների լեզվի հայերեն անունը 3

ՍՐԲՈՒՅԻ ԳԱՍՈՅԱՆ, ՀԵՂԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հատկացուցիչ-հատկացյալ շարադասական
կադապարի զարգացումը հայերենում
(ըստ Մ. Խորենացու «Հայոց պատմության» I գրքի) 18

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Ճանաչողության, հիշողության և ժամանակի
ֆենոմենները Ռուբեն Հովսեփյանի պատմվածքներում 32

ԱՌԼԻԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Դիտարկումներ պատմավեպի կերպարակերտման
առանձնահատկությունների շուրջ
(Ընթացի, Պ. Զեյթունցյան, Լ. Խեչոյան) 45

ՍԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՄԱԴԱՆՅԱՆ

Հայոց դարձի պատմությունը Հովհաննես Վանանդեցու
«Արփիական Հայաստանի» պոեմում 61

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

Քուրդ Բ Անբերդեցի Երկարակյաց իշխանաց իշխան.
Ժամանակն ու գործը (Մաս I) 78

ՄՇԵՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Տեղեկագիր Հ. Յ. Դաշակց[ութեան]. Ատրպատականի
Կենտրոն[ական] Կոմիտեի 1920 Մայիսից - 1921 Նոյեմբեր
(ներկայացրած VIII Շրջանային Ժողովին) 91

ԱՐՇԱԿ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Տիրան Արշակունու և հայոց եկեղեցու
փոխհարաբերությունների քննական վերլուծություն 105

ՄՇԱԿՈՒՅԹ

ԼՈՒՍԻՆԵ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ, ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մշակույթը այսօր և հեռանկարում 113

ԱՐՓԻՆԵ ԹՈՐԻԿՅԱՆ

Օմար Շայամի «Ռուբայաթի» նկարգարդումները
Սարգիս Խաչատուրյանի արվեստում 118

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կավճամատիտի վարպետ Արսեն Շաբանյանը 129

ԳՈՌ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Իննովացիոն տեխնոլոգիաների կիրառումը «Համաշխարհային
գեղարվեստական մշակույթ» դասընթացում 136

ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ազգային մշակութային ժառանգության պահպանությունը 145

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Գուրգեն Մահարու ինքնակենսագրական
վիպակների դասավանդման շուրջ 150

ՆԱՐԻՆԵ ՄԱՏԻՆՅԱՆ

Ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի զարգացման մոդելները 175